Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1856
1857
1858

Roun

84
7-60

Lipsiae
1858

84

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԴԻՈՒՄԱ

ՌՈԼ ԵԱՒԱՊԵՏ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԹԱԳԻՈՐ ՃԵՐՄԱԿԵԱՆ



NEW YORK

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՏԷՏԷԷԱՆ

96 ՐԷՇԻՏԻԷ ՃԱՏՏԷՍԻ, ՀԱՏՈՑ ԹԱՂ. 96

— 1884 —

415

10070-57 գ

ԲՈԼ ՆԱՒԱԳԵՏ

Ա.

1779ին Հոկտեմբերի վերջերը, դեղեցիկ իրիկուն մը, Բոր-Լուի քաղքին հետաքրքիր մարդիկը հաւքուեր էին այն լեզուակին ծայրը՝ որու համազոյգ ցամաքի վրայ կը գտնուի Լորիան, ծովածոցին միւս եզերը։

Անոնց ուշադրութեան առարկան և խօսակցութեան նիւթն էր երեսուն երկու թնդանօթով փառահեղ և գեղատեսիլ կրկնայարկ նաւ մը (frégate), որ ութ օրէ 'ի վեր խարիսխ նետած կը կենար նաւահանգիստէն դուրս՝ ծովուն մէկ խորշը։ Առաւօտ մը զայն հոն գտեր էին իրը գիշեր առեն փլթած Ովկիանոսին մէկ ծաղիկը։ Այս նաւը այնքան նազելի էր և վայելուչ՝ որ կարծես թէ առաջին անգամ ծովը ձգուած էր. դաղղիական դրօշակով հոն մտեր էր, որու ծալքը հովը կը պարզէր և երեք ոսկեզօծ շուշան ծաղիկները արևուն վերջին ճառագայթներէն կը փայլէին։

Ծովեզերեայ տեղերը այսպիսի տեսարաններ թէև ստէպ կը պատահին, սակայն միշտ նոր են. ուստի այս հանդիսատեսները ամենէն աւելի հետաքրքիր էին հասկնալու թէ որ քաղաքը շինուած էր այս հրաշակերտ նաւը, որ իւր բոլոր առաղաստները գոց ու դերաններուն կապած՝ լուսափայլ արևմտեան կողմը իւր գոգին շնորհալի ստուերագիրը և իւր սարեաց բարձր նրբութիւնը կը նկարէր։

Ամենք անոր վրայ ամերիկեան նաւագործութեան բարձր և յանդուգն կայմերը կը կարծէին տեսնել. սակայն միւս մասերուն կատարելութիւնը ակներև կը հակառակէր Անգղիոյ այս ըմբոստ զաւակներուն բարբարիկ կոչումներուն։ Այլք անոր պարզած գրոշակէն խաբուելով՝ կը ջանային դիտնալ թէ Գաղղիոյ ո՞ր նաւահանգիստէն դուրս եկած է. բայց անմիջապէս ամէն ազգային անձնասիրութիւն ակնյայտ ճշմարտութեան առջև կը խոնարհէր, ըստ որում՝ ի զուր կը փնտռէին անոր յետնակողմը այն ծանր քանդակներով ու զարդերով առլի պաղպաջունը՝ (galerie) որ Պրէսթի և Թուլոնի մէջ ծնունդ առած Միջերկրականի աղջիկներուն անհրաժեշտ պաճուճանքն էր։ Ամենք ալ դիտնալով որ շատ անպամ գրոշը ճշմարիտ կերպարանը ծածկելու յատուկ դիմակ մ՚է, կը պնդէին թէ Սպանիոյ աշտարակներն ու առիւծները աւելի աղէկ կրնան յարմարիլ անոր ետեը՝ քան թէ Գաղղիոյ երեք շուշան ծաղիկները։ Սակայն ասոնց ալ կը պատասխանէին հարցնելով որ միթէ կրկնայարկին նուրբ ու բարձր կողերը սպանիական լաստիոնի (galion) ուռուցիկ ձևն ունին։ Վերջապէս կային այնպիսիներ ալ որոնք թերևս երդմամբ հաստատէին թէ Ամերիկոսի այս չքնաղ յաւերժահարսը միդատատ Հոլանտայի մէջ ծնունդ առած է, եթէ բարձր ու բարակ որով և վանդաքեր կայմերը այս հին ծովաւելիներու գործերուն խոհեմութիւնը՝ ի դերև չհանէին։

Սակայն այն առաւօտն՝ ի վեր (ինչպէս որ ըսինք ամէն ութ օր առաջ) որ այս շնորհալի երևոյթը Պրէսթայի ծովեզերը տեսնուեցաւ, որ և իսկ կարծիք մը հաստատող նշան մը չեղաւ. և այս կարծիքը դեռ ևս որոշուած չէ նոյն պահուն իսկ որ պատմութեանս առաջին էջերը պիտի բանանք. վասն զի բնաւ նաւաստի մը որ և է պատճառաւ ցամաք չելեր էր։

Աւելի ճիշդը ըսելու համար, յայտնի չէր անկամ որ նաւին մէջ նաւաստի կա՞ր թէ ոչ, ըստ որում եթէ պահակը և հսկող պաշտօնակալին գլուխը որ ուր ուրեմն նաւին եզրանակէն վեր կ՚ելնէր, չտեսնուէին՝ զանի անբնակ պիտի կարծէին։ Բայց կ՚երևի թէ այս նաւը որչափ որ անծանօթ՝ բնաւ թշնամական դիտաւորութիւն մը չունէր, վասն զի իւր դալովը Լորիանի կառավարութեան անհանդստութիւն մը չպատճառեր էր և դայեր Անգղիոյ ու Գաղղիոյ պատերազմին յայտարարութեան առթիւ նորոգեալ բերդի մը կրակին տակը կեցեր էր, ուր պատերէն դուրս և հետաքրքիրներուն գլխուն վերևը իսկ կը տարածուէին կարգ մը խոշոր թնդանօթներու երկար փողերը։

Այս դատարկապորտներու բաղմութեան մէջ նշանակութեան արժանի կ՚երևէր երիտասարդ մը իւր եռանդագին ու յուզեալ հարցումներովը։ Դիւրին էր առանց պատճառը իմանալու նշմարել թէ նա մասնաւոր հետաքրքրութիւն մ՚ունէր այս նաւին վրայ։ Բաղմութիւնը երբ իւր վայելչագեղ հագուստէն հրացանակիրներու համազգեստը ճանչց՝ պահ մը իւր ուշադրութիւնը անոր վրայ դարձուց, վասն զի այս արքունի պահապանները խիստ քիչ անգամ մայրաքաղաքէն դուրս կ՚ելնէին. սակայն անմիջապէս հասկցան որ իրենց օտարական կարծածը նորատի կոմս ա՚Օրէյն է, Պրէսթանեի ամենէն հին դերդաստաններէն մէկուն վերջին սերունդը։

Իւր ընտանիքը՝ Բոր–Լուի քաղքէն վեց եօթ մղոն հեռու, Մորպիհանի ծոցին եզրը կառուցեալ ամրոցը կը բնակէր։ Անոր անդամներն էին՝ ա՚Օրէյ մարքիզը. հէք ու ծերունի յիմար մը, որ քսան տարիէ՚ի վեր իւր հողերուն սահմանէն դուրս ոտք կոխած չէր. ա՚Օրէյ մարքիզուհին որուն խիստ սովորութիւնները և հինաւրեայ տոհմականութիւնը միայն կրնային վէս ազնուապետական դասը արդարել. ծաղկափթիթ Մարգարիտը, տասն եօթ կամ տասն ութ տարեկան անուշ աղջիկ մը, համանուն ծաղկին պէս գիւրաթեք ու տժգոյն. վերջապէս կոմս Էմմանուէլը զոր քիչ մ՚առաջ տեսարան հանեցինք և որու շուրջը ժողովուեր էր ամբոխը, ըստ որում միշտ դեղեցիկ անուն մը, փառաւոր համազգեստ մը և ազնիւ ու միանգամայն լիրբ ձևերը ժողովրդեան վրայ ազդեցութիւն մը կ՚ունենան։

Սակայն իր հարցաքննած մարդիկը որչափ որ անոր հարցումները պոհցանել կը փափաքէին, անորոշ և տարտամ պատասխաններ միայն կրնային տալ, ըստ որում իրենք իրարու յայտնած կարծիքէն զատ ուրիշ բան մը չէին սորված նաւին վրայաք։ Ուստի կոմս Էմմանուէլ մնկնելու վրայ էր, այն ինչ վեց թիերով մակոյկ մը տե-

սաւ որ թումբին կը մօտենար և ուղղակի դէպ ծովեզերը ցրուած բազմութեան նոր մարդ մը կը բերէր։ Այս անձը, որ հետաքրքրութեան սաստկացած ժամանակը իսկ կրնար դարձեալ պահ մը իր վրայ հրաւիրել ամենուն ուշադրութիւնը, հազիւ քսան քսան երկու տարեկան կ'երևէր։ Ծովային պաշտօնական համազգեստը հագած և արջի մորթի մը վրայ նստեր կամ լաւ ևս է ըսել պառկեր էր թեր ղեկին յենած, մինչդեռ ղեկավարը իւր գլխաւորին կամահաճութեան շնորհիւ գործ մը չունենալով՝ նաւակին առջևի կողմը նստած էր։ Այս մակոյկը տեսնուածին պէս ամեն մարդ դէպ անոր դարձեր էր որպէս թէ այնքան փափաքելի տեղեկութիւնները ստանալու յետին յոյսը կը բերէր։ Ուստի թիավարները վերջին ճիգ մ'ըրին ու նաւակը եկաւ ցամաքէն ութը տասը ոտք հեռու Բոր–Լուիի բնակիչներուն մէկ մասին մէջ խրեցաւ, վասն զի այն տեղ ծովը փոքր ինչ ծանծաղ ըլլալով չէր կրնար աւելի ևս յառաջանալ։ Անմիջապէս նաւավարներէն երկուքը իրենց թիները ձգեցին, նաւակին մէջ դրին ու ծովը իջան. ջուրը մինչև ծունկերնին հասաւ։ Այն ատեն դեռահաս պաշտօնակալը թուլօրէն ելաւ կանգնեցաւ ու առաջ անցաւ. նաւավարները զինքը գրկեցին և ցամաքը բերին որպէս զի իւր վայելուչ համազգեստը ջրի կաթիլ մը չ'արատաւորի։ Երբ հոն հասաւ, հրամայեց որ նաւակը լեզուակէն անդին տանին, որ դեռ ևս երեք չորս հարիւր ոտք Ովկիանոսին մէջ կը յառաջանար, ու ամրոցին միւս կողմը իրեն սպասեն։ Իսկ ինքը պահ մը ծովեզերը կանգ առաւ ու առ հարկի ընդունած փոխադրութեան կերպէն գլխին մազերը ուրուած ըլլալով՝ շտկեց. ապա գաղղիերէն երգ մը մրմնջելով սկսաւ պէպ ամրոցին դուռը յառաջանալ, ներս մտնելով թնթև զնուորական ոգջոյն մը տուաւ պահակին, որ իր գլխաւորին պէս զինքը բարևեց։

Թէև ծովային պաշտօնականներու նաւահանգստի մը մէջէն անցնելով՝ մարտկոց մը մտնելը տեսնելէն աւելի բնական բան չկայ, սակայն այս ցանուցիր խումբերուն միտքն կանխաւ այնքան զբաղած էր, որ ամենքն ալ մտաբերեցին թէ ամրոցին հրամանատարին ընդունած այցը այն բոլոր կարծեաց առարկայ՝ անծանօթ նաւին կը վերաբերի։ Ուստի դեռատի պաշտօնակալը երբ նորէն դրանդին

վրայ երևցաւ՝ այնքան նեղ շրջանի մը մէջ դրեթէ փակուած մնաց, որ պահ մը յայտնեց թէ միտք ունի ձեռքի վիրդին դիմել ճամբայ բանալու համար. բայց մէկ երկու անգամ անհեթեթ ճարտարութեամբ զայն շէրէն ետը, կարծես թէ յանկարծ իր որոշումը փոխեց և կոմս Էմմանուէլը տեսնելով՝ որուն աղնուական դէմքը և վայելուչ նշանագրեստը շուրջը գտնուողներուն ռամկական երևոյթին ու հագուստին կը հակառակէր, զանի դիմաւորելու գնաց ճիշդ նոյն միջոցին որ կոմսն ալ քայլ մը կ'առնէր անոր քովը գալու համար։ Երկու պաշտօնականները շուտափոյթ ակնարկ մը նետեցին իրարու վրայ, սակայն ասով միայն աներկբայ նշաններէ հասկցան որ երկուքն ալ ազատորդի և տոհմիկ են։ Ուստի անմիջապէս զիրար բարևեցին այն դիւրահեշտութեամբ և ընտանեկան մարդավարութեամբ որ այն ժամանակի երիտասարդ իշխաններու յատկանիշ բնաւորութիւնը կը կազմէր։

— Է՛, թշուառական, սիրելի հայրենակիցդ իմ, զոչեց նորահասակ պաշտօնակալը, վասն զի կարծեմ թէ դուք ալ ինձի պէս գաղղիացի էք թէև կարի հիւսիսային և եթէ ոչ վայրենի դէթ ըստ բաւականի բարբարոս երկրի մը մէջ ձեզ կը հանդիպիմ. կրնաք արդեօք ինձի ըսել թէ ինչ տարօրինակ բան կայ վրաս որ այսպիսի յուզման մը տեղի տամ կամ թէ Լորիանի մէջ ծովային պաշտօնական մը այսքան հաղուագիւտ և հետաքրքրական բան է որ մի միայն իւր ներկայութեամբը ստորին Պրըթանեի բնիկներուն հետաքրքրութիւնը այս աստիճան շարժէ։ Այս ըսելով, հաւատացէք, այնպիսի ծառայութիւն մը պիտի մատուցանէք ինձ, որ եթէ երբէք ձեզ օգնելու համար այսօրինակ առիթ մը պատահի՝ ձեր երախտիքը չպիտի մոռնամ։

— Սակայն շատ դիւրին է այդ, պատասխանեց կոմս Էմմանուէլ, քանի որ այս հետաքրքրութիւնը ձեր համազգեստի մասին բիրտ և ձեր անձին համար թշնամական չէ. և ասոր ապացոյցն այն է, սիրելի պաշտօնակից (ըստ որում ձեր ուսադիրներէն կը դիտեմ որ երկուքս ալ դրեթէ մի և նոյն աստիճանը ունինք վեհափառ արքային բանակին մէջ), որ ես ալ ձեր մեղադրած բարեմիտ Պրըթօններու հետաքրքրութեան մասնակից եմ, թէև հաւանականա-

բար աւելի հաստատուն պատճառներ ունիմ անոնց հետազօտած խնդրոյն լուծման փափաքելու։

— Լաւ ուրեմն, կրկնեց նաւապը, եթէ ձեռնարկած հետազօտութեանդ մէջ կրնամ բանի մը ծառայել՝ իմ դրհաշիւս ձեր տնօրէնութեան ներքև կը դնեմ. միայն թէ այս տեղը մեր մաթեմաթիքական արտայայտութիւններուն դրաղելու համար շատ անյարմար է, ուստի եթէ կը բարեհաճիք սա բարեկիր անձերէն քիչ մը հեռանանք, վասն զի ասոնք մեր հաշիւները շփոթելէ զատ ուրիշ բանի չեն կրնար ծառայել։

— Ձէ թէ քիչ մը՝ այլ բոլորովին հեռանանք, պատասխանեց հրացանակիրը. մանաւանդ թէ, քանի որ այն կողմը երթալով՝ եթէ չեմ սխալիր, ձեր նաւակին ու նաւաստիներուն կը մօտենանք։

— Ո՛հ, հոգ չէ, եթէ այն ուղին անյարմար կը գտնէք՝ կրնաք ուրիշ մ՚ընտրել։ Դեռ ժամանակ ունիմ և իմ մարդիկս ալ ինձի պէս ստիպողական գործեր չունին։ Արդ՝ ուրիշ կողմ մ՚երթանք, քանի որ այդպէս կը փափաքիք։

— Ձէ, կ՚աղաչեմ, ընդ հակառակն աւելի առաջ երթանք. վասն զի որքան ծովեզրին մօտենանք այնքան հեշտիւ կրնանք մեր խնդրոյն վրայ խօսիլ։ Ուստի մինչև սա լեզուակին ծայրը քալենք։

Դեռահասակ նաւապը առանց պատասխանելու՝ սկսաւ յառաջանալ իրեն ցոյց տրուած Ճամբուն լիովին անտարբեր մարդու մը պէս։ Այս երկու երիտասարդները, որոնք առաջին անգամ ղիրար կը տեսնէին, իրր մանկութեան երկու բարեկամներ մինչև հրուանդանին ծայրը գացին, որ նիզակի մը սլաքին պէս ծովուն մէջ երկու երեք հարիւր քայլ կը տարածի։ Հոն կոմս Էմմանուէլ կանգ առաւ, և ձեռքով նաւը ցուցնելով՝

— Գիտէք արդեօք ինչ է սա նաւը, հարցուց իր ընկերին։

Դեռատի նաւաստին շեշտակի և հետաքննին ակնարկ մը նետեց հրացանակրին վրայ. ապա աչքը նորէն նաւին վրայ դարձնելով,

— Բայց, պատասխանեց անփութօրէն, երեսուն երկու թնդանօթով դեղեցիկ կրկնայարկ մ՚է. առագաստները դերաններուն փաթթած և լոկ պարանով մը (touée) կապուած է որպէս զի նշան տրուածին պէս մեկնի։

— Ներեցէք, ըսաւ Էմմանուէլ ժպտելով, իմ հարցուցածս այդ չէ։ Փոյթս չէ թէ քանի թնդանօթ ունի կամ թէ ինչ կերպով խարսխած է, այսպէս չըսիք դուք։ — Նաւաստին իւր կարգին ժպտեցաւ։ — Այլ, շարայարեց Էմմանուէլ, ես կը փափաքիմ գիտնալ թէ ստուգիւ ո՞ր ազգին կը վերաբերի այն, ուր պիտի երթայ և նաւապետին անունն ի՞նչ է։

— Սակայն, պատասխանեց պաշտօնակալը, արդէն նաւը յանձն առած է մեզ սորվեցնել թէ ինք ո՞ր ազգին կը վերաբերի, ապա թէ ոչ վատ ու սատանայ է։ Ձէ՞ք տեսներ յետնակայմի շեղկայմին (corne) վրայ ծածանող դրօշակը. անբիծ դրօշն է այն՝ երկաբժամանակեայ գործածութեամբ փոքր ինչ հինցած. այս մասին այսչափ։ Իսկ եթէ ուր երթալիքը կ՚ուզէք գիտնալ, ինչպէս որ երբ բերդին հրամանատարին հարցուցիք ձեզի ըսաւ, Մեքսիկա պիտի երթայ։ — Էմմանուէլ զարմացմամբ պաշտօնակալին երեսը նայեցաւ։ — Վերջապէս գալով նաւապետին՝ ամենէն դժուարին կէտը այս է։ Վասն զի ոմանք կ՚ըսեն ու մինչև անգամ կ՚երդնուն թէ ինձի կամ ձեզի հասակակից երիտասարդ մ՚է, ըստ որում կարծեմ թէ երկուքս ալ շատ մօտէն օրօրոցին մէջ իրարու հետևած ենք, թէև մեր ներկայ պաշտօնները կրնան խիստ մեծ միջոց մը դնել մեր երկուքին դերեզմաններուն մէջ տեղը։ Այլք կը պնդեն թէ՝ իմ մօրեղբօրս՝ տ՚Էսթէն կոմսին տարեկից է, ինչպէս որ անշուշտ գիտէք դեռ նոր ծովակալ եղաւ և հիմակ Ամերիկայի ապստամբներուն կ՚օգնէ, մինչ ոմանք դեռ ևս զանոնք Գրանսա կը կանչեն։ Բայց իւր անունը. այդ ուրիշ բան է, կ՚ըսեն թէ ինք իսկ չգիտէ, և սպասելով որ բարեբաղդ դէպք մը զայն յայտնէ՝ Բոլ կ՚ըսուի։

— Բո՞ղ։

— Այո՛, Բոլ նաւապետ։

— Ի՞նչ Բոլ։

— Բոլ Բրովիդանսի, Բոլ Ռանջէի, Բոլ Ալանոի, վերջապէս իւր մտած նաւին համեմատ։ Մինթէ չկա՞ն Գրանսայի մէջ ալ այնպիսի երիտասարդ իշխաններ որոնք իրենց ընտանիքի անունը շատ կարճ գտնելով, երկրի մը անուամբ զայն կ՚երկարեն և քոլորին

վրայ ասպետի սաղաւարտը կամ պարոնի թագը կը դնեն այնպէս որ անոնց կառքն ու կնիքը հին դերդաստանի մը կերպարանը կ՚առնուն որ շատ ախորժելի է տեսնել։ Լաւ ուրեմն, այն ալ այսպէս է։ Հիմակու հիմակ, կարծեմ թէ Էդդէնի Բոլ կ՚ըսուի, և այս անուան վրայ այնքան կը խրոխտայ որ, եթէ իմ նաւային յօժարամտութեանս համեմատ դատեմ, կարծեմ թէ իր նաւը Պրէսթի ծովեզրէն մինչև Ռոնի ափունքը տարածուող ամենէն դեղեցիկ երկրին հետ անդամ չփոխեր։

— Բայց վերջապէս, կրկնեց Էմմանուէլ պահ մը մտածելով թէ ինչ տարօրէն կերպիւ իր խօսակիցը հետզհետէ հեգնալի ու անկեղծիք խօսքեր կը խառնէր պատասխաններուն մէջ, այն անձը ինչ բնաւորութեան տէր է։

— Բնաւորութիւնը, ո՜հ, բայց, սիրելի . . . . պարոն . . . . կոմս . . . մարքիզ։

— Կոմս, պատասխանեց Էմմանուէլ խոնարհելով։

— Լաւ ուրեմն, սիրելի կոմս, արդ՝ կ՚ըսէի թէ ստուգիւ վերացականէն վերացականը կը մղէք զիս և երբ ես իմ աշխարհական հմտութիւններս ձեր անօրէնութեան ներքև դրի՝ բոլորովին անծանօթ բաները քննելու համար չէր։ Իր բնաւորութիւնը ըսիք. աղէ, տէր Աստուած, սիրելիդ իմ կոմս, ո՞վ կրնայ մարդու մը բնութեան վրայ իրմէ զատ ճշդիւ խօսիլ, և դարձեալ. . . . Օրինակի համար, ես, ինչպէս որ կը տեսնէք, քսան տարի է սա լայնատարած դաշտին վրայ կ՚աշխատիմ մերթ երկկայր (brick) մերթ կրկնայարկ նաւի մը ողնափայտով։ Իմ աչերս, եթէ այս կերպ բացատրել կարելի է, գրեթէ մի և նոյն միջոցին ինչպէս երկինքը նոյնպէս և Ովկիանոսը տեսան։ Այն օրէն՝ի վեր որ լեզուս երկու բառ քովէ քով կապելու և իմացականութիւնս ալ երկու գաղափար յօրինելու կարողութիւնն ստացաւ, սկսայ Ովկիանոսին քմածին հաճոյքը քննել և ունիլ։ Լաւ, դարձեալ դեռ ես անոր բնութիւնը չեմ ճանչեր, թէև գիտեմ որ չորս դլխաւոր և երեսուն երկու երկրորդական հովեր զայն կը շարժեն. ահա այսչափ միայն։ Արդ՝ ինչպէս կ՚ուզէք որ մարդս դատեմ, քանի որ հազար ու մէկ տեսակ կիրք զայն անդադար կը յուզեն։

— Սակայն ես ձեզմէ, սիրելի . . . դուքս . . . մարքիզ . . . կոմս։

— Պաշտօնակալ, պատասխանեց Նորատի նաւազը խոնարհելով, ինչպէս որ Էմմանուէլ ըրեր էր։

— Արդ, սիրելի պաշտօնակալ, կ՚ըսէի թէ ես ձեզմէ Բոլ նաւապետին կրից վրայօք փիլիսոփայական դաս մը չխնդրեցի։ Այլ մի միայն երկու բան կ՚ուզէի հասկնալ. նախ թէ պատուոյ տէր անձ մ՚է։

— Ամենէն առաջ, սիրելիդ իմ կոմս, պէտք է բառերը պարզել։ Պատ- ըսելով ի՞նչ կը հասկնաք։

— Ներեցէք, սիրելի պաշտօնակալ, շատ անհեթեթ հարցում մ՚է այդ։ Պատիւը ի՞նչ է. բայց պատիւը պատիւ է։

— Ահա ճիշդ խնդիրը այդ տեղ է. բառ մը որ սահման չունի Աստուած բառին պէս. Աստուած ալ Աստուած է, սակայն ամեն մարդ իւր քմայ համեմատ իր Աստուածը կը յօրինէ. Եգիպտացիք միջատը իրը Աստուած կը պաշտէին, իսկ Իսրայէլացիք ոսկեղէն կովը։ Ճիշդ պատիւն ալ այսպէս է։ Գորիօլանի պատիւ կայ, Սիտի պատիւ կայ, կոմս Ժիւլիէնի պատիւ կայ։ Արդ՝ եթէ կ՚ուզէք որ պատասխանեմ, ձեր հարցումը աւելի պարզեցէք։

— Լաւ ուրեմն, իմ հարցուցածս այն էր թէ կարելի՞ է անոր խօսքին վստահիլ։

— Ո՜հ, այդ մասին, չեմ կարծեր որ երբէք խոստմնազանց գտնուած ըլլայ։ Իր թշնամիները, որովհետև մարդ ուր որ ալ երթայ կ՚ունենայ, իր թշնամիները անդամ կ՚ըսեմ, երբէք չեն տարակուսած թէ նա մինչև իր վերջին շունչը խոստմանը վրայ հաստատ կը մնայ։ Ուստի, հաւատացէք, այս կէտն ալ լուսաբանեցինք։ Այս իմաստով՝ պատուոյ տէր։ Անցնինք հիմակ երկրորդ խնդրոյն, վասն զի եթէ չեմ սխալիր, բան մը ևս պիտի հարցնէիք։

— Այո՛, կ՚ուզէի գիտնալ թէ Նորին Վեհափառութեան մը հրամանը հաւատարմութեամբ կը կատարէ։

— Ո՞ր Վեհափառութեան։

— Իրաւի, բարեկամ, այնպիսի դժուարիմացութիւն մը կը կեզծէք, որ կարծեմ սոփեստեան հաղուստին աւելի աղէկ կը վայլէ՝ քան թէ նաւաստիի համազգեստին։

— Բայց ինչո՞ւ։ Որովհետև պատասխան մը տալէ առաջ ինչ բանի պատասխանելիքս կ՚ուզեմ գիտնալ՝ խծբծող կ՚անուանէք զիս։ Նոյն իսկ այս պահուս ութը տասը Վեհափառ կան որոնք աղէկ գէշ Եւրոպայի այլ և այլ ամիոններուն վրայ բաղմած են։ Կայ Ուղղափառ Վեհափառութիւնը՝ սկար Վեհափառութիւն մը, որ Շարլը Եւ-ի կտակած ժառանգութիւնը կը թողու որ մաս մաս շորթեն իր ձեռքէն։ Կայ բրիտանական Վեհափառութիւնը՝ պինդ-գլուխ Վեհափառութիւն մը, որ իւր Ամերիկային փաթթուած է ինչպէս Սինէժիր Պարսկոյ նաւին, սակայն մենք անոր ձեռքը պիտի կտրենք՝ եթէ զայն չթողու։ Կայ Ամենաքրիստոնեայ Վեհափառութիւնը, զոր կը յարգեմ ու կը պատուեմ. . . ։

— Լաւ ուրեմն, ես ալ այդ Վեհափառութիւնը ըսել կ՚ուզեմ, ընդմիջեց Էմմանուէլ։ Կը կարծէք միթէ որ Բոլ նաւապետը՝ անոր կողմէն տանելիք մէկ հրամանիս հնազանդելու տրամադիր պիտի չլլլայ։

— Բոլ նաւապետը, պատասխանեց պաշտօնակալը, ինչպէս ամէն նաւապետի պարտքն է, իրեն հրամայելու իրաւունք ունեցող որ և իցէ իշխանութեան մը հրամանին կը հնազանդի. միայն թէ այս՝ անիծեալ ծովահէն մը, մահապարտ ասպատակ մը կամ թափառական ելուզակ մը չըլլայ, թէև չեմ կարծեր նաւին տեսքն ու կազմակերպութիւնը գիտելով։ Եթէ իր խցիկին մէկ գզրոցին մէջ հրամանագիր մ՚ունենայ և անոր ներքևը Լուիի անունը կամ Գաղղիոյ երեք շուշան ծաղիկներու կնիքը գտնուի՝ տարակոյս չկայ որ մի և նոյն անուամբ ստորագրուած և մի և նոյն գրօշմով կնքուած որ և իցէ հրամանի մը կը հնազանդի։

— Արդ՝ ես ալ այդ կը փափաքի հասկնալ, պատասխանեց նոր-բահասակ հրացանակիրը, որ իւր խօսակցին պատասխաններէն սկսեր էր նեղիլ։ Ուստի հիմակ մէկ հարցում ևս ունիմ։

— Ինչպէս ձեր միւս հարցումներուն պատասխանեցի, նոյնպէս և ատոր ալ պատասխանելու պատրաստ եմ։

— Միթէ այդ նաւն երթալու միջոց մը գիտէք։

— Անշուասկի, պատասխանեց նաւաստին ձեռքը դէպի մակոյկը երկարելով՝ որ պզտիկ խորշի մը մէջ ծովին մակընթացութենէն կ՚օրորէր։

— Սակայն այդ նաւակը ձերը չէ՞։

— Լաւ ուրեմն, ես ձեզի կը տանիմ։

— Ուրեմն Բոլ նաւապետը կը ճանչէք։

— Ե՞ս, ամենևին. բայց ծովակալի մը քեռորդին ըլլալովս բնականաբար ամէն նաւի դլխաւորը կը ճանչեմ, անուշ ջուր կրող մակոյկի ղեկավար երրորդ նաւաստապետէն բռնէ մինչև պատերազմական նաւատորմի հրամանատար փոխ-ծովակալը։ Ասկէ զատ մենք նաւաստիքս՝ այնպիսի դաղտնի նշաններ ու մասոնական լեզու մ՚ունինք որ Ովկիանոսին վրայ ուր որ իրարու հանդիպինք՝ իրը եղբայր զիրար կը ճանչենք։ Ուստի, ընդունեցէք առաջարկութիւնս այն համարձակութեամբ որով կ՚առարկեմ։ Արդ՝ ես, թիավարներս և նաւակս ձեր հրամանին կը սպասենք։

— Լաւ ուրեմն, ըսաւ Էմմանուէլ, այս վերջին շնորհքն ալ ըրէք ինձ և . . . ։

— Եւ իմ շրջաբանութիւններով ձեզ պատճառած ձանձրոյթս պիտի մոռնաք, այնպէս չէ՞, ընդմիջեց պաշտօնակալը ժպտելով։ Ի՞նչ ընենք, բարեկամ, շարայարեց նաւաստին ձեռքի նշմայր մը ընելով զոր թիավարները անմիջապէս հասկցան, Ովկիանոսին առանձնութիւնը մեզի, այսինքն նաւավարներու, մենախօսութիւն կը սորվեցնէ։ Ծովուն հանդարտ ատենը հովը կը կանչենք, իսկ փոթորկի ժամանակ խաղաղութիւն կ՚ուզենք և դիշերը Աստուծոյ հետ կը խօսինք։

Էմմանուէլ դարձեալ կասկածագին ակնարկ մը նետեց իւր ընկերին վրայ. իսկ ասկիայ այն կեղծ միամտութիւնը ցոյց տուաւ որ ամէն անգամ երբ հրացանակիրը իրեն բան մը հարցնէր՝ իր դէմքը կը պաշարէր։ Էմմանուէլ կը զարմանար թէ ինչպէս նա մարդկային բաները կ՚արհամարհէր, Աստուծոյ գործերուն վրայ իրը բանաստեղծ կը զմայլէր. սակայն նկատելով որ գիմացի մարդը իր խնդիրը թէև այլանդակ ձևերով՝ բայց վերջապէս կատարելու մտադիր է, անոր առաջարկութիւնը ընդունեց։ Հինդ վայրկեան ետքը երկու երիտասարդները գէպի անծանօթ նաւը կը յառաջանային, այն արագութեամբ, զոր մակոյկին կատար վեց հոժկու թիավարներու միահամուռ ջանքը։ Թիերը այնպիսի կանոնաւոր կերպով կ՚ելևէջէին՝

որ կարծես թէ զանոնք շարժողը չէ թէ մարդկային ուժ մ՚էր այլ մեքենայական զօրութիւն մը։

Բ

Քանի կը յառաջանային՝ նաւին շնորհալի ձևերը իր բոլոր մասերուն աբանչելի կատարելութեամբը անոնց աչաց առջև կը պարզուէր, ու թէև նորահասակ տ՚Օրէյ կոմսը սովորութիւն կամ կորչու

նաւը կենդանի էակի նման զարդարել և այս կերպով մեծամեծ գումարներ պատերազմի կամ փոթորիկի բաղդին ձգել։

— Ի՛նչ ընենք, պատասխանեց գեռահասակ պաշտօնակալը անմեկնելի թախծութեան շեշտով մը, մենք նաւագէս՝ մեր նաւատներէն զատ ուրիշ ընտանիք. Ովկիանոսէն զատ ուրիշ հայրենիք, փոթորիկէն զատ ուրիշ տեսարան և պատերազմէն զատ ուրիշ զբօսանք չունինք, ուստի պէտք է որ բանի մը սեր կապենք։ Քանի որ իրաւացի սիրուհիներ չունինք, վասն զի ոմ յանձն կ'առնէ մեզի պէս թևատարած որորները սիրել, պէտք է որ երևակայական սեր մը յօրինենք։ Մէկը թարմաւէտ և հովանաւոր կղզեակ մը կը զարնուի և ամեն անգամ որ զայն հեռուէն կողով մը ծաղկի պէս Ովկիանոսէն դուրս ցցուած նշմարէ՝ սիրան 'ի թունդ կ'ելնէ, ինչպէս թռչունը երբ նորէն իր բոյնը տեսնէ։ Միւսը՝ երկինքը սիրելի աստղ մ'ունի և Ատլանտեանի այն երկար ու դեղեցիկ գիշերները ամեն անգամ որ հասարակածէն անցնի՝ կը կարծէ թէ աստղը իրեն կը մօտի և աւելի փայլուն լոյսով մը, աւելի վառ կայծով մը զինքը կը բարևէ։ Վերջապէս կան այնպիսիներ ալ և ասոնք ամենէն մեծ մասը կը կազմեն, որոնք սիրաշարժ օրիորդի մը չափ կը սիրեն իրենց նաւը և հառաչ մը կ'արձակեն՝ ամեն անգամ որ հովը անոր մէկ մասը կոտրէ կամ գնդակը անոր մէկ կողմը ծակէ. և երբ նաւը փոթորիկի կամ պատերազմի ժամանակ մէջ տեղէն հարուած մ'ընդունի՝ աւելի աղէկ ունին մեռնիլ քան թէ առանց անոր ապրիլ։ Այսպէս ցամաքին ալ հաւատարմութեան սուրբ օրինակ մը կուտան իրենց սիրոյ առարկային հետ Ովկիանոսին ամենէն խորին անդունդները խորասուզելով։ Լաւ ուրեմն, Բոլ նաւապետն ալ այս կարգէն է, ահա այսչափ, և իր սիրուհիին տալիք հարսանեկան կողովը իր կրկնայարկին ընծայած է։ Ա՛հ, ահ, դեռ հիմակ արթնցան։

— Հէյ, պարոններ, գոչեցին նաւէն, ի՞նչ կ'ուզէք։

— Վերը ելնել, պատասխանեց Էմմանուէլ։ Ուստի մեզ օգնելու համար պարան մը, կառան մը, վերջապէս ինչ որ կ'ուզէք նետեցէք։

— Աչ կողմը դարձէք, հոն ելնարան կայ։

Թիավարները անմիջապէս այս հրամանին հնազանդեցան և քանի մը մանրերորդէն՝ երկու երիտասարդները նաւին յարկը տանող ելնարանին (coupée) քովը հասան։ Պահակ պաշտօնակալը մեծ և առջևի կայմին մէջ տեղը եկաւ զանոնք ընդունելու այնպիսի փութով որ Էմմանուէլի աչքին աղէկ նշան երևցաւ։

— Պարոն, ըսաւ պաշտօնակալը երիտասարդին դառնալով, որ իրեն պէս նշանաղդեստ մը հաղած՝ անոր աստիճանակից կ'երևէր, ահա իմ բարեկամս . . . ։ Բայց աղէկ միտքս եկաւ, մոռցայ ձեր անունը հարցնել։

— Կոմս Էմմանուէլ ա՛Օրէյ։

— Արդ՝ կ'ըսէի թէ, ահա իմ բարեկամս կոմս Էմմանուէլ ա՛Օրէյը որ շատ կը փափաքի Բոլ ւաւապետին հետ խօսելու. հոս է արդեօք։

— Հիմակ եկաւ, պատասխանեց պաշտօնատարը։

— Ուրեմն, սիրելիդ իմ կոմս, ես վար երթամ ձեր այդն անոր իմացնեմ։ Իսկ մինչև իմ գալս՝ Գ. Վոլթերը յօժարակամ ձեզ նաւին մէջ կը պտրտցնէ։ Ցամաքային պաշտօնակալի մը համար խիստ հետաքրքրական տեսարան մ'է այս, մանաւանդ այսպիսի ընտիր նաւ մը կարծեմ շատ քիչ կրնաք գտնել։ Միթէ ընթրիքի ատե՞ն է։

— Այո՛, պարոն։

— Ուրեմն աւելի հետաքրքրական է։

— Բայց, պատասխանեց պաշտօնատարը, ես հիմակ պահպանութիւն կ'ընեմ։

— Վա՛չ, կրնաս ընկերներդ մէկը քու տեղդ դնել որ պահ մը հոկէ։ Ես կ'աշխատիմ որ նաւապետը շատ չսպասեցնէ ձեզ։ Ի կրկին տեսութիւն, կոմս։ Այնպիսի կերպով մը պիտի յանձնարարեմ ձեզ որ լաւ ընդունելութիւն մը գտնէք։

Այս ըսելով նորատի պաշտօնակալը հրամանատարին սանդուղքէն անհետ եղաւ, մինչդեռ պահանորդ պաշտօնակիրը որ Էմմանուէլին առաջնորդելու համար քովը մնաց, զայն զինարանը տարաւ։ Կոմսին ուղեկցին ըսածին համեմատ սպայակոյտը կ'ընթրէր։

Առաջին անգամն էր որ Էմմանուէլ այսօրինակ տեսարան մը կը

դիտէր, ու թէև ժամ առաջ նաւապետին խօսիլ կը փափաքէր, բայց այնքան հետաքրքրական երևցաւ իրեն այն, որ բոլոր ուշադրութիւնը դրաւեց։

Մէն մի թնդանօթին մէջ տեղը և գործելու սահմանուած միջոցը՝ մէյմէկ սեղան և նստարաններ կային, որոնք չէ թէ իրենց ոտներուն վրայ դրուած՝ այլ պարանով ձեղունէն կախուած էին։ Անձնիւր բազմարանին վրայ չորս չորս մարդ նստած էր. ասոնք եղան միսի շերտ մը կ'ուտէին. թէև միսը իր բոլոր ճգամբը կը դիմադրէր, սակայն այնպիսի քաջալանջ անձերու հետ գործ ունէր՝ որ անոր հակադրութեամբը ետ քաշուելու երես չունէին։ Ամեն մէկ սեղանին վրայ երկերկու ստոման գինի կար, այսինքն մարդի գլուխ կէս շիշ։ Իսկ հացը կ'երևի թէ չափով չէին բաժներ, այլ իւրաքանչիւրին ուղածին չափ կուտային։ Բայց խորին լռութիւն մը կը տիրէր այս մարդերուն մէջ, որոնք զրեթէ հարիւր ոտքսուն, երկու հարիւր հոգի էին։

Թէև այս գործատարները մի միայն բան ուտելու համար իրենց բերանը կը բանային, սակայն Էմմանուէլ զարմացին նշմարեց որ տարբեր տարբեր ցեղէ են և այս դիւրին էր ճանչել ամեն մէկուն կերպարանին ընդհանուր և յայտանիշ տիպարէն։ Իւր Կիկերոնը անոր զարմանքը նշմարեց և կոմսը դեռ իր կարծիքը չյայտնած՝ անոր համապատասխանելու համար,

— Այո՛, այո՛, ըսաւ ամերիկեան շեշտով մը զոր կոմսը ճանչեր էր և որ կը յայտնէր թէ իրեն խօսողը Ատլանտեանին միւս կողմը ծնած է. այս աշխարհիս բոլոր ժողովուրդներուն բաւական աղուոր առղինը ունինք հոս. և եթէ յանկարծ ջրհեղեղ մը նոյայ որդիքը բնաջինջ ընէ ինչպէս երբեմն Ադամիները ըրաւ, կրնանք մեր տապանին մէջ մէն մի ազգին սերմէն գտնել։ Կը տեսնէք սա երեք ընկերները որ իրենց դրացիներուն հետ մէկ կասը բոզպիփ պճեղ մը խստորով կը փոխանակեն, Կալիսացի են, զոր Օրթէկալի հրուանդանը ներս առինք, և մինչև որ Սուրբ Յակոբին աղօթք չընեն՝ չեն կուրիր. բայց անդամ մը որ իրենց աղօթքը կատարեն, մարդ տիրոսի պէս կը յօշոտին ու քայլ մ'անդամ չեն նահանջեր։ Միւս երկուքը որ իրենց թևերով սեղանը կը շփեն, բարեմիտ Հոլանտացիներ են, որոնք Բարեյուսոյ—Գլխոյն գտնուելովը՝ իրենց վաճառականութեան կրած վնասին վրայ տակաւին կը ցաւին։ Ինչպէս որ կը տեսնէք, առջի նայուածքով ճիշդ դարեջրի ման կը նմանին, սակայն եկու տես որ այս չարաճճիները երբ պատերազմի փողը հնչէ՝ Պասգերու պէս առոյգ կը դառնան։ Եթէ քովերնին երթաք, ալ ևս իրենց վրայ խօսիլ չկրնալով՝ իրենց նախնեաց վրայ կը խօսին. ձեզի կ'ըսեն թէ այն ծովաւելածուներու նշանաւոր ցեղէն են։ որոնք երբ պատերազմի երթային դրօշակի տեղ աւել մը կը կանգնէին. բայց աղէկ կըզգուշանան 'ի վերջոյ յարելու թէ գեղեցիկ օր մը Անգղիացիք աւելը առին և անով ձողեր շինեցին։ Իսկ ամբողջ սա սեղանիները որոնք բարձրաձայն խօսիլ չկրնալով կը փսփսան, Գաղղիացի են։ Պատուաւոր տեղը իրենց ընտրած գլխաւորը նստած է։ Այս անձը Բարիզ ծնած է բայց ճաշակով աշխարհաքաղաքացի է։ Փայտամարզութեան, սրախաղութեան և պարի ուսուցիչ է. միշտ զոհ և զուարթ՝ երգելով կը գործէ, երգելով կը կուտի և երգելով պիտի մեռնի, միայն թէ կանեփի փողպատ մը իւր ձայնը կոկորդին մէջ չխզէ և այս ալ շատ հաւանական է որ պատահի՝ եթէ օր մը ճօն Պուլի ձեռքը ինչալու դժբաղդութիւնը ունենայ։ Հիմակ այս կողմը դարձէք և տեսէք սա ոսկրուտ ու քառանկիւնի գլուխներու շարքը. ձեզի համար այս կերպարանները օտար են, այնպէս չէ՞. բայց Հուսսէնի ծովին ու Մեքսիկայի ծոցին մէջ տեղերը ծնող Ամերիկացի մը եթէ զանոնք տեսնէ՝ անմիջապէս Էրիէ լճին արջերէն կամ Նոր Սկոտիոյ փոկերէն պիտի կարծէ։ Ասոնց երեք չորսը կոյր են. պատճառը իրենց կուուելու ձևն է. վասն զի ասոնք հակառակորդին մազերը իրենց ցուցամատին և միջամատին կը փաթթեն ու բթամատով աչքը կը հանեն։ Կան որ այս կրթութեան մէջ շատ յաջողակ են և երբէք չեն յաղթուիր. ուստի երբ թշնամի նաւ մը յարձակին, խիստ քիչ անդամ կը պատահի որ իրենց տէգն ու նրանը չնետեն և իրենց հանդպած առաջին Անգղիացիին հետ չընտամարտին ու տեսնելու արժանի շլայտութեամբ և յաջողութեամբ անոր աչքը չհանեն։ Հիմակ դուք ալ պիտի խոստովանիք որ ճիշդ էր ըսածս, վասն զի մեր հաւաքածոյն կատարեալ է։

— Սակայն, պատասխանեց Էմմանուէլ որ փոքր ինչ հետաքրքրութեամբ այս երկար թուարկութիւնը մտիկ ըրեր էր, ի՞նչպէս կրնայ ձեր նաւապետը այս այլ և այլ տեղերէն եկած մարդերուն խօսք հասկցնել։

— Նախ՝ նաւապետս ամեն լեզու գիտէ. ասկէ զատ՝ թէ՛ պատերազմի և թէ՛ փոթորիկի ժամանակ՝ թէև իր մայրենի լեզուն կը խօսի՝ սակայն այնպիսի շեշտ մը կուտայ անոր, որ հաւատացէք կ՚ըսեմ, ամենքն ալ կը հասկնան ու կը հնազանդին։ Բայց կեցէք, ահա ձախակողմի խցիկը կը բացուի. անշուշտ նաւապետը ձեզ ընդունելու պատրաստ է։

Իրաւի ծովային պաշտօնատարի համազգեստը հագած պատանի մը գէպ երկու պաշտօնակալները յառաջացաւ։ Էմմանուէլին հարցուց թէ տ՚Օրէյ կոմսն ինքն է և անոր ստորասական պատասխանին վրայ՝ Նորատի հրացանակիրը հրաւիրեց իրեն հետևիլ։ Անմիջապէս այն պաշտօնակալը որ այնքան ճշդիւ Կիկերոնի դերը կատարեց, վեր ելաւ և յարկին վրայ Նորէն իր պահ մը ձգած տեղը դնաց կեցաւ։ Իսկ Էմմանուէլ գէպի դուռը յառաջացաւ անհանդիստ և հետաքրքիր այլայլութեամբ մը. վերջապէս Բոլ Նաւապետը պիտի տեսնէր։

Այս մարդը, յիսուն յիսունը հինգ տարեկան կ՚երևէր, ու չէ թէ ամաց լուծը՝ այլ աւելի միշտ նաւին միջնայարկը կենալու սովորութիւնը զինքը կորաքամակ ըրած էր։ Ծովային զինուորական համազգեստը հագեր էր բուռն խստութեամբ։ Այս էր ծիրանի դրապանտերով կապոյտ պատմուճան մը, կարմիր բաճկոնակ, հաւմազոյն տաբատ, գորշ գուլպաներ, առջևը ճամկաղարդ (jubot) շապիկ և թեզանիք։ Մազերը գանգուր հիւսեր, փոշիով ճերմկցուցեր ու ետևի կողմը արմատէն ժապաւէնով մը կապեր էր որուն ծայրերը վար կը կախուէին ծփալով։ Իր եռածայր փեղջրը ու թուրը իրեն քովը սեղանի մը վրայ դրած էր։ Երբ Էմմանուէլ շեմին վրայ երևցաւ, ինք թնդանօթի մը վրայ նստեր էր. սակայն զայն տեսած ատեն ոտք ելաւ։

Նորատի կոմսը այս մարդուն տեսքէն ներքին վախ մը զգաց. անոր ակնարկին մէջ այնպիսի խուզարկիչ կայծ մը կար որ կարծես

մինչև իր դիտած անձին հոգին կը թափանցէր։ Թերևս այս բնազդման այնքան զօրաւոր ըլլալուն պատճառն այն էր որ՝ Էմմանուէլի խիղճը անշուշտ զինքը փոքր ինչ կը տանջէր իր կատարելիք տարօրէն գործին համար, նա մանաւանդ թէ այս գործին նաւապետը եթէ ոչ դաւակից՝ զէթ գործադրիչ ընելու կուգար։

Այս երկու անձերը որպէս թէ իրարու դէմ տխորժ մը զգացած ըլլալով՝ մարդավարութեամբ բայց զգուշութեամբ զիրար բարևեցին։

— Կոմս տ՚Օրէյի՞ հետ խօսելու պատիւն ունիմ, հարցուց ծերունի պաշտօնակալը։

— Եւ ես Բոլ նաւապետի՛ն, ըսաւ դեռատի հրացանակիրը։ Երկուքն ալ կրկին անգամ խոնարհեցան։

— Կրնամ արդեօք հասկնալ թէ ինչ բարեպատեհ առթի կը պարտաւորիմ այս այցելութեան պատիւը, զոր սոյն ժամուս կ՚ընէ ինձ Պրըթանեի ամենէն հին և ամենէն դեղեցիկ անուններէն մէկուն ժառանգը։

Էմմանուէլ դարձեալ ծռեցաւ՝ի նշան շնորհակալութեան. պահ մը կանգ առնելէ ետքը, որպէս թէ խօսակցութիւնը սկսելու դժուարութիւն ունէր,

— Նաւապետ, շարայարեց, ինձ ըսին թէ Մեքսիկայ պիտի երթաք։

— Այո՛, և չխաբեր են, պարոն. վասն զի միտք ունիմ Նոր Օռլէան երթալ Գայէն և Հավան հանդիպելով։

— Խիստ յարմարապատեհ կ՚ըլլայ, և ձեր ճամբայէն շեղելու հարկ չկայ, եթէ իմ բերած հրամանս յանձն առնէք գործադրել։

— Ինձ հաղորդելու հրամա՞ն մ՚ունիք, պարոն, բայց որո՞ւ կողմէն։

— Ծովային գործոց Պաշտօնեային կողմէն։

— Անձամբ ինձի՞ ուղղեալ հրաման մը, կրկնեց նաւապետը տարակուսելի շեշտով մը։

— Չէ թէ անձամբ ձեզի, պարոն, այլ Հարաւային Ամերիկայ երթալիք որ և է արքունի նաւի մը նաւապետին։

— Եւ ի՞նչ բանի կը վերաբերի այդ, պարոն կոմս։

— Քաղաքական յանցաւոր մը կայ որ Գայէն պիտի տարուի։

— Հրամանագիրը ձեր քո՞ղն է։

— Ահաւասիկ, պատասխանեց Էմմանուէլ թուղթը զրպանէն հանելով և նաւապետին ներկայացնելով։

Ասիկայ զայն առաւ և օրուան վերջին ճառագայթներէն օգտելու համար պատուհանին մօտենալով բարձրաձայն կարդաց.

«Ծովային գործոց և գաղթականութեանց Պաշտօնեայն կը հրամայէ Տէրութեան նաւի մը հրամանատար որ և իցէ նաւապետին «կամ տեղակալին, որ Հարաւային Ամերիկայ կամ Մեքսիկայի ծո«ցը պիտի երթայ՝ մինչ ցմահ աքսորի դատապարտուած Լիւսին«եան անուն անձը առնել և Գայէն տանիլ։ Ճամբան կալանաւորը «իր խցիկը հաց ուտէ և նաւաստիներուն հետ չհաղորդակցի։»

— Հրամանագիրը վաւերական չէ՞, հարցուց Էմմանուէլ։

— Կատարելապէս օրինաւոր է, պատասխանեց նաւապետը։

— Ուրեմն մտադի՞ր էք կատարելու։

— Մի թէ Ծովային գործոց Պաշտօնէին հրամանին տակ չեմ։

— Ուստի կրնանք դատապարտը ձեզի ղրկել։

— Երբ որ կ'ուզէք, պարոն, միայն թէ կարելի եղածին չափ շուտով ղրկեցէք, ըստ որում շատ ատեն պիտի չկենամ այս կողմերը։

— Կ'աշխատիմ որ փոյթ տանին։

— Ուրիշ ըսելիք ունի՞ք։

— Չէ, մի միայն այս էր. և հիմակ կը մնայ ինձ իմ շնորհակալիքս յարել։

— Բան մը մի՛ յարէք, պարոն։ Պաշտօնեայն կը հրամայէ և ես կը հնազանդիմ. ասկէ աւելի բան մը չկայ. պարտաւորութիւն մը կը կատարեմ և չէ թէ շնորհք մը կ'ընեմ։

Այս խօսքերուն վրայ նաւապետն ու կոմսը նորէն զիրար ողջունեցին և իրենց իրարու մօտեցած ժամանակէն աւելի ցրտութեամբ բաժնուեցան։

Երբ Էմմանուէլ նաւին յարկը հասաւ, նորատի պահանորդ պաշտօնատարին հարցուց իւր ընկերը։ Իսկ անիկայ պատասխանեց

որ Բոլ նաւապետը զանի ընթրիքի հրաւիրեր էր. միայն թէ միշտ շնորհապարտ և անձնուէր՝ իր մակոյկը կոմսին տնօրէնութեան ներքեւ դրած էր։ Իրաւի նաւակը վարը կրկնայարկին ելնարանին քովն էր և նաւավարները թիերը օդին մէջ բռնած՝ իրենց տանելիք անձը կըսպասէին։ Հաղիւ հաղ Էմմանուէլ վար իջաւ, մակոյկը ինչպէս որ եկեր էր նոյնպէս նաև հեռացաւ արագութեամբ. բայց այս անգամ տխուր և լռիկ կը յառաջանար, վասն զի կոմսը չկար որ խօսակցութիւնը իւր քերթողական փիլիսոփայութեան աքսիոմներովը ոգևորէր։

Նոյն գիշերը պատժապարտը Էդմէնը տարին, և հետևեալ առտու հետաքրքիրները՝ ի զուր փնտռեցին Ովկիանոսին վրայ այն կրկնայարկը, որ ութ օրէ՝ ի վեր այնքան ենթադրութեանց տեղի տուեր էր և որու անակնկալ դալուստը, ապարդիւն դաղարը, և յանկարծական երթը միշտ անմեկնելի դաղտնիք մը եղան Բոր-Լուսի արժանընտիր բնակիչներուն համար։

Գ

Որովհետև Բոլ նաւապետը Պրեթանեի ծովեզերը՝ ի տես բերող պատճառները մի միայն վերոյիշեալ եղելութիւններով պատմութեանս հետ յարաբերութիւն ունին, ընթերցողը Բոր-Լուսի բնակիչներուն պէս անստուգութեան մէջ պիտի թողունք ու դեռ ևս մէկ երկու օր Ովկիանոսին վրայ անոր արկածալի արշաւանքին պիտի հետևինք, թէև մեր կոչումը ու յօժարամտութիւնը բնականաբար մեզ դէպի ցամաք կը մղեն։

Օդը գեղեցիկ էր, որքան որ կրնայ ըլլալ աշնան սկիզբը՝ ծովին արևմտեան կողմերը։ Էդմէնը յաջող հովով քաջարար կը յառաջանար։ Նաւաստիները երկնից պարզութիւնը տեսնելով՝ անփոյթ էին. և բայց՝ ի մի քանիներէն որոնք գործի զբաղած էին, միւս բոլորն ալ նաւին այլ և այլ կողմերը ցրուած՝ իրենց քմաց հա-

մեմատ ժամալաճառ կ'ըլլային, երբ ձայն մը որ կարծես թէ երկինքէն կուգար, գոչեց.

— Ա՛յ, հոս նայեցէք, շի՛շտ։

— Է՛, պատասխանեց երրորդ նաւաստապետը, որ առաջակողմը կ'ըսպասէր։

— Նաւ մը, ըսաւ աստղագէտ (en observation) նաւաղը։

— Նաւ մը, կրկնեց նաւաստապետը։ Պարոն պահապան պաշտօնակալ, նաւապետին իմաց տուր։

— Նաւ մը, նաւ մը, կրկնեցին տամալին դանուող բոլոր նաւաստիները, որոնք՝ նոյն միջոցին կոհակ մը հորիզոնը երևող առագաստաւորը վեր բարձրացնելով, կրցան նշմարել զայն, թէեւ անցորդի մը կամ ցամաքային զինուորի մը անվարժ ակնարկը անշուշտ Ովկիանոսին վրայ տարածուած ճայի մը թեւը պիտի կարծէր։

— Նաւ մը, գոչեց իւր կարգին քսանը հինգ տարեկան երիտասարդ մը, խցիկին վերելակէն յարկին վրայ նետուելով, Պ. Արթիւրին հարցուցէք նայինք կարծիքն ի՞նչ է։

— Ա՛յ, Պ. Արթիւր, գոչեց անգղիերէն լեզուաւ տեղակալը իր ձայնտարով՝ (porte-voix) 'ի զուր չյոգնելու համար, նաւապետը կը հարցնէ թէ ի՞նչ կը կարծես սա ընկուղի կեղևը։

— Ինձ այնպէս կը թուի թէ, պատասխանեց նոյն լեզուով նորատի պաշտօնակալը որու ուղղուած էր հարցումը և որ նաւ մը կուգայ ըսելնուն պէս՝ հայեկն ելեր էր, մեծ նաւ մ'է այն որ հով կը փնտռէ այս կողմը դալու համար. սակայն չեմ պնդեր, դարձեալ դուք ինձմէ աղէկ գիտէք։ Հա՛, հա՛, ահա մեծ առագաստը վար կ'առնէ։

— Այո՛, այո՛, ըսաւ երիտասարդը, որու Վօլթըր նաւապետի տիտղոսը տուած էր, այո՛, մեզի պէս սուր աչեր ունի և մեզ տեսաւ ալ։ Լա՛ւ, եթէ սիրաը խօսք կ'ուզէ, բերնին չափը կուտանք։ Ասկէ զատ՝ մեր թնդանօթներուն բերանը այնքան շատ ատենէ 'ի վեր գոց է, որ պիտի պայթին։

— Պարոն, շարայարեց նաւապետը, զինապետին ըսէ որ գիմացէն կասկածաւոր նաւ մը կուգայ, որպէս զի զգաշ կենայ։ Լա՛ւ

ուրեմն, Պ. Արթիւր, ինչ կարծիք ունիս սա նաւին շարժման վրայ, յարեց իւր կարգին անգղիերէն լեզուաւ և գլուխը դէպ 'ի յառաջակայմի թուխակին (perroquet) հայեկը բարձրացնելով, ուր նորընծայն կեցեր կը գիտէր։

— Բայց զինուորական, բոլորովին զինուորական է, նաւապետ։ Ու թէև գրօշակը չերևիր, սակայն գրաւ կը դնեմ որ ծօրժ թագաւորէն մէկ հրաման ունի։

— Այո՛, այնպէս չէ՞. անշուշտ ծօրժ թագաւորը անոր գլխաւորին պատուիրած է որ Էնգլէն անուն նաւին վրայ յարձակի և թէ որ զայն բռնէ՝ խոստացած է զինքը նաւապետ ընել՝ եթէ տեղակալ է, և նաւատորմի հրամանատար՝ եթէ նաւապետ է։ Հա՛, հա՛, ահաւասիկ հիմակ թուխակներուն առագաստները կը պարզէ։ Իրաւի սկսնողը մեր հոտը կ'առնէ և մեր եռեւէն կուգայ։ Մի և նոյն առագաստները բանալ տուր, Պ. Վօլթըր, և առանց շեղելու մէկ գծի վրայ յառաջանանք. տեսնենք թէ պիտի համարձակի՞ մեր ճամբան կտրել։

Տեղակալը անմիջապէս նաւապետին տուած հրամանը կրկնեց և շատ չանցաւ նաւը որու միջնառագաստները միայն բաց էին՝ երեքկնի ամպի պէս թուխակներուն արմիոններն ալ պարզեց ու իր կարգին, որպէս թէ թշնամիին տեսքէն խրախուսուելով յառաջ ծռեցաւ, ցուցակը աւելի խորունկ մլելով ալեաց մէջ և երերուն փբրփուրը ոլնափայտին երկու կողմէն ցայտեցնելով։

Այն ատեն նաւին մէջ լռեցին ու սկսան սպասել. այս միջոցը յարմար առիթ մը համարելով՝ ընթերցողին ուշադրութիւնը այն պաշտօնեային վրայ կը հրաւիրենք զոր նաւապետ կոչեր էր տեղակալը։

Այս անգամ այն նորատի և սկեպտիկեան պաշտօնակալը չէր որ ինչպէս տեսանք կոմս մ'Օրէյը նաւը տարաւ, ոչ ալ այն ազգու և սուղ ձայնով ծոլի ծեր ու կորաքամակ գայլը որ զանի խցիկը ընդունեց. այլ քսանը չորս քսանը հինգ տարեկան դեղեցկադէմ երիտասարդ մ'էր, որ ամեն ծպտեալ ձևերը մէկ դի թողլով վերջապէս իւր բնական կերպարանովը և այն քմահաճ նշանագրեստովը կ'երևէր, զոր մի միայն Ովկիանոսին վրայ դանուած ժամանակը

կը հագնէր, այն ատեն միայն՝ երբ ծովը, փոթորիկը և Աստուած կրնային զէնքը ճանչել։ Այս համազգեստը սև թաւշեայ տեսակ մը տառատոկ էր ոսկեթել ժապաւէններով և մէջքէն տաճկական զօտիով մը սեղմուած, ուր մենամարտութեան տարճանակներ խոթած էր։ Այս հրացանակները քանդակուած, բանուած ու նկարուած էին այն զէնքերուն պէս զոր կարծես աւիլի զարդի քան թէ պաշտպանութեան համար կը գործուին։ Ճերմակ փաղմէր տարատ մը հագեր էր և կարճ ու փօթաւոր (plissé) կօշիկներ որոնք գրեթէ մինչեւ ծունկը կը հասնէին։ Իր վիզը իբր անկապ փողպատ մը կը ծփար հնդիկ թաշկինակ մը թափանցիկ հիւսուած և վրան ընական գոյներով ծաղիկներ նկարուած. իր երկար և անփոշի մազերը եպենոսի պէս սև՝ արևէն թխացած ու յոյսէն կարմրած այտերը կը շոյէին և ուր ուրեմն մեղմ սիւքէ մը վեր կը ծածանէին։ Իր ետևի կողմը՝ թնդանօթի մը վրայ երկաթեայ պղտիկ սաղաւարտ մը կար, որ գնչին տակ օղակաձև շրուշակներ ունէր իբր կոճակ։ այս էր իր պատերազմի զարդն ու պաշտպանողական միակ զէնքը։ Սակայն պղնձին վրայ փորուած մի քանի խորունկ ճեղքեր կը յայտնէին թէ՝ քանիցս գլուխը ազատեր էր այն սոսկալի վէրքերէն, զորս նաւաստիներու նաւ մը յարձակած ատեն գործածած թուրը կ'ընէ։ Իսկ նաւին միւս մարդիկը դաղղիական ծովային զօրաց նշանագգեստը հագեր էին ամենայն ճշդութեամբ ու վայելչութեամբ։

Այս միջոցին, քսան վայրկեան առաջ յառաջակայմի պահակին ծանուցած նաւը որ նախ հորիզոնին վրայ իբր ճերմակ կէտ մը երևցաւ՝ կամաց կամաց առաղաստի և սարի բուրգ մը դարձեր էր։ Ամենքը իրենց աչքն անոր վրայ սնդեր էին, ու թէև բնաւ հրաման մը տրուած չէր, սակայն իւրաքանչիւր ոք իր անձնական խորհուրդները ըրեր էր, որպէս թէ պատերազմը որոշուած էր։ Ուստի Էնոֆէնի մէջ այն հանդիսաւոր ու խորին լռութիւնը կը թագաւորէր, որ ընդհանրապէս կը տիրէ պատերազմական նաւերու մէջ՝ նաւապետին առաջին վճռական հրամաններէն առաջ։ Վերջապէս երբ նաւը քանի մը վայրկենի մէջ աւելի խոշորցաւ, կարծես թէ գոգը իր կարգին ջրէն դուրս ելաւ՝ ինչպէս առաղաստները հետզհետէ ելեր էին։ Այն ատեն տեսան որ Էնոֆէնէն քիչ

մը աւելի մեծ պատերազմական նաւ մ'էր և երեսունը վեց թնդանօթ ունէր։ Սակայն կրկնայարկին պէս այս նաւին ալ յետնակողմի շեղկայմին վրայ դրօշակ չկար, և որովհետև սպայակոյտն ալ կը տաւեայ պատնէշներուն (bastengage) ետին պահուրտած էին՝ անհնար էր մանաւոր նշաններէ զատ ինչ ազգի վերաբերիլը հասկընալ։ Նաւապետը մի և նոյն միջոցին այս երկու բաները դիտեց, թէև կարծես մի միայն վերջինին վրայ զարմացաւ։

— Կ'երևի թէ, ըսաւ տեղապահին դառնալով, դիմակաւոր պարահանդէսի ներկայացում մը պիտի ունենանք։ Քանի մը դրօշակ բաց, Արթիւր, և հասկցնենք մեր անծանօթին որ նապոլի Էնոֆէնը կրնայ այլ և այլ կերպով ծպտիլ։ Իսկ դու, Պ. Վօլթըր, հրամայէ որ զէնքերը պատրաստեն, վասն զի այս կէզմերը գրեթէ ուրիշ բանի չենք կրնար հանդիպիլ՝ բայց միայն թշնամիներու։

Երկու հրամաններուն պատասխանը եղաւ անմիջական գործադրութիւնը։ Պահ մը ետքը՝ նորահասակ պաշտօնակալը յետնամբարտակի (gaillard d'arrière) դարակներէն տասնի չափ այլ և այլ դրօշակներ հանեց և Վօլթըր տեղապահը զէնքի արկղները բանալով՝ յարկին այլ և այլ կողմերը նիզակներ, տապարներ, դաշոյններ կոյտ կոյտ դիզել տուաւ. յետոյ նաւապետին քով իր տեղը եկաւ կեցաւ։ Այն ատեն ամեն մարդ իր տեղակը (poste) բռնեց՝ աւելի բնազդումով քան թէ իբր պարտաւորութիւն, վասն զի պատրաստութեան նշան տրուած չէր տակաւին։ Այսպէս պահ մ'առաջ նաւին մէջ տիրած շփոթը հետզհետէ դադրեցաւ և ամենքը լուռ կեցան ուշադիր։

Սակայն երկու նաւերն ալ ծայրամէտ (convergeut) գծի մը հետևելով՝ անընդհատ իրարու կը մօտենային։ Երբ գրեթէ երեք ռումբի հեռաւորութեան միջոց մը մնաց,

— Պ. Վօլթըր, ըսաւ նաւապետը, կարծեմ թէ ժամանակը եկաւ որ մեր բարեկամը շփոթենք։ Սկսուիլ դրօշակը բանանք։

Տեղապահը գլխաւոր դեկավարին նշմայր մ'ըրաւ և երկնագոյր խորշով (canton) կարմիր լաթը բոցի պէս Էնոֆէնի յետնակողմը բարձրացաւ. սակայն անծանօթ նաւին մէջ այս գործողութեան մասին հետաքրքրութեան նշան մը ցոյց չտուին։

— Այո՛, այո՛, մրմնջեց նաւապետը, Անգղիոյ երեք յովազաւիւծները Սկովտիոյ առիւծին ակռաները այնքան լաւ խարտեր և Ֆիրանները այնքան ազէկ ծայրատեր են՝ որ անոր ուշադրութիւն չեն ըներ, կարծելով թէ պաշտպան չունենալուն՝ ընտելացած է։ Ուրիշ նշան մը ցցո՛ւր, Պ. Վոլթըր, թերևս անով լեզուն բացուի։

— Ինչի՞ նշան, նաւապետ։

— Ձեռքիդ եկածը սա՛, բաղդը մեզ կ'օգնէ։

Այն ինչ այս հրամանը տրուեցաւ, Սկովտիոյ դրօշը վար առին և անոր յաջորդեց Սարանիայինը։ Նաւը դարձեալ լուռ կեցաւ։

— Օ՛ն, ըսաւ նաւապետը, կ'երևի թէ Վեհափառ ծ.օրժ թագաւորը բարեկամական յարաբերութիւններ ունի Կիպրոսի և Երուսաղէմի եղբօրը հետ։ Ուստի կատակը մէկ դի թողունք որ զանոնք չգժանեցնենք։ Պ. Վոլթըր, Ամերիկայի դրօշակը բա՛ց, և 'ի նշան հաստատութեան՝ ռումբ մը (առանց գնդակի) արձակել տուր։

Մի և նոյն գործողութիւնը կրկնեցին. արձաթագոյն խաչով՝ կարմիր խորշկէն և երկներանգ դրօշակը յարկին վրայ ինկաւ և Միացեալ-Նահանգաց աստղերը յամրօրէն գէպ երկինք ելան, և 'ի նշան հաստատութեան՝ ռումբ մը արձակուեցաւ։

Նաւապետը ինչ որ գուշակեր էր կատարուեցաւ. ապստամբութեան այս նշանին վրայ՝ որ ժպրհօրէն օդին մէջ կը բարձրանար, անծանօթ նաւը դիմակը վար առաւ Մեծն Բրիտանիոյ դրօշակը պարզելով։ Նոյն պահուն արքունի նաւին քովէն ամպի նման մուխ մը ելաւ և Ճայթիւնը չլսուած՝ ռումբ մը կոհակէ կոհակ ոստոստելով, եկաւ գրեթէ Էնոլէնէն հարիւր քայլ հեռու անհետ եղաւ։

— Փողը չալէ՛, Պ. Վոլթըր, գոչեց նաւապետը, վասն զի կը տեսնես որ չսխալեր ենք։ Օ՛ն, տղա՛յք, շարայարեց խօսքը նաւաստիներուն ուղղելով, կեցցէ՛ Ամերիկա, մեռնի՛ Անգղիա։

Ընդհանուր ձայն մը պատասխան տուաւ անոր և այն ձայնը դեռ բոլորովին չդադրեր էր՝ երբ Տրէյֆի մէջ ալ պատերազմի փողը հնչեց։ Այս էր միւս նաւին անունը։ Էնոլէնի շեփորը պատասխանեց անոր և ամենքը իրենց տեղը վազեցին, ռմբաձիգները՝ իրենց թնդանօթներուն քով, պաշտօնակալները՝ զինանոցը և նաւաստիները՝ իրենց գործին։

Իսկ նաւապետն անմիջապէս վրայ ելաւ, ձայնտարը հետն առած. հրամանատարը թէ պատերազմի և թէ փոթորիկի ժամանակ ընդհանրապէս իւր ձեռքը կը բռնէ բարձրագոյն իշխանութեան այս նշանը, նաւային թագաւորութեան այս գաւազանը։

Սակայն դերերը փոխուեր էին. հիմակ Անգղիացին անհամբերութիւն ցոյց կուտար, իսկ ամերիկեան կրկնայարկը հանդարտութիւն կը կեղծէր։ Այն ինչ երկուքն ալ խիստ մօտեցան իրարու՝ ծուխի ոլորտ մը նաւին երկայնութեամբն երևցաւ, կայծակի որոտումին պէս բոմբիւն մը լսուեցաւ և ապստամբները սպանելու համար ղրկուած երկաթեայ սուրհանդակները՝ իրենց ուժգնութեան մէջ հեռաւորութեան միջոցը սխալ հաշուած ըլլալով, եկան կըրկնայարկին կուշտը մաւեցան։ Այլ սակայն ասիկայ, իբր թէ կանխահաս յարձակման մը դիմադրել չուզելով՝ շարունակ հովին կողմը կ'երթար կարելի եղածին չափ իր թշնամիին ճամբայ խնայելու համար։

Նոյն միջոցին նաւապետը դարձաւ իր նաւին վրայ վերջին ակնարկ մը նետելու և զարմանահար դիտեց նոր անձ մը որ այս դեղագոյն ու ահեղ ժամը ընտրեր էր տեսարան ելնելու։ Հազիւ քսան երկու քսան երեք տարեկան երիտասարդ մ'էր նա. դէմքը քաղցր և ժպտուն, հաղուստը պարզ բայց վայելուչ. նաւապետը չէր ճանչեր զինքը։ Թևերը կուրծքին վրայ խաչաձև դրած՝ յետնակայմին կոթներ էր ու թախծագին և անտարբեր կը դիտէր այն անգղիացի նաւը որ բոլոր առագաստները պարզած կը մօտենար։ Նաւապետը այսպիսի պահու մը մէջ և մանաւանդ զինուց արհեստին անծանօթ երևցող անձի մը ցոյց տուած հանդարտութեանը վրայ զարմացաւ. միտքը ինկաւ տ'Օրէյ կոմսին ծանուցած տարագիրը, որ Բոր-Էուի կեցած ժամանակ՝ վերջին դիշերը նաւը բերեր էին։

— Քեզի՞ ոմ հրաման տուաւ որ տամալին ելնես, պարոն, ըսաւ անոր կարելի եղածին չափ ձայնը մեղմելով, այնպէս որ գրժուարին էր դատել թէ այս խօսքը հարցո՞ւմ մ'էր թէ յանդգնութիւն։

— Ո՛չ ոք, պատասխանեց դատապարտը քաղցր ու տխուր ձայնով, բայց ես կարծեցի որ այսպիսի պարագայի մը մէջ թերեւս

նուազ խստապահանջ գտնուիք այն հրամաններու մասին՝ որով ես ձեր կալանաւորը եղած եմ։

— Մոռցաւ որ նաւաստիներուն հետ հաղորդակցիլ արգիլուած է քեզ։

— Ես անոնց հետ հաղորդակցելու չեկայ՝ այլ իմ բարիքը ուզող գնդակ մը փնտռելու։

— Եթէ այդ տեղ կենաս՝ կրնաս անմիջապէս գտնել։ Ուստի իրաւ կ'ըսեմ վաղ իջնիր, ունջը գնա։

— Խրատ կուտաք թէ հրաման, նաւապետ։

— Ազատ ես, թզչպէս կ'ուզես այնպէս ըմբռնէ։

— Ուրեմն, պատասխանեց երիտասարդը, շնորհակալ եմ, հոս կը կենամ։

Նոյն պահուն նորէն դանդիւն մը լսուեցաւ. սակայն այս անգամ երկու նաւերը այնքան մօտեր էին իրարու որ հաղիւ գնդակի երեք քառորդ հեռաւորութիւն մնացեր էր. երկաթեայ փոթորիկը ամբողջապէս Էնդիէնի առաղաստներուն մէջէն անցաւ, կայմերէն երկու պզտիկ կտոր տախտակներ ինկան և քանի մը անձերու խելքը ձայնն ու տրտունջը լսուեցաւ։ Նոյն միջոցին նաւապետն ակռուակը իր բանտականին վրայ պնդեր էր. գնդակ մը գլխին երկուքը վերէն անցաւ՝ իր կոթնած յետնակայմը աղեղնաձև պեղելով։ Սակայն այս մահագուշակ աղդարարութենէն ետքը կալանաւորը առանց իր գիրքը փոխելու անշարժ և անվրդով կեցաւ, որպէս թէ մահուան հրեշտակին գլխուն վրայէն անցնիլը չզդացեր էր։ Նաւապետը քաջութենէ կը հասկնար. այս փորձը բաւական եղաւ աչքին առջևը կեցող մարդը գատելու։

— Լաւ, պարոն, ըսաւ անոր, կայնած տեղդ կեցիր, և երբ նաւը յարձակինք, եթէ այդպէս թեւերդ խաչաձև կապած կեսա նաւը յարձակինք՝ թուր մը կամ տապար մը առ և մեզի աջակից եղիր։ Հիմակ ներէ ինձ որ չպիտի կրնամ քեզ դիտել, վասն զի ուրիշ գործ ունիմ։ Կրակ, պարոնայք, զինանոցին ելամուտէն (écoutille) շարայարեց նաւապետը ձայնատարով, կրակ։

— Կրակ, ռմբաձիգք, պատասխանեց արձագանքի պէս այն անձը որու ուղղուած էր հրամանը։

Նոյն պահուն Էնդիէնը ողնափայտէն բռնէ մինչև վերջնակայմերը (kakatoès) գղրգեցաւ. ահռելի բոմբիւն մը լսուեցաւ, ամպանման մուխ մը նաւին աջակողմը քօղի պէս ծածկեց, բայց հովը զայն ցրուեց։ Նաւապետը պահակերուքեան նստարանին վրայ կայնած անհամբեր կրսպասէր անոր անհետ ըլլալուն, որպէս զի արձակուած թնդանօթներուն արդիւնքը դիտէ թշնամի նաւին վրայ։ Երբ կրցաւ իր ակնարկը շոգիին մէջէն թափանցել, տեսաւ որ մեծ կայմին թակաղը–գերանը ինկեր էր՝ բոլոր առաղաստներովը Տրէյֆի յետնակողմը ծածկելով, որոնք ծակծկուեր էին։ Այն ատեն ձայնատարը բերանը տանելով,

— Լաւ, տղայք, գոչեց։ Առաղաստակալները դարձուցէք։ Այնքան զբաղած են իրենց առաղաստներէն ազատելու՝ որ մեր նաւը երկայնութեամբը զարնելու ատեն չունին։ Կրակ ով որ կրնայ. . . և այս անգամ գնդակները ուղղակի անոնց երեսին նետեցէք։

Նաւաստիները փութացին կատարել այս հրամանը. նաւը շնորհալի կերպով մը իւր ղեկը դարձուց և նաւային գործողութիւնները սկսան ու լմնցուցին առանց թշնամիին կողմէն արդելք մը գտնելու։ Ապա կրկնայարկը հրաւերի մը պէս սարսեցաւ և հրաւերի պէս ալ դուրս ցայտեց իր բոյն ու մուխը։

Այս անգամ ռմբաձիգները նաւապետին հրամանը կէտ առ կէտ գործադրեր էին և գնդակները միջնակայմին ու յառաջակայմին մէջտեղը երթալով՝ պարանները, կառանները և լարերը կտրեր էին։ Երկու կայմերը դեռ կանգուն կը կենային, բայց անոնց շուրջը ծրուկ ծուկ առաղաստներ կը ծփային։ Կ'երևի թէ նաւը աւելի մեծ վնաս մը կրեր էր զոր այսչափ հեռուէն չէր նշմարուեր. վասն զի պահ մը թնդանօթի ձայներ լսուեցան և գնդակները փոխանակ Էնդիէնը երկայնութեամբը զարնելու՝ կողմնակի դարձան։ Սակայն ասով աւելի սոսկալի արդիւնք մ'ունեցան վասն զի բոլորն ալ կողին ու յարկին վրայ թափեցան և թէ նաւն ու թէ նաւաստիները զարկին, բայց կարծես թէ դիւթական բաղդով մը երեք կայմերը անվնաս մնացին։ Քանի մը չուաններ միայն կտրուեր էին, և այս ալ մեծ վնաս մը չէր, ըստ որում նաւին գործերուն արդելք մը չէր կրնար ըլլալ։ Բոլ մէկ ակնարկով հասկցաւ որ մինակ մարդ

ջարդուած էր և կորուստը աւելի մեղէն էր քան թէ փայտեղէն։ Ուրախութենէն թռաւ ու նորէն ձայնտարը բերանը դնելով,

— Լծակն 'ի ձախ (barre à babord), գոչեց, և ձախակողմի զիստէն յարձակինք։ Ցառաջ. անդամ մը ևս պարպեցէք թնդանօթները որ կամրջանաւի պէս քերենք զայն և ապա ամրոցի պէս անոր վրայ վերելակենք։

Թշնամի կրկնայարկը Էնդիէնի առաջին շարժումէն հասկցաւ գիտաւորութիւնը, ուստի նոյնօրինակ շարժումով մ'անոր առաջն առնելի ուզեց. բայց նոյն միջոցին որ պիտի դառնար՝ սոսկալի ճայնուլ ուզեց. բայց նոյն միջոցին որ պիտի դառնար՝ սոսկալի ճայնուլ մը լսուեցաւ անոր մէջ և Էնդիէնի արձակած վերջին ռումբերէն մեծ կայմը կիսովին կոտրուելով՝ պահ մը արմատախիլ ծառի մը պէս դողաց ու առջև ինկաւ՝ տամալին իր ահագին առագաստով ու սարով ծածկելով։ Այն ատեն Բոլ նաւապետը Տրէյֆի թնդանօթներուն ուշանալուն պատճառը հասկցաւ։

— Հիմակ այս նաւը ձերն է, տղայք, գոչեց նա, ոչինչ բանի մը պէս ձեզ կուտամ և դուք ալ պէտք է որ առնէք։ Հրացանակի հեռաւորութեամբ վերջին անդամ մ'ալ թնդանօթները նետեցէք, և ապա յարձակինք։

Էնդիէնը վարժ ձիու մը պէս հնազանդեցաւ և առանց ընդդիմութեան դէպի թշնամին յառաջացաւ, որու այժմ միակ միջոցն էր գօտեմարտը, վասն զի շարժիլ չէր կրնար. ուստի իր թնդանօթները անօգուտ էին իրեն համար։ Արդ՝ Տրէյֆը իր հակառակորդին ձեռքը մնաց, որ թէև կրնար մտէն՝ զայն մինչև ծովուն յատակը խորասուզելը ծակոտել, սակայն այսօրինակ յաղթանակ մը արհամարհելով յիսուն քայլ հեռուէն վերջին անդամ իր թնդանօթներն արձակեց։ Ապա, կրկնայարկը առանց այն ռումբերուն արդիւնքը դիտելու՝ թշնամիին վրայ յարձակեցաւ, իր առագաստակալները անոր առագաստակալներուն մէջ մղեց և իր ակիշները նետեց։ Անմիջապէս Էնդիէնի թակաղներն ու վերնակամուրջը (passavant) հրավառուեցան, ինչպէս եռանկիւնի բազմակալ մը (if) հանդիսաւոր օրեր. և հրալից գնդակները կարկուտի պէս սկսան Տրէյֆի վրայ թափիլ։ Ամեն կողմ թնդանօթի ձայնին հրացանները շկահիւնը յաջորդեց և այս դժոխային աղմուկին մէջ ձայն մը լսուեցաւ զերբնական էակի մը ձայնին պէս.

— Սիրտ առէք, տղայք, սիրտ առէք, յոկայմը (beaupré) յետնամբարտակի լուսամուտներուն կապեցէք։ Լաւ, կապեցէք ինչպէս մահապարտը կախաղանը կը կապեն։ Հիմակ առջևի ռմբկէնները նետեցէք։

Բոլոր հրամանները գործադրուեցան որպէս թէ մոգական զօրութեամբ. երկու նաւերը իրը երկաթեայ կապերով իրարու կաշկանդեցին. յառաջակողմը գտնուած երկու ռմբկէնները, որոնք դեռ ամենևին պարպուած չէին՝ իրենց կարգին դուռացին և թշնամի յարկը երկաթ բեկորներով աւլեցին. յետոյ վերջին աղաղակ մ'ալ լսուեցաւ որ սոսկալի ձայնով կը գոչէր. — Ցառա՛՛ջ։ Եւ խօսքը գործով ցուցնելու համար՝ Էնդիէնի նաւապետը իր ձայնտարը մէկ դի նետեց, որ ալ ևս անպէտ էր, սաղաւարտը գլուխն անցուց. շրուշակները իր վզին տակ կոճկեց, մէջքի կոր դաշոյնը ակռաներուն մէջ տեղը դրաւ և յոկայմին վրայ ցատկեց՝ անկէ թշնամի նաւին յետնակողմը նետուելու համար։ Սակայն թէև կայծակի արագութեամբ այս շարժումը իր հրամանին հետևեցաւ, բայց դարձեալ երկրորդ անձն եղաւ ինք որ թշնամի նաւը ոտք կոխեց. առաջինը յառաջակայմին նորատի բանտարկեալն եղած էր որ իր զլուխը վրայէն նետած ու ձեռքը տապար մը բռնած՝ միւս ամենէն առաջ մահուան կամ յաղթանակի առաջը կը վազէր։

— Իմ նաւիս կանոնը չես գիտեր, պարոն, ըսաւ անոր Բոլ ծիծաղելով. ինչ նաւ որ բռնենք՝ պէտք է ես առաջ մտնեմ։ Այս անդամ կը ներեմ, բայց մէկ մ'ալ չընես։

Նոյն միջոցին Էնդիէնի նաւաստիները՝ յոկայմէն, պատնէշներէն, քեղլիներու ծայրերէն, խարիսխներէն վերջապէս նաւին այն ամեն մասերէն ուսկէ կրնային անցնիլ՝ Տրէյֆի տամալին վրայ սկսան թափիլ, ինչպէս հասուն պտուղները ծառին վրայէն կ'իյնան երբ հովը թոթվէ։ Այն ատեն Անդղիացիները որ յառաջակողմը քաշուեր էին, ժամանակ գտնելով՝ ռմբկէն մը դարձուցին ու պարպեցին։ Բոցի ու երկաթեղէնի թաթար մը յարձակողներուն մէջէն անցաւ։ Էնդիէնի նաւաղներուն մէկ քառորդը թշնամի յարկին վրայ ինկան անդամատ՝ աղաղակելով և հայհոյելով. . . ։ Բայց այս սարսուռնջներէն և հայհոյանքէն աւելի բարձր ձայն մը հնչեց.

— Ո՛վ որ կենդանի է, յառաջ անցնի։

Այն ատեն սարսափելի խառնակութիւն մը, զօտեմարտ կռիւ մը, ընդհանուր մենամարտ մը սկսաւ. թնդանօթներու բոմբիւնին, ցրկիճներու (espingole զարապինա) զանգիւնին, հրալից գնդակներու պայթիւնին՝ սրեղէն զէնքերը յաջորդեցին. ասոնք թէև ձայն ձիւն չունին սակայն աւելի ապահով են, մանաւանդ նաւաստիներու ձեռքը, որոնք իրենց միայն պահած են զարաւոր տարիներէ՝ի վեր պատերազմի դաշտերէն հալածուած՝ հսկայներու այս ժառանգութիւնը։

Իրարու գլուխ կը ճեղքեն, դաշոյններով իրարու լանջը կը պատռեն, լայնշի տէդերով զիրար կայմերու բեկորներուն կը ջախջախեն։ Ուր ուրեմն այս լռակաց կոտորածին մէջ հրացանի ձայն մը կը լսուի, բայց միայնակ ու այսպիսի սրածութեան մը մէջ կարծես թէ խառնուելու կ՚ամաչէ։ Մեր այս պատմած ջարդը քառորդ մը ժամ տևեց բայց այնպիսի շփոթով որ անհնար է նկարագրել. յետոյ Անգղիական դրօշակը վար առին. Տրէյֆի նաւաստիները մարակոյին ելամուտէն ունջը իջան շտապաւ և տամալիին վրայ մի միայն յաղթականները, վիրաւորներն ու մեռելները մնացին. անոնց մէջ տեղն էր Էնդիէնի նաւապետը, ոտքը թշնամի հրամանատարին կուրծքին վրայ կոխած. բոլոր սպայակոյտը շուրջը խմբուած էր. աջ կողմը կը գտնուէր Վոլթըր տեղապահը, իսկ ձախը՝ նորահասակ կալանաւորը, որու արիւնաներկ շապիկը կը յայտնէր որ յաղթութեան մասնակցեր էր։

— Հիմակ ամէն ինչ վերջացաւ, ըսաւ Բոլ, թևը երկարելով, և ով որ ասկէ ետքը ձեռք վերցնէ՝ գործը ինձի հետ է։ Յետոյ ձեռքը իւր դեռատի բանտականին երկարելով, Պարոն, ըսաւ ասնոր, այս իրիկուն քու պատմութիւնդ պիտի ընես ինձ, այնպէս չէ՞. վասն զի անոր տակ ժանտ մեքենայութիւն մը կը նշմարեմ թաղուն։ Վատերը միայն Գայէն կ՚աքսորուին, և քեզի պէս քաջասիրտ մը անհնար է որ վատ լինի։

Դ

Մեր հիմակ պատմած եղելութիւններէն վեց ամիս ետքը՝ այսինքն 1778ին գարնան սկիզբները, սուրհանդակ կառք մը, որուն փոշիով ու տղմով ծածկուած անիւներէն և նստարաններէն կ՚երևէր որ հեռու տեղէ մը կուգար, Վանէն Օրէյ տանող ուղիին վրայ ծանրաքայլ կը յառաջանար, թէև երկու ուժեղ ձիերու լծուած էր։ Այս կառքին մէջի ճամբորդն զիւղային ճանապարհի մը արահետներուն մէջ սասիկ ցնցուեր էր։ Մեղի արդէն ծանօթ նորատի կոմս Էմմանուէլն էր այն, որ ինչպէս տեսանք Բոր–Լուսի թումբին վրայ առաջին անգամ ներկայացաւ։ Ուրտրանօք Բարիզէն իր ընտանիքին հետ դղեակը կուգար։ Ժամանակը եկաւ որ մի քանի աւելի ճշգրիտ և մանրամասն տեղեկութիւններ հաղորդենք այս ամբոյին վրայօք։

Կոմս Էմմանուէլ ա՛Օրէյ Պրբթանեի հին գերդաստանէ մ՚էր։ Իր մէկ պապը Սուրբ Լուսի հետ Պաղեստին գացած, և անկէ՝ի վեր այս անունը՝ որու վերջին ժառանգն էր ինք, միշտ մեր տէրութեան պատմութեան խառնուած էր՝ թէ իր յաղթանակներուն և թէ պարտութիւններուն մէջ։ Իւր հայրը՝ ա՛Օրէյ մարքիզը, Սէն–Լուսի ասպետ և Սէն–Միշէլի հրամանատար՝ Հոգւոյն–Սրբոյ կարգին մեծ խաչն ունէր և Լուսի ԺԵ. թագաւորին արքունեաց մէջ՝ ուր հեծելազօրայ գնդապետի պաշտօնը կը վարէր, իւր ազնուականութեան, հարստութեան և անձնական արժանիքին շնորհիւ բարձր վիճակ մը ստանձներ էր։ Օրիորդ Սապլէյի հետ ամուսնանալով՝ այս վիճակին ազդեցութիւնը աւելցեր էր, վասն զի նէ ևս ազնուականութեան և պատուոյ մասին իրմէ վար չէր մնար, այնպէս որ երկու երիտասարդ ամուսիններու առջև փայլուն ապագայ մը բացուած էր, երբ ամուսնութենէն հինգ տարի վերջը յանկարծ պալատին մէջ զրոյց մը տարածուեցաւ թէ ա՛Օրէյ մարքիզը իւր դատակերտին մէջ ճամբորդելու ժամանակ խենթեցեր է։ Երկար

ատեն այս լրին հաւատ չընծայեցին. վերջապէս ձմեռ եկաւ ու ոչ ինքը և ոչ իր կինը Վէրսայլ երեցան։ Տարի մը ևս անոր պաշտօնը թափուր մնաց, ըստ որում թագաւորը միշտ յուսալով որ մարքիզը կը բժշկուի, զայն ուրիշին տալ չէր ուզեր. բայց երկրորդ ձմեռ մ'ալ անցաւ և մարքիզուհին իսկ թագուհիին իւր յարգանքը մատուցանելու չեկաւ։ Ֆրանսայի մէջ շատ շուտ կը մոռնան. բացակայութիւնը այնպիսի իւծողական ախտ մ'է՝ որ ամենէն մեծ անուններն անգամ անոր զոհ կ'երթան սուղ կամ երկար ժամանակի մը մէջ։ Անտարբերութեան քօղը կամաց կամաց այս ընտանիքին վրայ տարածուեցաւ, որ իւր հին գղեկին մէջ առանձնացած էր իբր թէ 'ի գերեզման մի, և այն տեղէն ոչ աղերսի և ոչ դանդատի ձայն կը լսուէր։ Աղղաբանները միայն մէկ տղայ և մէկ աղջիկ զաւակի ծնունդը արձանագրեր էին. ասոնցմէ եւրը ուրիշ զաւակ չծներ էր։ Տ'Օրէյէնց անունը միայն մնացեր էր Ֆրանսայի ազնուապետութեան մէջ, իսկ անձնականապէս դրեթէ լիովին մոռցուեր էին, վասն զի քսան տարիի 'ի վեր ոչ տաղաստի (alcôve) յարաբերութիւններու ոչ ալ քաղաքական գործերու մէջ գտնուեր էին. ոչ Բոնբատուրի և ոչ ալ Տիւպարրիի կողմը բրուներ էին. ոչ մարէշալ տը Պրոգլիի յաղթանակներուն և ոչ ալ կոմս տը Գլէրմոնի պարտութիւններուն մէջ երեցեր էին. վերջապէս ոչ ձայն և ոչ ալ արձագանք ունեցեր էին։ Սակայն ա'Օրէյ իշխաններու հինօրեայ անունը երկու անգամ արքունիքը արտասներ էին, բայց առանց ամենափոքրիկ թնդիւն մը հանելու. որ ասելինը՝ երբ նորատի կոմս Էմմանուէլը 1769ին Լուի ԺԵ.ի մանկլաւիկներուն կարգը անցեր էր. երկրորդը՝ երբ այս պաշտօնէն հրաժեշտ տալով, Լուի ԺԶ. դեռատի թագաւորին հրացանակիր եղեր էր։ Էրքիուր անունով պարոնի մը հետ ծանօթացեր էր, որ Պ. տը Մորբրայի ազգական կ'իյնար և այս ալ անոր բարիք ընել կ'ուզէր ու պաշտօնէին վրայ բաւական մեծ ազդեցութիւն ունէր։ Արդէն Էմմանուէլ այս ծերունի դրանիկին ներկայացեր էր, որ լսելով թէ ա'Օրէյ կոմսը քոյր մ'ունի՝ օր մը այս երկու ընտանիքին խնամութեանը կարելիութեան վրայ խօսք բացեր էր։ Էմմանուէլ՝ երիտասարդ և փառասէր, իր անունը ծածկող քօղին տակ

մաքառելէ ձանձրացած՝ այն ամուսնութիւնը հանդուցեալ թագաւորին օրով պալատին մէջ իւր հօր ունեցած վիճակին հասնելու առիթ մը համարելով՝ չուզեր էր զայն ձեռքէ փախցնել։ Պ. տը Էրքիուր, իւր կողմէն, երիտասարդ կոմսին հետ ունեցած բարեկամական կապերը այս խնամութեամբ աւելի ամրապնդելու պատրուակաւ՝ այնպիսի փափաք մը յայտներ էր, որ Էմմանուէլի շատ հաճելի երեցեր էր, քանի որ իւր քրոջ ձեռքը խնդրող անձը դեռ ևս զայն տեսած չէր։ Տ'Օրէյ մարքիզուհին ալ, իւր կողմէն, ուրախութեամբ այս միութիւնը ընդուներ էր, վասն զի իւր որդւոյն պաշտպանութեան ճամբայ մը կը բանար։ Այսպէս ամուսնութիւնը որոշուած էր՝ եթէ ոչ երկու երիտասարդներուն, դէթ երկու ընտանեաց մէջ, և Էմմանուէլ խօսնայրէն երեք չորս օր առաջ հասնելով՝ կուգար մօրը յայտնելու որ ամէն ինչ իւր փափաքին համամատ լմնցուցած է։ Իսկ Մարկրիթին՝ որ ապագայ ամուսինն էր, մի միայն եղած որոշումը իմացուցեր էին, դրեթէ ինչպէս որ ոճրագործի մը իւր մահուան դատավճիռը կը յայտնեն։

Արդ՝ կոմս Էմմանուէլ իւր ապագայ մեծութեան վրայ փայլուն առնուրջներ կ'երազէր և մարին մէջ փառասիրութեան ամենաբարձր խորհուրդներ կը փայփայէր՝ երբ իւր ընտանիքին տխուր ամրոցը մտաւ, որուն աւատական աշտարակները, սեւաթոյր պատերը, խոտոտ դաւիթները՝ իւր այն ոսկեղջիւր յոյսերուն հակապատկեր մը կ'ընծայէին։ Այս գղեակին շրջապատը՝ մինչև մէկ ու կէս մղոն հեռաւորութեամբ անբնակ էր։ Իր մէկ ճակատը Ովկիանոսին այն մասը կը նայէր, որ փոթորիկէն մշտածուփ ալիներուն համար Վայրենի ծով կ'ըսուի։ Միւս կողմը ընդարձակ բուրաստան մը կարասոր դալարիները քսան տարիէ 'ի վեր իրենց քմայ ձգուելով՝ ճշմարիտ անտառ մը դարձեր էր։ Իսկ սենեակները միշտ դոց էին 'ի բաց առեալ իւր ընտանիքին բնակածները։ Անոնց կարասին, զոր Լուի ԺԴ.ի ատեն վերանորոգեր էին, բազմաթիւ ծառաներու հոգատարութեան շնորհիւ իւր ճոխ և ազնուապետական երևոյթը դեռ ևս կը պահէր, զոր արքունիքի հրովարտակաւոր (bréveté) օթոյարար՝ Պուլի գործարանէն ելած նոր կարասիները կը սկսէին կորսնցնել, թէև աւելի վայելուչ բայց նաև նուազ շքեղ էին։

Էմմանուէլ կոմսը կատ քէն իջած ժամանակ՝ այս մեծ քիւերով, քանդակերտ կրակարանով և նկարազարդ ձեղունով սենեակներէն մէկը մտաւ։ Այնքան կըշտապէր իր բերած բերկրաւիթ լուրերը մօրը հաղորդել, որ առանց զգեստը փոխելու՝ գլխարկը, ձեռնոցները և ճամբորդութեան տարձանակները սեղանի մը վրայ նետեց ու ծերունի սպասաւորի մը հրամայեց որ երթայ իր դալուստը մօրը իմացնէ, և հարցնէ թէ՝ կ'ուզէ որ ինք քովն երթայ, թէ չէ իր սենեակը անոր սպասէ։ Վասն զի այս հինաւուրց դերդաստանին մէջ այնպիսի մեծ ակնածութիւն մ'ունէին առ ծնողս, որ զաւակը հնգամեայ տարակայութենէ ետքը՝ կանխաւ մօրը հաւանութիւնը չառած, չէր համարձակեր անոր ներկայանալ։ Իսկ ա՛Օնութիւնը չառած, չէր համարձակեր անոր ներկայանալ։ Իսկ ա՛Օրէյ մարքիզը՝ հազիւ հազ մէկ երկու անգամ տեսած էին իր որդիքը, և այս ալ դաղտագողի, վասն զի ինք այնպիսի խենթութիւն մ'ունէր կ'ըսէին, որ մի քանի բաներէ կը դրդուէր, ուստի մեծ զգուշութեամբ զանոնք իրմէ հեռու կը պահէին։ Մի միայն մարքիզուհին որ ամուսնական առաքինութիւններու տիպար մ'էր, ամենոր քով կը կենար, և չէ թէ միայն այն խեղճ անմիտի մասին կնային պարտաւորութիւններ կը կատարէր՝ հապա նաև սպասաւորի մը գործը։ Ուստի իւր անունը շրջակայ գիւղերուն մէջ սրրոց պէս յարգելի էր, որոնք այս աշխարհիս մէջ իրենց յայտնած անձնուիրութեամբը՝ երկնից մէջ տեղ մը ստանձնած են։

Պահ մը ետքը ծերունի սպասաւորը ներս մտաւ յայտնելու՝ որ ա՛Օրէյ մարքիզուհին վար պիտի իջնէ, ուստի կը խնդրէր որ կոմսը նոյն սենեակն իրեն սպասէ։ Դրեթէ անմիջապէս ներսի դուռը բացուելով՝ Էմմանուէլի մայրը երևցաւ։ Քառասուն, քառասունը հինգ տարեկան կին մ'էր, մեծ ու ժիտոյն, բայց դեռ ևս գեղանի։ Իր հանդարտ, խիստ ու տխուր դէմքը՝ վսեմ, իշխանական ու հրամայողական մասնաւոր նշան մ'ունէր։ 1760ին ընդունուած այրի կանանց զգեստն հագեր էր, վասն զի իւր ամուսնոյն խելքը կորսնցնելէն 'ի վեր՝ սգոյ լաթերը վրայէն հանած չէր։ Այս երկար ու սև հագուստը իր տառերի պէս յամր ու ցուրտ քաղուածքին այնպիսի շուք մը կուտար, որով այս տարօրէն կինը իր շրջակայ առարկայներուն երկիւղ մը կ'ազդէր։ Իւր զաւակներն

իսկ կըզգային այս երկիւղը և որդիական սէրը չէր կրնար զայն փարատել։ Ուստի Էմմանուէլ երբ զինքը տեսաւ, անակնկալ երևոյթ մը տեսածի պէս՝ դող ելաւ, և անմիջապէս ոտք ելնելով՝ երեք չորս քայլ անոր դէմ գնաց, ամենայն յարգանօք մէկ ծունկը գետին դրաւ, և խոնարհելով անոր երկարած ձեռքը համբուրեց։

— Ոտք ել, պարոն, ըսաւ անոր մարքիզուհին, բարեբաղդ եմ քեզ տեսնելուս։

Եւ այնպիսի անվրդով ձայնով մը արտասանեց այս բառերը, որ հինգ ամսէ 'ի վեր բացակայ որդին, կարծես թէ մէկ օր առաջ բաժնուած էր իրմէ։ Էմմանուէլ հնազանդեցաւ, մայրը տարաւ մեծ թիկնաթոռի մը վրայ նստեցուց, իսկ ինքը անոր առջևը ոտքի վրայ կեցաւ։

— Նամակդ ընդունեցայ, կոմս, ըսաւ անոր, և իմ շնորհակալութիւնս կը յայտնեմ քու յաջողակութեան համար։ Ինձ այնպէս կ'երևի որ դու աւելի դեսպանագիտութեան՝ քան թէ պատերազմի համար ծնած ես. ուստի պէտք էիր աղաչել Պ. տը Լէքթուրը, որ փոխանակ զօրագունդի՝ դեսպանական պաշտօն մը դնէր։

— Լէքթուր մեր ամեն փափաքները կատարելու պատրաստ է. տիկին, և որ առաւելն է, ինք այնպիսի մեծ ազդեցութիւն ունի Պ. տը Մորբրայէն վրայ և այնքան սիրահարած է քրոջս՝ որ ինչ որ խնդրենք, կրնայ ձեռք ձգել։

— Միթէ չտեսաւ կնկան սիրահարած է։

— Լէքթուր ուշիմ ազատորդի մ'է, տիկին. ուստի իմ ըրած Մարկիզիթի նկարագիրը ու թերևս մեր հարստութեան վրայ առած տեղեկութիւնները՝ ձեր որդին ըլլալու և զիս ալ եղբայր կոչելու բուռն փափաք մը ազդած են իրեն։ Ինք պնդեց որ իւր զալէն առաջ նախնական արարողութիւնները կատարենք։ Միթէ նշանառքի ծանուցումն ընել տուինք, տիկին։

— Այո։

— Ուրեմն վաղէն ետքը կրնանք դաշնագիրը ստորագրել։

— Ամուսնոյ օգնութեամբն ամեն ինչ պատրաստ կ'ըլլայ։

— Շնորհակալ եմ. տիկին։

— Բայց, ըսէ ինձ, շարայարեց մարքիզուհին ամենուն թեւին

կութենելով և գէպի Էմմանուէլին ծռելով, քեզի բան մը չհարցուց այն երիտասարդիս համար որու աքսորանաց հրամանագիրն առինք պաշտօնեայէն։

— Ամենեին, մայր իմ։ Ասոնք այնպիսի ծառայութիւններ են որ առանց բացատրութեան կը խնդրուին և վստահութեամբ կը շնորհուին և բարեվար մարդիկ զանոնք կատարելէ վերջը՝ անմիջապէս կը մոռնան։

— Ուրեմն բան մը չըգիտէր։

— Բայց եթէ գիտնայ անգամ. . . ։

— Լաւ ուրեմն։

— Լաւ ունեմն, կարծեմ բաւական փիլիսոփայութիւն ունենալուն՝ այս գիւտը ազդեցութիւն մը չունենար իւր որոշման վրայ։

— Արդէն կը կասկածէի. ինկած է, պատասխանեց մարքիզուհին քամահրական անմեկնելի նշանով մը և որպէս թէ իւրովի խօսելով։

— Բայց եթէ ինկած անգամ ըլլայ, ըսաւ Էմմանուէլ անհանդստութեամբ, յուսամ թէ ձեր որոշումը անփոփոխ կը մնայ։

— Անտարակոյս, քանի որ մենք բաւական հարստութիւն ունենալով՝ կրնանք անոր վիճակը բարւոքել, եթէ նա մեզ պաշտօն մը ղտնէ։

— Ուստի մինակ քոյրս է որ . . . ։

— Տարակոյս ունիս որ չհնազանդի երբ ես հրամայեմ։

— Ուրեմն իրաւ Լիւսինեանը մոռցա՞ւ։

— Վեց ամսէ 'ի վեր՝ գէթ իմ առջևս զայն յիշելու չհամարձակած է։

— Խորհեցէք, մայր իմ, շարայարեց Էմմանուէլ. որ այս ամուսնութիւնը մեր ընտանիքը վերականգնելու միակ միջոց մ'է, վասն զի պէտք է որ ամեն բան ձեզի յայտնեմ։ Հայրս, տիկին, տասն հինգ տարիէ 'ի վեր հիւանդ և արքունիքէն հեռացած ըլլալով՝ ոչ ծերունի թագաւորը մոռնելու, և ոչ ալ երիտասարդը գահը ելնելու ատեն՝ զինքը յիշեցին, խելքը կորսնցնելէն 'ի վեր՝ առաքինական խնամքդ ձեզ չեն ներած պահ մը իսկ իրմէ բաժնուիլ. այս տեսակ առաքինութիւնները, տիկին, թէև մարդիկ չեն գիտեր՝

սակայն Աստուած կը տեսնէ ու կը վարձատրէ. և մինչդեռ դուք՝ Պրբոնեանի խորերը, այս հինգտարեայ գղեակին մէջ, այս սուրբ ու միխիթարական պաշտօնը կը կատարէք, զոր ձեր խստաբարոյութեամբ պարտաւորութիւն կ'անուանէք՝ ձեր վաղեմի բարեկամները կամ մոռնելով կամ ձեզ մոռնալով կ'անհետին. այնպէս որ, տիկին, (այս շատ դառն է մեզի պէս մարդերուն համար որ վեց հարիւր տարի փառք ու պատիւ ունեցած ենք) երբ արքունիքը գայլ, հազիւ հազ Նորին Վեհափառութիւնները մեր անունը, ա՛Օրէյ ընտանիքի անունը, իբր պատմական յիշատակ մը կը յիշէին։

— Այո՛, թագաւորներուն յիշողութիւնը կարճ է, գիտեմ, մրմնջեց մարքիզուհին. բայց գրեթէ անմիջապէս և իբր թէ այս մեղադրանքին վրայ զղջալով՝ յուսամ որ, շարունակեց նա, Աստուծոյ օգնութիւնը Նորին Վեհափառութիւններուն և Ֆրանսայի վերայէն անպակաս կ'ըլլայ։

— Է՛հ, ով կրնայ անոնց երջանկութեանը վնաս մը հասցնել, պատասխանեց Էմմանուէլ ապագայի վրայ այնպիսի կատարեալ վստահութեամբ մը, որ այն ժամանակի այս թեթեւամիտ ու անփոյթ ազատորդիներու մէկ յայտարար բնաւորութիւնն էր։ Լուի ԺԶ՝ թերահաստակ և բարի, Մարի–Անթուանէթ՝ ծաղկափթիթ և գեղանի, երկուքն ալ սիրելի են արիասիրտ և հաւատարիմ ժողովրդեան մը։ Բազդը, փառք Աստուծոյ, գժբաղդութեան ամեն հարուածներէն հեռու պահած է զանոնք։

— Ձկայ մէկը, որդեակ իմ, պատասխանեց մարքիզուհին գլուխը ցնցելով, հաւատա ինձ, որ մարդկային սխալականութենէ ու տկարութենէ ազատ ըլլայ։ Ձկայ սիրտ մը, որ ինչքան ինքնատիրութիւն և հաստատամտութիւն ալ ունենայ, կիրքէ զերծ լինի։ Վերջապէս չկայ գլուխ մը, եթէ թագաւորը իսկ ըլլայ, որ կարենայ պատասխանել թէ միայն մէկ գիշերուան մէջ իր մտքերը չպիտի ձերմկին։ Ժողովուրդը հաւատարիմ և արիասիրտ է, ըսիր։ — Մարքիզուհին ու

բուն աղիողորմ աղաղակները բերէ մեզի։ Ես թէև ընկերութիւն-ներէ քաշուած եմ, բայց ուր ուրեմն տարօրինակ ձայներ կը հասնին ականջս, զոր իբր թէ անհրաժեշտ և մարդարէական ոգիներ կը բերեն։ Միթէ չկա՞յ փիլիսոփայական աղանդ մը որու սխալանաց մէջ լեցած են մի քանի երևելի անձեր։ Միթէ խօսք մը չկա՞յ որ ամբողջ երկիր մը իր գլխաւոր մասէն կը զատուի և անոր որդիքը կը մերժեն իրենց հայրը ճանչել։ Միթէ չկա՞յ ժողովուրդ մը որ ազգ կը կոչէ ինքզինքը։ Կարծես թէ չեմ գիտեր որ կ'ըսեն թէ քաջատոհմիկ մարդեր Ռվիլիանոսէն անցեր են ապստամբներու ձեռքը սուր տալու համար, այն սուրը որ մեր նախնիք մի միայն իրենց օրինաւոր վերհապետին ձայնին կը քաշէին. և դարձեալ կարծես թէ ինձի չըսի՞ն որ, բայց արդեօք առանձնութեանս մէկ երա՞ն է, Լուի ԺԶ. թագաւորն ու Մարի–Անթուանէթ իսկ մոռնալով որ վերհապետները մէկ ընտանիքէ եղբայրներ են, այս զինեալ դաշ թիկաններուն պատերազմի հրաման և չգիտեմ որ ելուզակին ալ պատուիրագիրներ տուեր են։

— Այդ ամենը իրաւ է, ըսաւ Էմմանուէլ զարմանահար։

— Ուրեմն Աստուած հսկէ Ֆրանսայի թագաւորին ու թագուհիին վրայ, կրկնեց մարքիզուհին մեղմաքայլ հեռանալով։

Էմմանուէլ այնպէս ապուշ կրթեցաւ այս աղէտաբեր նախատեսութիւններուն վրայ՝ որ մօրը սենեակէն դուրս ելնելը տեսաւ, բայց չկրցաւ խօսք մը իսկ արտասանել և զայն կեցնելու համար շարժում մ'ընել։

Էմմանուէլ նախ ծանր ու մոռոհ կեցաւ, որպէս թէ մօրը սուղին սուերովը պաշարուած էր։ Բայց անմիջապէս իր անհոգ բնաւորութիւնը յաղթեց և իբր թէ հորիզոն փոխելով՝ զաղափարներն ալ փոփոխելու համար, ծովին վրայ նայող պատուհանէն հեռացաւ և գնաց գիւղին կողմի պատուհանին կ'ուղեցաւ, ուսկից Օրէյէն Վան տարածուող բոլոր դաշտը կ'երևէր։ Այն ինչ մի քանի վայրկենէ 'ի վեր հոն էր, հեռուէն երկու ձիաւոր նշմարեց որոնք իր եկած ուղիէն կուգային և կարծես թէ դէպի գղեակը կը յառաջանային։ Նախ չկրցաւ անոնց վրայ կարծիք մը յօրինել, բայց երբ քիչ մը մօտեցան մէկ տէր ու մէկ ծառայ նշմարեց։ Ա-

ռաջինը այն ժամանակի վայելչագեղ երիտասարդներուն ձևով հագուած էր, այսինքն ոսկեթել ճարմանդներով կանաչ պղտիկ տառատոկ մը, կերպասեայ ճերմակ տաբատ մը և շրթնադարձ կօշիկներ։ Գլուխը լայներիզ ու բոլորշի գլխարկ մը դրած՝ իսկ մազերը փունջ մը ժապաւէնով կապած էր։ Անգղական խիստ գեղեցիկ ու մեծագին ձի մը հեծեր էր, զոր ձիավարութեան քաջահմուտ անձի մը պէս կը վարէր։ Քիչ մը ետևէն կուգար իր սպասաւորը, որու ազնուապետական պճնազգեստը խիստ լաւ կը յարմարէր տիրոջը իշխանական կերպարանին։ Էմմանուէլ տեսնելով որ անոնք ուղղակի դէպի գղեակը կը յառաջանան՝ պահ մը Պ. տը Լէքթուրը կարծեց, որ այնքան կանուխ ճամբայ ելած ըլլալով՝ դեռ ինք կօշիկները ոտքէն չհանած կը հասնէր. բայց անմիջապէս իւր սխալը հասկցաւ և թէև իրեն այնպէս երևցաւ որ ուրիշ անգամ ալ նոյն ձիաւորը տեսած էր՝ սակայն չկրցաւ յիշել թէ ուր և ինչ պարագայի մէջ։ Մինչ նա իւր յիշողութեան մէջ այս անձին աղօտ յիշատակին յարակից դէպքերը կը փնտռէր, նորեկները պատի մը անկեան ետեր անհրաժեշտ եղան։ Հինգ վայրկեան վերջը, Էմմանուէլ անոնց ձիերուն դափրը լսեց բակին մէջ, ու գրեթէ անմիջապէս դուռը բացուելով՝ սպասաւոր մը Պարոն Բոլը պոռաց։

Ե

Այս ծանուցուած անձին անունը ինչպէս և երևոյթը՝ Էմմանուէլի մտքին մէջ շփոթ յիշատակ մը ծնաւ, որուն ոչ թուական մը և ոչ դէպք մը կրցեր էր դեռ ևս վերադրել՝ երբ անիկայ մարքիզուհիին եկած դրան դիմացի շեմին վրայ երևցաւ։ Թէև այցելութեան համար անպատեհ էր ժամը և դեռատի կոմսը ապագային խորհուրդներովը զբաղած՝ աւելի կը սիրէր զանոնք մտքին մէջ ենթել քան թէ սիրտը պահել, սակայն այն ժամանակի բարեվարք անձերու մէջ եղած խստապահ պատշաճութենէն ստիպուեցաւ նո-

բեկ հիւրը ընդունիլ, որ իւր ձեռքէն քաջալերեցաղ, քաղցրաբարոյ և երեւելի անձ մը կ'երեւէր։ Սովորական ողջոյններէն ետքը՝ Էմմանուէլ նշմարը մ'ըրաւ անծանօթին որ թիկնաթոռ մ'առնէ. ասիկայ խնդարհեցաւ իւր կարգին և նստաւ. ապա հասարակ քաղաքավարութեամբ մը խօսակցութիւնը սկսան։

— Կը սքանչանամ ձեզ տեսնելուս, Պ. կոմս, ըսաւ նորեկը։

— Բաղդը յաջողեց, պարոն, ըսաւ Էմմանուէլ. եթէ մէկ ժամ առաջ դայիք՝ զիս հոս չպիտի գտնէիք, վասն զի դեռ հիմակ Բարիզէն եկայ։

— Գիտեմ, Պ. կոմս, ըստ որում մենք ալ մի և նոյն տեղէն կուգանք։ Ձեզմէ մէկ ժամ վերջը մեկնեցայ և բոլոր Ճամբան՝ ձեզ առաջնորդելու պատիւ ունեցող սուրհանդակներէն լուրերդ իմացայ։

— Կրնամ արդեօք հասկնալ, պարոն, պատասխանեց Էմմանուէլ այնպիսի շեշտով մը ուր արդէն փոքր ինչ դժգոհութիւն կրնայիր թափանցել, թէ ինչ պարագայի կը պարտաւորիմ իմ վրայ ունեցած հետաքրքրութիւնդ։

— Այդ հետաքրքրութիւնը բնական է վաղեմի ծանօթներու մէջ և թերևս իրաւունք ունիմ բողոքելու որ փոխադարձ չէ այն։

— Իրաւի, պարոն, կարծեմ թէ արդէն տեղ մը ձեզ հանդիպած եմ. սակայն իմ յիշատակներս շփոթ են, ուստի շնորհ ըրէք ինձ այս մասին աջակցելու։

— Եթէ իրաւ կ'ըսէք, Պ. կոմս, ստուգիւ շատ տկար յիշողութիւն ունիք, վասն զի վեց ամսէ 'ի վեր՝ այս երրորդ անգամն է որ ձեզի հետ մեր շնորհակալները փոխոխակի յայտնելու պատիւը կ'ունենամ։

— Եթէ նորէն յանդիմանէք անգամ, պարոն, դարձեալ ստիպուած եմ ձեզ յայտնել, որ ձեր մասին մի և նոյն երկմտութեան մէջ կը գտնուիմ։ Ուստի խնդրեմ, բարեհաճեցէք ժամանակը թուականներով կամ դէպքերով հաստատել և ինձ յիշեցնել թէ ինչ պարագայի մէջ առաջին անգամ ձեզ տեսնելու պատիւ ունեցայ։

— Առաջին անգամ, Պ. կոմս, Բոր–Լուի ծովեզրը ձեզի հետ տեսնուեցայ։ Երկնայարկ նաւու մը վրայօք ռեղեկութիւններ կը

հարցնէիք և ես էի որ ձեզ հաղորդելու բարեբաղդութիւնը ունեցայ. կարծեմ թէ մինչև նաև ալ ձեզ ընկերացայ։ Այն անգամուն ես ծովային պաշտօնակալի, իսկ դուք հրացանակրի համազգեստ հագեր էիք։

— Իրաւ, միաքս է, պարոն. և ձեզի ալ, ինչպէս որ պարտքս էր, նաւէն մեկնելու ժամանակ՝ չկրցայ շնորհակալութիւն յայտնել։

— Կը սխալիք, պարոն, ձեր շնորհակալիքը մեր երկրորդ տեսութեան մէջ ընդունեցայ։

— Ո՞ր տեղ։

— Նոյն նաւը՝ ուր ձեզ տարի, Խցիկին մէջ։ Այն ատեն նաւապետի համազգեստով էի. կապոյտ թիկնոց, կարմիր բաճկոն, սրունազգեստ մը, մոխրագոյն զուլպաներ և եռածայր գլխարկ մը հագեր էի. մազերս ալ ոլորուած էին։ Միայն թէ նաւապետը պաշտօնակալէն երեսուն տարեկան աւելի տարուք կ'երեւէր։ Սակայն այսպէս ծերանալուս նպատակը սա էր որ՝ թերևս այն ատեն երիտասարդի մը շլսաահէիք ձեր ինձ հաղորդած կարևոր գաղտնիքը։

— Ի՛նչ որ կը յիշէք, թէև անհաւատալի կը թուի, պարոն, սակայն կայ բան մը՝ որ ինձ կ'ըսէ թէ ճշմարիտ է։ Այո՛, այո՛, կը յիշեմ որ երբ ստուերին մէջ փոքրած կը կենայիք՝ ձերինին նման աչեր տեսայ փայլեցան։ Մաքէս չերթար այն, Բայց ասիկ զատ, երրորդ անգամ մ'ալ ձեզ տեսնելու պատիւ ունեցայ ըսիք։ Շարունակեցէք, պարոն, իմ յիշատակներուս օգնել, վասն զի չը-գիտեմ ե՞րբ էր վերջինը։

— Վերջին անգամ, Պ. կոմս, ութ օր առաջ. . . Բարիզ. . . Շանթրբէն փողոցը, երբ Սէն–Ժորժ մենամարտեցայ։ Կը յիշէք, այնպէս չէ՞, կարմիր զգեստով և նեղ տաբատով անգլիացի աղաւորդի մը, որու աչքէտ մազերուն հակատեսիլ գոյնը՝ փոշին հաղիւ հաղ կը ծածկէր։ Ձեզի հետ սուսերամարտ փորձ մ'ընելու անգամ պատիւ ունեցայ, Պ. կոմս, և շատ բարեբաղդ գտնուեցայ ձեզ երեք անգամ յաղթահարելով, իսկ դուք մէկ անգամ իսկ չկրցաք ինձ դպչիլ։ Այն հեղուն անուն ճօն էր։

— Զարմանալի բան, թէև մի և նոյն ակնարկն էր սակայն անհնար է որ մի և նոյն մարդն ըլլար։

— Ստուած, պատասխանեց Բոլ, ուզեց որ մարդիկ ակնարկը միայն չկարենան ծածկել. ահա ասոր համար մէն մի ակնարկի մէջ իւր բոյին կայծը դրաւ։ Լաւ ուրեմն, այն պաշտօնակալը, այն նաւապետը, այն Անգղիացին ես էի։

— Իսկ այսօր, պարոն, կը բարեհաճիք ըսել թէ ո՞վ էք. վասն զի այսպիսի վարպետութեամբ ծպտողի մը համար, կարծեմ դուք ևս կը խոստովանիք, որ հարցումս բոլորովին աւելորդ չկրնար ըլլալ։

— Այսօր, Պ. կոմս, ինչպէս որ կը տեսնէք՝ ինքզինքս պահելու պատճառ մը չունիմ. ասոր համար այն պարզ ու անպաճոյճ զգեստով եկայ, զոր նորատի իշխանները կը հագնին՝ երբ գիւղը իբր դրացի իրարու այցելութեան երթան։ Այսօր ինչպէս որ ձեզ հաճելի է այնպէս ճանչցէք զիս. կամ Գաղղիացի, կամ Անգղիացի, կամ Սպանիացի և կամ Ամերիկացի ալ։ Արդ՝ ասոնց մէջէն ո՞ր լեզուով կ՚ուզէք խօսակցութիւնը շարունակել։

— Թէև այդ լեզուներէն մի քանին ձեզի չափ ինձ ալ ընտանի են, սակայն աւելի ազէկ ունիմ Գաղղիերէնը, վասն զի կարճ և հակիրճ բացատրութիւններու լեզուն է։

— Ազէկ, Պ. կոմս, պատասխանեց Բոլ թախծութեան խորին նշանով մը, ես ալ Գաղղիերէնը նախամեծար կ՚ընտրեմ. Ֆրանսայի հողին վրայ ծնայ ըստ որում Ֆրանսայի արևը առաջին անգամ աչերս հրճուեցուց ու թէև շատ անգամ աւելի բարեբեր երկիրներ և աւելի պայծառ արեգակ մը տեսայ, բայց ինձի համար մի միայն մէկ երկիր և մէկ արև կայ, այս է Ֆրանսայի երկիրը, Ֆրանսայի արևը։

— Ազգասիրական եռանդով, ընդմիջեց Էմմանուէլ հեգնօրէն, մոռցաք ըսել թէ ինչ խնդրոյ կը պարտաւորիմ այցելութեանդ պատիւը։

— Իրաւունք ունիք, Պ. կոմս, ուստի դանք մեր խնդրոյն։ Առաջէ վեց ամիս առաջ՝ օր մը երբ Բոր–Լուսի ծովեզերը ժուռ կուգայիք, դուրսի նաւահանգիստին մէջ նեղ ողնափայտով և բարձրաբերձ կայմերով կրկնայարկ մը տեսաք և ըսիք իւրովի. — Անշուշտ այս նաւին նաւապետը մանաւոր և միայն իրեն ծանօթ պատճառներ ունի՝ այսքան շատ լաթ և այսքան քիչ փայտ կրելու։ — Ասկէ ծագեցաւ մտքիդ մէջ կարծիք մը թէ կամ եղուզակ մը, կամ ծովահէն մը, կամ ծովասպատակ մ՚էի։

— Ուրեմն սխա՞լ էր կարծիքս։

— Կարծեմ թէ արդէն իմ զարմանքը յայտնեցի, պարոն, պատասխանեց Բոլ թեթև հեգնալի շեշտով մը, այդ սրամտութեանդ համար որով մէկ ակնարկով անձերու և իրերու խորը կը թափանցէք։

— Հերիք են այդ գովեստներդ, պարոն։

— Այն համոզումով՝ պաշտօնակալի մ՚առաջնորդութեամբ նաւը դացիք ու խցիկին մէջ նաւապետ մը գտաք։ Դուք՝ Ծովային գործոց Պաշտօնէէն դիր մ՚ունէիք, որ կը հրամայէր դաղղիական դրօշը կրող որ և իցէ նաւի մը հրամանատարին՝ որ Մեքսիկա պիտի երթար, քաղաքական յանցաւոր Լիւսինեան անուն անձը Գայէն տանիլ։

— Ճիշդ է։

— Այս հրամանին հնազանդեցայ, ըստ որում այն ատեն չէի գիտեր թէ այս տարագիրին յանցանքը քրօջդ սիրահարը ըլլալն էր։

— Պարոն, դուշէ Էմմանուէլ և եկաւ ոտքի վրայ կայնեցաւ։

— Անհաւասիկ գեղեցիկ հրացանակներ, կոմս, շարայարեց Բոլ, ա՚Օրէյ կոմսին կառքէն իջած ժամանակ սեղանին վրայ նետած զէնքերուն հետ անփութօրէն խաղալով։

— Եւ լեցուն ալ են, պարոն, պատասխանեց Էմմանուէլ անտարակուսելի շեշտով մը։

— Ասոնցմով ազէկ նշան կ՚առնուի՞, շարունակեց Բոլ կեղծ անտարբերութեամբ մը։

— Կրնաք փորձել, պատասխանեց Էմմանուէլ. ուստի եթէ կ՚ուզէք դարաստին մէջ պտոյտ մը կ՚ընենք։

— Դուրս ելնելու հարկ չկայ, Պ. կոմս, ըսաւ Բոլ Էմմանուէլին առաջարկութեան դրդռիչ միտքը չհասկնալու զարնելով։ Անհաւասիկ սա նշանը դէշ չէ. ո՛չ շատ հեռու է ոչ ալ շատ մօտ։

Այս խօսքերուն վրայ՝ նաւապետը հրացանակը զինեց և բաց պատուհանէն դէպի պզտիկ ծառի մը սարը ուղղեց։ Եկբանիկ մ՚ամ-

նէն բարձր ճիւղին վրայ կ'օրորէր ու զուարթ և սուր ձայնով մը կ'երգէր. գնդակը մեկնեցաւ և խեղճ թռչնիկը երկու կտոր ըլլալով՝ ծառին տակն ինկաւ։ Բոլ պաղութեամբ ատրճանակը սեղանին վրայ դրաւ։

— Իրաւունք ունէիք, Պ. կոմս, շատ աղէկ զէնքեր են, ուստի կը յորդորեմ որ ձեռքէ չհանէք։

— Այդ մասին տարօրէն ապացոյց մը տուիք ինձ, պարոն, և կըստիպուիմ խոստովանիլ որ շատ աղէկ նշանել գիտէք։

— Ի՞նչ ընեմ, կոմս, վրայ բերաւ իրեն յատուկ թախծութեան շեշտով, երբ երկար խաղաղ օրեր հողմոյ շունչ մը չփչեր Ասատուծոյ այն հայելին վրայ, որ Ովկիանոս կ'ըսուի՝ մենք նաւաստիքս կըսկսինք զուարճութիւններ փնտռել, մինչ ցամաքին վրայ ձեր ոտքին կուգան։ Այն ատեն մեր յաջողակութիւնը կը փորձենք՝ կոհակի մը վերևը թուլօրէն ծփող որոր մը, ջրին երեսի անխոհեմ ձուկերը բռնելու համար երկինքէն իջնող մարկաներուն, և երկար ճամբորդութենէ յոգնելով՝ մեր կայմերուն դագաթը դադար առնող ծիծառներուն վրայ։ Ահա այս կերպով, Պ. կոմս, կը վարժուինք այնպիսի կրթութիւններու մէջ, որոնք մեր պաշտօնին օտարոտի կ'երևին։

— Շարունակեցէք, պարոն, և եթէ կարելի է մեր խնդրոյն զառնանք։

— Արդ՝ այդ Լիւսինեանը բարի և ազնուասիրտ երիտասարդ մ'էր։ Մի առ մի ինձ պատմեց, թէ ինչպէս հօրդ հնամի բարեկամին որդին ըլլալով՝ երբ նա առանց հարստութեան կը մնայի, հայրդ՝ խելացնորութեան անծանօթ դէպքէն մէկ երկու տարի առաջ, զինքն իբր որդեգիր կ'ընդունի. թէ ինչպէս ձեզի հետ մէկտեղ մեծնալով՝ առաջին տարիներէն 'ի վեր ձեզ ատելութիւն՝ իսկ քրոջդ սէր կ'ազդէ։ Թէ ինչպէս մի և նոյն միայնութեան մէջ կ'անցընէ այն երկարատև պատանեկութիւնը, և թէ ինչպէս ինքն ու քոյրդ ընկերութեան մէջ իսկ այն ատեն միայն այս առանձնութիւնը կրզգան՝ երբ մէկտեղ չգտնուին։ Վերջապէս իրենց երիտասարդական փրոյ ամն պարագայները յայտնեց ինձ, յարելով թէ ինչպէս օր մը Մարկրիթ՝ Վերոնայի ծաղկափթիթ օրիորդին սա խօսքն իրեն ըսաւ. «Կամ քուկդ պիտի ըլլամ և կամ 'ի գերեզման։»

— Եւ շատ աղէկ պահեց խօսքը։

— Այո՛, այնպէս չէ՞։ Դուք, առաքինի մարդիկ, ամօթ և նախատինք կը համարիք երբ հէք օրիորդ մը նոյն իսկ իւր անմեղութեամբը մոլորելով՝ հասակին, խանդին և սիրոյն կը հակի։ Մայրդ, որ մասնաւոր պարտաւորութիւններու համար աղջկան քովէն կը հեռանար ու ամուսնոյն քովը կը կենար միշտ (վասն զի ինչպէս քրոջդ տկարութիւնները նոյնպէս և մարդ առաքինութիւնները գիտեմ. խստաբարոյ կին մ'է նա. բայց մարդկային էակ մը իւր նըմաններէն մի միայն անսխալութեան առաւելութիւնը ունենալուն համար պէտք չէ որ այնքան խիստ լինի), մայրդ, կ'ըսեմ, զիշեր մը խեղդուկ ձայներ լսեց, քրոջդ սենեակը մտաւ, տժգոյն և լուիկ անոր անկողնոյն քով գնաց, անոր գիրկէն նորածին մանուկ մը ցրտութեամբ քաշեց առաւ և առանց յանդիմանելու դուրս ելաւ աւելի գունատ և լուն։ Իսկ խեղճ Մարկրիթը՝ ձայն մը, ճիչ մը անգամ չհանեց. մայրը տեսած ժամանակ նուաղեր էր։ Այսպէս չէ՞, Պ. կոմս, աղէկ տեղեկացե՞ր եմ թէ ոչ. և այս սոսկալի պատմութիւնը ճիշդ է թէ չէ։

— Պէտք է խոստովանիլ որ բոլոր պարագայները ձեզի ծանօթ են, քրթմնջեց Էմմանուէլ շանթահար։

— Եւ այս ամէն կէտերը, պատասխանեց Բոլ թղթակալ մը բանալով, քրոջդ սա նամակներուն մէջ նշանակուած են։ Լիւսինեանը տուաւ որ գրողին յանձնեմ, երբ ինք ձեր ազդեցութեամբը գողերու և մարդասպաններու մէջ իրեն համար պատրաստուած տեղը կ'երթար։

— Տուր ուրեմն, պարոն, գոչեց Էմմանուէլ ձեռքը դէպի թղթակալը երկարելով, և ես անվրէպ անոր կուտամ որ անխոհեմութեամբ . . .։

— Այո՛, այո՛, որ անխոհեմութեամբ զինքը այս աշխարհիս մէջ սիրող միակ անձին դանդատած է, այնպէս չէ՞, ընդմիջեց Բոլ նամակներն ու թղթակալն իրեն քաշելով։ Անխոհեմդ երիտասարդուհի, որ մայրդ ձեռքէդ սրտիդ զաւակը կը յափշտակէ և դու որդւոյդ հօրը բաղկաց մէջ՝ դառն արտասուք կը թափես։ Անխոհեմդ քոյր, որ այս բռնաբարութեան դէմ եղբօրդ կոլմէն օգնութիւն մը

չգտնելով՝ ազնուական անունդ կը վտանգես այնպիսի նամակներ ստորագրելով, որ աշխարհի ապուշ և կանխահաւան (prévenu) աչերուն առջև կրնան . . . ։ Ի՞նչ անուն կուտաք դուք ասոր . . . ընտանիքը անպատուել, այնպէս չէ՞։

— Ուրեմն, պարոն, պատասխանեց Էմմանուէլ սրտնեղութենէն կարմրելով, որովհետև այսքան քաջ գիտէք այդ թղթերուն ահաւոր զօրութիւնը, ձեր պաշտօնը կատարեցէք զանոնք յանձնելով կամ ինձի, կամ մօրս, կամ քրոջս։

— Առաջ, պարոն, երբ Լորիան ելայ՝ այդ դիտաւորութիւնը ունէի. բայց տասը տասներկու օր կայ որ եկեղեցի մը մտնելով. . .

— Եկեղեցի՞ մը։

— Այո՛, պարոն։

— Ի՞նչ ընելու։

— Աղօթելու համար։

— Ո՛հ, միթէ Բոլ նաւապետը Աստուծոյ կը հաւատայ։

— Եթէ չհաւատամ, Պ. կոմս, փոթորկի ժամանակ ո՞վ ուրեմն օգնութեան կանչեմ։

— Վերջապէս այդ եկեղեցիին մէջ ի՞նչ եղաւ։

— Այն եկեղեցիին մէջ, պարոն, ազնուական օրիորդ Մարկրիթ տ՚Օրէյին և ամենամեծ ու ամենազօրաւոր իշխան Պ. տը Լէքթուրի ապագայ ամուսնութեան համար՝ քահանայի մը ծանուցումը լսեցի։ Անմիջապէս ձեր վրայօք տեղեկութիւններ հարցուցի և իմացայ որ Բարիզ կը գտնուիք. ես ալ արդէն հոն պիտի երթայի իմ պաշտօնիս հաշիւը թագաւորին ներկայացնելու համար։

— Թագաւորի՞՚՚ին։

— Այո՛, պարոն, Լուի ԺԴ. թագաւորին . . . նոյն իսկ նորին Վեհափառութեան . . . ։ Ուստի մեկնեցայ, միտքս դնելով որ անմիջապէս ձեզի հետ վերադառնամ. Սէն-Ժօրժ ձեզի հանդիպեցայ. լսեցի որ պիտի մեկնիք, հետևաբար ես ալ պատրաստուեցայ որպէս զի երկուքս ալ գրեթէ մի և նոյն միջոցին հոս հասնինք, և . . . ահաւասիկ եմ, պարոն, ասկէ երեք շաբաթ առաջ Պրբթանեը եկած ատենս ունեցած դիտաւորութենէս՝ բոլորովին տարբեր որոշումով մը։

— Եւ ի՞նչ է այդ նոր որոշումը, պարոն, ըսէք նայինք որպէս զի վերջացնենք։

— Լա՛ւ ուրեմն, մտածեցի թէ քանի որ ամեն մարդ և նոյն իսկ մայրը խեղճ որբը կը մոռնայ՝ հարկ է որ ես յիշեմ զայն։ Ձեր ներկայ վիճակին մէջ, պարոն, և Պ. տը Լէքթուրի հետ կապուելու համար ունեցած փափաքդ նկատելով՝ (որ ըստ ձեզ փառասիրութեանդ խորհուրդները իրացնելու միակ կարող անձն է) այս նամակները զէթ հարիւր հազար ֆրանք կ՚արժեն, այնպէս չէ՞։ Դուք երկու հարիւր հազար լիրայի եկամուտ ունիք. ուստի այն դումարը ձեր հարստութեան համար շատ փոքրիկ խրամատ մ՚է։

— Բայց ո՞վ պիտի ապացուցանէ թէ այն հարիւր հազար ֆրանքը . . . ։

— Իրաւունք ունիք, պարոն, ուստի դուք նորահասակ Հեկտոր տը Լիւսինեանի վրայ եղած հասոյթի դաշնագիր մը կուտաք ինձ, ես ալ սոյն նամակները ձեզի կը յանձնեմ։

— Բայց միթէ ասով լմնցա՞։

— Նաև այն մանուկը ձեզմէ կ՚առնում և այս փոքրիկ հարստութեան շնորհիւ՝ զայն մեծցնել կուտամ, հեռի այն մայրէն որ զինքը մոռցած է, հեռի այն հայրէն զոր դուք աքսորել տուիք։

— Լա՛ւ, պարոն։ Եթէ գիտնայի թէ այսքան պզտիկ դումարի մը և այսքան փանաքի շահու մը համար եկած էք, այսպէս անհանդիստ չէի ըլլար։ Սակայն ներեցէք որ մօրս խօսիմ։

— Պ. կոմս, պառաց ծառայ մը դնուոը բանալով։

— Ոչ ոք կրնամ ընդունիլ, թողէք զիս, պատասխանեց Էմմանուէլ։

— Պ. կոմսին քոյրը կ՚ուզէ զինքը տեսնել։

— Թող քիչ մը վերջը գայ։

— Հիմակ հիմակ կը փափաքի . . . ։

— Ինձի համար մի՛ նեղանաք, ընդմիջեց Բոլ։

— Բայց քոյրս չկրնար ձեզ տեսնել, պարոն։ Գիտէք, պէտք չէ որ քոյրս ձեզ տեսնէ։

— Շատ լաւ, սակայն որովհետև առանց այս դործը լմնցնելու անհնար է ինձ ամբոցէն մեկնիլ, թող տուէք որ սա դահլիճը մտնեմ։

— Աղէկ, մտէք, պարոն, ըսաւ Էմմանուէլ դուռը բանալով։ Բայց շուտ ըրէք, կ'աղաչեմ։

Բոլ դահլիճը մտաւ։ Այն ինչ Էմմանուէլ ուժգնութեամբ դուռը անոր ետևէն գոցեց, Մարկրիթ երևցաւ։

Զ

Մարկրիթ ա՛Օրէյ, որու պատմութեան տեղեկացաւ ընթերցողը նաւապետին և Էմմանուէլ կոմսին խօսակցութեան ներկայ գտնուելով, այն գիւրաթեք և գունատ դեղեցկութիւններէն մին էր՝ որ իրենց բոլոր անձին վրայ ծննդեան աղաղնական դրոշմը կը կրեն։ Մէկ նայուածքով՝ մարդ կրնար դիտել, թէ ինչ ազնուականութիւն կար նորա քնքոյշ և նուրբ հասակին, անփայլ և սպիտակ մորթին ու վարդագոյն և թափանցիկ ըղունդներով՝ բարեձև ու նրբամէտ ձեռներուն մէջ։ Իր ոտքերը այնքան փոքր էին՝ որ երկուքը միասին հասարակ կնկան մը մէկ ոտքին տեղը կրնային բռնել, և յայտնի կ'երևէր թէ սրահի մը օթոյէն և պարտէզի մը ծաղկաւէտ մարդերէն զատ ուրիշ բանի վրայ կոխած չէին։ Իւր շնորհալի քալուածքին մէջ՝ այնպիսի սիզութիւն ու վէսութիւն մը կար, որ տոհմային նկարը կը յիշեցնէր։ Վերջապէս դիւրին է հասկնալ թէ նորա հոգին ինչպէս ամեն ներշնչեալ զոհողութիւններու տակ էր, նոյնպէս և կրնար ամեն բռնաբարութեանց դէմ նշկահիլ. թէ անձնուիրութիւնը՝ նորա սրտին մէջ բնազդական առաքինութիւն մ'էր, իսկ հնազանդութիւնը՝ նորա մտքին մէջ մի միայն կրթութեան պարտաւորութիւն մը. այնպէս որ անոր վրայ փչող մրրիկը, չէ թէ եղէգի՝ այլ շուշանի պէս կը ծռէր զանի։

Սակայն երբ նա դուռը երևցաւ՝ դէմքը այնքան խորին վշտութեան նշան մը կ'ընծայէր, այտերը այնպիսի կիզիչ արտասուքի մը հետքը կը պահէին, իւր բոլոր մարմինը այնպիսի յուսարեկ դրժբաղդութեան մը լծին տակ կը ձնշէր՝ որ Էմմանուէլ հասկցաւ

թէ նոյն առերևութական անդորրութիւնը պահելու համար՝ բոլոր ուժը ամփոփելու հարկադրուած էր։ Մարկրիթ եղբայրը դիտելով՝ իւրովի ձիգ մ'ըրաւ, և ակնյայտ վերադարձութիւն մը (réaction) տեղի ունեցաւ։ Ուստի ջլային հաստատամտութեամբ անոր նստած աթոռին մօտեցաւ։ Ապա տեսնելով որ ծառային ընդմիջած տեղն զգացած սրտեղութիւնը՝ դեռ ևս եղբօրը դէմքին վրայ կ'ելևէր, կանգ առաւ, և այս երկու համաձին որդիները՝ որոնց ընկերութիւնը դեռ հաւասար իրաւունք չէր տուած, իբր օտարական՝ իրարու նայեցան, մին փառասէր՝ իսկ միւսը վեհերոտ ակնարկով։ Սակայն կամաց կամաց Մարկրիթ սիրտ առաւ։

— Վերջապէս ահա եկար, Էմմանուէլ, ըսաւ անոր, ես քու վերադարձին կըսպասէի, ինչպէս կոյրը՝ լոյսի։ Սակայն այդ ընդունելութեանդ կերպէն՝ ակներև կը տեսնեմ որ 'ի զուր քոյրդ յոյսը քու վրայ դրած է։

— Եթէ քոյրս, պատասխանեց Էմմանուէլ, հլու և յարգի աղջիկ մ'եղած է՝ ինչպէս որ միշտ կը պարտաւորէր ըլլալ, իմ տարակայութեանս առեն անշուշտ հասկցած է, թէ ինչ կը պահանջեն իրմէ իւր ասպիճանը ու վիճակը. անշուշտ անցեալ դէպքերը մոռցած է, իբր այնպիսի եղելութիւններ որ պէտք չէին երբէք պատահիլ ուստի և պէտք չէ յիշել. վերջապէս անշուշտ իր առջև բացուած ապագային կազմ ու պատրաստ է։ Եթէ այսպէս կը ներկայանայ ինձ՝ իմ թևերս բաց են անոր համար և իմ քոյրը միշտ քոյրս է։

— Լաւ ուշ դիր խօսքերուս, պատասխանեց Մարկրիթ, որով չէ թէ ուրիշներու դէմ բողոքել կ'ուզեմ, այլ ինքզինքս արդարացնել։ Եթէ մայրս (քա՛ւ լեցի որ զինքը ամբաստանեմ, վասն զի նուիրական պարտաւորութիւններ զանի միշտ մեզմէ հեռու կը պահեն), եթէ մայրս, կ'ըսեմ, ըլլար ինձի համար ինչ որ են բոլոր մայրերը՝ ես միշտ սիրտս դիրքի պէս անոր առջև կը բանայի և օտար ձեռքի մը սրտիս մէջ նշանակած առաջին բաները լսելով՝ նա վանդը ինձ կ'իմացնէր և ես ալ կը զգուշանայի։ Եթէ ես ընկերութեան մէջ մնցած ըլլայի, փոխանակ վայրի ծաղկի պէս այս հին դղեկին շուքին տակ աճելու՝ մանուկ հասակէս 'ի վեր

կրնայի ճանչել այն դասն ու կարգը, զոր այսօր ինձ կը յիշեցնես և հետևաբար անոնց սահմանած պատշաճութիւններէն ու պարտաւորութիւններէն չէի շեղեր։ Վերջապէս եթէ ընկերութեան այն զուարթամիտ և նանրազգած կիներուն մէջ ձգուած ըլլայի, զոր դու շատ անգամ գոված ես և ես չեմ ճանչեր, թէև մի և նոյն սխալները զոր այժմ սիրահարութեամբ գործեցի՝ կ'ունենայի, բայց կրնայի անցեալը մոռնալ, անոր մակերևոյթին վրայ նոր յիշատակներ սփռել, ինչպէս որ գերեզմանի մը վրայ ծաղիկներ կը սերմանեն և ապա այն ծաղիկներուն բուսած տեղը մոռնալով՝ անոնցմով պարահանդէսի համար փունջ մը կամ սիրուհիի պսակ մը կը յօրինեն։ Բայց դժբաղդաբար այսպէս չէ, Էմմանուէլ։ Ինձ 'ի զգուշութիւն հրաւիրեցիք, երբ վտանգէն խոյս տալու ժամանակն անցած էր. իմ վիճակն ու դասը ինձ յիշեցուցիք, երբ արդէն անկէ ինկած էի և հիմակ կը խնդրեք որ սիրոս ապագային ուրախութիւններուն վերադառնայ՝ մինչ անցեալին արտասուքներուն մէջ ընկղմած է։

— Եւ այս ամենուն հետևութիւնը, ըսաւ դառնութեամբ Էմմանուէլ։

— Հետևութիւնը, Էմմանուէլ, դու միայն կրնաս եթէ ոչ բարեբաստ դէթ օրինաւոր ընել։ Ես հօրս չեմ դիմեր, աւաղ, չդիտեմ իսկ մինթէ կրնայ իւր զաւակը ճանչել։ Մօրս վրայ յոյս չունիմ. իւր ակնարկը զիս կը սատեցնէ, իւր խօսքը զիս կրսպաննէ։ Ուստի մինակ դու կը մնաս զոր կրնամ դանել և ըսել. — Եղբայր իմ, մեր տան գլխաւորը դու ես. ամեն ոք իւր պատուոյ մասին քեզի պատասխանատու է։ Անգիտութեամբ վրիպեցայ և իմ սխալմանս համար իբր յանցաւոր պատիժ կրեցի, բաւական չէ՞ արդեօք։

— Ուրիշ, ուրիշ, մրմնջեց Էմմանուէլ անհամբերութեամբ, ըսէ՛ նայինք, ուրիշ ինչ կ'ուզես։

— Կը խնդրեմ, եղբայր իմ, որովհետև ամեն կապակցութիւն անկարելի դատուած է այն անձին հետ՝ որու միայն կրնայի միանալ, կը խնդրեմ որ իմ կարողութեան չափով պատժեն զիս։ Մայրս (Աստուած ներէ անոր) զաւակս առևանդեց, որպէս թէ ինք մայր եղած չէ երբէք, և իմ որդին ինձմէ հեռի մուտացօնի և խաւարէ

մէջ պիտի մեծնայ։ Դու, Էմմանուէլ, հօրը հոգը վրադ առիր, ինչպէս մայրս որդւոյնը առած էր և այնքան աւելի անգութ եղար առ այն՝ որքան չպատկանիր ըլլալ չքսեմ մարդու մը առ իւր նըմանն, այլ դատաւորի մը առ յանցաւորն։ Իսկ զիս՝ ահաւասիկ, երկուքդ մէկտեղ, այնպիսի դառն տառապանքի մը ենթարկել կ'ուզէք, որ երկնից արքայութեան արժանի եղող մարտիրոսներն իսկ կրած չեն։ Լա՛ւ ուրեմն, Էմմանուէլ, կը խնդրեմ յանուն մեր մի և նոյն օրորոցին մէջ անցուցած մանկութեան, յանուն մի և նոյն յարկին ներքև սաբրած երիտասարդութեան, վերջապէս յանուն բընութեան տուած և մեր այժմ կրած քոյր ու եղբայր տիտղոսներուն, կը խնդրեմ որ վանք մը բացուի ինձի համար և իմ ետևէն փակուի։ Այն վանքին մէջ, Էմմանուէլ, կ'երդնում որ ամեն օր Աստուծոյ առջև ծնրադիր և գլուխս քարին կոթնած, իմ սխալանացս լծին տակ խոնարհելով՝ իմ արցունքներուս փոխարէն Աստուծմէ հօրս համար՝ խելք, մօրս համար՝ երջանկութիւն, իսկ քեզի համար՝ Էմմանուէլ, փառք, պատիւ և հարստութիւն պիտի խնդրեմ։ Կ'երդնում որ այսպէս պիտի ընեմ։

— Այո՛, և այն ատեն ամեն մարդ ըսէ թէ քոյր մ'ունէի և իմ հարստութեան զոհեցի ու կենդանութեանը ժամանակ նորա ինչը ժառանգեցի. ա՛լէ, դու փախուցեր ես։

— Մտիկ ըրէ՛, Էմմանուէլ, ըսաւ Մարկրիթ քովի աթոռին յենարանին կոթնելով։

— Լա՛ւ ուրեմն, պատասխանեց Էմմանուէլ։

— Երբ խօսք մը տաս, անոր վրայ հաստատ կը կենաս, այնպէս չէ՞։

— Անտարակոյս, վասն զի ազատորդի եմ։

— Լա՛ւ ուրեմն, նայէ՛ սա դաստապանը . . . ։

— Է՛, տեսայ։

— Բանալիով գոցուած է, և բանալին մատնի մը մէջն է և այն մատնին մէկուն տուի, խոստանալով որ իմ խոստումէն այն ատեն ազատ պիտի ըլլամ՝ երբ դան քերէ ինձ յանձնէ։

— Որո՞ւ քովն է բանալին։

— Այնպիսի անձի մը քովն է, որ քու և մօրս շնորհիւ՝ ասկէ

շատ հեռու տեղ մը կը դանուի, ուստի չենք կրնար զայն ետ ուղղել. Գայէն գացած է։

— Երկու ամսուան համար անդամ անոր հետ չեմ ձգեր կարդուիս, պատասխանեց Էմմանուէլ հեգնալի ժպիտով մը, որպէս զի այդ ապարանջանը այնքան նեղէ, որ դու ինքդ ուզես ձեռքէդ հանել։

— Կարծեմ քեզի ըսի որ ձեռքիս կափուած է։

— Գիտե՞ս ինչ կ'ընեն երբ տան մը բանալին կորսուի և ներս չըկրնան մտնել։ Դարբին մը բերել կուտան։

— Լա՛ւ ուրեմն, ինձի համար, Էմմանուէլ, պատասխանեց Մարկրիթ ձայնը բարձրացնելով և անյողդողդ ու հանդիսաւոր ձեւով մը թեւը երկարելով, թող գահլէ՛ բերեն, վասն զի այս ձեռքը կը կարեմ և ուրիշի չեմ տար։

— Լո՛ւ, ըսէ՛, ըսաւ Էմմանուէլ ոտքի վրայ ելնելով և անհանդստութեամբ դէպի գահլիճին դուռը նայելով։

— Ահա այժմ ամեն ինչ յայտնեցի, յարեց Մարկրիթ։ Մի միայն քու վրայ յոյս ունէի, Էմմանուէլ, վասն զի թէև խորին զգացումներ չես ճանչեր սակայն չարասիրտ չես։ Լալագին եկայ, — տես եթէ սուտ եմ, — որ քեզի ըսեմ. — Եղբայր իմ, այս ամուսնութիւնը իմ դժբաղդութիւնս, իմ կենացս յուսահատութիւնն է. աւելի աղէկ ունիմ վանքը, թշուառութիւնը, մահը։ Բայց դու ըսածս մտիկ չըրիր, կամ եթէ լսեցիր իսկ՝ չհասկցար։ Լա՛ւ ուրեմն, ես ալ այժմ այն մարդին կը դիմեմ, անոր պատոյն և ազնուութեան կոչում կ'ընեմ։ Թէ որ այս չբաւէ, ամեն ինչ իրեն կը պատմեմ, ուրիշի մը վրայ իմ ունեցած սէրը, իմ տկարութիւնը, իմ սխալը, իմ յանցանքը. իրեն կ'ըսեմ որ զաւակ մ'ունիմ, վասն զի թէև ձեռքէս յափշտակեցին, թէև անոր երեսը չտեսայ, թէև չգիտեմ թէ ո՛ւր է, բայց կենդանի է նա։ Զաւակ մը, ասանց մօրը սրտին մէջ թնդիւն հանելու չմեռնիր։ Վերջապէս, եթէ հարկ ըլլայ, անոր կը յայտնեմ որ ուրիշ մը կը սիրեմ, ուստի չեմ կրնար զինքը սիրել և չպիտի սիրեմ։

— Լա՛ւ ուրեմն, դուն ատոնք ըսէ, դոչեց Էմմանուէլ այսքան ընդդիմութեան համար զայրանալով, և իրիկունը մենք դաշնագիրը կըստորագրենք ու հետևեալ օրը պարոնուհի տը Լէքթուր կ'ըլլաս։

— Ահա այն ատեն, պատասխանեց Մարկրիթ, իրաւի աշխարհիս ամենէն չարաբաստ կինը պիտի ըլլամ, ըստ որում եղբայր մը պիտի ունենամ զոր չպիտի սիրեմ և ամուսին մը՝ զոր չպիտի յարգեմ։ Մնաս բարև, Էմմանուէլ, հաւատա՛ ինձ և մտածէ՛ քանի որ դաշնագիրը դեռ ստորագրուած չէ։

Այս խօսքերը ըսելով՝ Մարկրիթ դուրս ելաւ այն խորին և յամր յուսահատութեամբ, որ անվրիպելի նշան մ'ունի։ Ուստի Էմմանուէլ, համոզուելով թէ յաղթանակը տարած չէր, ինչպէս որ ինք կը կարծէր, այլ դեռ պայքար մը կար շարունակելի՝ գրեթէ գորովալիր անհանդստութեամբ դիտեց անոր հեռանալը։ Պահ մը լուռ և անշարժ կեցաւ. ետին դարձաւ ու Բոլ Նաւապետը տեսաւ զոր բոլորովին մոռցեր էր և որ գահլիճին դուռը կայնած էր։ Ան-միջապէս մտածելով թէ՝ այսպիսի պարագայի մէջ Բոլ Նաւապետին բերած թուղթերը իրեն համար ինչ կարևորութիւն ունին, մէկէն սեղանի մը քովը նստաւ, գրիչ մը և թուղթ առաւ ու դէպ անոր դառնալով,

— Հիմակ, պարոն, ըսաւ անոր, ահաւասիկ երկուքս միայնակ ենք և գործը լմնցնելու արգելք մը չունինք. ուստի ինչ կերպով կ'ուզէք որ խոստմնագիրը շարադրենք։ Դուք ըսէք, ես գրեմ։

— Պարապ բան է, պարոն, պատասխանեց Նաւապետը ցրտօրէն։

— Ինչո՛ւ։

— Միայն փոխեցի։

— Ի՞նչպէս փոխեցիք, ըսաւ Էմմանուէլ այս անակնկալ խօսքերուն մէջ ընդնշմարած հեռևութիւններէն ահաբեկ՝ ոտքի վրայ ելնելով։

— Հարիւր հազար ֆրանքը, ըսաւ Բոլ որոշում ըրած անձի մը հանդարտութեամբ, մանուկին պիտի տամ, և քրոջդ ալ էրիկ մը պիտի գտնեմ։

— Բայց ո՞վ էք դուք, պարոն, դոչեց Էմմանուէլ քայլ մը ետ մօտենալով, ո՞վ էք դուք, պարոն, որ կը խառնուիք երիտասարդ օրիորդի մը, որ քոյրս է և ձեզի ալ ոչ տեսած է և ոչ կը ճանչէ։

— Ես ո՞վ եմ, ըսիր, պատասխանեց Բոլ ժպտելով։ Պատուոյս

վրայ կ'ըսեմ, որ ձեզմէ բարձր մարդ չեմ, վասն զի իմ ծնունդը գաղտնիք մ'է որ երբ քսանը հինգ տարեկան ըլլամ ինձ պիտի յայտնուի։

— Եւ երբ քսանը հինգ տարեկան պիտի ըլլաք . . . ։

— Այս իրիկուն, պարոն. ուստի ձեր խնդրած տեղեկութիւնները վաղուընէ ձեզ հաղորդելու պատրաստ եմ։

Այս ըսելով՝ Բոլ խոնարհեցաւ։

— Կը թողում որ դուրս ելնէք, պարոն, ըսաւ Էմմանուէլ, բայց գիտէք որ նորէն տեսնուելու պայմանաւ։

— Ես ալ այդ առաջարկութիւնը պիտի ընէի, պարոն, պատասխանեց Բոլ, ուստի շնորհակալ եմ որ դուք իզմէ առաջ ըրիք։

Այս խօսքերուն վրայ կրկին անգամ բարևեց Էմմանուէլը և դուրս ելաւ։

Բոլ ամրոցին դուռը ծառան ու ձին դտաւ և Բոր–Լուիի ճամբան բռնեց։ Երբ դղեակը չտեսնելու չափ հեռացաւ, ձիէն վար իջաւ և գէպի ծովեզերը դտնուած ձկնորսի մը խրճիթը յառաջացաւ։ Այս բնակարանին դուռը երիտասարդ մը նստած էր բազմաբանի մը վրայ. նաւաստիի լաթեր հագեր էր և իր մտածումներուն մէջ այնպէս ընկղմած էր որ Բոլին մօտիլը չլսեց։ Նաւապետը ձեռքն անոր ուսին վրայ դրաւ. երիտասարդը դողդ ելաւ, դարձաւ անոր նայեցաւ և երեսին դոյնը սոսկալի կերպով նետեց թէև Բոլին համարձակ և զուարթ դէմքէն յայտնի կ'երևէր որ բերած լուրը գէշ չէր։

— Լա՛ւ ուրեմն, ըսաւ անոր Բոլ, ինքը տեսայ։

— Զո՞վ, մրմնջեց երիտասարդը։

— Տէր ողորմա, Մարկրիթը։

— Է՛։

— Սքանչելի է։

— Բայց, Տէր Աստուած, այդ չեմ հարցներ։

— Դեռ քեզ կը սիրէ։

— Ո՛հ, Աստուա՛ծ իմ, գոչեց երիտասարդը անոր թևերուն մէջ նետուելով ու հեծկլտալով։

Է

Այն վեց ամիսուան միջոցին մէջ որ մեր դիւցազունները տեսութենէ կորսնցուցինք, ինչ որ տեղի ունեցաւ՝ թէև ընթերցողս մեր այս պատմածներէն առանց դժուարութեան պէտք է որ հասկնայ. սակայն յետագայ նորանոր դէպքերը քաջ ըմբռնելու համար՝ մի քանի տեղեկութիւններ անհրաժեշտ են։

Պատերազմին իրիկունը, զոր մեր ծովային գործոյ մասին ունեցած տպիտութեամբն իսկ նկարագրելու փորձ փորձեցինք՝ Լիսինեան իր պատմութիւնն ըրեր էր Բոլին։ Պարզ էր այն և քիչ պատահարներ ունէր. սէրն էր նորա գլխաւոր պարագայն, որ իւր ուրախութիւնը ըլլալէ ետև՝ այժմ բոլոր աղէտից շարժառիթը դարձեր էր։ Բոլին անկախ և արկածալի կեանքը, ամեն պահանջումներէ ազատ վիճակը, ամեն օրէնքէ դեր 'ի վեր քմածին կամքը և իր նաւին մէջ ունեցած վեհապետական սովորութիւնները՝ բնական իրաւունքի խիստ արդար զգացում մը ներշնչած ըլլալով իրեն, չէր կրնար Լիսինեանի մասին տրուած հրամանը կատարել։ Ասկէ զատ, թէև դաղղիական գրօշակ պարզած՝ խարխսեր էր, սակայն Բոլ, ինչպէս որ տեսանք, ամերիկեան նաւատորմին կը վերաբերէր, որոնց խնդիրը խանդալիր ընդուներ էր։ Ուստի նորէն Մանշի մէջ լրտեսութիւն ընելու գնաց, բայց Ովկիանոսին վրայ գործ մը չը դտնելով՝ քսան հոգւոյ գլուխն անցած՝, որոնց մէջ կը դտնուէր նաև Լիսինեան, Ուայթ–Հալլն ելաւ, որ Գրմպրըլէնտի կոմսութեան մէկ փոքրիկ նաւահանգիստն է. բերդին տիրեց, թնդանօթներն ամրապէս բևեռեց և նաւահանգիստը դտնուած վաճառականական նաւերը այրելէ ետև՝ նաւը վերադարձաւ։ Անկէ Սկովտիոյ ափերքը երթալու համար ճամբայ եղաւ, Սէլքիրք կոմսն առևանգելու և զայն իրը պատանդ Միացեալ–Նահանգը տանելու դիտաւորութեամբ. սակայն անակնկալ դէպք մը այս խորհուրդն 'ի դերև հանեց. այս իշխանը այն ատեն Լոնտրա կը դտնուէր։ Լիսինեան

թէ այս և թէ միւս ձեռնարկին մէջ անոր օգներ էր, այն արիութեամբ զոր ինչպէս արդէն տեսանք, Էնդիէնի և Տրէյֆի մարտին մէջ ցոյց տուաւ. ասոր համար Բոլ ամեն ատենէն աւելի խնդակից եղաւ որ բաղդը զինքը անիրաւութեան մը դէմ հակառակելու սահմանած էր։ Բայց Լիւսինեանը աքսորէն ազատել բաւական չէր, այլ անոր պատիւն ալ վերաշինել պէտք էր. և այս՝ մեր երիտասարդ բաղդախնդրին համար, որ անշուշտ ընթերցողը Ճանչցաւ թէ հանրածանօթ Բոլ Ճոն ծովահէնն է, ուրիշ ամեն մարդերէն աւելի դիւրին էր. վասն զի Լուի ԺԶ.էն Անգղիացիներուն վրայ յարձակելու համար պատուիրագիրներ ընդունած ըլլալով՝ իր լրտեսութեան հաշիւը ներկայացնելու համար Վէրսայլ պիտի երթար։

Բոլ Լորիանի նաւահանգիստը ընտրեց և կրկին անգամ եկաւ հոն խարխսնետեց, Օրէյի ամրոցին կարի մօտ ըլլալու համար։ Երկու երիտասարդներուն ըրած հարցումներուն առաջին պատասխանը՝ Մարկրիթ ա՛Օրէյի և պարոն տը Լէքթուրի ամուսնութեան լուրն եղաւ։ Լիւսինեան ինքզինքը լիովին մոռցուած կարծեց և յուսահատութեանը առաջին շարժման մէջ՝ իր հալածիչներուն ձեռքն իյնալու վտանգը աչքն առնելով, անգամ մը Մարկրիթը տեսնել կ՚ուզէր, որպէս զի զէթ ապերախտութեանը համար զանի յանդիմանէ։ Սակայն Բոլ, որ աւելի հանդարտ և նուազ դիւրահաւատ էր, անորմէ խօսք առաւ որ մինչև որ իրմէ լուր մը չընդունի ցամաք ոտք չկոխէ. ապա ստուգելով որ ամուսնութիւնը տասն հինգ օրէն առաջ չէր կրնար կատարուիլ, Բարիզ գնաց, թագաւորին ներկայացաւ, որ իրեն ոսկի դասակով թուր մ՚ընծայեց և Զինուորական Արժանիքի կարգին շքանշանը տուաւ։ Բոլ այս բարեսիրական ցոյցերէն օգտելով՝ Լիւսինեանի արկածը Լուի ԺԶ.ին պատմեց և ոչ միայն անոր քով շնորհ գտաւ, հապա նաև իր ծառայութիւններուն փոխարէն Կուատալուբայի կառավարիչի տիտղոսը առաւ։ Այս ամեն զբաղումներով դարձեալ Էմմանուէլը աչքէ չըկորսնցուց և երբ անոր երթը լսեց՝ ինքն ալ Բարիզէն մեկնեցաւ, Լիւսինեանի իմաց տալով որ իրեն սպասէ, գեղատի կոմսէն ժամ մը ետքը Օրէյ հասաւ։ Ցետոյ տեսանք թէ ինչպէս Մարկրիթի մասին իր սխալն ուղղեց, ինչպէս ներկայ գտնուեցաւ այն տեսա-

բանին որ նէ՚ի զուր եղբօրը կարեկցութիւնը կը խնդրէր և կ՚աղաչէր որ Լէքթուր պարոնին հետ կարգուելու չստիպէ զինքը և՚ի վերջոյ ինչպէս բերդէն մեկնելով ծովեզրը Լիւսինեանը գտաւ որ իրեն կրսպասէր, նախորդ օրը անորմէ ընդունած նամակին աղդարարութեան համեմատ։

Այս երկու երիտասարդները մինչև երեկոյեան մօտ միասին կեցան։ Այն ատեն Բոլ՝ որ ինչպէս Էմմանուէլին ալ ըսեր էր, յայտնութեան մը կրսպասէր, իր բարեկամէն բաժնուեցաւ և ոտքով Օրէյի Ճամբան բռնեց։ Այս անգամ ամրոցը չմտաւ, այլ դարաստանին պատերուն երկայնութեամբը երթալով գէպի վանդակապատ տեղ մը յառաջացաւ. բերդին շրջապատէն կը մոցուէր նոյն տեղը որ Օրէյի իշխանութեան վերաբերեալ մէկ անտառի մէջ դուռ մ՚ունէր։

Սակայն Բոլին ձկնորսի հիւղէն մեկնելէն մէկ ժամ առաջ՝ ուրիշ անձ մը կ՚երթար այն մարդուն քովը, որու նաւապետը իր ծննդեան գաղտնիքը պիտի հարցնէր։ Այս անձը տ՚Օրէյ մարքիզուհին էր, Սապլէ անուան վէս ժառանգը, որ մէկ անգամ միայն պատմութեանս մէջ երևցաւ, իր ժզոյն և դժնեայ կերպարանը ցոյց տալու համար։ Գարձեալ նոյն սև զգեստը հագած էր. միայն թէ այս անգամ գլուխը սուգի քօղ մը ձգած էր, որ մինչև ոտքը կը ծածկէր։ Բայց տգիտութեան վարանմամբ, մեր բարեմտին և անփոյթ նաւապետին փնտռածը՝ անոր խիստ ծանօթ էր. տեսակ մը պահապանի տնակն էր այն, բուրաստանի դռնէն քանի մը քայլ հեռու, ուր ծերունի մը կը բնակէր։ Մարքիզուհին քսան տարիէ՚ի վեր անոր քովը կուգար այնպիսի բազմաշնաստ և մշտակայ բարեսիրական գործ մը կատարելու համար՝ որով ինք Ստորին–Պրբթանեի մէկ մասին մէջ խստակրօն սրբութեան մը համբաւը ստացած էր։ Իրաւ է որ այս փոյթը կը տանէր նա սոյն ալևորի մասին մի և նոյն տխուր ու հանգիսաւոր դէմքով՝ ուր գթութեան քաղցր այլայլութիւններ չէին փայլեր երբէք։ Բայց և այնպէս ամեն մարդ գիտէր թէ իրը անհրաժեշտ պարտք՝ անգուլ կը շարունակէր իր խնամքը այնպիսի Ճշդութեամբ, որ բարեգործութեան պակասը և հրապոյրը կը լրացնէր։

Տ՚Օրէյ մարքիզուհիին կերպարանը սովորականէն աւելի վէս էր, երբ յամրաքայլ իր ամրոցին բուրաստանէն անցնելով՝ այն պղտիկ պահակատունը գնաց ուր կ՚ըսէին թէ իր ընտանիքին մէկ ծեր սպասաւորը կը բնակէր։ Դուռը բաց ձգեր էին արևին վերջին ճառագայթները ներս մտնելու համար, որոնք մայիս ամսուան մէջ այնքան քաղցր են և տօթակին ծերերուն համար։ Բայց մարդ չըկար հոն. մարքիզուհին ներս մտաւ, չորս դին նայեցաւ և որպէս թէ ապահով ըլլալով որ իր փնտռած անձը չէր կրնար ուշանալ, որոշեց անոր սպասել։ Անանկ տեղ մը նստաւ՝ որ արևին ճառագայթները իր վրայ չէին դար. այս կերպով ինքը գերեզմաններու վրայ քանդակուած անդրիներուն կը նմանէր, որոնք մի միայն իրենց նամէտ շերիմներու ստուերին մէջ այնքան գիւր են։

Գրեթէ կէս ժամ 'ի վեր հոն կըսպասէր, անշարժ և մտախոհ, երբ երեն և վերջին ճառագայթներուն մէջ տեղը՝ դրան վրայ շուքը մը տեսաւ. մեղմօրէն աչերը վեր առաւ և փնտռած անձը իր դիմացը գտաւ։ Երկուքն ալ դող ելան, որպէս թէ դիպուածով մը իրարու կը հանդիպէին և ամեն օր տեսնուելու սովորութիւն չունէին։

— Դուն ես, Աշար, ըսաւ մարքիզուհին լռութիւնը խզելով։ Ո՞ւր էիր, կէս ժամ է որ քեզ կըսպասեմ։

— Եթէ տիկին մարքիզուհին բարեհաճէր յիսուն քայլ ևս առնուլ, անտառին ծայրի մեծ կաղնիին տակը կը գտնէր զիս։

— Գիտես որ երբէք այն կողմը չեմ երթար, պատասխանեց մարքիզուհին ակներև սարսուռով մը։

— Բայց չերթալու իրաւունք չունիք, տիկին. երկինքը մէկը կայ որու համար պարտաւոր ենք ամեն օր աղօթել և թերևս մի միայն ալևոր Աշարին աղօթքը լսելուն կը զարմանայ։

— Սակայն քեզի ո՞վ ըսաւ թէ ես չեմ աղօթեր, պատասխանեց մարքիզուհին փոքր ինչ տենդային յուզմամբ։ Կարծես թէ մեռելները կը պահանջեն որ անդադար իրենց գերեզմաններուն վրայ ծունր դնենք։

— Ո՛չ, պատասխանեց ծերունին խորին տրտմութեան զգացումով մը, ո՛չ, գիտեմ որ մեռելները այդքան խստապահանջ չեն,

տիկին. բայց կարծեմ որ՝ եթէ մեզմէ աշխարհի վրայ կենդանի բան մը մնայ, այդ բանը մեր կենաց մէջ սիրած անձերու ոտնաձայնը լսելով՝ դող կ՚ելնէ։

— Սակայն, ըսաւ մարքիզուհին ցած և պառաւախօս ձայնով, եթէ այդ սէրը մեղսական ըլլայ։

— Որչափ որ մեղսական ալ ըլլայ, տիկին, պատասխանեց ծերունին ձայնը մարքիզուհիին ձայնին հաւասար մեղմելով, կարծէք թէ արիւնը և արտասուքը զայն չքաւեցին։ Ապա թէ ոչ Աստուած, հաւատացէք ինձ, շատ խիստ դատաւոր մը եղած կ՚ըլլար և հիմակ չէինք կրնար ըսել որ ներողամիտ հայր մ՚է։

— Այո՛, թերևս Աստուած ներեց, քրթմնջեց մարքիզուհին, բայց եթէ մարդիկ Աստուծոյ գիտցածն իմանային՝ Աստուծոյ պէս կը ներէ՞ին արդեօք։

— Մարդի՛կ, գոչեց ծերունին, մարդի՛կ . . . ։ Այո՛, ահա բերնէդ ելած մեծ բառը։ Մարդի՛կ . . . ահա անոնց, այն ուրուականին ամեն ինչ զոհեցիք, սիրուհիի զգացում, ամուսինի զգացում, մայրական զգացում, անձնական երջանկութիւն և մինչև իսկ ուրիշի մը երջանկութիւնը . . . ։ Մարդի՛կ, ահա անոնց երկիւղը ձեզի սա սգի լաթերը հագցուց որու ներքև ձեր խղճի տագնապը ծածկել յուսացիք. բայց իրաւունք ունէիք, վասն զի յաջողեցաք զանոնք խաբել և նոքա ձեր այն տագնապը առաքինութեան տեղ առին։

Մարքիզուհին անհանգստութեամբ գլուխը վեր վերցուց և իւր քօղին ծալերը շտկեց, իբրև այս տարօրէն խօսակցութիւնը ընող անձը դիտելու համար. յետոյ պահ մը լուռ կենալէն ետև՝ ծերունին անվրդով դէմքին վրայ բան մը չկրնալով մակնել,

— Այնպիսի դառնութեամբ կը խօսիս հետս, ըսաւ անոր, որ կարծես թէ մասնաւոր բան մ՚ունիս զիս յանդիմանելու։ Միթէ երբէք իմ խոստումներու մէջ զանցառութիւն մ՚ըրի։ Միթէ իմ հրամանաւ քեզ ծառայող անձերը ինչպէս որ կը պատուիրեմ այնպէս չե՞ն յարգեր ու չե՞ն հնազանդիր քեզի։ Գիտես որ, եթէ ըսածս ճիշդ է, մէկ բան միայն կրնաս ըսել։

— Ներեցէք, տիկին, տրտմութիւն է այս և չէ թէ դառնու-

թիւն. միայնութեան և ծերութեան արդասիքն է։ Դուք պէտք էք գիտնալ թէ ինչ են այն ցաւերը զոր մարդս չկրնար ուրիշին հաղորդել, ինչ են այն արտասուքը որ պէտք չեն դուրս ելնել և որ շիթ առ շիթ մարդուս սրտին մէջ կը թափին։ Զէ, ես բնաւ մէկուն դէմ բողոք չունիմ, տիկին։ Այն օրէն 'ի վեր որ այնպիսի զգայումով մը որու համար երախտապարտ եմ ձեզ, առանց խորը թափանցել ուզելու՝ դուք իմ ամեն պիտոյքը հայթայթելու հոգը յանձն առիք, չեղաւ օր մը որ ձեր խոստումը մոռնաք. և ծերունի մարդարէին պէս ալ, մինչև անդամ երբեմն երբեմն հրեշտակ մը տեսայ որ պատգամաւորութեան եկաւ։

— Այո՛, գիտեմ որ Մարկրիթ ստէպ քեզ ծառայող սպասաւորին կ'ընկերանայ և հաճութեամբ կը գիտեմ թէ ինչպէս քու հոգդ կը տանի և քեզ կը սիրէ։

— Իսկ իմ կարդին յոռսամ թէ ես ալ իմ խօսքս պահած եմ։ Քանի տարիէ 'ի վեր աշխարհքէն հեռու ապրեցայ և բնաւ կենդանի էակ մը այս բնակարանին չմտեցաւ, վասն զի այնքան կը վախնայի ձեզի համար իմ գիշերային զառանցումներէն և անխորհրդութենէն։

— Անշուշտ, անշուշտ, և բարեբաղդաբար դաղտնիքը աղէկ պահեցինք, ըսաւ մարքիզուհին ձեռքը Աշարին ալեոտին վրայ դնելով. բայց այս ինձի համար նոր պատճառ մ'է՝ մէկ օրուան մէջ, քու կեանքէն աւելի տխուր, միայնակ և ահաւոր քանի տարիներու պտուղը չկորսնցնելու։

— Այո՛, հասկցայ, շատ անդամ սրտագողդ բռնեց յանկարծ մտածելով թէ աշխարհի մէջ մարդ մը կայ որ թերևս օր մը պիտի գայ այն դաղտնիքը ինձ հարցնէ, և ես ալ իրմէ պահելու իրաւունք չունիմ։ Ո՛հ, այս դաղափարը միայն ձեզ սարսուռ կը պատճառէ, այնպէս չէ՞, բայց անհոգ եղիք։ Այն մարդը տղայութեան ժամանակ փախաւ Սկովտիոյ այն դպրոցէն ուր դրած էինք ղինքը և տասը տարիէ 'ի վեր ոչ ոք անոր վրայօք բան մը լսած ունի։ Խաւարին ուխտեալ տղայ՝ իր բաղդին դիմաւորեց. լայնատարած աշխարհին մէջ կորսուած է այժմ և ոչ ոք գիտէ թէ ուր է. կորսուած է միայնակ և անանուն այն բիւրաւոր անձերուն մէջ

որոնք երկրագնտիս երեսը կը ծնին, կը տառապին ու կը մեռնին։ Իր հօրը նամակը կորսնցուցած է անշուշտ, նոյնպէս նաև այն նշանը որով պիտի կարենամ ղինքը ճանչնալ, կամ թերևս ինքն ալ մեռած է։

— Անգութ ես, Աշար, պատասխանեց մարքիզուհին, որ մօր մը առջև այդպիսի բան մը կը խօսիս։ Ձեզ գիտեր թէ ինչ այլանդակ դաղտնիքներ ու տարօրինակ հակասութիւններ կան կնկան մը սրտին մէջ։ Վասն զի, վերջապէս ըսէ, միթէ չեմ կրնար հանդիստ ըլլալ եթէ որդիս ողջ է։ Ըսէ, նայինք, իմ հնամի բարեկամս, այն դաղտնիքը որ մինչև քսանը հինգ տարեկան եղած ատենը չէր գիտեր, արդեօք այս հասակին մէջ այնքան անհրաժեշտ է՝ որ առանց անոր յայտնութեան չկարենայ ապրիլ։ Հաւատա՛ ինձ, Աշար, նոյն իսկ իրեն համար ալ աւելի աղէկ է որ չիմանայ, ինչպէս որ մինչև այսօր չէր գիտեր։ Վստահ եմ, որ մինչև այժմ բարեբաստ եղած է նա. ուստի ծերունի դու, մի՛ փոխեր նորա վիճակը, մի՛ դներ նորա սրտին մէջ այնպիսի խորհուրդներ որ կրնան զանի չար գործի մը մղել։ Զէ, փոխանակ քու ըսելիք խօսքին, ըսէ իրեն որ մայրը երկինք գնաց հօրը միացաւ, և տար Աստուած որ այս ալ կատարուէր. բայց միայն թէ, մեռնելու ատենը (որովհետև ինչ որ ալ ըսես, ղինքը տեսնել կ'ուզեմ, ղէթ մէկ անդամ գրկելու համար), մեռնելու ատենը կ'ըսեմ, մայրը զանի տ'Օրէյ մարքիզուհին կտակեց, որու մէջ պիտի գտնէ երկրորդ մայր մը։

— Հասկցայ ըսածդ, տիկին, ըսաւ Աշար ժպտելով։ Այս առաջին անդամ չէ որ ցոյց կուտաք այդ ճանապարհը ուր զիս մոլորել կ'ուզէք։ Միայն թէ, այսօր աւելի աղատադիմութեամբ կը մօտենաք խնդրոյն և եթէ համարձակէիք, այնպէս չէ՞, կամ եթէ զիս աղէկ չճանչէիք, մեր մօտը հանդչող անձին վերջին կամքն ինձ մատնելու տալու համար՝ վարձք մ'ալ կ'ընծայէիք։

Մարքիզուհին զանի ընդմիջելու համար շարժում մ'ըրաւ։

— Մտիկ ըրէք, տիկին, վրայ բերաւ ծերունին ձեռքը երկարելով, սա խօսքս ձեր մտքին մէջ իբր անյեղլի և նուիրական պահեցէք։ Ինչպէս որ տիկին մարքիզուհի տ'Օրէյի ըրած խոստումը

ներուս մասին հաւատարիմ դտնուեցայ՝ նոյնպէս նաև կոմս որ Մորլէի տուած խօսքիս վրայ հաստատ պիտի մնամ։ Այն օրը որ իւր որդին, ձեր որդին դայ, յայտնութեան նշանը ինձ ներկայացնէ ու իւր դաղտնիքը հարցնէ՝ զայն պիտի հաղորդեմ անոր, տիկին։ Իսկ զայս հաստատող թուղթերը՝ արդէն դիտէք որ տ՚Օրէյ մարքիզին մեռնելէն վերջը պիտի յանձնուին իրեն։ Գաղտնիքը հոս է։ — Ծերունին սիրտը ցցուց։ — Զեղաւ մարդկային իշխանութիւն մը որ ժամանակէն առաջ զայն դուրս հանելու ստիպէ. ուստի և չպիտի ըլլայ մարդկային իշխանութիւն մը, որ ժամանակին զայն դուրս ելնելու արգիլէ։ Թուղթերը հոս, սա պահարանին մէջն են, որու բանալին միշտ քովս կը պահեմ. ուստի կամ դողութեամբ կամ սպանութեամբ կրնան ձեռքս առնել։

— Սակայն, ըսաւ մարքիզուհին կիսովին տեղէն ելնելով և իւր աթոռին թեւերուն կռթնելով, ծերունի, թերևս դու իմ էրիկէն առաջ մեռնիս. վասն զի եթէ նա քեզմէ աւելի տկար է, դուն ալ անորմէ աւելի տարեց ես, և այն ատեն այս թուղթերը ի՞նչ կ՚ըլլան։

— Իմ վերջին ժամուն ներկայ դտնուող քահանային կը յանձնեմ, պատուիրելով որ դաղտնի պահէ։

— Ուրիշ միջոց չկայ, ըսաւ մարքիզուհին ոտք ելնելով, այսպէս իմ երկիւղներու շղթայն մինչև իմ մահս պիտի երկարաձգի և անոր վերջին օրակը յաւիտենական կերպով իմ դաղտնին պիտի կնքուի։ Աշխարհիս մէջ մարդ մը, թերևս մէկ մարդ միայն կայ, որ ժայռի պէս անսասան է. և պէտք է որ Աստուած զայն իմ ճանապարհին վրայ դնէ, չէ թէ իբր խղճի տագնապ, այլ վրէժխնդիր ըլլալու համար։ Պէտք է որ փոթորիկ մը գիս անոր վրայ մղէ մինչև որ փշրուիմ. . . ։ Իմ դաղտնիքս քու ձեռքդ է, ծերունի, լաւ, ինչ որ կ՚ուզես ըրէ, դու տէր ես իսկ ես դերի։ Մնաս բարեւ։

Այս խօսքերուն վրայ մարքիզուհին դուրս ելաւ և ամրոցին ճամբայէն գնաց։

Ը

— Այո՛, ըսաւ ծերունին մարքիզուհիին հեռանալը դիտելով, այո՛, դիտեմ պղնձէ սիրտ մ՚ունիք, տիկին, որ երբէք վախ չըզդար, ՚ի բաց առեալ այն երկիւղը զոր Աստուած խղճի խայթի տեղ ձեր սրտին մէջ դրեր է։ Բայց միթէ այս բաւական է. միթէ շատ սուղ է ձեր մշտատև սարսափին դնով առաքինութեան համբաւ մը ստանալ։ Իրաւի տ՚Օրէյ մարքիզուհիին հոչակը այնքան հաստատուն է՝ որ եթէ ճշմարտութիւնը դեռնէն ելնէ կամ երկինքէն ինչ կը մեղադրուի։ Վերջապէս, Աստուծոյ կամքն աղատ է, և ինչ որ դործէ շատ առաջ իւր իմաստութեան մէջ դրուած է։

— Աղէկ խօսեցար, ըսաւ երիտասարդ և քաղցրահնչիւն ձայն մը, ալևորին անձնուրացութեամբ բերնէն փախցուցած կրօնական սկզբունքին պատասխանելով, խա՛չոր, հայր իմ, ծողովոց գիրքին պէս կը խօսիս։

Աշար ետին դարձաւ և Բոլը նշմարեց։ Մարքիզուհին այնքան զբաղած էր մեր պատմած տեսարանով զի մեկնելու ատենը նորատի Բոլ նաւապետը որ դեռ նոր եկեր էր չտեսաւ։ Ասիկայ ծերունին մինակ տեսնելով իւր կարդին յաւաջացաւ, երբ այն վերջին խօսքերը լսեց որոնց իւր սովորական բարի բնաւորութեամբը պատասխանեց։ Աշար, այս անակնկալ երևոյթին վրայ զարմանալով անոր երեսը նայեցաւ, իբր թէ խնդրելով որ նորէն կրկնէ։

— Ես կ՚ըսեմ թէ, շարայարեց Բոլ, խոնարհած ջերմեռանդութեան մէջ աւելի վսեմութիւն կայ՝ քան թէ երկմիտ փիլիսոփայութեան։ Ասի մեր քուէյքըրներուն մէկ սկզբունքն է, զոր իմ յաւիտենական երջանկութեան համար կը փափաքէի աւելի շատ սրտիս՝ քան թէ բերնիս մէջ ունենալ։

— Ներէ՛, պարոն, ըսաւ ծերունին մեր բազդախնդրին նայելով, որ զինքը կը դիտէր անշարժ և մէկ ոտքը դրան սեմին վրայ դրած։ Կրնամ արդեօք հասկնալ թէ ո՞վ ես դու։

— Ա՛ռ այժմ, պատասխանեց Բոլ, իր բանահիւսական և անփոյթ զուարթութեան սովորական թռիչը տալով, Պղատոնի հանրապետութեան մէկ որդին եմ. եղբայրս՝ մարդկային սեռն է, հայրենիքս՝ աշխարհը, և երկրի վրայ իմ գտնուած վայրէն զատ՝ ուրիշ տեղ չունիմ։

— Բայց ի՞նչ կ՚ուզես, շարունակեց ալևորը, երիտասարդին բոլոր դէմքին վրայ փայլող լրջութենէն ակամայ ժպտելով։

— Լորիանէն երեք մղոն, Օրէյի ամրոցէն հինգ հարիւր քայլ հեռու՝ տնակ մը կը փնտռեմ ըսաւ Բոլ, որ շուտիկի պէս կը նմանի այս բնակարանին և ուր ծերունի մը կայ, որ թերևս դու ես։

— Անունը ի՞նչ է։

— Լուի Աշար։

— Ես եմ։

— Ուրեմն երկնից օրհնութիւնը քու սպիտակ մազերուն վրայ իջնէ, ըսաւ Բոլ անմիջապէս գորովալիր և յարգական շեշտ մը տալով իր ձայնին, վասն զի ահա նամակ մը զոր կարծեմ հայրս գրած է և կ՚ըսէ թէ դու բարեկիր մարդ մ՚ես։

— Այդ նամակին մէջ բան մը չկայ, գոչեց ծերունին հրացայտ աչերով և քայլ մը դեռաբուսիկ նաւապետին մօտենալով։

— Այո՛, կայ, պատասխանեց ասիկայ զայն բանալով ու մէջէն կիսակոտոր Վենետիկի «ոսքէն» մը հանելով. ոսկի դրամի պէս բան մը կայ որուն կէսը իմ քովս է, իսկ միւս կէսը քու քովդ պիտի ըլլայ։

Աշար մեքենայաբար ձեռքը երկարեց երիտասարդը դիտելով։

— Այո՛, այո՛, ըսաւ ծերունին և մէն մի խօսքին աչերը հետզհետէ արտասուքով կը լեցուէր, այո՛, ան է, և որ առաւելն է, անոր տարօրինակ նմանութիւնն է . . . . — Թևերը բացաւ։ — Ո՛րդեակ իմ. . . . Տէր Աստուած, Տէր Աստուած։

— Ի՞նչ ունիս, գոչեց Բոլ, իր կարգին ծերունին բռնելու համար թևերը երկարելով, որ յուզման լծին տակ հետզհետէ կը տկարանար։

— Ո՛հ, չես գիտեր, պատասխանեց ասիկայ, չես գիտեր որ հօրդ կենդանի պատկերն ես որու համար ամենայն սիրով իմ ա-

րիւնս ու կեանքս կը զոհէի ինչպէս որ այժմ եթէ ուզես քեզ զոհելու պատրաստ եմ։

— Ուրեմն գրկէ զիս, իմ հնամի բարեկամս, ըսաւ Բոլ ծերունին փաթթուելով, ըստ որում հաւատամ որ հօրը դերեզմանին և որդւոյն օրորոցին մէջ տեղը՝ սիրոյ շղթայն կոտրուած չէ։ Հայրը ինչ որ ալ էր՝ եթէ անոր նմանելու համար անբասիր խիղճ մը, անվկանդ արիութիւն մը և երախտիք ճանչցող և ուր ուրեմն հայհոյանք մուցող յիշողութիւն մը պէտք է, նոյնին կենդանի պատկերն եմ, աւելի շատ հոգւով քան թէ դէմքով։

— Այո՛, հայրդ ունէր այդ ամենը, պատասխանեց ալևորը յամրօրէն, իր նորադարձ որդին գրկելով և արտասուալից աչերով գորովալիր զայն դիտելով, այո՛, նա ունէր նոյն վեհմտութիւնը՝ ձայնին, նոյն կայծը՝ աչերուն, և նոյն ազնուութիւնը՝ սրտին մէջ։ Բայց ինչո՞ւ աւելի առաջ չտեսայ քեզ, երիտասարդ։ Կենցաղս մէջ բաւական տխուր ժամեր անցուցի զոր դու ներկայութեամբդ կըրնայիր պայծառ գործել։

— Ինչո՞ւ . . . Վասն զի այս նամակը կ՚ըսէր որ՝ քսանը հինգ տարեկան եղած ժամանակս դամ քեզի դտնեմ, և շատ ատեն չէ որ քսանը հինգ տարուն մտայ, մէկ ժամ է։

Ծերունին գլուխը ծռեց մտախոհ և պահ մը լուռ կեցաւ անցեալին յիշատակներուն մէջ ընկղմելով։

— Արդէն, ըսաւ գլուխը վեր առնելով, արդէն քսանը հինգ տարի եղա՞ւ։ Բայց, Տէր Աստուած, ինձի համար կարծես թէ դեռ երէկ էր որ այս բնակարանին մէջ ծնար, այս սենեակին մէջ առջերդ բացիր։

Եւ ծերունին ձեռքը դէպ ուրիշ խուցի մը դուռը կ՚երկարէր։

Բոլ իւր կարգին սկսաւ մտաբերել. յետոյ չորս դին նայեցաւ, աչքին առջևի առարկաները դիտելով՝ զօրութիւն տալու համար այն յիշատակներուն որ միախուռն կը ծագէին մտքին մէջ։

— Այս խրճիթին, այս սենեկին մէջ, կրկնեց նա, և մինչև հինգ տարեկան հոս բնակեցայ, այնպէս չէ։

— Այո՛, քրթմնջեց ծերունին իբր թէ վախնալով զի կ՚արդիլէ այն զգացումները որ կըսկսէին անոր վրայ տիրել։

— Լաւ ուրեմն, յարեց Բոլ իր բոլոր յիշատակները ամփոփելու համար՝ երկու ձեռքով աչերը ծածկելով, թող որ պահ մը իմ կարգիս անցեալը դիտեմ, վասն զի կը յիշեմ սենեակ մը զոր կը կարծէի թէ երազիս մէջ տեսեր էի։ Եթէ այս սենեակն է այն . . . ։ Մտիկ ըրէ . . . ոհ, զարմանալի է. ինչպէս ամէն բան միտքս կուգայ։

— Խօսէ՛, որդեակ իմ, խօսէ՛, ըսաւ ծերունին։

— Եթէ այս սենեակն է այն . . . մոռած ժամանակդ . . . աջ կողմը . . . ներսը . . . անկողին մը կար . . . կանաչ վիժակներով։

— Այո՛։

— Նոյն անկողնոյն մնաքին վրայ խաչելութիւն մը։

— Այո՛։

— Դիմացը պահարան մը, ուր գիրք կար . . . . նաև . . . . գերմանական պատկերներով մեծ Աստուածաշունչ մը։

— Ահաւասիկ, ըսաւ ծերունին Սուրբ Գիրքը ցուցնելով, որ ծնգարանի մը վրայ բաց դրուած էր։

— Ո՛հ, այս գիրքն է, այս գիրքն է, գոչեց Բոլ, շուրթերը թուղթերուն քսելով։

— Ո՛հ, ինչ ընտիր սիրտ, ինչ ընտիր սիրտ է, մրմնջեց ծերունին։ Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ։

— Ասկէ զատ, ըսաւ Բոլ ոտք ելնելով, այս սենեակը պատուհան մ՚ունի ուսկից ծովը կ՚երևէր և ծովին վրայ երեք կղզի։

— Այո՛, Ուայթ, Էօտիք և Պէլ–իլ–ան–մէր կղզիները։

— Ուրեմն այս սենեակն է այն, գոչեց Բոլ դէպ այն խուցը ցատկելով. ապա երբ տեսաւ որ ծերունին իր եռևէն երթալ կ՚ուզէր, չէ՛, չէ՛, ըսաւ անոր ձայն բռնելով, թող որ առանձին մնանեմ հոն . . . ։ Պէտք է որ առանձին ըլլամ։ Եւ ներս մտաւ ու դուռը գոցեց։

Այն ատեն պահ մը կանգ առաւ, այն սուրբ ակնածութիւնը զգալով՝ որ մանկութեան յիշատակները կը պաշարէ։ Սենեակը ճիշդ իւր նկարագրածին պէս էր, որովհետև այս անձնուէր և հաւատարիմ սպասաւորը ձայն ամէն փոփոխութիւններէ անեղծ պահեր էր։ Բոլ որու զգայումներու յայտարարութիւնը՝ օտար ակնարկ մ՚անշուշտ կրնար արգիլել, ինքզինքը մինակ դնելով՝ բոլորովին սիրտը բացաւ և ձեռքերը խաչաձև դնելով՝ աչերը դէպի փղոսկրեայ խաչելութիւնը բարձրացուց ու գետին ինկաւ ծնրադիր, ինչպէս որ երբեմն առաւ և իրիկուն սովոր էր ընելու։ Աշխատեցաւ յիշել այն պարզ աղօթքներէն մին, որով մանուկը դեռ կենաց շեմին վրայ՝ Աստուծոյ կ՚աղօթէ, կենաց դուռը իրեն բացողներուն համար։ Ի՞նչ դէպքեր իրարու յաջորդեր էին այս երկու ծնրադրութիւններուն մէջ, որ քսան տարիէն ետքը կը կրկնուէր։ Ի՞նչ այլազան և յեղակարծ հորիզոններ անցեր էին այն հորիզոններուն տեղը, զոր մեր երիտասարդութեան գեղածիծաղ արփին այնպիսի քաղցր ակնարկով մը կը գգուէ։ Ի՞նչպէս իր նաւն առագաստներուն մէջ փչող հովը, զանի անձնական կիրքէ հեռացնելով՝ քաղաքական կրից մէջ մղեր էր։ Եւ ահա այս անփոյթ երիտասարդը, որ կը կարծէր թէ աշխարհի վրայ ամէն բան մոռցեր էր՝ այժմ ամէն ինչ կը յիշէր. ահա իւր կեանքը, որ զայն ատատնող Ովկիանոսին պէս ազատ և զօրաւոր էր՝ մինչև ցայն ժամ անծանօթ կապերու կը միանար, որոնք թերևս այս ինչ կամ այն ինչ տեղը արգիլէին զինքը ճիշդ խարսխած նաւու մը պէս, որ հով կը փնտռէ և հովը զինքը կը կանչէ, բայց կը զգայ որ շղթայակապ գերի մ՚է և իւր անցեալ ազատութիւնը աւելի գնահատելի կուտայ ապագայ ստրկութեանը։ Բոլ երկար ատեն այս մտածութիւններուն մէջ ընկղմեցաւ. յետոյ յամրօրէն տեղէն ելաւ և դնաց արմուկը պատուհանին դրաւ կռթնեցաւ։ Գիշերը խաղաղ էր և դեղաղուարձ. լուսինը երկինքը կը շողար և կոհակներուն գագաթը արծաթ փայլ մը կը սփռէր։ Երեք կղզիները հորիզոնին վրայ կապոյտ կ՚երևէին, Ովկիանոսին վրայ ծփող շոգիներու պէս։ Բոլին միտքը եկաւ թէ քանի քանի անգամ մանկութեան ժամանակ նոյն տեղը կռթներ էր, նոյն տեսարանը դիտելով կամ գիշերային թռչունի մը թևին պէս՝ ծովին վրայ լուռութեամբ սահող ճերմակ առագաստով մակոյկի մ՚եռևէն նայելով։ Այն ատեն իւր սիրտը քաղցր և գորովալիր յիշատակներով լեցուեցաւ, գլուխը լանջին վրայ կախեց և այտերուն երկայնութեամբը լռիկ արցունքներ հո-

սեցան։ Նոյն պահուն զգաց որ մէկը ձեռքէն բռնեց. Ծերունին էր այն. իւր յուզմունքը ծածկել ուզեց. բայց զգալով որ չհամարձակիր մարդ ըլլալ՝ Աշարին դարձաւ և բացարձակապէս իւր արտասուալից երեսը ցցուց անոր։

— Ի՞նչ, կուլմաս, պատանի դու, ըսաւ ալևորը։

— Այո՛, կուլամ, պատասխանեց Բոլ, այո՛, ինչո՞ւ պահեմ, նայէ՛, կուլամ։ Կենացս մէջ շատ ահռելի բաներ տեսայ։ Այնպիսի փոթորիկներ անցուցի որ իմ նաւը ալեաց զգաթը և ծովին անդունդները շրջրջեց և ես զգացի որ գիշերային սիրքի համար ինչ որ է չոր տերև մը նոյնն էր նաև նաւը մրրիկին թևերուն վրայ։ Աչքիս առջև մարդեր դեռինը փուռեցան, ինչպէս որ հասուն հունձը հնձողին մանգաղին տակ կ'իյնայ։ Մէկ օր առաջ միատեղ խնջոյք ըրած անձերու աղիողորմ և օրհասական ձայները լսեցի։ Անոնց վերջին հառաչը ընդունելու համար ռումբի և գընդակի տարափին մէջէն անցայ, այնպիսի տախտակամածի մը վրայէն քայլելով՝ որ մէն մի ոտնափոխին արեան մէջ կը սահէի։ Լաւ, իմ սիրտս դարձեալ չյուզուեցաւ և աչերէս արտասուք չեկաւ։ Բայց այս սենեակը, տես, այս սենեակը կ'ըսեմ, որուն յիշատակը այնպէս սուրբ պահած էի, այս սենեակը ուր հօր մը առաջին փայփայանքը ընդունեցայ զոր ալ չպիտի տեսնեմ և մօր մը առաջին համբոյրները որ թերևս ալ զիս տեսնել չպիտի ուզէ, այս սենեակը կ'ըսեմ, օրորոցի և գերեզմանի պէս նուիրական է։ Ուստի զայն տեսնելով չեմ կրնար իմ յուզմունքը սանձել, և պէտք է որ լամ, ապա թէ ոչ պիտի նուազիմ։

Ծերունին զայն ողջագուրեց. Բոլ գլուխը անոր ուսին վրայ դրաւ, և պահ մը մի միայն անոր հեծկլտանքը լսուեցաւ։ Վերջապէս ալեբեկ սպասաւորը կրկնեց.

— Այո՛, իրաւունք ունիս. այս սենեակը թէ լմշտոց մ'է և թէ գերեզման. վասն զի հոս ծնար դու և հոս հօրդ վերջին հրաժեշտը ընդունեցար, շարայարեց նա շարժումով մը սենեկին զուգահեռական մէկ անկիւնը ցոյց տալով։

— Ուրեմն հայրս մեռած է, ըսաւ Բոլ։

— Այո՛, մեռաւ։

— Ի՞նչպէս, մեռա՞ւ կ'ըսես։

— Ամէն բան պիտի ըսեմ։

— Քիչ մը կեցէ՛ք, յարեց Բոլ ձեռքով աթոռ մը փնտռելով և նստաւ։ Հիմակ ուժ չունիմ որ մտիկ ընեմ։ Թող որ քիչ մը ինքզինքս գտնեմ։ — Արմուկը պատուհանին կռթնցուց, գլուխը ձեռքին վրայ դրաւ և նորէն աչերը ծովին վրայ սևեռեց։ — Քանի՞ գեղեցիկ է Ովկիանոսը լուսնկայի գիշերները, ինչպէս հիմակ, յարեց սովորական թախծութեան շեշտով։ Աստուծոյ պէս խաղաղ է այն և յաւիտենականութեան չափ ալ ընդարձակ։ Չեմ կարծեր որ այն անձը որ ուշի ուշով այս տեսարանը դիտած է, մեռնելէ վախնայ։ Հայրս աներկիւղ մեռաւ, այնպէս չէ՞։

— Ո՛հ, անշուշտ, պատասխանեց Աշար վէսօրէն։

— Այդպէս պիտի ըլլայ, յարեց Բոլ։ Հայրս կը յիշեմ, թէև վերջին անգամ տեսած ատենս չորս տարեկան էի։

— Քեզի պէս գեղեցկագէմ երիտասարդ մ'էր, ըսաւ Աշար տրտմագին Բոլին երեսը նայելով, և Ճիշդ քեզի տարեկից։

— Անունը ի՞նչ էր։

— Կոմս տը Մօրլէ։

— Ուրեմն ես ալ հին և ազնուական ցեղէ եմ։ Ուրեմն ես ալ ունիմ զինանշաններ ու կնիք այն լիրբ գեռատի իշխանազուններուն պէս որոնք երբ իմ վերքերս ցոյց կուտայի իրենց՝ տոհմագիր (parchemin) կը փնտռէին ինձմէ։

— Համբերէ՛, պատանի՛ դու, համբերէ՛ և այդպէս մի՛ մեծամտիր. վասն զի դեռ չյայտնեցի այն անձին անունը որմէ ծնար և դեռ քու ծննդեանդ ահաւոր գաղտնիքը չգիտես։

— Լաւ ուրեմն, թող այդպէս ըլլայ. սակայն ոչ նուազ ակնածութեամբ և ուշադրութեամբ մօրս անունը պիտի ըսեմ։ Ի՞նչպէս կը կոչուէր մայրս։

— Տ'Օրէյ մարքիզուհի, պատասխանեց ծերունին յամրօրէն և իրը թէ ակամայ։

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց Բոլ և մէկէն ցատկեց տեղէն ելաւ և անոր ձեռքերէն բռնեց։

— Ճշմարտութիւնը, պատասխանեց նա տխրութեամբ։

— Ուրեմն Էմմանուէլը եղբայրս է և Մարկրիթը քոյրս։

— Միթէ արդէն կը ճանչես զանոնք, գոչեց ալերեկ սպասաւորը իր կարգին զարմանահար։

— Ո՛հ, շատ իրաւունք ունէիր, ծերունի դու, ըսաւ թերահասակ նաւազը նորէն աթոռին վրայ իյնալով։ Աստուծոյ կամքն աղատ է և ինչ որ գործէ շատ առաջ իւր իմաստութեան մէջ գրուած է։

Պահ մը լռութիւն տիրեց և վերջապէս Բոլ, դլուխը վեր վերցնելով, անվեհեր ակնարկ մը պնդեց ծերունիին վրայ։

— Արդ՝ հիմակ, ըսաւ անոր, ամեն բան մտիկ ընելու պատրաստ եմ։ Կրնաս խօսիլ։

Թ

Ծերունին պահ մը ուշը ամփոփեց, յետոյ սկսաւ.

— Երկուքն իրարու նշանուած էին, երբ չդիտեմ ինչ ատելութիւն մը ծագեցաւ իրենց ընտանիքներուն մէջ և իրենք ալ զատուեցան։ Մօրէ կոմսը սաստիկ ցաւէն՝ չկրցաւ Ֆրանսա կենալ, ուստի Ս. Դոմինիկէ կղզին դնաց ուր Հայրը տուն մ՝ունէր։ Եւ ալ հետը դացի, վասն զի Մօրէ մարքիզը իմ վրայ մեծ վստահութիւն ունէր. մայրս էր անոր ստնտուն, և ես իրեն հետ մի և նոյն կրթութիւնը առած էի. զիս եղբայր կը կոչէր և ես միայն կը յիշէի բնութեան՝ իմ և անոր մէջ դրած միջոցը։ Մարքիզը իւր որդւոյն խնամատարութիւնը ինձ ձգեց, վասն զի իբր Հայր կը սիրէի զայն։ Երկու տարի արևադարձին երկինքին տակ անցուցինք։ Հայրդ երկու տարի այս սքանչելի կղզին առանձնութեան մէջ քաշուած մնալով՝ առանց խորհուրդի և նպատակի կը շրջադայէր, սրընթաց և անխոնջ՝ որսի կ՝երթար և այսպէս մարմնական յոգնութիւններով՝ սրտին ցաւերը մեղմելու փորձ կը փորձէր։ Սակայն չէ թէ միայն չէր յաջողեր՝ հապա նաև կարծես թէ այն հրատոչոր արևէն սիրտը աւելի կը վառէր։ Վերջապէս երկու տարի այսպէս ջան ու ճիգ ընելէ ետև՝ իւր անզուսպ սէրը յաղթանակը տարաւ և հարկ եղաւ որ կամ սիրուհին տեսնէ կամ մեռնի։ Ես հաւանեցայ, ուստի ճամբայ ելանք։ Աւելի դեղեցիկ և յաջող ճամբորդութիւն մը չէր կրնար ըլլալ։ Ծովը և երկինքը մեզ կը ժըպտէին. ասոնք գէշ նշաններ չէին։ Բորթ–Օ–Բրէնսէն մեկնելէ վեց շաբաթ ետքը Հավրը հասանք։

Օրիորդ տը Սապլէն ամուսնացեր էր. տ՝Օրէյ մարքիզը Վերսայլ դացեր էր և Լուի ԺԵ. թագաւորին քով իր պաշտօնը կը կատարէր. իսկ կինը սրտին ցաւէն անոր ընկերանալ չկարենալով՝ Օրէյի այս հին ամրոցին մէջ մնացեր էր որու աշտարակները ասկէ կը տեսնուին։

— Այո՛, այո՛, քրթմնջեց Բոլ, դիտեմ, շարունակէ՛, դէշ չէ։

— Գալով ինձի, վրայ բերաւ ծերունին, մեր ճամբորդութեան ատենը՝ իմ մէկ մօրեղբայրս, որ Օրէյի դերդաստանին հինաւուրց ծառան էր, մնաց ըլլալով՝ այս պզտիկ տունը ու շրջակայի հողերը ձգեր էր ինձ։ Ես անոր տէր եղայ։ Իսկ հայրդ, Բարիզ պիտի երթամ ըսելով՝ Վանի մէջ ինձմէ բաժնուեցաւ, և այս տնակը բնակելէս 'ի վեր տարի մը կար՝ որ զինքը տեսած չունէի։

Գիշեր մը (այսօր քսանը հինգ տարի է) դուռը զարկին. ելայ բացի. հայրդ երևցաւ, կին մը գրկեր կը բերէր, որուն դէմքը քօղով ծածկուած էր. այս սենեակը մտաւ և զանի սա անկողնոյն վրայ դրաւ. ապա միւս խուցը դալով, ուր ես զարմանահար և անշարժ՝ իրեն կը սպասէի լռակաց, «Լուի, ըսաւ ինձ ձեռքը ուսիս վրայ դնելով և այնպիսի մարդու մը պէս ինձ նայելով՝ որ կ՝աղաչէ թէև դիտէ զի հրամայելու իշխանութիւն ունի, Լուի, դու իմ կեանքը և պատիւը ազատելէ ետև մեծ բան մը կրնաս ընել, այն է սիրուհիս կեանքն ու պատիւը ազատել. ձի մը հեծիր, վազէ՛ քաղաքը դնա՛ և մէկ ժամէն բժիշկ մը դա՛ր հոս բե՛ր»։ Այն սուղ և ազդու ձայնով կը խօսէր որ կը յայտնէ թէ վայրկեան մ՝իսկ կորսնցնելու ժամանակ չկայ, ուստի հնազանդեցայ։ Լուսցեր էր երբ վերադարձանք։ Մօրէ կոմսը բժիշկը առաւ սենեակը տարաւ, դուռը դոցեցին և բոլոր օրը հոն կեցան։ Իրիկունը ժամը հինգին

բժիշկը մեկնեցաւ և երբ մութը կոխեց՝ հայրդ իւր կարգին սենեակէն դուրս եկաւ, նորէն գրկեր էր առջի գիշեր բերած խորհրդաւոր կինը, որու երեսը միշտ քողով ծածկուած էր։ Անոնց ետևէն սենեակը մնայ և քեզի հոն դայ. դու նոր ծներ էիր։

— Բայց դու ինչպէս գիտցար որ այն կինը տ՚Օրէյ մարքիզուհին էր, ընդմիջեց Բոլ, որպէս թէ դեռ ևս կ՚աշխատէր տարակուսիլ։

— Ո՛հ, պատասխանեց ալևորը ահռելի և միանգամայն անակնկալ կերպով, Մօրլէ կոմսին առաջարկեցի որ քեզի քովը պահեմ. նա հաւանեցաւ և մերթ ընդ մերթ կուգար ժամ մը քովդ կը նստէր։

— Մինա՞կը, հարցուց Բոլ անձկութեամբ։

— Միշտ մինակ, պատասխանեց Աշար։ Միայն բուրաստանին մէջ քեզի ժուռ ածելու հրաման ունէի. այն ատեն երբեմն կը պատահէր որ ուղիի մը պտոյտը (détour) մարքիզուհին կ՚երևէր, իբր թէ դիպուածով եկած ըլլար հոն, քեզի ձեռք կ՚ընէր ու քովը կը կանչէր և կը պաղնէր օտար մանուկի մը պէս, որ դեղեցկութեանը համար կը սիրուի։ Զորս տարի այսպէս անցաւ. յետոյ գիշեր մը նորէն գուռը զարկին. դարձեալ հայրդ էր։ Առաջին անգամէն աւելի հանդարտ, բայց թերևս աւելի տրտում էր։ «Լսի, ըսաւ ինձ, վաղն առտու կանուխ տ՚Օրէյ մարքիզին հետ պիտի կռուիմ. այս մահուան մենամարտութիւն մ՚է և քեզմէ զատ ուրիշ վկայ պիտի չգտնուի. արդէն որոշած ենք։ Ուստի այս գիշեր հոս պիտի մնամ. քիչ մը թուղթ, գրիչ, մելան տուր ինձ»։ Սա սեղանին առջև և այդ քու աթոռին վրայ նստաւ։ — Բոլ ոտք ելաւ և նորէն աթոռին կոթնեցաւ բայց ալ ևս չնստաւ։ — Բոլոր գիշերը չքնացաւ, առտու կանուխ սենեակս մտաւ և զիս ոտքի վրայ գտաւ։ Իմ ալ քունս չտարաւ. իսկ դու, խեղճ մանկիկ, որ դեռ մարդկային կիրքն ու դժբաղդութիւնները չէիր ճանչեր, քու լմշտոցին մէջ անփոյթ կը քնանայիր։

— Եթէ՞, եթէ՞։

— Հայրդ մեղմօրէն դէպի քեզ ծռեցաւ պատը բռնելով և տրտմութեամբ քեզ նայելով. «Լսի, ըսաւ ինձ խոր ձայնով մը, եթէ ես սպաննուիմ, որովհետև կրնայ այս մանկան դժբաղդութիւն

մը պատահիլ՝ այս նամակով զանի իմ սենեկասպասս Ֆիլտին յանձնէ որ Սկովտիոյ մէջ Սէլքիրք պիտի տանի և հաւատարիմ անձերու պիտի յանձնէ։ Երբ քսանը հինգ տարեկան ըլլայ, այս ոսկի գրամին միւս կէսը քեզի բերելով՝ իւր ծնողաց գաղտնիքը պիտի հարցնէ. դուն ալ պիտի ըսես, վասն զի այն ատեն մայրը թերևս առանձին և մինակ պիտի մնայ։ Իսկ այս թուղթերը որ զայն կը հաստատեն, մարքիզին մեռնելէն վերջը՝ պիտի տաս անոր։ Այժմ ամէն ինչ որոշուած է, երթանք ուրեմն, ըսաւ ինծի, վասն զի ժամանակն է»։ Այն ատեն քու օրորիդ կոթնեցաւ, դէպի քեզ ծռեցաւ ու թէև մարդ էր, սակայն իրաւի քու այտին վրայ արտասուք մը տեսայ թափեց։

— Շարունակէ, մրմնջեց Բոլ խեղդուկ ձայնով մը։

— Ակէ հարիւր քայլ հեռու՝ գարաստին մէկ ուղիին մէջ ժամադիր եղեր էին։ Երբ այն տեղ հասանք, մարքիզը հոն էր և մի քանի վայրկեանէ 'ի վեր մեզ կրսպասէր։ Անոր քովը, նստարանի մը վրայ, լեցուն ատրճանակներ կային. երկու հակառակորդները առանց բառ մ՚արտասանելու զիրար ողջունեցին։ Մարքիզը մատով ղէնքերը ցոյց տուաւ. անձնիւրն իրը առաւ և որովհետև ինչպէս որ հայրդ ինձ ըսեր էր, արդէն պայմաններն որոշեր էին, երկուքն ալ լռիկ և տրտում դացին իրարմէ երեսուն քայլ հեռու կեցան և սկսան իրարու դէմ քայլել։ Ո՛հ, կ՚երդնում որ սոսկալի ժամ մ՚եղաւ ինձի համար, շարայարեց ծերունին այնքան յուզեալ որպէս թէ նոյն տեսարանը աչքին առջևն էր, երբ տեսայ զի երկու անձերուն մէջ եղած հեռաւորութեան միջոցը աստիճանաբար նուազեցաւ։ Երբ ալ մի միայն տասը քայլի միջոց մը մնաց, մարքիզը կանգ առաւ և քաշեց հրացանակը . . . ։ Ես հայրդ կը դիտէի։ Գէմքին և ոչ մէկ դնդերը շարժեցաւ, այնպէս որ կարծեցի թէ ողջ առողջ էր. ինքը մինչև մարքիզին քովը գնաց և ատրճանակին բերանը սրտին վրայ դնելով. . .

— Ցուսամ որ չսպաննեց, զոչեց Բոլ ծերունիին թևէն բռնելով։

— Չէ, այլ անոր ըսաւ. «Քու կեանքդ իմ ձեռքս է, պարոն, ուստի կրնամ զայն ղրաւել. բայց կ՚ուզեմ ապրիս որ ինձ ներես

ինչպէս որ ես քեզ կը ներեմ» ։ Այս խօսքերուն վրայ՝ դեռին ինկաւ մեռաւ. մարքիզին գնդակը անոր կուրծքը մտեր էր ։

— Ո՛հ, հայր իմ, հայր իմ, գոչեց դեռատի նաւաղը թեւերը դալարելով ։ Բայց իմ հայրս սպաննող անձը դեռ կենդանի՛ է, այնպէս չէ՞. դեռ երիտասարդ է և դաշոյն կամ ատրճանակ մը վերցնելու ուժ ունի, այնպէս չէ՞ ։ Այսօր, հիմակ երթանք զինքը դանենք . . . . ։ Դուն անոր կ'ըսես. «Ասիկայ անոր որդին է, պէտք է որ հետը կռուիս» ։ Ո՛հ, այդ մարդը . . . այդ մարդը . . . վայ դլխին այդ մարդուն ։

— Աստուած վրէժխնդիր եղաւ, պատասխանեց Աշար. այն մարդը խենթեցաւ ։

— Աղէկ ըսիր, քրթմնջեց Բոլ, ես մոռցեր էի ։

— Եւ իր յիմարութեան մէջ, շարունակեց Աշար, միշտ այն սրինահեղ տեսարանը աչքին առջև կուգայ, և օրը տասն անդամ հօրդ անոր ուղղած այն վսեմ խօսքերը կը կրկնէ ։

— Ա՛հ, ուրեմն ասոր համար մարքիզուհին վայրկեան մ'անդամ քովէն չհեռանար ։

— Եւ ահա այս պատճառաւ Էմմանուէլը և Մարկրիթը քովէն հեռացուց պարտուակ բռնելով թէ մարքիզը չուզեր իւր զաւակները տեսնել ։

— Խե՛ղճ քոյր իմ, ըսաւ անհնարին դթութեան շեշտով մը ։ Եւ հիմակ մարքիզուհին կ'ուզէ զինքը զոհել իր կամայ հակառակ այն թշուառական Լէքթուրին հետ ամուսնացնելով ։

— Այո՛, բայց այն ապիրատ Լէքթուրը, կրկնեց Աշար, Մարկրիթը Բարիզ պիտի տանի և անոր եղբօրը փրկելու վաշտ մը պիտի տայ. այն ատեն մարքիզուհին իւր որդիներուն ներկայութենէն վախ չունենար. իր դաղանիքը իր և երկու ծերունիներու մէջ կը մնայ որ վաղը, կամ այս գիշեր թերևս մեռնին . . . ։ Գերեզմանը լեղու չունի ։

— Բայց ես կամ, ես ։

— Դո՛՛՛ն, սակայն միթէ դիտե՞ն որ դուն կենդանի ես. տասն հինդ տարի է Սէլքիրքէն փախչելէդ 'ի վեր՝ քու վրայ լուր մը չտուիր. ուստի չընկրնար ըլլալ որ քեզի ալ այնպիսի դէպք մը

պատահած լինի որ արդիլէ դալ դանուիլ այն ժամադրութեան ուր այսօր բարեբաղդաբար եկար հասար ։ Անշուշտ մարքիզուհին քեզ մոռցած չէ . . . բայց կը յուսայ որ . . . ։

— Ո՛հ, կը կարծես միթէ որ մայրս . . . ։

— Ներէ՛, իրաւի, պատասխանեց Աշար, բան մը չեմ կարծեր. սխալեցայ ուստի մոռցիր ինչ որ ըսի ։

— Այո՛, այո՛, քու վրայ խօսինք, բարեկամ. խօսինք հօրս վրայ ։

— Պէտք է քեզի ըսել թէ հօրդ վերջին կամքը կատարուեցաւ ։ Նոյն օրը Գիլտ եկաւ քեզի փնտռեց ։ Դու մեկնեցար ։ Այն ատենէն 'ի վեր քսանը մէկ տարի անցաւ և չեղաւ օր մը որ որոշեալ օրը քեզ տեսնելու համար աղօթք չընեմ ։ Իմ այս մաղթանքը կատարուեցան, յարեց ալևորը ։ Փառք քեզ Աստուած ։ Ահա դուն հոս ես, հայրդ քու մէջ կենդանի է . . . ։ Ես նորէն կը տեսնեմ զինքը և իրեն կը խօսիմ. . . . ա՛լ չեմ լար, սիրտս սփոփեցաւ . . . ։

— Բայց շնչակտուր, ոգեսպառ մեռեր էր և յոյս չկար ։

— Այո՛, մեռեր էր . . . ։ Ես զանի հոս բերի . . . ։ Այս անկողնոյն վրայ դրի ուր դու ծնար ։ Գուրը գոյեցի որ մէկը ներս չմտնէ և ես դերեզմանը փորելու դացի ։ Բոլոր օրը այս դժնդակ պարտաւորութեամբ անցուցի ըստ որում հայրդ պատուիրած էր որ այն սոսկալի դաղտնիքը մարդ չիմանայ ։ Իրիկունը եկայ դիակն առնելու ։ Քանի տարօրինակ է մարդկային սիրտը և ինչպէս Աստուծոյ անոր մէջ դրած յոյսը դժուարաւ կը կորուսի ։ Տեսայ որ ինկաւ . . . զդացի որ ձեռքերը պաղեցան . . . անոր սառնաթոր երեսը համբուրեցի . . . . ձդեցի դացի դերեզմանը փորելու, և զայն պատրաստելէս ետքը, այս մահուան պարտաւորութիւնը կատարելէս վերջը, երբ նորէն վերադարձայ՝ սիրտս կը խայտար, վասն զի ես կը կարծէի թէ, թէև ասոր համար Աստուծոյ մէկ հրաշքը պէտք էր, նա նորէն կեանք առած ըլլալով անկողնին վրայ պիտի ելնէր կանդնէր և հետս պիտի խօսէր ։ Ներս մտայ ։ Բարէ, բարէ, աւետարանական ժամանակները անցեր էին . . . ։ Ղազարոս անկողնին վրայ պառկած կեցեր էր . . . մեռած, մեռած, մեռած ։

Եւ ծերունին պահ մը սրտաբեկ մնաց, առանց ո՛չ խօսք մ՚արտասանելու և ոչ ձայն մը հանելու։ Մի միայն իւր կնճռոտ դէմքին վրայ արցունքներ կը հոսէին լռիկ։

— Իրա՛ւ, իրա՛ւ, գոչեց Բոլ իւր կողմէն հեծկլտալով, իրա՛ւ, այնպէս չէ՞, և դու քու նուիրական պաշտօնդ կատարեցի՛ր։ Ի՛նչ ազնիւ սիրտ։ Թո՛ղ որ համբուրեմ այն ձեռքը որ հօրս մարմինը իւր յաւիտենական բնակարանը դրաւ։ Եւ դու ինչպէս իրեն նոյնպէս և անոր տապանին հաւատարիմ մնացիր։ Դո՛ւ, հէք պահապանդ դերեզմանի, անօր մօտը բնակեցար որպէս զի մի քանի արտասուք նորա մոռացեալ փոսին վրայ բուսնող խոտերը ջրեն։ Ա՛հ, անխօսիկ և անձնուէրդ ծերունի, քու քովդ քանի՞ փոքր են անոնք որ ինքզինքնին մեծ կը կարծեն, ըստ որում իրենց անունը փոթորիկի և պատերազմի մէջ մրրիկէն ու կռիւէն աւելի ուժգին կը հնչէ . . . ։ Ո՛հ, օրհնէ՛ զիս, օրհնէ՛, գոչեց Բոլ ծնկան վրայ խնալով, քանի որ հայր չունիմ որ օրհնէ։

— Եկո՛ւ գրկեմ, որդեակ իմ, եկո՛ւ, ըսաւ ալևորը, վասն զի դու այս պարզ ու բնական գործը մեծ բան մը կը կարծես։ Նա՛և, հաւատա՛ ինձ, այդ քու բարեպաշտութիւն ըսածդ, ես չէի գիտեր այլ ուրիշէն սորվեցայ. հասկցայ թէ քանի՞ անկիւն է մարդս երկրի վրայ և ինչպէս աշխարհիս մէջ շուտով կը կորնչի, երբ Աստուած երես դարձնէ անոր մէ։ Հայրդ երիտասարդ, քաջասիրտ և հին ազգատոհմի մը վերջին սերունդն էր. ազնուականի անուն և փառաւոր ապագայ մ՚ունէր. կարծես թէ կանխաւ դէպ աշխարհային փառքը իւր ճամբան պատրաստուած էր . . . ընտանիք մը և բարեկամներ ունէր . . . ։ Լա՛ւ ուրեմն, հայրդ յանկարծ անհետացաւ, որպէս թէ թալուկ մ՚եկած ըլլար վրան։ Զեմ գիտեր որ անոր ետևէն մէկը լացա՞ն թէ ոչ, այլ այս միայն գիտեմ որ քանը մէկ տարի է մարդ մը չեկաւ այս դերեզմանին վրայ. մարդ մը չգիտեր որ նա կը հանդչի այն տեղը ուր խոտը աւելի կանաչ և խիտ է։ Սակայն մարդս իր զոռոզութեամբն ու անմտութեամբը՝ ինքզինքը բան մը կը կարծէ։

— Ո՛հ, մայրս չեկա՞ն երբէք հոն։

Ծերունին պատասխան չտուաւ։

— Լա՛ւ ուրեմն, շարունակեց Բոլ, հիմակ երկու հոգի պիտի ըլլանք որ այս տեղը պիտի ճանչենք։ Եկո՛ւ ցցուր ինձ, վասն զի կ՚երդնում զի ամեն անգամ որ նաւս Ֆրանսայի ծովեզերը հանդպի, հոն պիտի երթամ։

Այս խօսքերուն վրայ՝ Աշարը քաշեց առաջին սենեակը տարաւ, բայց դուռը բանալու միջոցին, դարաստին կողմէն թեթև շշունչ մը լսուեցաւ. ամրոցին ծառան էր որ Մարկրիթին հետը կուգար։ Բոլ արտորանօք նորէն ներս մտաւ։

— Քոյրս է, ըսաւ Աշարին . . . . քոյրս է։ Պահ մը մինակ թո՛ղ զիս անոր հետ, իրեն խօսելու պէտք ունիմ. . . . ։ Իրեն բան մը պիտի ըսեմ որով երջանիկ դիշեր մը պիտի անցնէ։ Գրքերնք անոնց վրայ որոնք չեն քնանար ու կուլան։

— Մտածէ՛, ըսաւ Աշար, որ քեզի յայտնած գաղտնիքս միանգամայն մօրդ կը վերաբերի։

— Հոգ մ՚ըներ, իմ հնամի բարեկամս, ըսաւ նա ալևորը երկրորդ սենեակը մղելով։ Հոգ մ՚ըներ, ես մինակ իր գաղտնիքը պիտի ըսեմ։

Նոյն միջոցին Մարկրիթ ներս մտաւ։

Մարկրիթ սովորականին պէս ծերունիին պաշար բերելու կուգար։ Շատ զարմացաւ երբ առաջին սենեկին մէջ, ուր տասը տարիէ՚ի վեր Աշարէն զատ ուրիշ մէկը տեսած չունէր՝ դեղեցիկ երիտասարդ մը գտաւ, որ քաղցր ակնարկով և բարեսէր ժպիտով մը ղինքը կը դիտէր։ Ծառային նշմարը ըրաւ որ սակաւը սենեկին մէկ անկիւնը դնէ։ Ասիկայ հնազանդեցաւ և դուրս ելաւ իր տիրուհին սպասելու։ Իսկ նէ, Բոլին մօտենալով «Ներեցէք, պարո՛ն, ըսաւ, ես հոս իմ հնամի բարեկամս Լուի Աշարը գտնել կը կարծէի . . . և մօրս կողմէն անոր . . . բերելու կուգայի»։

Բոլ ձեռքը դէպի երկրորդ խուցը երկարեց, ցցունելու համար որ իր փնտռած անձը հոն էր և չկրցաւ պատասխան տալ անոր, վասն զի կըզգար որ իր ձայնին շեշաը իւր այլայլութիւնը երևան պիտի հանէր։ Երիտասարդուհին գլուխը ծռեց 'ի նշան շնորհակալութեան և ներս մտաւ։

Բոլ աչերով անոր հետևեցաւ ձեռքը սրտին վրայ դրած։ Այս անբիծ ոգին, ուր սէրը երբէք մուտ չէր գտած, իր նուիրական կուսութեան մէջ ընտանեկան առաջին զգացումներու կը բացուէր։ Միշտ միայնակ և Ովկիանոսին չարքաշ զաւակներէն զատ ուրիշ ընկեր չունենալով՝ սրտին մէջ ինչ քաղցր և սիրուն բան որ ունէր առ Աստուած դարձուցած էր. ու թէև խստակրօն կաթոլիկի մը համար կրնար կատարեալ քրիստոնեայ մը չհամարուիլ, սակայն այս իրաւ է որ իր բոլոր խօսքերուն մէջ զեղուն բանաստեղծութիւնը՝ երկար և մշտատև աղօթք մ'էր։ Ուստի պէտք չէր զարմանալ որ անոր այս դեռաղեռ զգացումները, թէև եղբայրական՝ այլ սակայն տրփային յուզմունքներու պէս անկարող և կայտառական էին։

— Ո՛հ, մրմնջեց նա երբ ծաղկափթիթ օրիորդը աներևոյթ եղաւ, ինչ խեղճ և անոգ անձ եմ. ինչ ընեմ որ երբ դուրս ելնես քեզ չբռնեմ չդրկեմ ու չըսեմ «Մարկրիթ, քոյր իմ, երբէք կին մը որ և իցէ սիրով զիս սիրած չէ, ուստի դու սիրէ զիս իբր եղբայր»։ Ա՛հ, մայր իմ, մայր իմ, դու զիս քու գգուանքէն զըրկելով՝ զրկեցիր նաև այս հրեշտակներէն։ Աստուած շնորհէ քեզ յաւիտենականութեան մէջ այն երջանկութիւնը զոր հեռացուցիր քեզմէ . . . և ուրիշներէն։

— Մնաս բարև, ըսաւ Մարկրիթ ալևորին, նորէն դուռը բանալով, մնաս բարև, այս իրիկունը իսկ եկայ վասն զի ալ չդիտեմ թէ երբ պիտի կրնամ քեզ կրկին տեսնել։

Եւ դէպի դուռը յառաջացաւ մտախոհ ու գլխիկոր, առանց Բոլին նայելու, առանց յիշելու որ ներս մտած ատենը հոն երիտասարդ մը կար։ Թերահասակ նաւապետը, տառապագին և նամատաչերով անոր ետևէն կը դիտէր, թևերը դէպ անոր երկարած որպէս թէ զայն կեցնելու համար։ Վերջապէս երբ տեսաւ որ նա ձեռքը դրան կղպակին դրաւ,

— Մարկրիթ, գոչեց։

Երիտասարդուհին ետին դարձաւ զարմանահար. բայց անծանօթ անձի մը ցոյց տուած այս տարօրէն մտերմութենէն բան մը չհասկընալով՝ դուռը կիսովին բացաւ դուրս ելնելու համար։

— Մարկրիթ, կրկնեց Բոլ դէպի դուռը քայլ մ'առնելով, Մարկրիթ, չե՞ս լսեր որ քեզ կը կանչեմ. . . ։

— Իմ անունը իրաւ Մարկրիթ է, պարոն, պատասխանեց մանկամարդ օրիորդը վերհութեամբ, բայց չէի մտաբերեր որ մարդ մը զոր ճանչելու պատիւը չունիմ, այս բառն ինձ ուղղէ։

— Սակայն ես քեզ կը ճանչեմ, գոչեց Բոլ անոր քովն երթալով, դուռը դոցեց ու նորէն զանի ներս տարաւ։ Գիտեմ որ դու գժբաղդ ես, գիտեմ որ դու չունիս սիրտ մը որու քու ցաւերդ յայտնես, թէև մը որմէ օգնութիւն խնդրես։

— Մուցար Այն որ հոն վերն է, պատասխանեց Մարկրիթ մի և նոյն շարժումով գլուխն ու ձեռքը դէպ երկինք բարձրացնելով։

— Չէ՛, չէ՛, Մարկրիթ, չմուցայ, վասն զի Նա զրկեց զիս որ քու պակասդ քեզ շնորհեմ և մինչ ամէն բերանները ու սիրտերը քու շուրջդ գոցուած են քեզի ըսեմ. Ես քու բարեկամդ եմ և քու անձնուէր ու մշտնջենաւոր բարեկամդ։

— Ա՛հ, պարոն, պատասխանեց Մարկրիթ, այդ քու մրմնջած բառերը մեծ ու նուիրական են. այնպիսի բառեր են որոնց դժբաղդարար դժուարին է ինձ հաւատ ընծայել առանց ապացոյց տեսնելու։

— Բայց եթէ ես ապացոյց մը տամ քեզի, ըսաւ Բոլ։

— Անկարելի է, քրթմնջեց Մարկրիթ։

— Եւ անժխտելի ապացոյց մը, շարայարեց Բոլ։

— Ո՛հ, այն ատեն . . . ըսաւ Մարկրիթ աննկարագրելի շեշտով մը ուր յոյսը տարակոյսին կըսկսէր յաջորդել։

— Լա՛ ուրեմն, այն ատեն . . . ։

— Ո՛հ, այն ատեն, բայց, ո՛չ, ո՛չ։

— Կը ճանչե՞ս սա մատանին, ըսաւ Բոլ դաստապանը բացող օղակը ցցունելով անոր։

— Գթութիւն, Աստուած իմ, գթութիւն, գոչեց Մարկրիթ, ինձինը է։

— Կենդանի է։

— Ուրեմն ալ զիս չընսիրէր։

— Կը սիրէ։

— Եթէ կենդանի է, եթէ զիս կը սիրէ, ո՜հ, հիմակ խելքս կը թռցնեմ. . . Ի՞նչ պիտի ըսէի, այո՛, եթէ կենդանի է, եթէ զիս կը սիրէ, այս մատնին ինչպէս քու ձեռքդ կը դնուի։

— Ինքը տուաւ ինձ իբր երախտագիտութեան գրաւական։

— Բայց միթէ ես այս ապարանջանը մարդու տուի՞, նայէ՛, ըսաւ Մարկրիթ մեկնոցին թևը վեր վերցնելով։

— Չէ՛ չտուիր. սակայն դու, Մարկրիթ, ո՛չ տարագիր ես, ո՛չ աշխարհի առջև վատահամբաւ և ոչ ալ անառակ աղգի մը մէջ նեռուած։

— Ի՞նչ փոյթ, քանի որ անմեղ է, քանի որ կը սիրեմ զինքը։

— Ասկէ զատ, շարայարեց Բոլ, ուզելով հասկնալ թէ մինչ ո՛ւր կը հասնի քրոջը սէրն ու անձնուիրութիւնը, մտածեց որ ինք ընկերութենէն բոլորովին հրաժարած ըլլալով՝ աղնութիւնը կը պահանջէ իրմէ որ քեզի ամուսնութեան ազատութիւն եթէ չտայ ալ, գէթ առաջարկէ։

— Երբ կին մը իմ անոր համար բրածս դործէ, պատասխանեց Մարկրիթ հաստատամտութեամբ, հաւատա՛ ինձ, մի միայն զանի միշտ սիրելով կրնայ արդարանալ, և ահա ես ալ այսպէս պիտի ընեմ։

— Ա՛հ, հրեշտակ մ՚ես դու, գոչեց Բոլ։

— Ըսէ՛ նայիմ, վրայ բերաւ Մարկրիթ իւր կարդին երիտասարդին ձեռքը բռնելով և աղերսագին դէմքով զայն դիտելով։

— Ի՞նչ ըսեմ։

— Ուրեմն զինքը տեսա՞ր։

— Ես անոր բարեկամն, եղբայրն եմ. . . ։

— Ո՛հ, ուրեմն խօսէ՛ ինձ անոր վրայ, գոչեց նէ, բոլորովին իր թրիփին թողլով ինքզինքը և մոռնալով որ առաջին անգամ կը տեսնէր այն անձը որու այսօրինակ հարցումներ կ՚ուղղէր։ Ի՞նչ կ՚ընէ, ի՞նչ կը յուսայ տարաբաղդը։

— Քեզ կը սիրէ և նորէն տեսնելու յոյս ունի։

— Ուրեմն, ուրեմն, քրթմնջեց Մարկրիթ Բոլէն հեռանալով, ուրեմն քեզի ըսա։

— Ամեն բան։

— Ո՛հ, գոչեց նա զլուխը ծռելով. բոցի մը հրանուտ կայծին պէս յեղակարծ կարմրութիւն մը պատեց անոր ճակատը, սովորական ուժգնութեան յաջորդելով։

Բոլ անոր մօտեցաւ և զայն ողջագուրեց։

— Դու սուրբ աղջիկ մ՚ես, ըսաւ անոր։

— Ուրեմն զիս չե՞ս մեղադրեր, պարոն, մրմնջեց Մարկրիթ և աչերը վեր առնելու չվարանեցաւ։

— Մարկրիթ, ըսաւ Բոլ, եթէ քոյր մ՚ունենայի՝ Աստուծոյ կ՚աղաչէի որ քեզի նմանէր։

— Ո՛հ, շատ անբաղդ քոյր մը կ՚ունենայիր, պատասխանեց դեռափթիթ օրիորդը թեթև վրայ կռթնելով և յորդ արտասուք թափելով։

— Թերևս, պատասխանեց Բոլ ժպտելով։

— Ուրեմն չդիտե՞ս որ . . . ։

— Ի՞նչ, ըսէ՛։

— Զդիտե՞ս որ վաղն առտու Պ. տը Լէքթուրը պիտի դայ։

— Գիտեմ։

— Եւ դաշնագիրն ալ վաղը պիտի ստորագրուի։

— Գիտեմ։

— Լա՛ւ ուրեմն, ի՞նչ յոյս կ՚ուզես որ ունենամ այսպիսի անհնարին միջոցի մը մէջ։ Որո՞ւ կ՚ուզես որ դիմեմ։ Որո՞ւ կ՚ուզես որ աղաչեմ. . . ։ Եղբօ՞ր։ Աստուած դիտէ որ ես իրեն կը նեռեմ սակայն նա չկրնար իմ ըրածս հասկնալ։ Մօ՞ր . . . ։ Ա՛հ, պարոն, մայրս չես ճանչեր։ Անստգիւտ համբաւ, դժնդակ առաքինութիւն և անողոք կամք մ՚ունի. որովհետև ինք երբէք սխալած չէ՝ կը կարծէ թէ սխալիլ անկարելի է և երբ «կ՚ուզեմ» ըսէ՝ ալ ուրիշ հնար չկայ, պէտք է զլուխ ծռել, լալ և հնազանդիլ։ Վերջապէս հօ՞ր դիմեմ. . . ։ Այո՛, գիտեմ զի հայրս դաշնագիրը ստորագրելու համար այն սենեակէն դուրս պիտի ելնէ ուր քսան տարիէ 'ի վեր փակուած է։ Իրմէ նուազ թշուառ և մեղաւ

ւոր ուրիշ որ և իցէ մէկուն համար՝ այս ակնկալութիւն մը կրնայ համարուիլ։ Սակայն դու չգիտես որ հայրս խենթեցաւ և խելքին հետ կորսնցուց նաև ամէն հայրական սիրոյ զգացում։ Ասկէ զատ՝ քսան տարի է որ զինքը տեսած չունիմ. քսան տարի է որ իւր դողդոջուն ձեռքը սեղմած և ալեխառն մազերը համբուրած չեմ։ Ա՛լ չգիտեր որ աղջիկ մ՚ունի, չգիտեր որ սիրտ մ՚ունի, ուստի մինչև անգամ զիս չպիտի ճանչէ. բայց եթէ ճանչէ, եթէ իմ վերայ գթայ իսկ՝ մայրս ձեռքը գրիչ մը պիտի տայ և անոր պիտի ըսէ «Սորոգրէ, ես այսպէս կ՚ուզեմ». իսկ այն խեղճ ու տկար ծերունին պիտի ստորագրէ և իւր զաւակը պիտի դատապարտուի։

— Այո՛, ես ալ այդ ամենը քեզի չափ դիտեմ, աղջիկս, ըսաւ Բոլ, բայց սիրտ սա, այն դաշնագիրը չպիտի ստորագրուի։

— Ո՞վ պիտի արգիլէ։

— Ես։

— Դո՞ւն։

— Հոգ մ՚ըներ, ես վաղը ձեր ընտանեկան ժողովին ներկայ պիտի գտնուիմ։

— Քեզ ո՞վ ներս պիտի առնէ։

— Ես ներս մտնելու միջոց մ՚ունիմ։

— Բայց եղբայրս գժուարարարոյ ու դիւրագրգիռ է. ո՛հ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ. . . ուստի զգուշացիր որ աղատեմ ըսելով՝ զիս աւելի չկորսնցնես։

— Ինձի համար եղբայրդ ալ քեզի չափ նուիրական է, Մարկրիթ։ Մի վախնար ընաւ և յոյսդ իմ վրայ դիր։

— Ա՛հ, կը հաւատամ, պարոն, և քեզ կը վստահիմ, ըսաւ Մարկրիթ, իբր թէ իր երկարատև գժուարահաւատութենէն վհատելով. վասն զի ձեռքդ ինչ պիտի անցնի եթէ զիս խաբես, ինչ պիտի շահիս եթէ զիս մատնես։

— Ո՛չինչ, իրաւունք ունիս. բայց անցնինք ուրիշ բաներու։ Պարոն տը Լէքթուրը ինչ պիտի ընես։

— Ամէն ինչ պիտի ըսեմ իրեն։

— Ա՛հ, ըսաւ Բոլ խոնարհելով, թո՛ղ որ քեզ պաշտեմ։

— Պա՛րոն, քրթմնջեց Մարկրիթ։

— Իբր քոյր, իբր քոյր։

— Իրաւ բարեսիրտ ես, գոչեց Մարկրիթ, կը հաւատամ որ Աստուած ղրկեց քեզ։

— Հաւատա՛, պատասխանեց Բոլ։

— Ուրեմն, վաղը իրիկուն։

— Մի՛ զարմանար, ընաւ մի՛ զարմանար։ Մի միայն աշխատէ որ Պ. տը Լէքթուրի հետ ընելիք տեսութեանդ արդիւնքը նամակաւ մը, բառով մը, նշանով մը ինձ իմացնես։

— Ի՞նչ աշխատիմ։

— Իսկ հիմակ ատենը ուշ է, թերևս ծառան մեր խօսակցութեան երկարելուն զարմանայ. գնա ամրոց և ինձի համար մարդու մը բան չըսես։ Երթա՛ս բարև։

— Մնաս բարև, ըսաւ Մարկրիթ, դուն ալ, բայց քեզի ինչ անուն տամ չեմ դիտեր։

— Ինծի՞, եղբայր ըսէ։

— Մնաս բարև, եղբայր իմ։

— Ո՛հ, քո՛յր իմ, քո՛յր իմ, գոչեց Բոլ ջլաձգական շարժումով զայն ընդգրկելով, առաջին անգամ քեզմէ կը լսեմ այսպիսի անուշ բառ մը. ուստի Աստուած քեզ կը վարձատրէ։

Երիտասարդուհին զարմանալով՝ ետ քաշուեցաւ. ապա նորէն Բոլին քովը գալով՝ ձեռքը անոր երկարեց։ Բոլ վերջին անգամ մ՚ալ զայն սեղմեց և Մարկրիթ դուրս ելաւ։ Այն ատեն դեռահասակ նաստաբետը նորէն միջնադուռն եկաւ և զայն բացաւ։

— Արդ՝ հիմակ, ծերունի՛, ըսաւ նա, հօրս դերեզմանը տար զիս։

ԺԱ.

Բոլի իւր ծննդեան գաղտնիքն իմացածին հետևեալ օրը, Օրէյի ամրոցին բնակիչներն իրենց այլ և այլ նկատումներուն մասին՝ սովորականէն աւելի վախերով և յոյսերով զբաղած արթնցան, ըսաւ

որում այն օրն ամենուն համար վճռողական օր մը պիտի ըլլար։ Մարքիզուհին՝ որ ինչպէս այժմ ընթերցողը հասկցաւ զի չէ թէ դաժան ու չար այլ մեծամիտ և խստասիրտ կին մ'էր, նոյն օրն իւր ամեն օր նորոգեալ ցաւերուն իբր վախճանը կը նկատէր. վասն զի ցլնաւորաբար իւր զաւակներուն առջև կ'ուզէր պահել այն անսոսկիւտ համբաւը, որու յարիշտակութիւնը այնքան սուղի նստած էր իրեն։ Ներա համար՝ Լէքթուր չէ թէ միայն յարմար փեսայ մ'էր և իւր անուանը արժանի անուն մը կը կրէր, այլ նաև այնպիսի անձ մը կամ լաւ ևս է ըսել բարեսէր ոգի մ'էր, որ մէկ հարուածով իր քովէն պիտի հեռացնէր թէ իւր աղջիկը, զոր իբր ամուսին պիտի տանէր և թէ իւր որդին, որուն պաշտօնեայն՝ այս խնամութեան շնորհիւ, վաշտ մը տալ խոստացեր էր։ Երբ անդամ մը այս երկու որդիքը մեկնէին, եթէ անդրանիկը դար ու աղաղանիքը երևան ալ ելնէր՝ արձագանք չպիտի ունենար այն։ Ասկէ զատ՝ անոր բերանը գոցելու հաղարումէկ միջոցներ կար։ Մարքիզուհին մեծահարուստ էր և կը կարծէր թէ ոսկին այսօրինակ պարագաներու մէջ անվրէպ արդիւնք մ'ունի։ Ուստի իւր բոլոր երկիրները ուժով այս ամուսնութեան կը փափաքէր, այնպէս որ չէ թէ միայն Լէքթուրին փոյթը կը շարժէր՝ հապա նաև Էմմանուէլին եռանդը կը զրգռէր։ Իսկ ասիկայ, Բարիզ արքունիքի վայելչագեղ պրթեանները ընտանիքին հին պատկերներն իբր ընկեր ունենալով՝ պապենական հինաւուրց ամրոցին մէջ թաղուած մնալէ ձանձրանալով՝ եռանդագին կը զարնէր այն ոսկենկար դուռը, զոր իւր ապագայ փեսայն Վէրսայլի մէջ խոստացեր էր բանալ իրեն։

Քրոջը ցաւն ու արտասուքը պահ մը վշտացուցեր էին զինքը, վասն զի իւր փառասիրութեան պատճառը՝ հպարտութիւնն ու սրտին ցրտութիւնը չէր, այլ աւելի բնակարանին ձանձրոյթի վախը, վաշտի մը գլուխը հանդիսանալու և ընտիր ու շքեղ համազգեստով կանանց սիրտը հրապուրելու փափաքը։ Սակայն խորհին զգացումներ իրեն լիովին անծանօթ էին. ասոր համար քրոջը սիրոյն աղէտաբեր հետևութիւններուն շնայելով՝ զայն իբր տղայական կապակցութիւն մը կը նկատէր, զոր աշխարհային զուարճութիւնն ու ազմուկը

կրնան խստաւ ջնջել յիշողութենէ, և կը կարծէր թէ տարի մը չանցած՝ նէ անպատճառ շնորհակալ պիտի ըլլայ իրմէ այն տրիփին դիմադրելուն համար։ Իսկ այն հէք ողջակէզը, Մարկրիթ, միոյն երկիւղին և միւսին փառասիրութեան անյեղլի կերպով զոհուելու դատապարտուած էր։ Նախորդ օրուան տեսարանը խորհին յիշատակ մը թողած էր նորա մտքին մէջ և ինքը չէր կրնար մեկնել այն գեղեցկագէմ երիտասարդին իրեն պատճառած զգացումը, որ Լիսինեանի խօսքերը հաղորդեց, վատաբաղդ տարագրոյն վիճակի մասին զինքը ապահովեց և 'ի վերջոյ քոյր իմ կոչելով զրկեց։ Աղօտ և բնազդական յոյս մը իւր սրտին կը մրմնջէր որ այն անձը, ինչպէս որ արդէն ինք ըսեր էր, Աստուծմէ զանի պաշտպանելու պաշտօնն առած էր. բայց որովհետև չէր գիտեր թէ ինչ կապ կար իր և անոր մէջ, ինչ գաղտնիքով նա իւր մօրը կամաց վրայ կը տիրանար, վերջապէս ինչ ազդեցութիւն կրնար ունենալ իւր ապագային վրայ՝ չէր իշխեր բարերատ գաղափարներ եզրակացնել, քանի որ վեց ամսէ 'ի վեր մահը իւր աղէտից իբր միակ վախճանը նկատելու սովորած էր։ Մի միայն մարքիզը իւր շուրջը բաբախող այս պէս պէս այլայլութիւններուն մէջ՝ իւր անկարեկիր և յոյլ անտարբերութիւնը պահեր էր, վասն զի անոր համար աշխարհը փայլուն դարեր էր այն ահաւոր օրէն 'ի վեր՝ որ խելքը կորսնցուց. այս ծերունին միշտ մէկ յիշատակի մէջ ընկղմած՝ այն է կենաղրտ և անվկայ մենամարտութեան յիշատակը, անդադար Մորլէ կոմսին իրեն ներողամտաբար բաց խօսքերը կրկնելով՝ մանուկի պէս տակարացեր էր. իւր կիրը մէկ շարժումով կը հրամայէր իրեն և ինքը անոր ցուրտ ու մշտատև կամքէն կ'ընդունէր այն ամեն թելադրութիւնները, որոնց իւր անձնիշխանութենէն և իմացականութենէն եռբը իր մէջ կենդանի մնացող մշտափթիթ բնազդումը քսան տարիէ 'ի վեր կը հնազանդէր։

Սակայն այն օրը մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցեր էր իւր սովորութիւններուն մէջ։ Մարքիզուհին տեղ սպայ մը անոր սենեակը մտեր և զայն հաղուեցուցեր էր։ Հեծելազօրայ գնդապետի համազգեստը դրեր էին անոր կռնակը և անոր այլ և այլ շքանշանները կուրծքը կախեր էին. ապա մարքիզուհին ձեռքը զրիչ մը

տալով հրամայեր էր փորձի համար իւր անունը գրել. նա հնազանդեր էր անփութօրէն, առանց կասկածելու որ դահիճի մը դերը կ'ունենի։

Կէսօրէն ետքը ժամը երեքին մօտերը, սուրհանդակ կառք մը որուն գլորումը տարբեր տարբեր թնդիւն հանեց ղայն սպասող երեք անձերուն սրտին մէջ, ամրոցին բակը մտաւ։ Էմմանուէլ շտապաւ դրանդին վրայ վազեց իւր փեսացուն ընդունելու համար, ըստ որում եկողը այն էր։ Լէքթուր թեթեւօրէն կառքէն վար իջաւ։ Արդէն առջի իջևանը կանգ առած էր ներկայացման զգեստը հագնելու համար, այնպէս որ արքունիքի վերջին նորաձևութեան ամենայն վայելչութեամբը եկաւ։ Էմմանուէլ այս նախազգուշութեան համար ժպտեցաւ, վասն զի յայտնի էր թէ Լէքթուր Ճամբորդութեան հագուստով ներկայանալով՝ իւր անձին առաւելութիւնները կորսնցնել չուզեր էր։ Կիներու մէջ յաճախելով՝ սորվեր էր զի անոնք միշտ առաջին հայեցուածով կը դիտեն մարդս, և իրենց մտքին կամ սրտին ընդունած այս առաջին լաւ կամ դէշ տպաւորութիւնը՝ ոչինչ չկրնար ջնջել։ Սակայն պէտք է խոստովանիլ որ այս մասին պարոնը իրաւունք ունէր, վասն զի իր շնորհալի և վայելուչ երևոյթը, ուրիշ մարդու չսիրահարած որ և իցէ կնկան համար կրնար վտանգաւոր ըլլալ։

— Ներեցէք, սիրելիդ իմ պարոն, ըսաւ Էմմանուէլ դէպ անոր յառաջանալով, որ կանանց այս առժամանակեայ բացակայութեան միջոցին՝ իմ նախահարցս բնակարանին պատիւներն ընեմ ձեզի։ Նայեցէք, շարայարեց սանդուղին գլուխը կանգ առնելով և մատով աշտարակներն ու մարտկոցները ցոյց տալով, սա Ճարտարապետութեան մասին Ֆիլիփ Օկիւսթի ժամանակէն է, իսկ իրը շքանշան՝ Հանրի Դ.ի։

— Պատուոյս վրայ, ըսաւ պարոնը այն ժամանակի երիտասարդներուն ընդունած կեղծ շեշտով, սքանչելի ամրոց մ'է։ Եթէ օր մը, շարունակեց դատիթը մտնելով և անկէ ալ երկու կողմն ընտանեկան պատկերներով զարդարուած սրահ մը, խելքիս փչէ որ Ամենաքրիստոնեայ Վեհափառին դէմ ապստամբիմ՝ այս դոյզնադիւտ դանձը ձեզմէ փոխ կ'ուզեմ. և, յարեց աչերը պէտ իր առ-

ջևի պատկերներու երկար շարքը վերցնելով, սա պահապաններն ալ մէկտեղ։

— Երեսունը երեք նախահայր, պզտիկ բան չէ. չեմ ըսեր թէ կենդանի են, պատասխանեց Էմմանուէլ, վասն զի արդէն շատ ատեն է որ ամենքն ալ հող դարձած են. բայց ինչպէս որ կը տեսնէք, բոլորին ալ պատկերները ունինք։ Ասիկայ Հիւկ տ'Օրէյ ասպետի մը ժամանակէն է, որ Լուի Է.ի հետ խաչակրութեան դնաց։ Այն՝ իմ մօրաքոյրս Տէպորայէն մնացած է, որ ինչպէս կը տեսնէք Ցուդիթի զգեստը հագեր է։ Իսկ միւսը, հետզհետէ այս նշանաւոր գերդաստանին արու զաւակներուն ձեռքէն անցնելէ ետև՝ անոր վերջին անդամ, ձեր ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայ՝ Էմմանուէլ տ'Օրէյի ժառանգ մնացած է։

— Շատ յարգելի է այս և ասկէ աւելի վաւերական չկրնար ըլլալ։

— Այո, բայց որովհետև ես նահապետական կեանքը չեմ սիրեր, վրայ բերաւ Էմմանուէլ պարոնին առջևը անցնելով որպէս զի անոր սենեկին Ճամբան ցուցնէ, չեմ կրնար կեանքս այս ահագին ընկերութեան մէջ կորսնցնել և յուսամ թէ դուք մտաբերեցիք զիս ասկէ աղատել։

— Անշուշտ, սիրելիդ իմ կոմս, պատասխանեց Լէքթուր անոր ետևէն երթալով, մինչև անդամ ձեր յանձնարարութիւնը բերել կը փափաքէի իբր հարսանեկան ընծաս։ Արդէն դիտէի որ Թագուհիին պրոյեներուն մէկ տեղապահութիւնը թափուր էր, ուստի երէկ Պ. տը Մորբբային տունն երթալով այդ պաշտօնը ձեզի համար պիտի խնդրէի՝ երբ լսեցի զի, չդիտեմ ո՞ր խորհրդաւոր ծովակալին աղաչանաց համեմատ ուրիշի մը տրուեր է. այս անձը տեսակ մը ծովահէն, ելուզակ, ցնորական էակ մ'է. Թագուհին իւր ձեռքը պարնել տուած ըլլալով անոր՝ այժմ ամեն մարդ զայն կը պատուէ ու կը պաշտէ և ինքը Թագաւորին ալ սիրելի եղած է, չդիտեմ ո՞ւր . . . Անդղիացւոց յաղթած ըլլալուն համար։ Այնպէս որ, այս քաջագործութեան համար՝ Նորին Վեհափառութիւնը Զինուորական Արժանիքի պատուանշանը շնորհեր է անոր և ասկի դաստակով սուր մը ընծայեր է։ Ինչպէս որ կուտայ աղատոր-

դիի մը։ Երկար չընեմ, այս կողմէն յոյս չկայ, բայց հոգ մ'ընէք, ուրիշ տեղ ալ կը նայինք։

— Շատ աղէկ, պատասխանեց Էմմանուէլ։ Զինուորական պաշտօն մը եղեր է չեղեր է հոգս չէ, այլ կը փափաքիմ որ իմ անուան վայել ասպիճան մը և մեր հարստութեան յարմար վիճակ մը գտնեմ։

— Աղէկ, աղէկ, ձեր փափաքն ալ կը կատարուի։

— Սակայն դուք, ըսաւ Էմմանուէլ խօսակցութիւնը փոխելով, հաղարումէկ պարտաւորութիւններ ունիք կատարելիք, ինչպէս ազատեցաք ուրեմն։

— Բայց, ըսաւ պարոնը այս առանձնշնորհեալ դասուն յատուկ անփութութեան շեշտով և երկար աթոռի մը վրայ տարածուելով, վասն զի վերջապէս իրեն համար պատրաստուած սենեակը հասեր էր, բայց գործը բացէ 'ի բաց պատմեցի. թագուհիին խաղին մէջ յայտնեցի որ պիտի ամուսնանամ։

— Ա՛հ, խա՛ղ վկայ, դիւցազնութիւն է այդ, մանաւանդ եթէ հասկցուցիք որ Պրբթանեի խորերէն կին մը պիտի առնէք։

— Հապա՛, ըսի։

— Ուրեմն, ըսաւ Էմմանուէլ ժպտելով, վշտակցութեան տեղը բարկութիւնը անցաւ։

— Հարկաւ. վասն զի գիտէք, սիրելի կոմս, ըսաւ Լէքթուր ոտքը ոտքին վրայ դնելով և զայն ճօճանակի կանոնաւոր շարժումով մը օրորելով, մեր արքունիքի կանայք կը կարծեն թէ արևը Բարիզ կը ծնի և Վերսայլ մարը կը մտնէ։ Ֆրանսայի միւս բոլոր մասը անոնց համար Լաբոնիա, Կրօէնլանտիա, Նոր–Զեմլիա է։ Այնպէս որ անոնք կրսպասեն զի, ինչպէս ըսիք, ես իմ դէպ հիւսիսային բևեռը ըրած ճամբորդութենէս 'ի դարձին՝ սոսկալի ձեռներով և ահագին ոտքերով անծանօթ բան մը պիտի տանիմ։ Բարեբաղդաբար քանի կը սխալին, յարեց նա կէս երկիւղալի կէս հարցական շեշտով, այնպէս չէ, Էմմանուէլ, և ընդ հակառակն, դուք ըսիք որ քայրդ . . .։

— Պիտի տեսնէք, պատասխանեց Էմմանուէլ։

— Քանի՛ պիտի դժկամակի այն բարեմիտ տիկին տը Շոլնը։ Վերջապէս . . . պէտք է մխիթարուի . . .։

— Ի՞նչ է այն, ըսաւ Էմմանուէլ սենեկասպան մը տեսնելով, որ դուռը բացեր էր և աղնուական տուներու ծառայի պէս՝ շեմին վրայ կրսպասէր որ առաջ իւր տէրը խօսի։

— Ի՞նչ է այն, կրկնեց Էմմանուէլ։

— Օրիորդ Մարկրիթ տ'Օրէյը Պարոն տը Լէքթուրէն առանձին տեսութեան մը պատիւը կը խնդրէ։

— Ինձմէ՞, ըսաւ Լէքթուր տեղէն ելնելով, ուրեմն սիրով և յօժարութեամբ։

— Բայց ո՛չ, սխալ է, գոչեց Էմմանուէլ։ Կը սխալիս, Սէլէսթէն։

— Պատիւ ունիմ Պ. կոմսը ապահովել, պատասխանեց սպասիկը պնդելով, որ ինձ տրուած հրամանը ճշդիւ և ուղղութեամբ կը կատարեմ։

— Անհնար է, ըսաւ Էմմանուէլ քրոջը յանդուգն ընթացքին համար յետին ծայը նեղանալով։ Պարոն, եթէ ինձ կը հաւատաք, թողէք այն պզտիկ խենթուկը որ երթայ ժուռ դայ։

— Ամենեին, ամենևին, պատասխանեց Լէքթուր ոտք ելնելով։ Ի՞նչ Պարպ–Պլէօ եղբայր էք դուք։ Սէլէսթէն . . . Սէլէսթէն չըսիք այս մանչին անունը։ — Էմմանուէլ սրտնեղութեամբ ստորասական շարժում մ'ըրաւ։ — Լաւ ուրեմն, Սէլէսթէն, ըսէ իմ գեղանի նշանածին, որ հիմակ իր ոտից, ծնկան առջև կուգամ. ուստի իր հրամանները կը կատարեմ որպէս զի կամ իրեն սպասեմ կամ երթամ զինքը գտնեմ։ Ահաւասիկ, առ քու պատգամաւորութեանդ վարձքը։ — Քսակ մը տուաւ անոր։ — Իսկ դուք, կոմս, յուսամ թէ առանձին տեսութեան մը համար թոյլտուութիւն ընելու չափ վստահութիւն ունիք իմ վրայ։

— Բայց այդ ի՞նչ խայտառակութիւն է։

— Ինա՛ւ, պատասխանեց Լէքթուր, ընդ հակառակն շատ ալ պատշաճաւոր է։ Ես թագակիր գլուխ մը չեմ որ մինակ պատկերը տեսած ըլլալով կամ փոխանորդի մը միջոցաւ՝ կին առնեմ։ Ուստի կը փափաքիմ անձամբ զինքը տեսնել։ Արդ՝ երթանք, Էմմանուէլ, շարայարեց պարոնը իր բարեկամը դէպի կողմնակի դուռ մը մղելով, որպէս զի քոյրը չտեսնէ։ Խօսեցէք նայիմ, միթէ տձևութիւն մ'ունի . . . ես մարդու բան չեմ ըսեր։

— Աղէ՛, թշուառակա՛ն, բան մը չունի, պատասխանեց դեռ-ֆիթիթ կոմսը, ընդ հակառակն հրեշտակի պէս գեղեցիկ է։

— Լաւ ուրեմն, եթէ այդպէս է, ի՞նչ կը նշանակէ այս։ Արդ . . . նորէն . . . միթէ պէ՞տք է որ պահապաններս կանչել տամ։

— Ո՛չ, բայց պատոյս վրայ կ'ըսեմ, իմ վախս այն է որ սա պզտիկ խենթուկը որ աշխարհի վրայ բնաւ գաղափար մը չունի, մեր բոլոր որոշումները չգայ չաւրէ։

— Ո՛հ, եթէ մի միայն այդ է պատճառը, պատասխանեց Լէքթուր դուռը բանալով, հոգ մ'ընէք։ Այնքան շատ կը սիրեմ եղբայրը որ չեմ կրնար քրոջը մէկ թեթեւամտութիւնը . . . անհեթեթութիւնը չներել, և իմ աղնուականութեան խօսքս կուտամ ձեզ, միայն թէ սատանան մասը չխառնէ, — և այս միջոցիս յուսամ թէ աշխարհիս մէկ ուրիշ կողմը զբաղեալ է, — որ օրիորդ Մարկրիթ տ'Օրէյը մինչև երեք օր Տիկին Պարոնուհի տը Լէքթուր պիտի ըլլայ և մէկ ամիսէն ալ ձեզի զօրադունդ մը պիտի տրուի։

Էմմանուէլ այս խոստումէն կարծես քիչ մը վստահութիւն առաւ, ուստի առանց ա՛լ ևս ընդդիմութիւն ընելու՝ ինքզինքը ձգեց դուրս հանել։ Լէքթուր անմիջապէս հայելիի մ'առջևը վազեց, որպէս զի վերջին երեք մղոն տեղը՝ կառքին տատանումէն վրան դըլլսխը քիչ մ'աւրուած ըլլալով, շտկէ։ Այն ինչ իր մաղերուն ու հագուստին վայելուչ ձևն ու ծալը տուեր էր՝ դուռը բացուեցաւ և Սէլէսթէն իմաց տուաւ.

— Օրիորդ Մարկրիթ տ'Օրէյ։

Պարոնը ետին դարձաւ և իր նշանածը տեսաւ շեմին վրայ տրժգոյն և երերուն։ Լէքթուր թէև Էմմանուէլի խօսքերէն քիչ մը յոյս առեր էր, սակայն սրտին խորը դեռ ևս կասկած ունէր՝ Մարկրիթի եթէ ոչ դեղեցկութեան գէթ դրակին (tournure) և ձևերուն մասին։ Ուստի սքանչացաւ երբ այն նրբակազմ և շնորհալի արարածը տեսաւ, որու վրայ ձևի ամենէն խիստ քննադատն անգամ՝ քիչ մը դեղնութենէ զատ ուրիշ պակութիւն չէր կրնար ցոյց տալ։ Լէքթուրի դաշնադրելիք ամուսնութեան պէս ամուսնութիւններ հազուագիւտ չէին այնպիսի ժամանակ մը, ուր ընդհանրապէս աստիճանի խնդիրը և հարստութեան յարմարութիւնը աղնուականդ

գերդաստաններու մէջ խնամութիւնը կ'որոշէին, բայց հազարին մէկ կը պատահէր պարոնին վիճակակից մարդու մը՝ գաւառի մը խորէն մեծահարուստ կին մ'առնուլ, որ մէկ նայուածքով կրնար թէ իր տեսքովը, թէ վայելչութեամբը և թէ դեղեցկութեամբը արքունիքի ամենէն շքեղ ակումբներուն մէջ երևելու արժանի դատուիլ։ Ուստի Լէքթուր դրանիկի մը գաւառականի վրայ ցոյց տուած գերիշխանութիւնը մէկ դի թողլով՝ այն հոգեփոխութեան գարուն ընտիր ընկերութիւններու դրոշմը կազմող յարգական դիւրահեշտութեամբ մօտեցաւ անոր։

— Ներեցէք, օրիորդ, ըսաւ նա զայն դէպի թիկնաթոռ մը առաջնորդելու համար ձեռքն երկարելով, ձեռք մը զոր նէ չընդունեց, թէև այդ ձեր ինձ ըրած շնորհը ես կը պարտաւորէի խնդրել, բայց հաւատացէք, վախնալով որ անխոհեմութիւն մը չընեմ՝ այս երկարաձգման ակներև սխալը գործեցի։

— Ձեր այդ աղնութենէն մեծապէս գոհ եմ, պարոն, պատասխանեց Մարկրիթ դողդոջուն ձայնով դէպի յետս շարժում մ'ընելով և ոտքի վրայ կենալով, վասն զի առաւել խրախոյս կուտայ ինձ այն վստահութեանս մէջ զոր առանց ձեզ տեսնելու, առանց ձեզ ճանչելու՝ ձեր պատոյն և ուղղասիրութեան վրայ ունեցած եմ։

— Այդ վստահութենդ նպատակը ինչ որ ալ ըլլայ, օրիորդ, պատիւ կը բերէ ինձ և ես անոր արժանի հանդիսանալու պիտի աշխատիմ։ Բայց ի՞նչ ունիք, Տէր Աստուած . . . ։

— Ո՛չինչ, պարոն, ո՛չինչ, պատասխանեց Մարկրիթ իր յուզմունքը զսպել ջանալով. բայց իմ ձեզի ըսելիքս . . . սա է որ . . . ներեցէք . . . բայց . . . ես տէր չեմ. . . ։

Մարկրիթ կթոտեցաւ. պարոնը մէկէն վազեց անոր քովը գնաց և զայն բռնել ուզեց. բայց այն ինչ անոր դպաւ՝ հրատապ կարմրութիւն մը բոցի պէս երիտասարդուհիին երեսը պատեց և ինք Լէքթուրի թևերէն պրծաւ այնպիսի զգայումով որ կրնար թէ ամօթխածութիւն և թէ արհամարհանք համարուիլ։ Պարոնը ձեռքէն բռներ էր. զանի թիկնաթոռի մը քովը տարաւ, որու նստիլ չուզելով՝ երիտասարդուհին կանգնեցաւ։

— Աստուա՛ծ իմ, ըսաւ Լէքթուր իր դրաւած ձեռքը չձգելով,

բայց միթէ այդքան դժուարին է ըսել թէ ինչ բանի համար հոս եկաք, կամ միթէ թէև իմ մտքէս անցամ չանցնիր, խօսնայրի տիտղոսը արդէն ամուսնոյ ակնածելի կերպարանը կուտայ ինձ։

Մարկրիթ նորէն շարժում մ՚ըրաւ ձեռքը Լէքթուրի ձեռքէն ազատելու համար և ասով պարոնը աչերը հոն դարձնելու ստիպուեցաւ։

— Ի՞նչ, զոչեց նա, հերիք չէ՞ պաշտելի դէմք մը, յատերժահարսի հասակ մը և սքանչելի ձեռներ . . . թագաւորական ձեռներ ունենալ. ուրեմն դուք ինս խենթեցնել կ՚ուզէք։

— Կարծեմ թէ, պարոն, ըսաւ Մարկրիթ և վերջին ձիգ մը ընելով ձեռքը քաշեց, ձեր այդ խօսքերը պարզապէս շամբշական են։

— Չէ՛, Ճշմարիտ վկայ, պատասխանեց Լէքթուր, իրաւ կ՚ըսեմ։

— Լաւ ուրեմն, պարոն, եթէ իրաւ ձեր ըսածին պէս ալ խորհիք, թէև կասկած ունիմ, չեմ յուսար որ այսպիսի պատճառներով աւելի մեծ յարգ մը տաք մեր խորհրդարերեալ միութեան։

— Բայց չէ՛, կ՚երդնում որ կուտամ։

— Այլ սակայն, շարայարեց Մարկրիթ նորէն շունչ առնելով, վասն զի այնքան սիրաը ճնշուած էր, այլ սակայն, պարոն, ամուսնութիւնը իրը . . . ծանր բան մը կը նկատէք։

— Պարագային համեմատ, պատասխանեց Լէքթուր ժպտելով. օրինակի համար, եթէ հասառուցի մ՚առնէի . . . ։

— Վերջապէս, պատասխանեց Մարկրիթ աւելի հաստատ շեշտով մը, ներեցէք, պարոն, եթէ սխալեր եմ. վասն զի ես մտածեցի որ թերևս մեր մէջ առաջարկուած խնամութեան մասին՝ երբեմն երբեմն փոխադարձ սիրոյ գաղտփարներ ունեցած էք։

— Երբէք, ընդմիջեց Լէքթուր որ կարծես թէ համարձակ և փափաքելի արտայայտութեան մը առաջն առնելու համար ինչքան փոյթ որ կը տանէր՝ այնքան պնդութեամբ ալ Մարկրիթ զայն կը դրդռէր, երբէք, մանաւանդ ձեզ տեսնելէ 'ի վեր՝ բնաւ չյուսացի ձեր սիրոյն արժանի ըլլալ, սակայն եթէ ձեր սրտին վրայ աղդեցութիւն ալ չգործեմ՝ դարձեալ կրնամ իմ անուամբ, իմ վիճակով ձեր ձեռքն ընդունելու իրաւունք ունենալ։

— Բայց ինչպէս, պարոն, ըսաւ Մարկրիթ երկիւղալին, ինչպէս կը զատէք իրարմէ։

— Ինչպէս որ կ՚ընեն ամուսնացողներուն երեք քառորդ մասը, օրիորդ, պատասխանեց Լէքթուր այնպիսի անփութութեամբ մը, որ եթէ Մարկրիթէն նուազ անկեղծ կին մ՚ըլլար՝ այն խոստովանութիւնը բերանը կը մնար։ Մարդը կը կարդեն՝ կին մ՚առնելու, իսկ կինը՝ էրիկ մ՚ունենալու համար. այս ընկերական վիճակ մ՚է, գրութիւն մ՚է։ Ի՞նչ գործ կ՚ուզէք որ ունենան, օրիորդ, զգացումը և սէրն այս ամեն բանին մէջ։

— Ներեցէք, թերևս աղէկ չբացատրեցի միտքս, շարունակեց Մարկրիթ իւրովի ձիգ մ՚ընելով, որպէս զի անոր խօսքերուն իւր վրայ ըրած աղեկէզ ազդեցութիւնը ծածկէ այն անձէն՝ որմէ կախում ունէր իւր ապագան. բայց իմ վարանումս, պարոն, պէտք է այսօրինակ խնդրոյ մը վրայ հարկադրիչ պարագաներէ խօսելու ստիպեալ օրիորդի մը երկչոտութեան վերընծայել։

— Ամենևին, պատասխանեց Լէքթուր խոնարհելով և իր ձայնին այնպիսի շեշտ մը տալով որ հեգնութեան կ՚երթար. ընդհակառակն արևի պէս կ՚երևի որ Գլարիս Հաբլովի նման կը խօսիք։ Աստուած բաւական նուրբ խելք մը տուած է ինձ. ուստի հաւատացէք, մէկը բերանը բանայ չբանայ՝ միտքը կը հասկնամ։

— Ի՞նչ, պարոն, հասկցաք թէ ինչ ըսել ուզեցի և կը թողնք որ դեռ ևս շարունակեմ։ Ի՞նչ, եթէ սրտիս խորը իջնելով և զգացումներս քննելով՝ ինձ իրը ամուսին ներկայացուած անձ. . . . երբէք . . . սիրելու անկարելիութիւնը տեսնեմ. . . ։

— Լաւ ուրեմն. բայց, պատասխանեց Լէքթուր, պէտք չէ զայն իրեն ըսել։

— Եւ ինչո՞ւ, պարոն։

— Վասն զի . . . բայց . . . . վասն զի . . . վասն զի մեծ պարզամտութիւն է։

— Սակայն եթէ այդ խոստովանութիւնը չէ թէ միամտութեամբ այլ ազնուութեան համար կատարեմ։ Եթէ յարեմ. . . . և այս խոստովանութեան ամօթը անոնց է որոնք կըստիպեն զիս ընել, եթէ յարեմ, պարոն, որ . . . սիրեցի . . . դեռ ևս կը սիրեմ։

— Ո՛Հ, պզտիկ համշիրակ մը, այնպէս չէ՞, ըսաւ անփութօրէն Լէքթուր ոտքը ոտքին վրայ դնելով և ձամկաղարդ շապիկին (jabot) հետ խաղալով։ Ի՞նչ անիծեալ ցեղ մ'են, պատոյս վրայ կ'ըսեմ, սա համշիրակները։ Բայց բարեբաղդաբար մարդիկ գիտեն թէ ինչ է այս տեսակ սէրը և չկայ թոշակաւոր աշակերտուհի մը որ արձակուրդէն ետքը՝ սրտին մէջ խանդով մը նորէն վանք չըմտնէ։

— Գժբաղդաբար ես, պատասխանեց Մարկրիթ իւր խօսակցին հեգնական ու թեթեւ ձայնին չափ տխուր ու միանգամայն ծանր ձայնով, գժբաղդաբար ես ալ աշակերտուհի չեմ. պարոն, ու թէև դեռ ևս երիտասարդ՝ սակայն արդէն երկար ատենէ 'ի վեր տղայական խաղերու և սրտակցութիւններու հասակը անցուցած եմ։ Երբ իմ ձեռքը խնդրելու և իւր անունը ընծայելու ինձ պատիւը ընող անձին՝ ուրիշի մը համար ունեցած սիրոյս վրայ կը խօսիմ, պէտք է մտածէ նա որ ծանր, խորին և մշտատև սէր մ'է այն, վերջապէս այնպիսի սէր մը, որ իւր հետքը սրտին մէջ կը թողու և իւր շուիլը կենաց մէջ կը պեղէ։

— Վայ թշուառական, ըրաւ Լէքթուր որպէս թէ յայտնութեան աւելի կարեւորութիւն տալ կրսկսէր, բայց հովուական վէպ մ'է այդ։ Ըսէք նայինք, այդ երիտասարդը կրնա՞ ընդունուիլ։

— Ո՛Հ, պարոն, դուշեց Մարկրիթ խրախոյս առնելով այս խօսքերէն, որոնք կարծես թէ զինքը կը յուսադրէին, ո՛հ, հաւատացէք որ ամենէն ընտիր էակն, ամենէն անձնուէր ոգին է այն։

— Ես այդ չեմ հարցներ և սրտին յատկութիւններուն վրայ չեմ խօսիր։ Հասկցանք, այդ ամենն ունի։ Իմ հարցուցածս սա է որ, ինք ազնուական՞ ընտանիքէ է, աղա՞ն ցեղէ է. վերջապէս պատուաւոր կին մը կրնայ զայն ընդունիլ առանց իւր ամուսնոյն նուաստութիւն մը բերելու։

— Հայրը, որ հօրս մանկութեան մէկ բարեկամն էր և նա պատանի էր երբ մեռաւ, Բէնի արքունիքին մէջ խորհրդական էր։

— Ըսել է օրինական ազատորդի, քրթմնջեց Լէքթուր ստորին շուրթը կախելով 'ի նշան քամահրանքի։ Աւելի աղէկ ունէի ուրիշ բան մը։ Գէթ Մալթայի ասպետ ալ չէ։

— Զինուորականութեան կը հետեւէր։

— Լաւ ուրեմն, այն ատեն, անոր վիճակը կազմելու համար գունդ մը կուտանք։ Լաւ, ահա գործը կարգի մտաւ։ Մտիկ ըրէք։ Առ պատշաճի՝ վեց ամիս կ'անցնի և յետոյ հրաժեշտի հրաման մը կ'առնէ. այս ալ շատ դիւրին է քանի որ պատերազմ չըկայ. հասարակ բարեկամի մը միջոցաւ ձեղ կը ներկայանայ և ամեն ինչ կը խօսիք։

— Ձեմ հասկնար թէ ինչ ըսել կ'ուզէք, պարոն, պատասխանեց Մարկրիթ խորին զարմացման դէմքով մը Լէքթուրին նայելով։

— Բայց ըսածս շատ պարզ է, յարեց ասիկայ փոքր ինչ անհամբերութեամբ։ Դուք ձեր կողմէն խոստումներ ունիք, միւս կողմէն ես ալ ունիմ. բայց ասով պէտք չէ որ ամեն մասամբ յարմար միութիւն մը արգիլուի. անդամ մը որ կատարուի ձայն պէտք չէ հանել. վերջապէս, հասկցա՞ք։

— Ո՛Հ, ներեցէք, պարոն, ներեցէ՞ք, դուշեց Մարկրիթ այս խօսքերուն առջև ընկրկելով, որպէս թէ անոնք ձեռք մ'ունէին որ զինքը կը մղէր։ Ես շատ անխոհեմութիւն ըրի, թերևս մեծ յանցանք գործեցի, բայց վերջապէս ինչ որ ալ ըրած ըլլամ՝ չէի կարծեր այսօրինակ նախատինք մը կրելու արժանի դտնուիլ։ Ա՛Հ . . . պարոն . . . ամօթոյ կարմրութենէն երեսս կ'այրի, աւելի ձեղի՝ քան թէ ինձի համար։ Այո՛, հասկցայ։ Մէկ առերեւութական սէր, մէկ դաղտնի՛ սէր. մոլութեան դէմքը և առաքինութեան դիմակը։ Եւ ինձի՛, ինձի՛, տ'Օրէյ մարքիզուհիին աղջկան՝ այս ամօթալի, գձուձ, վատ պայմանը առաջարկէ՞ք։ Ո՛Հ, շարունակեց նա թիկնաթոռի մը վրայ ձգելով ինքզինքը և երկու ձեռքով երեսը ծածկելով, ուրեմն ես շատ անբաղդ, քամահրելի և անխնամ արարած մ'եմ։ Ա՛Հ, Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած։

— Էմմանուէլ, Էմմանուէլ, ըսաւ պարոնը դուռը բանալով որու ետեւը կը կասկածէր որ Մարկրիթի եղբայրը կայնած էր։ Ա՛ղէ, ներս եկէք, բարեկամ, քրոջդ սանդուխն եկաւ. ասանկ բաները նայիլ պէտք է, ապա թէ ոչ կը հիննան։ Տիկին տը Մէօլան անկէ մեռաւ . . . ։ Ահա, կոմս, առ սա շիշը և անոր հոտոտել տուր, իսկ ես դարաստանը կ'երթամ։ Երբ գործ չունենաք,

եկէք հոն գիս գտէք և, խնդրեմ, քրոջդ վրայ լուրեր բերէք ինձ։

Այս խօսքերուն վրայ, պարոն տը Լէքթուրը հրաշալի գիւրահեշտութեամբ դուրս ելաւ Մարկրիթը և Էմմանուէլը դէմ առ դէմ թողլով։

ԺԲ

Այն օրը՝ որ Մարկրիթին և Լէքթուրին տեսութիւնը տեղի ունեցաւ, տեսութիւն մը՝ զոր մանրամասն պատմեցինք և որ դեռափթիթ օրիորդին յուսացածին բոլորովին հակառակ արդիւնք մ'ունեցաւ, այն օրը իսկ՝ ժամը չորսին Ճաշի զանգակը պարոնը ամրոցը հրաւիրեց։ Էմմանուէլ սեղանին պատիւները կ'ընէր, ըստ որում մարքիզուհին ամուսնոյն քովը մնացեր էր, իսկ Մարկրիթ հրաման առեր էր որ վար չիջնէ։ Միւս կոչնականներն էին՝ նոտարը, աղջականներ և փեսաւէրներ։ Խնջույքը Լէքթուրին անխռով ծաղրանութեամբը հանդերձ տխուր եղաւ. թէև պարոնին ուրախութիւնը այնքան բուռն էր որ տեսակ մը ջերմի կը նմանէր՝ սակայն ակնյայտ կ'երևէր, զի նպատակն էր իր սիրտը սփոփել։ Եւ իրաւի ուր ուրեմն այն կսկծելի զուարթութիւնը յանկարծ կը նսեմանար, ինչպէս որ Ճրագ մը կը մարի երբ իւղը պակսի. ապա նորէն կը բորբոքէր աւելի շողուն կայծեր արձակելով, նման բոցին որ իւր վերջին մնունդը կը լափէ։ Ժամը եօթին սեղանէն ելան սրահն անցան։

Դիւրին չէ այս հինաւուրց ամրոցին ներկայացուցած տեսիլին վրայ գաղափար մը յօրինել. անոր ընդարձակ սենեակները գոթայի ձևով նկարազարդ դամասկեան գիպակներով և Լուի ԺԳ.ի ժամանակին կարասիներով զարդարուած էին. երկար ժամանակէ 'ի վեր փակուած մնալով՝ կարծես թէ կենաց անսովոր էին։ Ուստի թէև ծառաները շատ մը Ճրագներ ու մոմեր վառեր էին, սակայն ասոնց տկար ու երերուն լոյսը չէր բաւեր այն ընդարձակ սրահնե-

բուն՝ որոնց բոլոր ներքսամուտ վայրերը մութ կը մնային և ուր ձայնը կը հնչէր որպէս թէ տաճարի մը կամարներուն ներքև։ Այն սակաւաթիւ հրաւիրեալները՝ որոնց իրիկունը հազիւ հազ շրջակայէն մի քանի ազնուականներ պիտի գային միանային, առաւել կ'աւելցնէին այն տխրութիւնը, որ կարծես թէ այս հին բնակարանին դինանշանները նկարակերտ կամարներուն տակը բունաւորեր էր։ Այս սրահներէն մէկուն միջնավայրը, նոյն իսկ այն սրահին՝ ուր առջի օրը Էմմանուէլ Բարիզէն եկած միջոցին Բոլ Նաւապետն ընդուներ էր, հանդիսաւոր կերպով պատրաստուած սեղան մը կար և անոր վրայ գոց թղթակալ մը, որ անցած դարձածին անպէտ օտարականի մը աչքին՝ կրնար ինչպէս մահուան վճռագիր մը նոյնպէս նաև ամուսնութեան դաշնագիր մը պարունակել։ Այս տխուր ու տրտում տեսիլներուն և աղդեցութիւններուն մէջ՝ խումբ մը մարդիկ, որոնք մեղմաձայն կը խօսէին, ուր ուրեմն հեգնալի և սուր քահ քահ մը կը ձգէին. Լէքթուր բարեմիտ դեղջուկի մը հեռը կ'ելնար և մինչև անդամ կերպով մը Էմմանուէլի վրայ ալ կը ծիծաղէր։ Սակայն երբեմն խօսնայրը անձկութեամբ սենեկին մէկ ծայրէն միւս ծայրը կը գիտէր. ապա յանկարծ ածանցիկ մռայլ մը իւր ճակտին վրայէն կ'անցնէր, ըստ որում ո՛չ իւր աները, ո՛չ մարքիզուհին և ո՛չ ալ Մարկրիթը կ'երևէր։ Առջի երկուքը ինչպէս որ ըսինք Ճաշի չիջեր էին. իսկ վերջինին հետ ըրած տեսութիւնը՝ նոյն իրիկունը կատարուելիք դաշնագրոյն ստորագրութեան մասին մեծ անհանգստութիւն կը պատճառէր իրեն, թէև ինք անփոյթ երևելու կը ջանար։

Էմմանուէլ ալ վախ ունէր և այն ինչ միտքը դրեր էր քրոջը քով երթալ ու սենեակէ մը կ'անցնէր՝ Լէքթուրին հանդիպեցաւ որ ձեռքի նշմայրով մը զինքը կանչեց։

— Հա՛, աղէկ ատեն եկաք, սիրելի կոմս, ըսաւ անոր խորին ուշադրութիւն մը ցոյց տալով բարեմոյն ազնուականի մը պատմութեան, որուն սերտ մտերիմ կ'երևէր։ Ահաւասիկ Պ. տը Նօրէյը, որ Ճշմարիտ կ'ըսեմ, շատ հետաքրքրական բան մը կը պատմէ։ Բայց գիտէ՞ք ազնուական ընկերութեան մը համար սքանչելի և շատ աղէկ որսորդութիւն մ'է։ Ես ալ Ճահիճներ և ձկնաստաններ ու-

նիմ. Բարիզ երթալուս պէս՝ իմ տեսչին պիտի հարցնեմ թէ ո՞ր կողմը կը գտնուին։ Սակայն միթէ այդ կերպով շատ բաղ կը բռնէք։

— Պինդ շատ, պատասխանեց ազնուականը լիակատար բարեմտութեան շեշտով մը, որ կը յայտնէր թէ Լէքթուր կրնար առանց անպատշաճութեան մի և նոյն կերպով խօսակցութիւնը քիչ մը ևս շարունակել։

— Ի՞նչ է այդ հրաշալի որսորդութիւնը, ըսաւ Էմմանուէլ։

— Երևակայեցէք, բարեկամ, վրայ բերաւ Լէքթուր խիստ մեծ պաղարիւնութեամբ, որ պարոնը մինչև վիզը ջրին մէջ մնէ։

— Ներեցէք համարձակութեանս, ի՞նչ եղանակի մէջ։

— Բայց, պատասխանեց տոհմիկը, դեկտեմբեր կամ յունվար ամսոյն մէջ։

— Ասկէ աւելի նկարագրութեան արժանի բան չկրնար ըլլալ։ Արդ՝ ըսի որ պարոնը մինչև վիզը ջրին մէջ մնէ, գլուխը դդում մ՚անցնէ և շամբերու մէջ սողոսկի։ Այս կերպով այնքան կ՚այլափոխի՝ որ բաղերը զինքը բնաւ չեն ճանչեր, ուստի կրնայ անոնց խիստ մօտը երթալ։ Այնպէս չէ՞։

— Այո՛, սեպեցէք թէ ասկէ մինչև հոդ։

— Բա՛, իրա՛ւ, գոչեց Էմմանուէլ։

— Եւ պարոնը ուզածին չափ բաղ կրսպաննէ, յարեց Լէքթուր։

— Տարմ տարմ կը զարնեմ, ըսաւ ազնուականը, երկու երիտասարդներուն ուշադրութեանը վրայ աքանչանալով։

— Կինդ շատ պէտք է ուրախանայ, եթէ բաղը կը սիրէ, ըսաւ Էմմանուէլ։

— Կինս կը խնայ բաղին վրայ, պատասխանեց Պ. տը Նոզէյ։

— Ցուսամ որ այսպիսի հետաքրքրական անձի մը ներկայացնելու պատիւը կ՚ընէք ինձ. յարեց Լէքթուր խոնարհելով։

— Բայց ի՞նչպէս, պարոն։

— Կ՚երդնում որ երբ Վէրսայլ դառնամ՝ իմ առաջին գործս պիտի ըլլայ թագաւորին ընդունելութեան ժամուն այս որսին վրայ խօսիլ. և հաւատի եմ որ Նորին Վեհափառութիւնը անոր փորձը ընէ Սուիսներու ձկնատեսանին մէջ։

— Ներեցէք, սիրելի պարոնս, ըսաւ Էմմանուէլ Լէքթուրին

թեւէն բռնելով և անոր ականջին ծռելով, բայց այս այնպիսի գիւղական բարեկամ մ՚է՝ որ այսպիսի հանդիսի մը մէջ չընդունիլ անկարելի էր։

— Ի՞նչ ըսիք, պատասխանեց Լէքթուր միևնոյն զգուշութեամբ, որպէս զի չլսէ այն անձը որուն խօսքը կ՚ընէին, մեծ յանցանք գործած պիտի ըլլայիք՝ եթէ զիս անորմէ զրկէիք։ Այս ալ իրաւամբ իմ ամուսնոյն օժտին մէջն է և շատ պիտի ցաւէի եթէ երբէք անոր հետ ծանօթութիւն չունենայի։

— Պ. տը Լաժարին, պոռաց սպասաւորը։

— Որսի՞ ընկեր մ՚է, ըսաւ Լէքթուր։

— Զէ՛, պատասխանեց Պ. տը Նոզէյը, Ճամբորդ մ՚է։

— Ա՛հ, ա՛հ, ըրաւ Լէքթուր այնպիսի շեշտով մը որ կը յայտնէր թէ նորեկին Ճիշդ զգուշանալու ժամանակն էր։ Այն ինչ նա այս աղաղակը ձգեց՝ նորեկը ներս մտաւ բոլոնիական մուշտակազարդ զգեստ մը հագած։

— Է՛, սիրելիդ իմ Լաժարի, գոչեց Էմմանուէլ զանի դիմաւորելով և ձեռքը անոր տալով, ինչպէս շքեղ հագուած էք, պատուոյս վրայ կ՚ըսեմ որ կարծէք թէ Պետրոս կայսրն էք։

— Թէև քիչ մը քիչ կրնայի հագուիլ, վասն զի պաղը այնքան սաստիկ չէ, պատասխանեց Լաժարի դողալով, սակայն կը տեսնէք, սիրելի կոմս, երբ մարդ Նափոլիէն կուգայ այսքան լաթը շատ չէ։

— Ա՛հ, պարոնը Նափոլիէ՞ն կուգայ, ըսաւ Լէքթուր խօսքի խառնուելով։

— Ուղղակի Նափոլիէն, պարոն։

— Միթէ պարոնը Վեսուվի վրայ եղա՞ւ։

— Զէ՛, իմ պատուհանէն դիտել բաւական համարեցի։ Ասկէ զատ՝ Վեսուվը, շարայարեց ազնուական Ճանապարհորդը քամահրական շեշտով որ հրաբուղխին մեծ նախատինք կը բերէր, Վեսուվը Նափոլիի ամենէն հետաքրքրական բանը չէ։ Ի՞նչ է. լեռ մը որ կը ծխէ։ Իմ ծխնելոյզն ալ նոյնը կ՚ընէ, երբ հովը Պէլիլի կողմէն փչէ։ Նաև տիկին տը Լաժարին ալ սոսկալի կերպով կը վախնար հրաբեռներէն։

— Բայց միթէ Շան քարայրը գայիք, շարունակեց Լէքթուր։

— Ի՞նչ ընեմ երթամ, վրայ բերաւ Լաժարին. երթամ չոգի ունեցող գազանը տեսնեմ. առջի պատահած քաջին մսեղէն գընդակներ տուէք, պիտի տեսնէք որ նոյնը կ'ընէ։ Եւ ասկէ զատ՝ տիկին տը Լաժարին շունները շատ կը սիրէ. ուստի մեծ ցաւ պիտի պատճառէր իրեն։

— Յուսամ որ, ըսաւ Էմմանուէլ խոնարհելով, ձեզի պէս գիտուն մը դէթ Սօլֆաթար երթալ զանց ըրած չէ։

— Ինչ, ոաք չկոխեցի հոն։ Վայ թշուառական, կրնամ երևակայել թէ ինչ է երեք չորս արտավար ծծմբոտ տեղ մը որ լուցկիէն զատ ուրիշ բերք չունի։ Նաև տիկին տը Լաժարին ծծումբին հոտը չկրնար տանիլ։

— Այս ինչպէս գտաք, ըսաւ Էմմանուէլ Լէքթուրը դաշնագրոյն սրահը տանելով։

— Զգիտեմ թէ միւսը առաջ տեսնելուս համար է, պատասխանեց Լէքթուր, որ այն աւելի աղէկ ունիմ։

— Գ. Բոլ, ծանոյց յանկարծ սպասաւորը։

— Ի՞նչ, ըսաւ Էմմանուէլ ետին դառնալով։

— Ի՞նչ կայ, ըսաւ Լէքթուր դեղևելով։ Դարձեալ գիւղային դրացի մ'է։

— Չէ՛, այս ուրիշ բան է, պատասխանեց Էմմանուէլ անձկութեամբ։ Ի՞նչպէս այդ մարդը հոս ներկայանալու կը համարձակի։

— Վայ, վայ . . . շինականն է, հա. տղեղ, այնպէս չէ՞. . . բայց հարուստ։ Ո՛չ. բանասաեղծ . . . երաժիշտ . . . պատկերահան . . . ։ Լաւ ուրեմն, բայց հաւատայէք, Էմմանուէլ, որ այս տեսակ մարդերն ալ սկսած են հիւրընկալել այժմ։ Անիծեալ ըլլայ այն փիլիսոփայութիւնը որ ամեն բան տակն ու վրայ ըրաւ։ Ի՞նչ ընենք, բարեկամ, հաւասարութիւն։ Անանկ ատեններու հասանք որ արհեստաւոր մը մեծ իշխանի մը քովը կը նստի, արմուկով անոր կը զարնէ, փեղջերին ծայրով զանի կը բարևէ, երբ նոր ոտքի ելնէ՝ ալթուրին վրայ նստած կը մնայ. աքքունեաց գործերու՝ վրայ կը խօսին միասին, կը ծաղրեն, կատակ կ'ընեն և կը վիճաբանին։ Այս բարեվարութիւնը շատ պէշ ձև մ'է։

— Կը սխալիք, Լէքթուր, պատասխանեց Էմմանուէլ, ասի ոչ բանասաեղծ է, ոչ պատկերահան, ոչ ալ երաժիշտ. այլ այնպիսի մարդ մ'է որուն առանձին պատ եմ խօսիլ։ Ուստի դուք Նոզէյը մէկ քով տարէք, ես ալ Լաժարին կը հեռացնեմ։

Այս խօսքերուն վրայ երկու երիտասարդները, անձնիւրը երկու դիւաբնակներուն թևէն բռնելով՝ հեռացան որսի ու ճամբորդութեան վրայ խօսելով։ Հազիւ հազ կողմնակի դռները անոնց ետևէն գոցուեցան՝ Բոլ մէջ տեղի դուռը երևցաւ։

Իրեն արդէն ծանօթ սենեակը մտաւ որուն մէն մի անկիւնը գաղտնի դուռ մը կար։ Այս դռներուն մէկէն՝ թանգարան մը, իսկ միւսէն՝ այն դահլիճը կը մտցուէր, ուր ինքը առաջին այցելութեան ժամանակ Մարկրիթի և Էմմանուէլի բանակցութեան արդիւնքը սպասեց։ Յետոյ սեղանին մօտենալով, պահ մը ոտքի վրայ կեցաւ, հետզհետէ այն երկու դռները դիտելով որպէս թէ անոնց մէկուն կամ միւսին բացուիլը կըսպասէր։ Իր յոյսը 'ի դերև չելաւ. պահ մը ետքը թանգարանին դուռը կիսովին բացուեցաւ, և ստուերին մէջ ճերմակ տեսիլ մը նշմարեց։ Մէկէն անոր քովը գնաց։

— Դուն ես, Մարկրիթ, ըսաւ անոր։

— Այո՛, պատասխանեց երերուն ձայն մը։

— Լա՛ւ ուրեմն, ի՞նչ ըրիր։

— Ամեն բան իրեն ըսի։

— Ե՞։

— Բայց տասը վայրկեանէն դաշնագիրը պիտի ստորագրեն։

— Այդ մտքէս կ'անցնէր. վասն զի ապիրատին մէկն է։

— Հիմակ ի՞նչ ընեմ, գոչեց երիտասարդուհին։

— Սիրտ տա, Մարկրիթ։

— Սի՛րտ առնեմ, ո՛հ, բայց սիրտ մնաց։

— Ահաւասիկ այս քեզ սիրտ պիտի տայ, ըսաւ Բոլ անոր տոմսակ մը յանձնելով։

— Ի՞նչ կայ այս նամակին մէջ։

— Այն դեղին անունը ուր զատկդ քեզ կըսպասէ և այն կնկան անունը որու տունը պահուած է նա։

— Զատկիս . . . ո՛հ, դու հրեշտակ մ'ես ուրեմն, գոչեց

Մարկրիթ թուղթը իրեն երկարող ձեռքը համբուրել ուզելով։

— Լռէ, մարդ կուգայ, ըսաւ Բոլ։ Ի՞նչ որ ալ պատահի Աշարին տունը եկուր, ես հոն եմ։

Մարկրիթ առանց անոր պատասխան տալու ուժգնութեամբ դուռը գոցեց, վասն զի եղբօրը ոտնաձայնը ճանչցեր էր։ Բոլ դարձաւ և զայն դիմաւորեց. երկու երիտասարդները սեղանին քով միացան։

— Այս ատենս և այսքան բազմութեան մէջ ձեզ չէի սպասեր, պարոն, ըսաւ Էմմանուէլ լռութեան կապը խզելով։

— Բայց կարծեմ թէ հոս ուրիշ մարդ չկայ, պատասխանեց Բոլ չորս դին նայելով։

— Այո՛, չկայ, սակայն հոս պիտի ստորագրուի դաշնագիրը և մէկ պահէն սրահը պիտի լեցուին։

— Մէկ պահու մէջ շատ բաներ կրնանք ըսել, Պ. կոմս։

— Իրաւունք ունիք, պատասխանեց Էմմանուէլ, բայց պէտք է այնպիսի անձ մը գտնել որ զանոնք հասկնալու համար մէկ պահէն աւելի ժամանակ չանցնէ։

— Խօսեցէք, ես մտիկ կ'ընեմ, ըսաւ Բոլ։

— Նամակի խօսք մ'ըրիք ինձ, ըսաւ Էմմանուէլ իր խօսակցին աւելի մօտենալով և ձայնը մեղմելով։

— Ճիշդ է, պատասխանեց Բոլ մի և նոյն հանդարտութեամբ։

— Կարծեմ թէ այդ նամակներուն գին մը որոշեցիք։

— Այդ ալ ճիշդ է։

— Լաւ ուրեմն, եթէ պատիւը ինչ է գիտէք, այս թղթակալին մէջի դրամին փոխարէն կը պարտաւորիք զանոնք ինձ տալ։

— Այո՛, պատասխանեց Բոլ, այո՛, պարոն, գործը այդպէս էր երբ ես կը կարծէի թէ քոյրդ իւր խոստումները, իւր գործած յանցանքը, և մինչև իսկ ծնած զաւակը մոռնալով իւր այս երդմնազանցութեամբը ձեր փառասիրութեան կը նպաստէր։ Այն ատեն ես այնպէս կը խորհէի որ ընկերութեան մէջ գէթ առանց հարստութեան չերևելու համար՝ առանց անունի և ընտանիքի մտնել բաւական դառն արտասուքի մկրտութիւն մ'էր։ Ուստի իրաւ է որ այս գիրերու փոխարէն ձեզմէ այն գումարը պահանջեցի։ Բայց այսօր,

պարոն, գործը բոլորովին փոխուեցաւ։ Տեսայ քոյրդ որ ձեր ոտքը ինկաւ, լսեցի որ ձեզ աղերսեց զինքը այս վատշուեր ամուսնութեան չստիպելու համար, սակայն ո՛չ աղաչանք, ո՛չ աղերս, ոչ արտասուք ներդործութիւն չբերին ձեր սրտին վրայ։ Արդ՝ այսօր ձեր և ձեր ընտանիքին պատիւը իմ ձեռքս է, և ես պէտք եմ ազատել մայրը յուսահատութենէ, ինչպէս որ կ'ուզէի ազատել որդին թշուառութենէ։ Այս նամակները, պարոն, այն ատեն միայն պիտի տրուին ձեզ՝ երբ սա սեղանին վրայ, քրոջդ և Լէքթուր պարոնին ամուսնութեան դաշնագրոյն տեղ՝ Օրիորդ Մարկրիթ տ'Օբէյի և Պ. Անաթոլ տը Լիւսինեանի ամուսնութեան դաշնագիրը ստորագրուիք։

— Երբէ՛ք, պարոն, երբէ՛ք։

— Սակայն, կոմս, մի միայն այս պայմանաւ կրնաք զանոնք առնուլ։

— Ո՛հ, թերևս կայ միջոց մը որով ստիպուիք տալ։

— Ես այդպիսի միջոց մը չեմ գիտեր, պատասխանեց Բոլ պաղութեամբ։

— Սա նամակները պիտի տա՞ք, պարոն։

— Կոմս, ըսաւ Բոլ Էմմանուէլին նայելով՝ երիտասարդին համար անմեկնելի դէմքով մը, կոմս, մտիկ ըրէք ինձ։

— Պիտի տա՞ք, պարոն։

— Կոմս . . . ։

— Այո՛ կամ ո՛չ։

— Երկու խօսք . . . ։

— Այո՛ կամ ո՛չ։

— Ո՛չ, ըսաւ Բոլ ցրտօրէն։

— Լաւ ուրեմն, պարոն, ձեր դաշոյնը քովերնիդ է, ինչպէս իմս ալ հոս է. երկուքս ալ ազատորդի ենք, կամ սիրելի է ինձ կարծել որ է։ Դուրս երթանք, պարոն, դուրս. մեր երկուքէն մին միայն թող նորէն ներս մտնէ և անիկայ միւսին մահուամբը ազատ և զօրաւոր՝ թող իւր ուզածը գործադրէ։

— Կը ցաւիմ որ չեմ կրնար այդ առաջարկութիւնը ընդունիլ, Պ. կոմս։

— Ի՛նչ, այդ համաղբեստը հագած ըլլաք և ձեր վիզէն այդ խաչը՝ իսկ քովէն այդ սուրը կախած ունենաք և մենամարտութիւն մը մերժէք։

— Այո՛, Էմմանուէլ, կը մերժեմ։

— Եւ ինչո՞ւ համար։

— Վասն զի չեմ կրնար ձեզի հետ կռուիլ, կոմս, հաւատացէք ինչ որ կ'ըսեմ։

— Չէք կրնար ինձի հետ կռուիլ։

— Պատուոյս վրայ։

— Չէք կրնար ինձի հետ կռուիլ, ըսի՞ք։

Նոյն միջոցին երկու երիտասարդներուն եռեր քրքիջ մը լսուեցաւ. Բոլ և Էմմանուէլ դարձան, Լէքթուր իրենց ետին էր։

— Բայց, շարայարեց Բոլ ձեռքը դէպի պարոնին երկարելով, կրնամ հրամանքին հետ կռուիլ որ թշուառականին, վասին մէկն է։

Հրատապ կարմրութիւն մը լէքթուրին երեսը պատեց բոցի մը կայծին պէս։ Շարժում մ'ըրաւ Բոլին մօտենալու համար, ապա կանգ առաւ։

— Լաւ, պարոն, ըսաւ անոր, դուք ձեր վկայն Էմմանուէլին ղրկեցէք, թող անոնք ամեն բան կարգադրեն։

— Կը հասկնաք որ, ըսաւ Էմմանուէլ, գործը ետքի ձգուած է։

— Սուստ, պատասխանեց Բոլ, մայրդ կուգայ, կ'ըսեն։

— Այո՛, սուստ և վաղը։ Լէքթուր, յարեց Էմմանուէլ, երթանք մայրս դիմաւորելու։

Բոլ լռութեամբ դիտեց այս երկու երիտասարդներուն հեռանալը. ապա նորէն դահլիճը մտաւ զոր արդէն կը ճանչէր անդամ մը հոն փակուած ըլլալով։

ԺԳ

Նոյն միջոցին որ Բոլ նաւապետը դահլիճը կը մտնէր, մարքիզուհին սրահին դուռն երևցաւ։ Իր ետևէն կուգային նօտարը ու դաշնագիրը ստորագրելու համար հրաւիրեալ այլ և այլ անձերը։ Այսպիսի հանդիսաւոր օր մ'իսկ մարքիզուհին իւր սուգի զգեստները փոխել հարկ չսեպելով՝ սովորականին պէս սևեր հագեր էր։ Քիչէն մարքիզն ալ պիտի դար, զոր հոն գտնուողներէն բնաւ մէկը նոյն իսկ իւր որդին տարիներով տեսած չէր։ Ազանդական սովորութիւնները այն աստիճան մեծ զօրութիւն մ'ունէին այն տեղն, զի մարքիզուհին չուզեց որ իւր աղջկան դաշնագիրը ստորագրուի, մինչև որ ընտանիքին գլխաւորը թէև յիմար՝ այլ սակայն նոյն արարողութեան չնախագահէ։ Թէև Լէքթուր վախնալու երևոյթ մը չունէր, բայց մարքիզուհին անոր վրայ իւր սովորական ազդեցութիւնը ըրաւ և պարոնը անոր ծանր ու վեհապանծ կերպով ներս մտնելը տեսնելով՝ խորին յարգական զգացումով մը խոնարհեցաւ։

— Շնորհապարտ եմ, պարոնայք, ըսաւ մարքիզուհին իրեն հետ եկողները բարևելով, որ օրիորդ Մարկրիթ ա'Օրէյի և պարոն տը Լէքթուրին նշանառութեան հանդիսին ներկայ գտնուելու մեղ պատիւն ընել բարեհաճեցաք։ Ուստի ես ալ փափաքեցայ զի մարքիզը որքան վշտակիր ալ ըլլայ՝ այս ակումբէն չպակսի և եթէ խօսքով չկրնար դէթ ներկայութեամբը իւր շնորհակալութիւնը յայտնէ ձեզ։ Դուք արդէն անոր վիճակը գիտէք, ուստի բնաւ չպիտի զարմանաք երբ առանց հեռաւորութեան մի քանի խօսքեր . . .։

— Այո՛, տիկին, գիտենք անոր գլուխն եկած դժբաղդութիւնը և կրսքանչանանք այն անձնուէր կնկան վրայ, որ քսան տարիէ 'ի վեր այս դժբաղդութեան կէսը կը կրէ։

— Տեսա՞ք, տիկին, ըսաւ Էմմանուէլ իւր կարգին մօրը մօտենալով և ձեռքը համբուրելով, ամեն մարդ ձեր ամուսնական դրութիւն առջև ծունը կը կրկնէ։

— Ո՞ւր է Մարկրիթը, քրթմնջեց մարքիզուհին կիսաձայն։

— Հիմակ հոն էր, պատասխանեց Էմմանուէլ։

— Գնա կանչէ, շարունակեց մարքիզուհին միևնոյն ձայնով։

— Տ'Օրէյ մարքիզը, պոռաց այն տեղն սպասաւորը։

Ամենքը մէկ դի քաշուեցան որ այն դուռը նային, ուսկից այս նորեկ անձը պիտի երևէր և իրենց աչերը հոն դարձուցին։ Շաա-

չանցաւ այս հետաքրքրութիւնը բաւականացաւ, դրեթէ անմիջապէս մարքիզը յառաջացաւ. երկու սպասաւորներ զանի բռներ էին։

Այս ծերունիին դէմքը՝ թէև իր կրած տառապանքէն կարկամեր էր, սակայն դեռ ևս պահած էր այն աղնուական և վեհ երևոյթը՝ որով ինք արքունիքի ամենէն նշանաւոր անձերէն մին եղեր էր։ Իր մեծ, խոր ու տենդաբեր աչերը բոլոր ժողովին վրայ ժուռ կ՚ածէր հիացիկ և տարօրինակ դէմքով մը։ Հեծելազօրաց գնդապետի համազգեստը հագած էր. վիզէն՝ Հոգւոյն Սրբոյ, իսկ լամբակէն՝ (boutonnière) Սէն-Լուիի կարգին շքանշանները կախեր էր։ Ամանց բառ մը արտասանելու՝ յամրաքայլ յառաջացաւ։ Երկու պայիկները զանի թիկնաթոռի մը քովը տարին ուր նստաւ նա, իսկ իրենք հեռացան։ Մարքիզուհին անոր աջ կողմը նստաւ։ Նօտարը թղթակալին մէջէն դաշնագիրը հանեց և սկսաւ բարձրաձայն կարդալ։ Մարքիզն ու մարքիզուհին հինգ հարիւր հազար ֆրանք կը խոստանային Լէքթուրին, և նոյնչափ գումար մ՚ալ Մարկրիթին։

Դաշնագրոյն ընթերցման միջոցին մարքիզուհին իւր ակներև անկարեկցութեամբը իսկ անհանգստութեան մի քանի նշաններ ցոյց տուաւ։ Վերջապէս երբ նօտարը դաշնագիրը սեղանին վրայ կը դնէր՝ Էմմանուէլ ներս մտաւ և մօրը մօտեցաւ։

— Բայց Մարկրիթը ո՞ւր է, ըսաւ մարքիզուհին։

— Եռևէս կուգայ, պատասխանեց Էմմանուէլ։

— Տիկին, մրմնջեց Մարկրիթ գուռը կիսովին բանալով և ձեռները իրարու միացնելով։

Մարքիզուհին չլսելու զարկաւ և մատով գրիչը ցոյց տալով,

— Հրամցէք, մեծ. պարոն, ըսաւ։

Լէքթուր սեղանին մօտեցաւ, գրիչն առաւ և ստորագրեց։

— Տիկին, ըսաւ նորէն Մարկրիթ աղերսագին ձայնով մը և դէպի մայրը քայլ մ՚առնելով։

— Գրիչը Մարկրիթին տուէք, պարոն տը Լէքթուր, ըսաւ մարքիզուհին։

Պարոնը սեղանին շուրջը դարձաւ և նշանածին քովն եկաւ։

— Տիկին, ըսաւ նէ երբոբդ անգամ այնպիսի փղձկուն ձայնով մը որ ամենուն սրտին խորը հնչեց և մինչև անգամ մարքիզը գլուխը վեր վերցուց։

— Ստորագրէ՛, ըսաւ մարքիզուհին, մատովը ամուսնութեան դաշնագիրը ցուցնելով։

— Ո՛հ, հայր իմ, հայր իմ, գոչեց Մարկրիթ մարքիզին ոտքն իյնալով։

— Ի՞նչ կ՚ընես, ըսաւ մարքիզուհին ամուսնոյն աթոռին թևը բռնելով և անոր առջևը ծռելով, խե՞նթ ես, օրիորդ։

— Հայր իմ, հայր իմ, ըսաւ Մարկրիթ մարքիզին փաթթուելով, հայր իմ, գթացէք իմ վրայ . . . հայր իմ, ազատեցէք ձեր աղջիկը։

— Մարկրի՛թ, քրթմնջեց մարքիզուհին սպառնական ահռելի շեշտով մը։

— Տիկին, պատասխանեց երիտասարդուհին, չեմ կրնար ձեզի ապաւինիլ։ Թողէք ուրեմն հօրս օգնութիւնը խնդրեմ, եթէ չէք ուզեր որ օրինաց դիմեմ, շարայարեց նա հաստատ և վճռական ձևով մը նօտարը ցուցնելով։

— Աղէ, ըսաւ մարքիզուհին դառն հեգնութեան շեշտով մը և ելաւ կանգնեցաւ, ընտանեկան տեսարան մ՚է այս և այսօրինակ բաները մեծ ծնողքներու համար խիստ խանգաղատական իսկ օտարներու համար ընդհանրապէս ձանձրալի են։ Պարոնայք, մօտակայ սենեակներուն մէջ կրնաք քիչ մը դիւրիլ։ Էմմանուէլ, դու մեծարէ՛ զիրենք. իսկ դուք, մեծապատիւ պարոն, ներեցէք . . . »

Էմմանուէլ և Լէքթուր լռիկ խոնարհելով՝ հեռացան, բոլոր կոչնականները անոնց ետևէն գացին։ Մարքիզուհին անշարժ կեցաւ մինչև որ վերջին հանդիսատեսը դուրս ելաւ. ապա գնաց գուռերը գոցեց և նորէն մարքիզին քովն եկաւ, որուն փարած էր միշտ Մարկրիթ։

— Հիմակ, ըսաւ, մի միայն քեզի հրամայելու իշխանութիւն ունեցող անձինքը մնացին հոս, ուստի կամ ստորագրէ՛ կամ դուրս ելլ, օրիորդ։

— Գթութիւն, տիկին, գթութիւն, ըսաւ Մարկրիթ, և այդ վատութիւնը մի պահանջէք ինձմէ։

— Ձեռ լսեր, ըսաւ մարքիզուհին իւր ձայնին այնպիսի հրամայական շեշտ մը տալով որու կարծես թէ անհնար էր դիմադրել, կ՚ուզես որ նորէն ըսեմ, կամ ստորագրէ՛ կամ դուրս ելլ։

— Ո՛Հ, հայր իմ, հայր իմ, օգնեցէք, օգնեցէք ինձ, ո՛չ, ո՛չ, չպիտի ըսուի թէ հայրս տասը տարիէ 'ի վեր տեսած չէի և կրկին տեսնելու միջոցիս՝ զիս անոր թևերէն քաշեցին տարին, մինչ նա դեռ զիս չճանչեր էր, դեռ զիս չզրկեր էր։ Հայր իմ. . . . ես եմ. . . աղջիկդ է։

— Ի՞նչ է այս ձայնը որ ինձի կ'աղաչէ, մրմնջեց մարքիզը։ Ի՞նչ է այս աղջիկը որ հայր իմ կը կոչէ զիս։

— Այս ձայնը, ըսաւ մարքիզուհին աղջիկան թևը բռնելով, բնական իրաւանց դէմ բարձրացող ձայն մ'է։ Այս աղջիկը ըմբոստ աղջիկ մ'է։

— Հայր իմ, գոչեց Մարկրիթ, ինձ նայեցէք . . . ազատեցէք զիս . . . պաշտպանեցէք զիս . . . Մարկրիթն եմ ես։

— Մարկրիթն ես . . . Մարկրիթը . . . թոթովեց մարքիզը, երբեմն այս անուամբ աղջիկ մ'ունեցայ։

— Ես եմ ան . . . ես եմ. . . յարեց Մարկրիթ, ես եմ ձեր զաւակը, ես եմ ձեր աղջիկը։

— Զաւակ անունք են որոնք կը հնազանդին, ըսաւ մարքիզուհին։ Հնազանդէ և այն ատեն իրաւունք կ'ունենաս ըսելու որ մեր զաւակն ես։

— Ո՛Հ, ձեզի, հայր իմ. . . այո՛, ձեզի պատրաստ եմ հնազանդելու։ Սակայն դուք չէք հրամայեր . . . ։ Դուք չէք ուզեր որ ես թշուառ ըլլամ. . . յետոյն ծայր թշուառ . . . մնալու չափ թշուառ։

— Եկո՛ւ, եկո՛ւ, ըսաւ մարքիզը զայն բռնելով ու իւր կարգին գրկելով։ Ա՛Հ, ի՞նչ հեշտալի և անծանօթ զգացում մը կրգդամ։ Եւ հիմակ . . . կեցիր . . . կեցիր . . . ։ — Ձեռքը ճակատը տարաւ։ — Կարծես թէ միտքս կուգայ։

— Պարոն, գոչեց մարքիզուհին, ըսէ՛ որ պէտք է հնազանդի և Աստուած անսասա որդիքը կ'անիծէ. անոր հեստութիւնը քաջալերելու տեղ՝ այսպէս խօսէ՛ իրեն։

Մարքիզը նորէն գլուխը ծանրաբար վեր առաւ և իւր հրաւառ աչքերը ամենոյն վրայ պնդեց. ապա յամր ձայնով մը,

— Զգուշացիր, տիկին, ըսաւ անոր, զգուշացիր։ Քեզի չըսի՞

որ սկսայ յիշել։ — Ապա իւր ճակատը նորէն Մարկրիթին գլխուն վրայ իջեցնելով, այնպիսի կերպով մ'որ իւր սպիտակ մազերը ծաղկափթիթ օրիորդին սև մազերուն կը խառնուէին. — Խօսէ՛, խօսէ՛, շարունակեց նա։ Ի՞նչ ունիս, զաւակս, ըսէ՛ ինձ, ի՞նչ ունիս։

— Ո՛Հ, շատ թշուառ եմ։

— Ուրեմն ամեն մարդ ապերջանիկ է հոս, գոչեց մարքիզը։ Թէ սեւ և թէ ճերմակ մազերը . . . թէ մանուկը և թէ ծերը. . . . ։ Ո՛Հ, ես ալ, ես ալ. . . շատ թշուառ եմ, ինչ ընեմ։

— Պարոն, պէտք է սենեակդ երթաս, ըսաւ մարքիզուհին։

— Այո՛, որպէս զի կալանաւորի պէս բանտարկեալ մնամ. . . և դու նորէն դիմացս անցնիս . . . . ։ Այդ աղէկ է երբ խելքս գլուխս չըլլայ, տիկին։

— Այո՛, այո՛, հայր իմ, իրաւունք ունիք։ Բաւական ատենէ 'ի վեր մայրս ինքզինքը ձեզ նուիրած է։ Ժամանակն եկաւ որ ձեր աղջիկն անոր տեղը բռնէ։ Հայր իմ, առէք զիս, գիշեր ցորեկ ձեր քովը կը կենամ։ Ձեր մէկ շարժումը, խօսքը բաւական է. ծնրադիր կը ծառայեմ ձեզ. . . ։

— Ո՛Հ, չես կրնար։

— Այո՛, հայր իմ, այո՛, կրնամ։ Հաւատացէք, ինչպէս կը հաւատաք որ ես ձեր զաւակն եմ։

Մարքիզուհին բարկութենէն ձեռքերը գալարեց։

— Եթէ զաւակս ես, կրկնեց մարքիզը, ինչո՞ւ տասը տարիէ 'ի վեր չերևցար։

— Վասն զի ըսին որ զիս տեսնել չէք ուզեր, հայր իմ. վասն զի ըսին որ զիս չէք սիրեր։

— Ի՞նչ ըսին, քեզի պէս հրեշտակային կերպարան մը տեսնել չեմ ուզեր, ըսի՞ն, գոչեց մարքիզը անոր գլուխը ձեռներուն մէջ առնելով և սիրավառ զայն դիտելով. այսպէս ըսին քեզի. հէք դատապարտ մը արքայութիւն չուզեր ըսի՞ն քեզի։ Բարի՜, ո՞վ ըսաւ ուրեմն որ հայր մը իւր զաւակը տեսնել չուզեր։ Ո՞վ համարձակեցաւ ուրեմն քեզի ըսել. «Ա՛ղջիկ, հայրդ քեզ չսիրեր»։

— Ե՛ս, ըսաւ մարքիզուհին՝ Մարկրիթը իւր հօրը ձեռքէն քաշելու համար վերջին ճիգ մ'ընելով։

— Դո՛ւն, ընդմիջեց մարքիզը, դո՛ւն։ Բայց ուրեմն դու իմ ամեն սիրոյ մէջ զիս խարեելու աղետաբեր պաշտօնը ընդունած ես։ Միթէ պէտք է որ իմ ամեն վիշտեր քեզմէ՞ ծագում առնեն։ Միթէ պէտք է որ այսօր վշտացնենս հայրական սիրտը ինչպէս երբեմն վերաւորեցիր ամուսնոյնը։

— Կը զառանցես, պարոն, ըսաւ մարքիզուհին և աղջիկը ձեռքով մարքիզին աջ կողմը անցաւ։ Լո՛ւ, լո՛ւ։

— Ո՛չ, տիկին, ո՛չ, չեմ զառանցեր, պատասխանեց մարքիզը։ ո՛չ. . . ո՛չ. . . աւելի աղէկ է ըսես . . . և Ճիշդն ալ այս է, որ մէկ քովս ունիմ հրեշտակ մը որ խելքս գլուխս բերելու եկած է, իսկ միւս կողմն սադայէլ մը որ զիս խելագարել կ'ուզէ։ . . . Պէ՞տք է որ ապացուցանեմ։ Ձեռքը աթոռին թեւերուն կրռնցնելով ելաւ կանգնեցաւ։ Պէտք է որ քեզի նամակներուն, շնութեանն, մենամարտութեանն խօսքը բանամ։

— Քեզի ըսած եմ, պատասխանեց մարքիզուհին անոր թեւէն բռնելով, քեզի ըսած եմ որ երբ այդպիսի բաներ խօսիս, առանց մտածելու թէ ինչ ականջներ մեզ կը լսեն . . . Ասուած ալ աւելի երես կը դարձնէ քեզմէ։ Վար առ աչերդ, պարոն. տես ո՞վ կայ հոն և համարձակէ՛ ըսել որ խենթ չես։

— Իրաւունք ունիս, ըսաւ մարքիզը նորէն իւր աթոռին վրայ իյնալով։ Մայրդ իրաւունք ունի, շարայարեց նա Մարկրիթին դառնալով. ես եմ խելառը և չէ թէ իմ այլ անոր խօսքին հաւատալ պէտք է։ Մայրդ անձնուիրութիւնն, առաքինութիւնն է։ Ուստի նա ոչ տգնութիւն ունի, ոչ խղճի տագնապ, ոչ ալ զառանցում։ Մայրդ ի՞նչ կ'ուզէ։

— Իմ թշուառութիւնը, հայր իմ, դոչեց Մարկրիթ, իմ մշտատև թշուառութիւնը։

— Սակայն ի՞նչպէս կրնամ ես այդ թշուառութիւնը արգիլել, ըսաւ տարաբաղդ ալեւորը ալեկոծուր շեշտով մը։ Ի՞նչպէս կրնամ ես, հէք շլամիտս, արգիլել, ես որ կը կարծեմ միշտ տեսնել վէրք մը ուսկից արիւն կը հոսի և դերեզման մը որ կը լսեմ կը խօսի։

— Ո՛հ, դուք ամեն բան կրնաք ընել։ Ըսէ՛ք բան մը և ես կ'ա-

զատիմ։ Կ'ուզեն զիս կարգել։ — Մարքիզը գլուխն ետին ծռեց։ — Արդ՝ մտիկ ըրէ՛ք . . . ։ Կ'ուզեն զիս կարգել այնպիսի մէկուն հետ զոր չեմ սիրեր . . . հասկցա՞ք . . . ապիրատի մը հետ . . . և ձեզ հոս բերին . . . այս աթոռին վրայ . . . սա սեղանին առջևը . . . ձեզ, հայր իմ, ձեզ. . . . որ այս դ՝ձուձ դաշնագիրը ստորագրէք. հոս, հոս . . . ահա . . . հոս է այն դաշնագիրը։

— Ինձի խորհուրդ չը՞պիտի հարցնեն, պատասխանեց մարքիզը դաշնագիրը ձեռքն առնելով, ինձի չը՞պիտի հարցնեն թէ կ'ուզեմ թէ ոչ։ Միթէ կը կարծեն թէ մեռած եմ. . . եթէ մեռած ալ կարծեն, Ճիւաղէ՞մ ալ աւելի ոչինչ կը կարծեն։ Այս ամուսնութիւնը քու թշուառութիւնդ պիտի ըլլայ, չըսի՞ր։

— Այո՛, և մշտատև թշուառութիւնս, մշտատև, դոչեց Մարկրիթ։

— Լաւ ուրեմն, այս ամուսնութիւնը չպիտի կատարուի։

— Քու և իմ խօսքը տուի, քու և իմ անուամբ խոստացայ, ըսաւ մարքիզուհին այնքան զօրութեամբ որքան որ իւր իշխանութիւնը կորսնցնել կըզդար։

— Այս ամուսնութիւնը չպիտի կատարուի, ըսի քեզի, պատասխանեց մարքիզը աւելի բարձր և ազդու ձայնով մը։ Ի՞նչ սոսկալի բան է, շարունակեց տխուր և պրոստախօս շեշտով, ամուսնութիւն մը ուր կինը իւր էրիկը չսիրեր. մարդուս յիմարութիւն կը բերէ այս . . . ։ Մարքիզուհին միշտ սիրած է զիս . . . հաւատարմութեամբ սիրած է։ Սակայն իմ խենթութեանս պատճառը . . . ուրիշ բան մ'է։

Դժոխքմբեր ուրախութեան կայծ մը փայլեցաւ մարքիզուհին աչերուն մէջ. ըսաւ որում մարքիզին բորբոքեալ խօսքերէն և անոր աչերուն մէջ նկարուած սոսկումն հասկցաւ որ յիմարութիւնը մօտահաս էր։

— Այս դաշնագիրը, շարայարեց մարքիզը . . . . ։ Եւ զայն պատռելու պատրաստուեցաւ։ Մարքիզուհին ձեռքն ուժգնութեամբ անոր վրայ տարաւ։ Մարկրիթ կարծես թէ թելով մը երկնից և դժոխքին մէջ տեղը կախուած էր։

— Իմ յիմարութեանս պատճառը ղերեզման մ'է որ նորէն կը

բացուի, Ճիւաղ մ'է որ գետնէն կ'ելնէ, ուրուական մ'է որ կուգայ ինձ կը խօսի ու կ'ըսէ . . . :

— «Քու կեանքդ իմ ձեռքս է» մրմնջեց մարքիզուհին իր ամուսնոյն ականջին, Մօրլէ կոմսին մնալու միջոցին արտասանած վերջին խօսքերը կրկնելով, «կրնամ զայն զրաւել» :

— Կը լսես, կը լսես, գոչեց մարքիզը հոսկալի կերպով գոչելով և իրը թէ փախչելու համար ոտք ելնելով :

— Հայր իմ, հայր իմ, սթափեցէք : Ո՛չ գերեզման կայ, ոչ Ճիւաղ կայ, ոչ ալ ուրուական կայ : Այս խօսքերը . . . մարքիզուհին :

— «Բայց կ'ուզեմ ապրիս» շարունակեց ասիկայ իր սկսած գործն աւարտելով, «որ ինձ ներես ինչպէս որ ես քեզ կը ներեմ» :

— Թողութիւն, Մօրլէ, թողութիւն, գոչեց մարքիզը և նորէն սթոռին վրայ ինկաւ. ահուդողէնչմաղերը տնկուեցան և Ճակատէն քրտինք սկսաւ հոսիլ :

— Հայր իմ, հայր իմ :

— Կը տեսնես որ հայրդ շամբուշ է, ըսաւ մարքիզուհին յաղթական : Թող ուրեմն զայն . . . :

— Ո՛հ, ըսաւ Մարկրիթ, ո՛հ, յուսամ որ Աստուած հրաշք մը պիտի գործէ, Իմ սէրը, իմ զգուանքը, իմ արտասուքը անոր թելքը գլուխը պիտի բերեն :

— Փորձէ, պատասխանեց մարքիզուհին պաղութեամբ, իր աղջկան թողլով մարքիզը որ ոչ կամք ունէր, ոչ ձայն և ոչ ալ դիմադրութիւն :

— Հայր իմ, ըսաւ Մարկրիթ աղէկէղ ձայնով մը :

Մարքիզը անզգայ կեցաւ :

— Պարոն, ըսաւ մարքիզուհին հրամայական կերպով :

— Ի՞նչ է . . . ի՞նչ է . . . ըրաւ մարքիզը սարսռելով :

— Հայր իմ, հայր իմ . . . գոչեց Մարկրիթ թեերը գալարելով և յուսահատութենէն շփոթելով, հայր իմ, ինձ նայեցէք, ինձ :

— Ա՛ռ սա գրիչը և ստորագրէ, ըսաւ մարքիզուհին գրիչն առնոր ձեռքը տալով և ձեռքը գանգատոյն վրայ դնելով : Պէտք է . . . , ես այսպէս կ'ուզեմ :

— Ո՛հ, ահա հիմակ կորսուեցայ . . . գոչեց Մարկրիթ ուժաթափ և նոյն պայքարը դեռ ևս շարունակելու զօրութիւնը կորուսելով :

Բայց նոյն միջոցին որ մարքիզը յաղթուելով պիտի ստորագրէր, նոյն միջոցին որ մարքիզուհին յաղթական՝ իր յաղթականին վրայ կ'ուրախանար, նոյն միջոցին որ Մարկրիթը յուսաբեկ՝ փախչելու կը պատրաստուէր, անակնկալ դէպք մը յանկարծ եկաւ այս ամէն բաներուն կերպարանը փոխեց : Դահլիճին դուռը բացուեցաւ և Բոլ, որ առանց տեսնուելու այս տեսարանին ներկայ գտնուեր էր, յանկարծ երևցաւ :

— Տիկին մարքիզուհի տ'Օրէյ, ըսաւ, այս դաշնագիրը չստորագրուած, խօսք մ'ունիմ ըսելու :

— Ո՞վ կը կանչէ զիս, ըսաւ մարքիզուհին հեռուն և հեռաւոր ստուերին մէջ իրեն խօսող անձը զանազանել ջանալով :

— Կը ճանչեմ այս ձայնը, գոչեց մարքիզը դող ելնելով որպէս թէ հրաշէկ երկաթ մը գպեր էր իրեն :

Բոլ երեք քայլ առաւ և լայսին եկաւ :

— Արդեօք Ճիւաղ մ'է, գոչեց իր կարգին մարքիզուհին երիտասարդին իր հին տարփածուին հետ ունեցած նմանութեանը վրայ զարմանալով :

— Կը ճանչեմ այս դէմքը, քրթմնջեց մարքիզը, իր սպանած անձը նորէն տեսնել կարծելով :

— Աստուած իմ, Աստուած իմ, օգնէ ինձ, թոթովեց Մարկրիթ ծնրադիր և բազկատարած :

— Մօրլէ . . . Մօրլէ . . . ըսաւ մարքիզը ոտքի ելնելով և դէպի Բոլին յառաջանալով : Մօրլէ . . . Մօրլէ . . . թողութիւն . . . թողութիւն . . . : Եւ նուաղելով գետինն ինկաւ երկայնակ :

— Հայր իմ, գոչեց Մարկրիթ և մէկէն վազեց անոր քովն եկաւ :

Նոյն պահուն սպասաւոր մը զարհուրապին ներս մտաւ և,

— Տիկին, ըսաւ մարքիզուհիին, Աշարը ամրոցին քահանայն ու բժիշկն ուզեր է : Կը մեռնի եղեր :

— Ըսէ որ, պատասխանեց մարքիզուհին մարմինը ցուցնելով ասնոր զոր իր աղջիկն 'ի զուր սթափեցնել կը ջանար, երկուքն ալ մարքիզին քովը զբաղած են և չեն կրնար գալ :

ԺԴ

Ինչպէս որ նախորդ գլխոյն վերջը տեսանք, Աստուած իր նախախնամական տարօրինակ զուգադիպութեամբը՝ զոր կոյր մարդիկ դրեթէ միշտ բաղդին կը վերընծայեն, միևնոյն միջոցին առ ինքն կը կոչէր թէ՛ արնուական տ՝Օրէյ մարքիզը և թէ խեղճ Աշարը, որպէս զի միևնոյն հաշիւը տան իրեն։ Արդէն դիտենք որ, առաջինը երբ Բոլը տեսաւ, որ իւր հօրը կենդանի պատկերն էր, ինքզինքը կորսնցնելով՝ իբր կայծակնահար երիտասարդին ոտքն ինկաւ ու նաւապետն ևս իր ներդործած այս աղդեցութենէն ահաբեկ մնաց։ Իսկ Աշարին գալով, կ՝ըսենք որ միևնոյն ժամանակին իր և մարքիզին օրհասականը բերող պտրաղայները թէև այլաղան էին, սակայն նոյն տրամէն և նոյն վիճակէն յառաջ կուգային։ Բոլին երևոյթը թէ՛ մէկին և թէ միւսին աղէտաբեր յուզմունք մը աղդեր էր, մէկին՝ անհնարին սոսկում, իսկ միւսին՝ ծայրայեղ ուրախութիւն պատճառելով։ Սակայն դաշնադրոյն ստորադրութեան նախորդ օրը Աշար սովորականէն աւելի տխրութիւն մը զդացեր էր։ Բայց այսու հանդերձ իրիկունը իր տիրոջ դերեզմանին վրայ սովորական աղօթքը ընելու դացեր էր։ Այն տեղէն աւելի խորին ջերմեռանդութեամբ Ովկիանոսին վրայ արևին մարը մտնելու այն միշտ նոր և միշտ փառաւոր տեսարանին հանդիսատես դտնուեր էր. անոր շառագոյն լոյսին նուազումը դիտելով իր ուժին ու զօրութեան սպառումը զդացեր էր, որպէս թէ աշխարհի այս ջահը նորա հոգին իրեն կը քաշէր իր վերջին ճառագայթներուն հետ. այնպէս որ երեկոյին երբ ամրոցին սպասաւորը սովորականին պէս իր հրամաններն առնելու եկեր էր, զայն սենեակը չդտնելով դուրսը սկսեր էր փնտռել. և որովհետև նորա ամենօրեայ ճեմելիքը յայտնի էր, դացեր մեծ կաղնիին տակը զտնի դտեր էր տիրոջը դերեզմանին վրայ ոդեսպառ. այսպէս մինչև վերջին շունչը հաւատարիմ մնացեր էր նա այն տապանի կրօնին, որ կենացը վերջին տարիներուն մէջ իւր բացարձակ զդացումն եղած էր։

Այն ատեն սպասաւորը զայն գրկեր ու տունը բերեր էր. յետոյ այս անակնկալ դէպքէն ահաբեկ՝ վազեր եկեր էր որ մարքիզուհիէն բժիշկ մը և քահանայ մ՝ուղէ։ Աւելորդ է կրկնել որ նէ մերժեց ծառային խնդիրը, պատրուակ բռնելով թէ Աշարին չափ մարքիզին աչ հարկաւոր էին բժիշկն ու քահանայն և ըստ պատպետական օրինի, որ գերեզմանին դուռն իսկ զօրութիւն ունի, մարքիզին կ՝ինչպէս զանոնք առաջ գործածելու իրաւունքը։

Սակայն այսպիսի յետին ծայր տագնապի մէջ, ուր տարբեր տարբեր նկատումներ ու կիրքեր ներկայ ընտանեկան տրամին դերասանները կը մղէին, մարքիզուհիին տրուած լուրը՝ Բոլ լսեց։ Մտածելով որ մարքիզին գտնուած վիճակին մէջ դաշնադիրը ստորագրել անհնար էր, ժամանակ գտաւ նորէն Մարկրիթին յիշեցնելու զի երբ որ կ՝ուզէ Աշարին տունն երթայ իրեն տեսնուի. յետոյ վազեց դարաստանը և անոր ուղիներուն ու թաւուտներուն մէջ յուսաջայտաւ այն յաջողակութեամբ, որով նաւաստիները ամեն ճամբայ կրնան գտնել մի միայն երկինքը դիտելով։ Վերջապէս տնակը տեսաւ. հեռուով ծերունիին սենեակը մնաւ նոյն միջոցին որ անիկայ սկսեր էր ինքզինքը գտնել։ Բոլ Աշարին թևերուն մէջ նետուեցաւ, որու այն ատեն ուրախութիւնը քիչ մը ուժ տուեր էր, դէթ բարեկամի մը գիրկը մեռնելու ապահով ըլլալով,

— Ա՛հ, դուն ես, դուն ես, զոչեց ծերունին, չէի յուսար քեզ նորէն տեսնել։

— Բայց ինչպէս կրցար խորհիլ, զոչեց Բոլ, որ ես քու վիճակդ իմանամ և անմիջապէս չվազեմ չգամ։

— Սակայն ես չէի գիտեր ուր կը գտնուիս, զի իմաց տայի որ մեռնելէս առաջ վերջին անգամ մը քեզ տեսնել կ՝ուզէի։

— Ամրոցն էի, հայր, ամեն բան իմացայ և վազեցի եկայ։

— Եւ ինչպէս ամրոցն էիր, ըսաւ ալևորը զարմանահար։

Բոլ ամեն ինչ անոր պատմեց։

— Ո՛վ նախախնամոդդ Աստուած, քրիստոնեայ Աշար երբ Բոլ իր պատմութիւնն աւարտեց, քանի թագուն և անխուսելի են քու վճիռները։ Դու, որ քսան տարիէն վերջը երիտասարդ մարդը՝ մանուկին օրորը կը տանիս և հօրը սպաննիչը՝ որդւոյն երևոյթովը միայն կը սպաննես։

— Այո՛, այո՛, այդ այդպէս կատարուեցաւ, պատասխանեց Բոլ։ և ահա նոյն նախախնամութիւնն է որ զիս քեզ զրկեց որպէս զի զքեզ ազատեմ։ Ըստ որում դիտեմ անոնք բժիշկն ու քահանայն մերժեցին քեզի։

— Սակայն արդարութիւնը կը պահանջէր որ, պատասխանեց Աշար, մէկը՝ այն առնէր, իսկ միւսը՝ ես։ Որովհետև մարքիզը մեռնելէն կը վախնայ, պէտք էր բժիշկը պահել իւր քովը, և ինձի՝ որ կեանքէն ձանձրացած եմ, զրկել քահանայն։

— Կրնամ ձիով երթալ, գոչեց Բոլ, և մէկ ժամէն . . . ։

— Մէկ ժամը շատ ուշ է, ըսաւ հոգեվարը նկուն ձայնով մը։ Քահանայ մը . . . մի միայն քահանայ մը . . . ։ Մինակ քահանայ մը կ՚ուզէի։

— Հայր, պատասխանեց Բոլ, դիտեմ ես չեմ կրնար քահանայի մը նուիրական պաշտօնը կատարել, սակայն կրնանք երկուքս միասին, Աստուծոյ մեծութեանը և բարութեանը վրայ խօսիլ։

— Այո՛, բայց նախ աշխարհային խնդիրներուն վերջ տանք, որպէս զի ապա մի միայն երկնային բաներու վրայ խորհինք։ Զբսիր որ մարքիզն ալ ինձի պէս կը մեռնի։

— Երբ ես իրմէ բաժնուեցայ՝ ոգեվար էր։

— Դիտե՛ս որ անոր մեռնելէն անմիջապէս վերջը՝ այս պահարանին մէջի թուղթերը որ քու ծնունդդ կը հաստատեն, իրաւամբ քեզ կը վերաբերին։

— Այո՛, դիտեմ։

— Եթէ ես անորմէ առաջ մեռնիմ, եթէ առանց քահանայի մեռնիմ, որո՞ւ յանձնեմ այս աւանդը։ — Ծերունին տեղէն ելաւ և իւր անկողնոյն սնարին տակը բանալի մը ցցուց անոր։ — Այս բանալին կ՚առնես, սա պահարանը կը բանաս, մէջը արկղիկ մը կայ։ Դուն պատուաւոր անձ մ՚ես, երդում ըրէ՛ որ, մինչև որ մարքիզը չմեռնի՝ արկղիկը չպիտի բանաս։

— Կ՚երդնում, ըսաւ Բոլ, հանդիսաւոր կերպով ձեռքը դէպի սնարին վերևը գամուած խաչելութեան երկաբելով։

— Լաւ, պատասխանեց Աշար։ Հիմակ հանդիսաւոր պիտի մեռնիմ։

— Դրնաս հանդիսաւոր մեռնիլ, վասն զի հոս որդին քու ձեռքը կը բռնէ։ Իսկ երկինքէն հայրը քեզ իւր ձեռքը կը կարկառէ։

— Կը կարծես միթէ, պատասխանի, որ նա իմ հաւատարմութենէս գոհ չենի։

— Թագաւորներուն հրամանները անդամ, նոյն իսկ իրենց կենդանութեան ժամանակը, այսքան ճշդութեամբ չեն գործադրուիր։

— Այո՛, քրիստոնեայ աշխարհը, այո՛, ամենայն ճշդութեամբ իւր պատուերները կատարեցի։ Սակայն պէտք չէր որ ես յանձն առնէի այն մեծամարտին վրայ ըլլալ։ Մտիկ ըրէ՛, Բոլ, ես ահա այս կ՚ուզի՛ր ասել քահանային, ըստ որում խոշտիս միակ բեռն է. մտիկ ըրէ՛, կան տարակոյսի վայրկեաններ, ուր այս առանձնակի մենամարտութիւնը իրր մարդասպանութիւն նկատած եմ։ Այն առեն . . . այո՛ առեն, կը հասկնաս, Բոլ, բանն այն է որ ես չէ թէ վկայ այլ դատակից եղած կ՚ըլլամ։

— Հայր իմ, պատասխանեց Բոլ, չդիտեմ եթէ աշխարհային օրէնքը միշտ երկնից օրինաց համաձայն են. չդիտեմ եթէ մարդուս համար ինչ որ պատիւ է Աստուծոյ առջև ալ առաքինութիւն է. չդիտեմ եթէ մեր եկեղեցին որ արեան թշնամի է, կը ներէ զի նոյն ինքն նախատելը իւր կրած արհամարհութեան վրէժն առնու թշնամանողէն։ Չդիտեմ եթէ այս պարագայիս մէջ Աստուած կը վարէ միշտ կամ հրացանին զնդակը կամ դաշոյնին սայրը։ Ասոնք այնպիսի խնդիրներ են, զոր չէ թէ դատողութիւնը՝ այլ խիղճը կը լուծէ։ Լաւ ուրեմն, իմ խիղճս կը վկայէ որ ես ալ եթէ քու տեղդ ըլլայի քեզի պէս կ՚ընէի։ Եթէ զիս սխալեցնող խիղճը քեզ ալ սխալեցուց՝ այս պարագային մէջ քահանայէն աւելի իշխանութիւն ունիմ քեզ ներելու, ուստի թէ՛ իմ և թէ հօրս անուամբ կը ներեմ։

— Շնորհակալ եմ, շնորհակալ, գոչեց ծերունին երիտասարդին ձեռները սեղմելով, շնորհակալ եմ, վասն զի ահաւասիկ օրհասականի մը հոգւոյն հարկաւոր և յարմար խօսքեր։ Դիտե՛ս, ինչ սոսկալի բան է խղճի տագնապը. մինչև անդամ Աստուծոյ էութեանը վրայ կասկածել կուտայ, վասն զի երբ դատաւոր չըլլայ՝ դատողութիւն ալ չմնար։

— Մտիկ ըրէ, ըսաւ Բոլ իրեն յատուկ բանահիւսական և հանդիսաւոր շեշտովը, շատ անգամ ես ալ Աստուծոյ էութեանը վրայ տարակուսած եմ։ Ինչն զի մարդկան մէջ առանձին և անիմաստ ըլլալով, երկրի վրայ ընտանիք մը և նեցուկ մը չունենալով՝ Աստուծոյ մէջ օդնական մը կը փնտռէի և իմ շրջակայ առարկաներէն անոր գոյութեան մէկ ապացոյցը կը խնդրէի։ Ստ. Ջամբաներու եզրը գտնուած խաչերէն մէն տակը կանգ առնելով՝ աչերս մարդկութեան Փրկչին վրայ կը պնդէի և արտասուագին իւր գոյութեանը ու պաշտօնին մէկ ստուգութիւնը կը հայցէի. կ'աղաչէի որ աչքը դէպ ինձ խոնարհեցնէ և կը պաղատէի որ կաթիլ մը արիւն հոսի իւր վէրքէն կամ հառաչ մը արձակէ իւր բերանէն։ Խաչելութիւնը անշարժ կը կենար և ես նորէն ոտք կ'ելնէի յուսահատուր, ըսելով. «Եթէ գիտնայի թէ ուր թաղուած է հայրս, ինչպէս Համլէթ ուրուականին՝ նոյնպէս ես ալ անոր կ'երթայի կը հարցնէի, թերևս նա պատասխան տար»։

— Հէք պատանի։

— Այն ատեն եկեղեցի մը կը մտնէի, շարայարեց Բոլ. հիւսիսի ինչպէս որ գիտէք, այն մութ, սրբական և ուղղափառ եկեղեցիներէն մէկը։ Տիրութիւնը բոլորովին զիս կը պաշարէր, սակայն տխրութիւնը հաւատք չէ։ Խորանին կը մօտենայի, Ս. Խորհրդին առջև ծունր կը դնէի ուր Աստուած կը բնակի կ'ըսեն, Ճակատս մարմարեայ աստիճաններուն վրայ կը դնէի և իմ երկմտութեան մէջ ընկղմեալ՝ ժամերով կետին խոնարհած կը կենայի. յետոյ գըլուխս նորէն վեր կ'առնէի յուսալով որ իմ փնտռած Աստուածս վերջապէս իւր փառաց մէկ Ճառագայթովը կամ իւր զօրութեանը մէկ կայծովը պիտի յայտնուէր ինձ։ Սակայն եկեղեցին տխուր կը կենար, ինչպէս խաչը անշարժ. և ես խեւի պէս արտորնաք դմբեթին տակը կը վազէի, ըսելով. Տէր, Տէր, եթէ դու կաս ինչո՞ւ մարդկան չես յայտներ ինքզինքդ։ Քանի որ կրնաս ու չես յայտնուիր, ուրեմն կ'ուզես որ մարդիկ տարակուսին քու վրայ։

— Զգուշացիր այդ ըսածէդ, Բոլ, գոչեց ծերունին, զգուշացիր որ քու տարակոյսդ իմ սիրտս ալ չանցնի։ Դու դեռ ժամանակ ունիս հաւատալու, մինչդեռ ես . . . կը մեռնիմ։

— Կեցիր, հայր, կեցիր, շարունակեց Բոլ քաղցր ձայնով և հանդարտ դէմքով. դեռ խօսքս չվերջացուցի։ Ահա այն ատեն իւրովի ըսի. «Ճամբու վրայի խաչը և քաղաքներու մէջ եկեղեցին մարդուս ձեռագործն են, ուրեմն Աստուածը Աստուծոյ գործերուն մէջ փնտռենք»։ Նոյն միջոցին սկսայ, հայր իմ, այս թափառական կեանքը որ յաւիտեան գաղտնի պիտի մնայ երկնից, ծովին և իմ մէջ. . . . Ամերիկայի առանձնութիւններուն մէջ մոլորեցայ, ըստ որում մտածեցի զի աշխարհ մը որչափ նոր ըլլայ՝ այնքան լաւ պահած է Աստուծոյ ձեռքին դրոշմը։ Սակայն չէի սխալեր։ Շատ անգամ հոն, այն կոյս անտառներուն մէջ, ուր թերևս ես էի առաջին մարդը որ ոտք կոխեցի, երկինքէն զատ՝ ուրիշ ապաւէն դեռևս չունենալով և մի միայն մէկ մտածմունքի մէջ ընկղմած ըլլալով, քնացող աշխարհին և արթնցող բնութեան այն հաղարամէկ տեսակ շշունչը լսեցի։ Դեռ ես երկար ատեն չհասկցայ այն անծանօթ լեզուն զոր գետերուն կարկաչը, լեռներուն շոգին, անտառներուն շաչիւնը և ծաղիկներուն հոտը իրարու խառնուելով կը յօրինեն։ Վերջապէս իմ աչերը պատող քօղը կամաց կամաց քաշուեցաւ և սրտիս վրայէն այն ճնշեցուցիչ բեռը ելաւ։ Այն ատենէն սկսայ հաւատալ որ երեկոյեան աղմուկը ուր վերջանայսին շշուկը տիեզերական երգ մ'են որով արարածները իրենց Արարիչը կը փառաբանեն։

— Աստուած իմ, ըսաւ հոգեվարը ձեռներն իրարու կցելով և աչերը ջերմեռանդ կերպարանքով մը դէպ երկինք բարձրացնելով, Աստուած իմ, անդունդին խորէն քեզ գոչեցի և դու իմ անձկութեան մէջ ձայնս լսեցիր. ուրեմն փառք քեզ Աստուած։

— Այն ատեն, շարունակեց Բոլ հեզհետէ եռանդը բորբոքելով, այն ատեն ցամաքին ինձ մերժած համոզման մնացորդ մասը Ովկիանոսին վրայ փնտռեցի։ Երկիրը անջրպետն է, իսկ Ովկիանոսը անհունութիւնը։ Ովկիանոսը՝ Աստուծմէ ետքը ամենէն մեծ, ամենէն զօրաւոր, ամենէն ուժեղ բանն է։ Տեսայ, Ովկիանոսը կատաղի առիւծի պէս կը մռնչէր բայց տիրոջը ձայնին՝ հլու շան մը պէս սմքեցաւ. Տիտանին պէս, որ երկինքը վերելակել կ'ուզէր՝ ելեր կանգներ էր, բայց փոթորիկին մտրակին տակ ըլլան ալեր

նման սկսաւ տրանջել. երբ կայծակին դէմ ալիքներ կը ժայթքէր և իւր փրփուրով զայն մարելու փորձ կը փորձէր, յանկարծ սկսաւ հայելիի մը պէս դիրիլ և երկնից ամենէն յետին աստղին վրայ ցոլանալ։ Երկրի վրայ Աստուծոյ գոյութիւնը՝ իսկ Ովկիանոսին վրայ նորա զօրութիւնը ճանչցայ։ Առանձնութեան մէջ Մովսէսին պէս Աստուծոյ ձայնը լսեցի և փոթորիկի ժամանակ Եղեկիէլին պէս տեսայ փոթորիկին հետ մէկտեղ անցաւ։ Այն ատենէն 'ի վեր, հայր իմ, այն ատենէն 'ի վեր՝ երկուանքը լիովին վանեցի իմ սիրտէն և ալէկոծութեան առաջին իրիկունը հաւատացի ու աղօթեցի։

— Հաւատամք 'ի մի Աստուած Հայրն Ամենակալ Արարիչն երկնի և երկրի, ըսաւ ալևորը հաւատով բորբոքեալ ձայնով մը, և այսպէս Հանդանակը մինչև վերջը շարունակեց։

Բոլ լռիկ և աչերը երկինք բարձրացուցած մտիկ ըրաւ, ապա երբ ոգեվարը լմնցուց,

— Քահանայն երբէք այսպէս չպիտի խօսէր քեզի, հայր, ըսաւ գլուխը ցնցելով, ըստ որում ես իբր նաւաստի խօսեցայ և այնպիսի ձայնով մը որ աւելի մեռելի քան թէ միսիթարական խօսքեր արտասանելու սովորած է։ Ներէ՛ ինձ, հայր, ներէ։

— Ինձ ալ քեզի պէս հաւատացնել և աղօթել տուիր, ըսաւ ծերունին. աւելի ի՞նչ կրնար ընել քահանայն, խօսէ։ Քու ըսածը զարդ է և մեծ, թող որ անոր վրայ խորհիմ։

— Մտիկ ըրէ՛, ըսաւ Բոլ դող եղնելով

— Ի՞նչ կայ։

— Լսեցիր։

— Լսէ։

— Ինձ այնպէս երևցաւ որ վշտագին ձայն մը . . . զիս կը կանչէր . . . Կը լսես, կը լսես . . . Մարկրիթին ձայնն է . . . :

— Գնա՛ դիմաւորէ, ըսաւ ծերունին, ես ալ մինակ մնալու պէտք ունիմ։

Բոլ վազեց քովի սենեակը և այն ինչ ուզ կոխեց հո[illegible]եց որ դրան մօտ իւր անունը երրորդ անգամ կրկնեցին։ Այն առ ես շտապեալ դուռը բացաւ և շնչին վրայ Մարկրիթը դտաւ, որ ուժը սպառելով չկրցեր էր աւելի հեռու երթալ և ծնկան վրայ ինկեր էր։

— Ե՛ս եմ, ես եմ, զոչեց նա խիստ զարհուրելի դէմքով մը երբ Բոլը տեսաւ, զետնաքարշ դէպ անոր երթալով։

ԺԵ

Բոլ վազեց Մարկրիթին քովը և զայն ընդգրկեց. ուժգոյն էր նէ և փայտ կտրուեր էր։ Նաւապետը զանի առաջին սենեակը տարաւ, թիկնաթոռի մը վրայ դրաւ, ետ դարձաւ դուռը գոցեց որ բաց մնացեր էր, ապա նորէն քովը գալով,

— Ի՞նչ կը վախնաս, ըսաւ անոր, ո՞վ քեզ կը հալածէ և ի՞նչպէս այս ժամուս հոս եկար։

— Ա՛հ, զոչեց Մարկրիթ, թէ ցորեկ և թէ գիշեր ինչ ատեն որ ըլլայ, կը փախչիմ մինչև ուր որ երթամ։ Կը փախչիմ որպէս զի գտնեմ սիրտ մը որու լամ և թև մը որ պաշտպանէ զիս։ Կը փախչիմ. . . Բոլ, հայրս մեռաւ։

— Անբաղդ աղջիկ, ըսաւ Բոլ երիտասարդուհին ողջագուրելով։ Անբաղդ աղջիկ, որ մէկ մեռելի տունէն խոյս կուտաս և միւսը կը մտնես. որ մահը ամրոցը կը թողուս և նորէն խրճիթին մէջ կը դտնես։

— Այո՛, այո՛, ըսաւ Մարկրիթ ոտք եղնելով և դեռ ևս իւր ահուդողէն սարսուռ զղալով Բոլը սեղմեց։ Հոն մահ, հոս մահ։ Սակայն հոն յուսահատ կը մեռնին, մինչդեռ հոս . . . Հանգիստ։ Ո՛վ Բոլ, Բոլ, ո՛հ, եթէ տեսնէիր իմ տեսած բաներս։

— Ըսէ՛ նայիմ, ինչ տեսար։

— Գիտես, շարունակեց ծաղկահասակ օրիորդը, ինչ սոսկալի աղդեցութիւն ունեցան հօրս վրայ քու ձայնը և ներկայութիւնը։

— Գիտեմ։

— Շնչասպառ և լեզուն բռնուած առին իւր սենեակը տարին։

— Բայց ես ի՞նչ յանցանք ունիմ, ըսաւ Բոլ. ես մօրդ կը խօսէի, հայրդ ալ լսեց։

— Լա՛ ուրեմն, արդէն դիտես, Բոլ, վասն զի քու տնուած դահլիճէն անշուշտ ամէն բան լսեցիր։ Հայրս, խեղճ հայրս զիս ճանչեր էր. ես այս տեսնելով՝ չկրցայ իմ անհանգստութիւնը գըսպել և մօրս զայրոյթը աչքս առնելով՝ կրկին անգամ հայրս տեսնելու համար վեր ելայ։ Դուռը գոց էր. կամաց մը զարկի, հայրս ինքզինքին եկեր էր, ըստ որում լսեցի որ տակաւ ձայնով մը ո՛վ է այն ըսաւ։

— Բայց մայրդ, հարցուց Բոլ։

— Մայրս, ըսաւ Մարկրիթ, հոն չէր և դուրս երթալու ատենը զայն փակեր էր. ինչպէս կրնար փակել մանուկ մը։ Սակայն հայրս երբ իմ ձայնը ճանչցաւ, երբ իրեն պատասխանեցի թէ Մարկրիթն եմ, թէ իւր աղջիկն եմ, ըսաւ որ դահլիճի մը մէջ դտնուած գաղտնի սանդուղքէն իւր սենեակն ելնեմ։ Պահ մը ետքը անոր անկողնոյն առջև ծունկան վրայ եկեր էի և նա իւր օրհնութիւնը կուտար ինձ. որովհետև մեռնելէն առաջ իւր օրհնութիւնը, իւր հայրական օրհնութիւնը տուաւ, յուսամ թէ ասով Աստուծոյ օրհնութիւնն ալ կ՚ընդունիմ։

— Այո՛. ըսաւ Բոլ, հոգ մ՚ըներ։ Աստուած կը ներէ քեզ։ Քու վրայ մի՛ լար, աղջիկ, վասն զի դու աղատեցար, այլ լա՛ց հօրդ վրայ։

— Դեռ ըսածներս ոչինչ են, Բոլ, գոչեց Մարկրիթ. մտիկ ըրէ՛, մտիկ ըրէ՛։

— Խօսէ՛։

— Ահա նոյն միջոցին որ ծնրադիր անոր ձեռքը կը համբուրէի՝ մօրս ոտքին ձայնն առի որ սանդուղքէն վեր կ՚ելնէր. ճանչեցի զայն, հայրս ալ ճանչեց, ըստ որում վերջին անգամ մ՚ալ զիս գրկեց և նշմայր ըրաւ որ փախչիմ։ Հնազանդեցայ, բայց խելքս գլուխս չէր և այնքան շուարած էի, որ դուռը շփոթեցի և փոխանակ իմ ելած ելնարանէն վար իջնելու՝ անել դահլիճի մը մէջ նետուեցայ։ Ամէն դին խարխափեցի, բայց հասկցայ որ փակուած եմ։ Նոյն պահուն սենեկին դուռը կը բացուէր, կանգ առի, շունչս բռնեցի,

մայրս քահանային հետ ներս մտաւ։ Կը հաւատամ, Բոլ, ոգեվարէն ա՛ելի ժամն էր նէ։

— Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած, մրմնջեց Բոլ։

— Քահանայն անկողնոյն սնարին քովը նստաւ, շարունակեց Մարկրիթ միշտ երբ տարդին փաթթուելով աելի ահաբեկ իսկ մայրս ոտքին կողմը կայնած կեցաւ։ Մտածէ՛ անգամ մը. ես հոն էի, հոն, այն տխուր տեսարանին առջև, փախչիլ անհնար էր։ Ինչ սոսկալի բան է որ աղջիկ մը իւր հօրը խոստովանութիւնը լսելու հարկադրի, այնպէս չէ՞. Բոլ։ Ծունկան վրայ եկայ, աչերս գոցեցի որ չտեսնեմ, սկսայ աղօթել որ չլսեմ. այլ սակայն դարձեալ ակամայ, ո՜հ, այո՛, կ՚երդնում, Բոլ. որ ակամայ տեսայ. . . . և լսեցի . . . և ինչ որ տեսայ ու լսեցի երբէք չպիտի մոռնամ։ Հայրս իւր յիսատակներուն մէջ տենդային ուժ մը գտնելով՝ անկողնոյն վրայ ելաւ նստաւ. մահուան ժամնութիւնը դէմքին վրայ նկարուած էր։ Եւ . . . մենամարտութեան. շնութեան. մարդասպանութեան խօսքեր սեցի բերնէն. և այս մէն մի բառերուն միշտ մօրս գոյնը աելի կը նետ ը և ոգեվարին ձայնը խափանելու համար իւր ձայնը կը բարձրացնէր ու քահանայն կ՚ըսէր. «Մի՛ հաւատաք, Տէր հայր. մի՛ հաւատաք, սուտ կը խօսի կամ յաւ ես է ըսել խենթ էր։ Բոլ, ինչ զարհուրելի, ինչ պիղծ, ինչ անօրէն տեսարան մ՚էր այն . . . ։ Պաղ քրտինք մը ճակտիս վրայ անցաւ և ես նուաղեցայ։

— Ո՛վ արդար երկինք, գոչեց Բոլ։

— Զգիտեմ ինչքան ատեն այսպէս զգայազրկեալ մնացի։ Երբ ըսթափեցայ՝ սենեակը դերեզմանի պէս լռակաց էր։ Մայրս և քահանայն աներևոյթ եղեր էին և երկու մոմ հօրս քովը կը վառէին։ Դուռը բացի, աչերս անկողնոյն վրայ սևեռեցի և զայն ամբողջապէս ծածկող սաւանին տակը դիակի մը կարկամ ձևը կերպարանեալ կարծեցի տեսնել։ Ամէն ինչ լռեցեր էր։ Անշարժ կեցայ, այս տեսարանին ինձ պատճառած ազդեցութիւնն և գաղտը չընկրուած սաւանը վեր վերցնելով վերջին անգամ մը հօրս պատկառելի ճակատը համբուրելու գորովալիր եռանդին մէջ տատամսելով։ Վերջապէս իմ երկիւղը աելի զօրաւոր փրթաւ. սառնա-

գին, անպարտելի, մահաբոյծ վախ մը զիս սենեակէն դուրս մղեց, սանդուղէն վար իջայ, չգիտեմ ինչպէս, բայց կարծեմ և ոչ մէկ աստիճանին դպչելով. սենեակներ, սրահներ անցայ և վերջապէս երբ զով օդ մը սկսայ շնչել, զգացի որ դուրսն եմ։ Խելի պէս կը վազէի. միաքս ինկաւ որ դու ինձ ըսիր թէ հոս պիտի դանուիս։ Բնազդում մը, գուն ըսէ որն է այն, բան որում ես ալ չգիտեմ, զիս այս կողմը կը մղէր։ Ինձ այնպէս կը թուէր թէ ստուերներ, ճիւաղներ զիս կը հալածէին։ Ուղիղ մը դառնալու ատենս . . . . բայց ցնորքներ էի արդեօք . . . կարծեցի մայրս տեսնել . . . բոլորովին սեւեր հագեր էր . . . . Ճիւաղի պէս առանց շշունչի կը քայլէր։ Ո՛հ, այն ատեն, այն ատեն . . . սարսափը թեւեր առաւ ինձ։ Սկսայ վազել, բայց չէի դիտեր ուր կ'երթայի. ապա ուժս հատաւ և ահա այն ատեն իմ աղաղակը լսեցիր։ Դեռ ես քանի մը քայլ առի և սա դրան քովն ինկայ. եթէ բայց չըլլար, ո՛հ, ՝,ոյա դուրսը ոդեսպառ պիտի խնայի վասն զի այնքան շփոթեր էի որ ինձ միշտ այնպէս կը թուէր . . . : Սուստ, քրթմնջեց յանկարծ Մարկրիթ, սուստ . . . կը լսեն։

— Այո՛, ըսաւ Բոլ և Ճրագը փչեց, այո՛, այո՛, ուրբի ձայն կայ . . . : Ես ալ կը լսեմ։

— Տեսա՞ր. տեսա՞ր, շարայարեց Մարկրիթ պատուհանին վարագոյրներուն մէջ փաթթուելով և Բոլն ալ իրեն հետ միասին ծածկելով, տեսա՞ր . . . չէի սխալեր։ Այն էր։

Իրաւի՝ նոյն միջոցին բնակարանին դուռը բացուեցաւ և մարքիզուհին սեւեր հագած, ստուերի պէս դռնատ՝ յամրաքայլ ներս մտաւ. դուռը իր ետևէն քաշեց, բանալիով կղպեց և առանց Բոլն ու Մարկրիթը տեսնելու, առաջին սենեակէն անցնելով երկրորդը մտաւ ուր ծերունին պառկեր էր։ Այն ատեն դէպ Աշարին անկողնոյն յառաջացաւ, ինչպէս որ մարքիզին մահճակալին մօտեցեր էր։ Միայն թէ այս անգամ քահանայ չկար հետը։

— Ո՞վ է այն, ըսաւ Աշար անկողնոյն մէկ վիժակը բանալով։

— Ե՛ս, պատասխանեց մարքիզուհին և միւսը քաշեց։

— Դո՛ւք, տիկին, գոչեց ծերունին ահափետ։ Ի՞նչ գործ ունիք ոդեվարի մը անկողնոյն բովը։

— Կուգամ անոր սակ մը առաջարկել։

— Հոգին առնելու համար, այնպէս չէ՞։

— Ընդհակառակն զայն ազատելու համար։ Աշա՛ր, գուն այս աշխարհիս մէջ ալ միևնակ մէկ բանի սէրք ունիս, շարայարեց մարքիզուհին ոդեվարին անկողնոյն վրայ կռնկուելով, այն է քահանայի։

— Դուք ամբոցին քահանայն մերժեցիք ինձ։

— Մինչև հիմա վայրկեան, ըսաւ մարքիզուհին, եթէ կ'ուզես՝ կուգայ . . . :

— Ուրեմն կանչել տուէք, պատասխանեց ալևորը. բայց, երաւ կ'ըսեմ, ժամանակ մի կորսնցնէք . . . շուտ ըրէք . . . :

— Սակայն . . . եթէ ես երկնային հանդիսաւոր տամ քեզի, կրկնեց մարքիզուհին, դուն ալ աշխարհային անդորրութիւն կուտաս ինձ։

— Ես ի՞նչ կրնամ ընել ձեզի, քրթմնջեց օրհասականը և աչերը ծածկեց որպէս զի չտեսնէ այն անձը որուն ակնարկը զինքը կը սառեցնէր։

— Դուն՝ ճեռնելու համար . . . քահանայ մը կ'ուզես, իսկ ես՝ ապրելու համար . . . գիտես թէ ինչ բանի պէտք ունիմ։

— Ի՞նչ, երկինքը ինձ փակել կ'ուզէք խոստմնազանցութեամբ մը . . . :

— Կ'ուզեմ բանալ ներումով մը։

— Այդ ներումը . . . ես ընդունեցայ . . . :

— Եւ որմէ՞ն . . . :

— Այն անձէն որ թերևս միակ իշխանութիւն ունէր զայն ինձ շնորհելու։

— Միթէ Մօրլէ երկինքէ՞ն իջաւ, հարցուց մարքիզուհին երկիւղագին և միանգամայն հեգնալի շեշտով մը։

— Չէ՝, պատասխանեց ծերունին. բայց մոռցա՞ք, տիկին, որ աշխարհի վրայ զաւակ մը թողուց։

— Դու զայն տեսա՞ր ալ, գոչեց մարքիզուհին։

— Այո՛, պատասխանեց Աշար։

— Եւ ամեն բան անոր ըսիր . . . :

— Ամեն ինչ։

— Բայց անոր ծնունդը հաստատող թուղթերը, հարցուց մարքիզուհին անձկութեամբ։

— Մարքիզը կենդանի էր։ Թուղթերը հոն են։

— Աշար, կրկնեց մարքիզուհին դարձեալ առջև ծնկան վրայ իյնալով, Աշար, չե՞ս գթար իմ վրայ։

— Դուք իմ առջև ծնկան վրայ կուգաք, տիկին։

— Այո՛, ծերունի, ըսաւ մարքիզուհին աղերսագին, այո՛, ծընկան վրայ կուգամ, և քեզի կ՚աղաչեմ, կը պաղատիմ, վասն զի Փրանսայի ամենէն հին ընտանիքներէն մէկուն պատիւը, իմ անցեալ, իմ ապագայ կեանքը քու ձեռքդ են։ Այն թուղթերը իմ սիրոս, իմ հոգիս, այս ամենէն աւելի իմ պատիւս, իմ պապերուն, իմ զաւակներուն պատիւն է. և արդէն գիտես թէ ինչեր քաշեցի այս պատիւն անարատ պահելու համար։ Կարծես թէ ես ալ սիրահարի, ամուսնոյ և մայրական զգացում չունիմ, ինչպէս որ ունին բոլոր կանայք։ Ունիմ. բայց զանոնք ամենքն ալ հետզհետէ խեղդեցի և այս պայքարը քիչ չտևեց։ Ծերունի, ես քեզմէ քսան տարեկան պզտիկ եմ և քաջամարտին։ իսկ դու պիտի մեռնիս։ Բայց նայէ՛ իմ մազերը քունկիներէն աւելի ճերմակ են։

— Ի՞նչ կ՚ըսէ, մրմռաց Մարկրիթ որ այնպիսի կերպով մը մոտեցեր էր զի իւր ակնարկը կարենայ մէկ սենեակէն միւսը թափանցել։ Ո՛հ, Աստուա՛ծ իմ։

— Մտիկ ըրէ՛, տղջիկ, մտիկ ըրէ՛, պատասխանեց Բոլ, Աստուած կ՚ուզէ որ ամեն ինչ այս եղանակաւ յայտնուի . . . ։

— Այո՛, այո՛, մրմնջեց Աշար վատուժելով, այո՛, դուք Աստուծոյ բարութեան վրայ կասկածեցաք, դուք մոռցաք որ շնչող կնկան ներեց։

— Այո՛, ներեց, բայց եթէ Քրիստոս այն տեղէն չանցնէր՝ մարդերը պիտի քարկոծէին զայն . . . ։ Մարդիկ՝ որ քսան սերունդէ՛ի վեր իմ անունը յարգել և իմ ընտանիքը պատուել սովորած են, եթէ լսէին ինչ որ, փա՛ռք Աստուծոյ, մինչև հիմա գաղտնի մնաց, կըսկսէին զայն անարգել և նախատել։ Ո՛հ, այո՛ . . . Աստուա՛ծ . . . այնքան վիշտ կրեցի որ նա ինձ պիտի ներէ. սակայն մարդիկ . . . մարդիկ անողոք են, չեն ներեր։ Ասկէ զատ միթէ

միայնակ գլխս պիտի կշտամբեն։ Միթէ իմ խաչին երկու քովը՝ չկա՞ն իմ երկու զաւակները որոնց անդրանիկն է միւսը . . . ։ Միւսը, գիտեմ, իմ որդին է, ինչպէս Էմմանուէլը և Մարկրիթը, բայց զայն անոնց իրը եղբայր տալու իշխանութիւն ունիմ։ Չե՞ս գիտեր որ օրինաց առջև տ՚Օրէյ մարքիզին որդին է. չե՞ս գիտեր որ ընտանիքին նախնին է, գլխաւորն է. չե՞ս գիտեր որ եթէ այս օրէնքին դիմէ ամեն ինչ կրնայ իւրացնել թէ մեր տիտղոսները և թէ մեր հարստութիւնը։ Եւ այն ատեն ի՞նչ կը մնայ Էմմանուէլին, — Մալթայի կարգի խաչ մը։ Ի՞նչ կը մնայ Մարկրիթին, — վանք մը։

— Ո՛հ, այո՛, այո՛, ըսաւ Մարկրիթ կիսաձայն և թեւերը դէպ՚ի մարքիզուհին երկարելով, այո՛, վանք մը ուր կարենամ ձեզի համար աղօթել, մայր իմ։

— Լռէ՛, լռէ՛, ըսաւ անոր Բոլ։

— Ա՛հ, տիկին, դուք դեռ չէք ճանչեր զայն, մրմնջեց ոգեվարը որուն ձայներ հետզհետէ կը տկարանար։

— Ո՛չ, բայց կը ճանչեմ մարդիկը, պատասխանեց մարքիզուհին։ Իրաւ ինքը անուն չունի բայց կրնայ մէկ հատ գտնել. ստակ չունի բայց կրնայ շահիլ. սակայն ատով կարծես թէ կը մերժէ՞ մեր անունն ու հարստութիւնը։

— Այո՛, կը մերժէ, եթէ իրմէ խնդրէք։

— Բայց ի՞նչ իրաւունքով խնդրեմ, շարունակեց մարքիզուհին։ Ի՞նչ իրաւունքով կրնամ անոր աղաչել որ ինձ, Էմմանուէլին և Մարկրիթին խնայէ։ Նա կրնայ ըսել. «Ես քեզ չեմ ճանչեր, տիկին. մի միայն սա գիտեմ որ դու իմ մայրս ես»։

— Ես անոր կողմէն, թոթովեց Աշար որու լեզուն մահը կըսկսէր սառեցնել, անոր կողմէն, տիկին, խօսք կուտամ . . . կ՚երդնում . . . ։ Ո՛հ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ։

Մարքիզուհին ոտք ելաւ և սկսաւ ոգեվարին դէմքին վրայ ձգնաժամի յառաջադիմութիւնները դիտել։

— Դու խօսք կուտաս . . . կ՚երդնո՞ւս . . . ըսաւ նա։ Բայց միթէ ինքը հոն է որ քու խոստումը վաւերացնէ։ Դուն խօսք կուտաս . . . կ՚երդնո՞ւս . . . Ա՛հ, դու կը մնանիս իսկ ես ղնդ-

պիտի ապրիմ. ուստի միթէ կ'ուզես որ իմ տարիները քու վայրկեաններու հետ մէկ դնեմ։ Ես քեզի աղաչեցի, պաղատեցայ. վերջին անգամ մ'ալ կ'աղաչեմ, կը պաղատիմ. տուր ինձ այն թուղթերը։

— Այն թուղթերը անոր են։

— Սակայն ինձի հարկաւոր են, ըսի քեզի, շարունակեց մարքիզուհին ուժ առնելով մինչ ողեվարը կը կթուտէր։

— Աստուած իմ, Աստուած իմ, գթա՛ ինձ, մրմնջեց Աշար։

— Ո՛չ ոք կրնայ գալ, կրկնեց մարքիզուհին։ Այն բանալին միշտ քովդ կը պահես, չըսի՞ր . . . ։

— Միթէ ողեվարի մը ձեռքէն պիտի կորզէ՞ք։

— Ձէ, պատասխանեց մարքիզուհին, պիտի սպասեմ։

— Թող տուէք որ հանգիստ մեռնիմ, գոչեց օրհասականը մնարին վրայէն խաչելութիւնը քաշելով և զայն իր ու մարքիզուհիին մէջ տեղը բարձրացնելով։ Դուրս ելէք, դուրս, 'ի սէր Քրիստոսի . . . ։

Մարքիզուհին ծնկան վրայ մնաց, գլուխը մինչև գետին ծռեց։ Փոքր ժամանակ մը այն սոսկալի գիրքին մէջ մնաց. ապա կամաց կամաց իր ուժը կորսնցնելով՝ նորէն անկողնոյն վրայ մնաց, թեները խաչաձև դրաւ և Փրկչին պատկերն ալ կուրծքին վրայ կրճնցուց։

Մարքիզուհին գարշելիօրէն վիժակներուն ծայրէն բռնեց և առանց գլուխը վեր առնելու՝ զանոնք խաչաձև ծածկեց այնպիսի կերպով՝ որ օրհասականին ձգնաժամը չտեսնուի։

— Դը սոսկամ, կը սոսկամ, քրթմնջեց Մարկրիթ։

— Ծունր դնենք և աղօթենք, ըսաւ Բոլ։

Այն ատեն հանդիսաւոր և ահաւոր պահ մը տեղի ունեցաւ զոր ողեվարին վերջին հոնչիւնը միայն կ'ընդմիջէր. ապա այս հոնչիւնն ալ հետզհետէ տկարանալով՝ դադրեցաւ։ Ամեն ինչ լռեցեր էր. ծերունին մեռեր էր։

Մարքիզուհին ծանրաբար գլուխը վեր վերցուց, անձկութեամբ քանի մը վայրկեան ականջ դրաւ, յետոյ ձեռքը վիժակներուն մէջէն խոթեց ստանց դանոնք բանալու, և քիչ մը խարխափելէն վերջը նորէն քաշեց բանալին բռնած։ Այն ատեն ոտք ելաւ և գլուխը մահճակալին կողմը դարձուցած՝ դէպի դարանը յառաջացաւ։ Բայց նոյն պահուն որ բանալին կուզային մէջ պիտի խոթէր՝ Բոլ, որ անոր անձնիւր շարժումները կը դիտէր, սենեակին մէջ ցատկեց և թեւէն բռնելով,

— Ինծի տուէք այդ բանալին, մայր իմ, ըսաւ անոր, վասն զի մարքիզը մեռաւ և այն թուղթերն ինձ կը վերաբերին։

— Ո՛վ արդար Աստուած, գոչեց մարքիզուհին իր սարսափէն ետ ետ երթալով և աթոռի մը վրայ իյնալով. ո՛վ արդար Աստուած, իմ որդիս է։

— Ո՛վ բարի երկինք, քրթմնջեց Մարքրիթ միւս սենեկին մէջ ծնկան վրայ իյնալով, ո՛վ բարի երկինք, իմ եղբայրս է։

Բոլ դարձնը բացաւ և թուղթերը պարունակող արկղիկը առաւ։

ԺԶ

Սակայն այն գիշերուան յոլովակի դէպքերուն մէջ՝ որով Մարքրիթ երկու ձգնաժամի ներկայ դտնուեցաւ, և ասստուածային հրաշքով մը մօրը գաղտնիքին իրազեկ եղաւ, Բոլ առջի օր իւր և Լէքթուրի մէջ տեղի ունեցած մահաբեր խօսքերը չմոռցաւ։ Եւ որովհետև այն դեռատի ազատորդին չէր կրնար իւր ուր ըլլալը դիտնալ և հետևաբար զինքը փնտռել՝ մտածեց որ ինք կը պարտաւորէր այս ծանրութիւնը պարոնին խնայել. ուստի առաւօտեան ժամը վեցին մօտերը Վոլթերը տեղակալը իր կողմէն Օրէյի ամրոցը ներկայացաւ մենամարտութեան պայմանները որոշելու համար։ Էմմանուէլ Լէքթուրին քոմթ էր։ Այս վերջինը պաշտօնակալը տեսնելով՝ դարաստանը իջաւ երկու երիտասարդները իրենց բանակցութեան մէջ բոլորովին ազատ ձգելու համար։ Վոլթերը ամեն ինչ ընդունելու հրաման ունէր իւր գլխաւորէն։ Ուստի նախակարգ վէճն անմիջապէս վերջացաւ։ Երկու երիտասարդները

միաբան որոշեցին որ մենամարտը նոյն օրը երեկոյեան ժամը չորսին կատարուի, ծովեզերը Բոր–Լոտի և Օրէյի ամրոցին մէջ տեղը գտնուած ձկնորսի հիւղին մօտ։ Իսկ զինու մասին՝ հաւանեցան որ այն տեղ բերեն ատրճանակներն ու դաշոյնները և այն ատեն որոշեն թէ մարտիկները ո՞ր տեսակը գործածեն. արդէն յայտնի է թէ Լէքթուր ըլլալով նախատեալը՝ ընտրութիւնը իրեն կ'իյնար։

Իսկ մարքիզուհին, որ ինչպէս տեսանիք, յանկարծ Բոլը տեսնելով կլծոտեցաւ, անմիջապէս իւր բնական սրտապնդութիւնը առաւ և իւր քոյրը երեսին վրայ քաշելով մեռելին սենեակէն դուրս ելաւ ու առաջին խուցն անցաւ։ Այն տեղ Ճրագ չկար և մութ էր. հետեւարար Մարկրիթը չտեսաւ, որ իր զարմանքն ու սարսափէն ափ 'ի բերան մնալով՝ ծնկան վրայ եկեր էր։ Ապա բուրաստանէն անցնելով դաշնադրոյն տեսարանը տեղի ունեցած սրահը դնաց. հոն մոմերուն աղօտ լոյսին մէջ երկու արմուկները սեղանին կոթնցուց, գլուխը ձեռներուն մէջ դրաւ, աչքերը այն թուղթին վրայ պնդեց ուր Լէքթուր իւր սուրբագրութիւնը ըրեր, իսկ մարքիզը իւր անուանին կէսը գրեր էր, և գիշերուան միւս մասը նոր խորհուրդի մը վրայ մտածելով անցուց։ Այսպէս լուսցաւ և գեղանոր մարէն անգամ չանցաւ քիչ մը հանգստանալ, վասն զի այս պրն ձեայ սիրտը այնպէս ամուր կը բռնէր այն մարմինը ուր ամփոփուած էր։ Այս որոշումն էր Էմմանուէլը և Մարկրիթը կարելի եղածին չափ շուտով Օրէյի ամրոցէն հեռացնել. վասն զի մասնաւորապէս իւր զաւակներէն կ'ուզէր պահել ինչ որ հաւանականաբար իւր և Բոլի մէջ տեղի պիտի ունենար։

Ժամը եօթին Վոլթերը տեղապահին մեկնելու ատեն հանած ձայնը լսելով՝ ձեռքն երկարեց. հնչակ մ'առաւ և զարկաւ։

Սպասաւոր մը նախսրդ օրուան նշանագրեստով եկաւ դուռը ներկայացաւ. յայտնի կը տեսնուէր որ ասիկայ ալ չքնացեր էր ամենին։

— Գնա՛ ըսէ Օրիորդ տ'Օրէյին որ սրահին մէջ մայրն իրեն կը սպասէ, ըսաւ մարքիզուհին։

Սպասն հնազանդեցաւ և մարքիզուհին տխուր և անշարժ նորէն իւր առջի դիրքն առաւ։ Պահ մը նորը թեթեւ շշունչ մը ընդ իւր

եղեն և դարձաւ։ Մարկրիթն էր։ Երիտասարդուհին ամեն ատենէն աւելի յարգանօք ձեռքը դէպի մօրը երկարեց, որպէս զի ասիկայ իրը տայ համբուրելու համար։ Սակայն մարքիզուհին անշարժ կեցաւ իրը թէ աղջկան միտքը չհասկնալով։ Մարկրիթ ձեռքը վար կախեց ու լռիկ սպասեց։ Նա ես առջի օրուան զրեստը չհաներ էր դեռ։ Քունը աչքերուն վրայէն անցեր էր, բայց Օրէյի ամրոցը ու իւր բնակիչները մոռցեր էր։

— Մօտ եկ, ըսաւ մարքիզուհին։

Մարկրիթ քայլ մ'առաւ։

— Ինչո՞ւ, շարունակեց մարքիզուհին, այդպէս դունատ ես և կը դողաս։

— Տիկին, մրմնջեց Մարկրիթ։

— Խօսէ՛, ըսաւ մարքիզուհին։

— Հօրս մահը ինչ շտահաս, ինչ անակնկալ եղաւ, կմկմաց Մարկրիթ։ Վերջապէս քանի՞ տառապեցայ այս գիշեր։

— Այո՛, այո՛, ըսաւ մարքիզուհին խոր ձայնով մը և Մարկրիթին վրայ գրեթէ փոքր ինչ գորովալիր ակնարկ մը պնդելով, այո՛, նորարոյս ծառը հովն կը ծռի ու տերևները կը թափէ։ Մի միայն հինաւուրց կաղնին ամեն մրրիկներու կը դիմանայ։ Եա՛լ, Մարկրիթ, տառապեցայ, ես ալ սոսկալի գիշեր մ'անցուցի։ Ա՛յլ սակայն կը տեսնես որ անվրդով և անյողդողդ եմ։

— Ստուած ձեզի զօրաւոր և խիստ սիրտ մը տուած է, տիկին, ըսաւ Մարկրիթ. սակայն այդ զօրութիւնն ու խստութիւնը պէտք չէք ուրիշներէն ալ պահանջել։ Ապա թէ ոչ կը խորտակէք զանոնք։

— Ուրեմն, ըսաւ մարքիզուհին ձեռքը սեղանին վրայ ձգելով, քեզմէ մինակ հնազանդութիւն կ'ուզեմ։ Մարկրիթ, մարքիզը մեռաւ. այժմ մեր ընտանիքին գլխաւորը Էմմանուէլն է. հիմակ անմիջապէս Էմմանուէլին հետ Ռէն պիտի երթաս։

— Ե՞ն, գոչեց Մարկրիթ. ե՞ն, Ռէն երթամ, բայց ինչո՞ւ։

— Վասն զի, պատասխանեց մարքիզուհին, ամրոցին մատուռը շատ պզտիկ ըլլալով՝ թէ աղջիկն պսակման և թէ հօրը յուղարկաւորութեան հանդէսը չենք կրնար հոն կատարել։

— Մայր իմ, ըսաւ Մարկրիթ անմեկնելի շեշտով մը, ինձ այնպէս կը թուի թէ բարեպաշտութիւն մը կը գործէք, եթէ այսպիսի երկու հակառակ արարողութիւններու մէջ քիչ մ՚առելի միջոց մը գտնէք։

— Ճշմարիտ բարեպաշտութիւնը, վրայ բերաւ մարքիզուհին, մեռելոց վերջին կամքը կատարելն է։ Դարձուր աչերդ սա դաշնագրոյն վրայ և տես հօրդ անուան առաջին գիրերը։

— Ո՛հ, ձեզ կը հարցնեմ, տիկին, թէ հայրս երբ այդ գիրերը գծեց, զոր մահը եկաւ կիսկատար թողուց, իր ազատ կամքովն էր, խելքը գլուխն էր։

— Ձեմ գիտեր, օրիորդ, պատասխանեց մարքիզուհին այն հրամայական և սառնորակ ձայնով՝ որով մինչև այն տեղն իւր շրջակայ առարկաները նուաձեր էր. չեմ գիտեր, այլ ես սա միայն գիտեմ որ այն ազգումը որով կը շարժէր նա. իրմէ եաքը դեռ ևս ողջ մնայ. ես սա միայն գիտեմ որ ծնողք քանի որ կենդանի են՝ աշխարհիս վրայ զԱստուած կը ներկայացնեն։ Արդ՝ Աստուած ինձի սոսկալի բաներ հրամայեց և ես հնազանդեցայ։ Դու ալ ինձի պէս վարուի՛, օրիորդ, հնազանդի՛։

— Տիկին, ըսաւ Մարկրիթ միշտ կանգուն սակայն այս անգամ անշարժ և գրեթէ մռայլ բնաւորը այն սոսկալի շեշտով՝ զոր արեան հետ ընդունած էր անորմէ. տիկին, երեք օր է, արտասուաթոր աչերով, յուսակտուր սրտով, Էմմանուէլն ոտներէն՝ այն մարդուն և այն մարդին ոտներէն՝ հօրս ոտքը կ՚երթևեկեմ ծնրադիր։ Ոչ ոք չիրցաւ, կամ չուզեց ինձ լսել, վասն զի բուռն փառասիրութիւնը կամ վայրագ յիմարութիւնը հոն էր և իմ ձայնը կ՚արգիլէր։ Վերջապէս ահա ձեր առջև եկայ, մայր իմ։ Դուք էք վերջին անձը որու կարենամ աղաչել, բայց նաև դուք ամենէն աւելի ինձ լսել պէտք էք։ Ուստի աղէկ մտիկ ըրէք ինչ պիտի ըսեմ։ Եթէ ձեր կամքին իմ երջանկութիւնը միայն զոհել հարկ ըլլար՝ կը զոհէի. իմ սէրը՝ դարձեալ կը զոհէի. սակայն հիմակ իմ զոհելիքս . . . իմ որդիս է։ Դուք մայր էք, ես ալ մայր եմ, տիկին։

— Մայր . . . մայր . . . քրթմնջեց մարքիզուհին, մայր . . . սխալումով մը։

— Վերջապէս մայր եմ, տիկին. և մայրական սէրը առանց երբագործութեան ալ սուրբ է։ Լա՛ռ ուրեմն, տիկին, ըսէք, — վասն զի դուք իզմէ աւելի աղէկ գիտնալ պէտք էք այս բաները, — ըսէք, եթէ մեզի կեանք տուողները Աստուծմէ այնպիսի ձայն մ՚ընդունած են որ մեր սրտին կը խօսի՝ անոնք որ մեզնէ ծնունդ առած են նոյնօրինակ ձայն մը չունի՞ն և երբ այս երկու ձայները իրարու դիմախօսեն՝ երկուքէն որի՞ն հնազանդիլ պէտք է։

— Մանկանդ ձայնը բնաւ չպիտի լսես, պատասխանեց մարքիզուհին ըսա որում երբէք պիտի չտեսնես զինքը։

— Երբէք պիտի չտեսնեմ իմ որդին . . . գոչեց Մարկրիթ. բայց ով կրնայ այդ մասին պնդել, տիկին։

— Նոյն ինքն չպիտի գիտնայ թէ ով է։

— Սակայն եթէ օր մը իմանայ . . . . ըսաւ Մարկրիթ, մորը խստութենէն որդիական ակնածութիւնը մոռնալով. և եթէ այն տեղն գայ և իզմէ իւր ծննդեանը վրայ հաշիւ պահանջէ . . . . ։

Այս չըկրնար ըլլալ, տիկին։

Գրիչն առաւ։

— Եւ այս ներհակ պարագայներուն մէջ, ըսէք, պէ՞տք է որ ստորագրեմ։

— Ստորագրէ՛, ըսաւ մարքիզուհին։

— Սակայն, շարայարեց Մարկրիթ իւր կարկամ ու դողդոջուն ձեռքը դաշնագրոյն վրայ դնելով, եթէ իմ ամուսինը այս որդւոյս գոյութիւնն իմանայ, եթէ իմ սիրահարէն իւր անուան բերած արատին համար հատուցում պահանջէ . . . եթէ շարաշրուկ, ատանձին և անվկայ մենամարտի մը մէջ. . . կենաղրաւ մենամարտի մը մէջ. իմ տարփածուն սպանէ և ապա խղճի տագնապէն տանջուելով, դեռեզմանէն ելնող ձայնէ մը հալածուելով՝ խելքը կորսնցնէ։

— Լո՛ւ, ըսաւ մարքիզուհին ահափետ, բայց դեռ ևս չէր գիտեր որ իւր աղջիկը պատահարար՝ թէ չէ անծանօթ յայտարարութիւն մը լսած ըլլալով այդ խօսքերը կ՚արտասանէր, լո՛ւ։

— Ուրեմն միթէ կ՚ուզէք որ, շարունակեց Մարկրիթ որ արդէն շատ խօսած ըլլալով՝ պէտք էր լռել, իմ և իմ միս որդւոյս անունը անարատ և անբասիր պահելու համար խելագարի մը հետ

փակուիմ։ Միթէ կ'ուզէք որ ամն կենդանի էակ իզմէ և անորմէ հեռու պահեմ. երկաթեայ սիրտ մ'ունենամ՝ որ չզգամ, և պղնձեայ աչեր՝ որ չլսեմ։ Միթէ կ'ուզէք որ այրիի պէս, ամուսինս դեռ չմեռած՝ սևեր հագնիմ. . . . Միթէ կ'ուզէք որ մայրս ժամանակէն քսան տարի առաջ Ճերմկին։

— Լռէ, լռէ . . . ընդմիջեց մարքիզուհին այնպիսի ձայնով մը ուր երկիւղը ակներև կըսկսէր սպառնալիքին յաջորդել, լռէ։

— Ուրեմն միթէ կ'ուզէք որ, կրկնեց Մարկրիթ իւր վշտին դառնութենէն յափշտակուելով, միթէ կ'ուզէք որ այս ահաւոր գաղտնիքը զայն պահող անձերուն հետ մեռցնելու համար՝ անոնց մահուան անկողնէն բժիշկն ու քահանայն հեռացնեմ. . . . Վերջապէս միթէ կ'ուզէք որ մէկ հոգեվարէն միւսին քոմն երթամ որպէս զի ես ինքս գոյեմ օրհասականներուն չէ թէ աչքը՝ այլ բերանը . . . .

— Լռէ, ըսաւ մարքիզուհին թեերը գալարելով, յանուն երկնից, լռէ։

— Լաւ ուրեմն, շարայարեց Մարկրիթ. արդ՝ դարձեալ ըսէք որ ստորագրեմ, մայր իմ, և այս ամենը պիտի կատարուի։ Եւ այն ատեն Աստուծոյ անէծքը պիտի լրանայ, և ծնողաց մեղքը մինչև իրենց երրորդ, չորրորդ սերունդի զաւակները պիտի քաշեն։

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, գոչեց մարքիզուհին հեծկլտալով, հերիք չէ՞ այսքան նաւաստութիւն, հերիք չէ՞ այսքան պատիժ։

— Ներեցէք, տիկին, ներեցէք, ըսաւ Մարկրիթ մօրը առաջին արտասուքէն ինքզինքին գալով և ծնկան վրայ իյնալով, ներեցէք, ներեցէք։

— Այո՛, ներեմ, պատասխանեց մարքիզուհին դէպի Մարկրիթին քայլելով, կ'ուզես ներեմ, դու, անողորմ աղջիկ, որ երկնային վրէժխնդրութեան ձեռքէն մարակն առիր և իմ երեսին զարկիր։

— Թողութի՛ւն, գոչեց Մարկրիթ, թողութի՛ւն, չէի գիտեր ինչ կ'ըսէի, մայր իմ։ Դուք գլուխս խելք չձգեցիք։ Ցնորեր էի . . . ։

— Ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, ըսաւ մարքիզուհին երկու ձեռքը ազիկան գլխին վերեր բարձրացնելով, դու իմ դաւկին բերնէն ելած խօսքերը լսեցիր. չեմ իշխեր յուսալ, Աստուած իմ, որ քու ողորմածութիւնը մինչև այն աստիճանի հասնի՝ որ զանոնք մոռնաս. սակայն զայն պատժելու միջոցին՝ յիշէ որ ես զինքը չանիծեցի։

Այն ատեն դէպի դուռը յառաջացաւ. երիտասարդուհին ուզեց զայն կեցնել, բայց մարքիզուհին այնպիսի զարհուրելի դէմքով մը դարձաւ անոր նայեցաւ՝ որ հրամայելու հարկ չմնաց և Մարկրիթ մօրը շրջազգեստին քղանցը ձեռքէն ձգեց թեերը դէպ անոր երկարելով՝ լռիկ սկսաւ հեռալ մինչև որ մարքիզուհին դուրս ելաւ. յետոյ մարքիզուհին տեսնելէ դադրելուն պէս՝ կռնկի վրայ ինկաւ այնպիսի աղէկտուր ճիչ մ'արձակելով, որ կարծես թէ այս սիրտն որ այնքան տառապեր էր, վերջապէս խորտակուեցաւ։

ԺԷ

Մեր ընթերցողները թերևս զարմանան թէ ինչու համար Բոլ ետ ջի օր այնպիսի նախատական կերպով Պ. տը Լէքթուրին մենամարտ կարգալէն ետև՝ կռիւը փոխանակ առաւօտի՝ երեկոյեան ձգեր էին։ Սակայն Վոլթրը տեղակալը որ կոմս տ'Օրէյի հետ մենամարտութեան պայմաններն որոշեց, ինչպէս ըսինք, ամեն տեսակ դիջում ընելու հրաման ունէր իւր գլխաւորէն, 'ի բաց առեալ մէկ բանի. Բոլ երեկոյեան դէմ կռուիլ կ'ուզէր։

Պատճառն այն էր որ թերահաստակ նաւապետը հասկցեր էր զի մինչև որ այս տարօրէն տրամը չլուծէ, որուն մէջ ինքը նախ իրը օտար ոմն խառնուած էր բայց վերջապէս իրը ընտանիքի գլխաւորը կը ներկայանար, իւր կեանքն իրեն չէր վերաբերեր, ուստի զայն վտանգի դնելու իրաւունք չունէր։ Սակայն և այնպէս ինչպէս որ յայտնի է, իւր ուզած այսքան միջոցը շատ կարճ էր և Լէքթուր որ չէր գիտեր թէ ինչ նպատակաւ իւր հակառակորդն այն ժամանակակէտը կը խնդրէր՝ առանց երկար ընդդիմադիմութեան ընդ

դունեց։ Ուստի Բոլ միտքը դրաւ ժամանակը ապարդիւն չանցնել։ Հետևաբար երբ մարքիզուհին քովն երթալու պատեհ ժամն եկաւ, անմիջապէս դէպ ամրոցը գնաց։

Թէ երեկոյեան և թէ ցորեկուան դէպքերը այնպիսի մեծ շփոթ մը պատճառած էին այս շքեղ բնակարանին մէջ՝ զի Բոլի ներս մտած ժամանակ ծառայ մը չկար որ իւր դալուստն իմացնէ. այլ ռակայն սենեակները մտաւ, արդէն երկու անգամ անցած ճամբայէն գնաց և երբ սրահին դուռը հասաւ՝ Մարկրիթը գետինը դտաւ շնչասպառ։

Բոլ սեղանին վրայ եղած դաշնագիրը ճմռռ ճմռռ և իւր քիչը զգայաղուրկ տեսնելով՝ առանց դժուարութեան դուշակեց որ նորէն աւելի սարսափելի տեսարան մը տեղի ունեցած էր մօրը և աղջկան մէջ։ Քրոջը քով գնաց, զայն գրկեց և պատուհանը բացաւ որ քիչ մը հով առնէ։ Մարկրիթ իսկապէս շնչաղեր էր. այլ ուժաթափ եղած էր։ Ուստի երբ զգաց զի իրեն օգնող անձը այնպիսի փոյթ մը կը տանէր, որ անոր զգացմանց մասին ամէն կասկած կրնար փարատել, աչերը բացաւ և ճանչեց իւր եղբայրը, այն կենդանի նախախնամութիւնը՝ զոր Աստուած իրեն օգնութեան կը զրկէր ամէն անգամ որ կ՚ընկճէր։

Մարկրիթ անոր պատմեց թէ ինչպէս մայրը այն դաշնագիրը ստորագրելու ստիպեր էր, որպէս զի զինքը եղբօրը հետ իւր քովէն հեռացնէ և թէ ինչպէս ինքը իւր սրտին ցաւին չդիմանալով և իւր դատուած վիճակէն դրդուելով՝ կերպով մ՚անոր յայտներ էր որ ամէն ինչ դիտէ։ Բոլ հասկցաւ թէ նոյն միջոցին մարքիզուհին որպէս ինչպէս պէտք էր անցնիլ, վասն զի քսան տարի լուռ և առանձին մնալէ ու ամէն վիշտ կրելէ ետև՝ կը տեսնէր որ վերջապէս իւր դաղտնիքը յայտնուած է այն երկու անձերէն մէկուն, որոնցմէ ամենէն աւելի պահել կը պահանջէր իւր անձնական շահը։ Ուստի մօրը տառապանաց վրայ սիրտը շարժեցաւ և միտքը դրաւ անմիջապէս դարման մը դտնել ժամ առաջ անոր հետ տեսնուելով։ Նապոլեոն արդէն այս տեսութեան համար եկած էր, որով մարքիզուհին լոյս պիտի առնէր այն որդւոյն խորհուրդներուն վրայ որու մերաղարձը անազդեցիկ գործելու համար ամէն

ձիգ թափեր էր։ Մարկրիթ ալ արդէն իւր մօրմէն թողութիւն խնդրելու պիտի երթար, ուստի ինքը գնաց անոր իմացնել որ Բոլ իւր հրամանին կրսպասէ։

Բոլ մինակ մնաց, բարձր վառարանին կոթնեցաւ որուն վրայ իւր ընտանիքին կնիքը կար քանդակուած. և այն ինչ սկսաւ այն անընդհատ և յոգնադիմի դէպքերուն վրայ խորհիլ, որով ինք ամբողջ այս տան բարձրագոյն իրաւարարը եղած էր՝ յանկարծ կողմնակի դուռը բացուելով Էմմանուէլ երևցաւ ձեռքը հրացանակով լեցուն տուփ մը բռնած։ Բոլ այն կողմը դարձուց իւր աչերը և երբ երիտասարդը տեսաւ՝ դլուխը ծռելով զանի բարևեց այն ասնուշ և եղբայրսիրական դէմքով, որու վրայ կը փայլէր հոգւոյն անջինջ քաղցրութիւնը։ Իսկ ընդհակառակն Էմմանուէլ այս ողջոյնին ըստ սպասուածի պատասխանելէն ետքը՝ խսկոյն իւր երեսին վրայ երևցաւ այն հակակրական զգացումը զոր կը պատճառէր իրեն իրը մասնաւոր և ոխերիմ թշնամի նկատած անձին ներկայութիւնը։

— Ես ալ ձեզ կը փնտռէի, պարոն, ըսաւ Էմմանուէլ տարտանակները սեղանին վրայ դնելով և Բոլին քովէն քիչ մը հեռու կենալով. սակայն աղէկ չէի դիտեր թէ ուր կը դտնուիք. վասն զի դուք մեր ռամկական տանդուութիւններու ոդիներուն պէս, կարծէք թէ ամէն կողմ դտնուելու բնատուր յատկութիւնն ունիք, առանց երբեք մէկ տեղ ըլլալու։ Վերջապէս սպասաւորին մէկը զիս հաւատաց որ ձեր ամրոցը մտնելը տեսեր է։ Շնորհակալ եմ որ մինչդեռ ես ձեզի պիտի դայի, դուք այս անդամ ես ինձ հանդիպելով՝ այս ծանրութիւնը խնայեցիք ինձ։

— Բարեբաղդ եմ, պատասխանեց Բոլ, որ այս պարագայիս մէջ իմ փափաքը թէև տարբեր պատճառներէ ծագում առած՝ սակայն ձերինին համաձայն դտնուած է։ Արդ՝ ըսէք, ինչ կ՚ուզէք։

— Ձեզ հանդիպիլ, պարոն, պատասխանեց Էմմանուէլ առնցուն այրայլութեամբ։ Ըսել է որ, և ներեցէք եթէ զարմանքս կը տանի շատ սխալ կը ճանչէք աղատորդի մը և պաշտօնակալի մը պարտաւորութիւնները և ասով նոր նախատինք մ՚ըրած կ՚ըլլաք ինձ։

— Հաւատացէք, Էմմանուէլ, յարեց Բոլ հանդարտ ձայնով մը . . . .

— Երէկ անունս կոմս էր, իսկ այսօր մարքիզ տ՚Օրէյ է, ընդմիջեց Էմմանուէլ վէս և քամահրելի շարժումով մը. մի մոռնաք, պարոն, կ՚աղաչեմ։

Բոլի շրթերուն վրայ դրեթէ անշմարելի քրքիջ մը փայլեցաւ։

— Արդ՝ ըսի որ, շարունակեց Էմմանուէլ, շատ սխալ կը ճանչէք ազատորդիի մը զգացումները՝ եթէ հաւատացիք որ ուրիշի թողլ կուտամ կատարել այն կռիւը զոր դուք ուզեցիք։ Այո՛, պարոն, վասն զի ես ձեզի չփնտռեցի՝ այլ դուք եկաք դիմացս անկուեցաք։

— Պ. մարքիզ տ՚Օրէյը, ըսաւ Բոլ ժպտելով, կը մոռնայ Էնպիէն նաւն ըրած այցը։

— Ճարտարարանութիւն չուզեր, պարոն. սա խնդիրը նայինք։ Երէկ երբ ես ձեզի մենամարտ առաջարկեցի՝ դուք չգիտեմ ինչ տարօրինակ և անմեկնելի զգացումով մը մերժեցիք, մինչդեռ չեմ ըսեր թէ ազատորդի մը, պաշտօնական մը, այլ պարզապէս զգացում ունեցող որևիցէ անհատ մը առանց տատամսելու կ՚ընդունի։ Դուք իմ առաջարկութիւնը փոխելով՝ դացիք իզմէ դուրս ուրիշ հակառակորդ մը գտաք. իրաւ այն ալ ոչ կռիւին մէջ օտար չհամարուիր, սակայն բարեվարութիւնը կ՚արգիլէ անոր խառնուիլ։

— Հաւատացէք որ այս պարագային մէջ, պարոն, պատասխանեց Բոլ մինչև այն տեղն ցոյց տուած մտքի հանդարտութեամբ և ազատութեամբ, այնպիսի պահանջումներու կը հնազանդէի որ ոչ հակառակորդի մը ընտրութիւնը ինձ չէին թողուր։ Դուք մանաւանդ մ՚առաջարկեցիք ինձ. ես չէի կրնար ձեզի հետ կռուիլ, քայց ուրիշ որևիցէ անձի համար հոգս չէր։ Ես մենամարտութիւն շատ տեսած եմ, և այնպիսի զարհուրելի ու մահաւոր մենամարտութիւններ՝ որ սասկ գործ մը իմ արկածալի կենաց մէջ հասարակ դիպուած մը կ՚երևի ինձ։ Մի միայն սա յիշեցէք որ այս կռիւը ես չուզեցի՝ այլ դուք առաջարկեցիք. և ես, նորէն կ՚ըսեմ, ձեզի հետ կռուիլ չուզելով՝ Պ. տը Լէքթուրը ընտրեցի ինչպէս կրնայի ընտրել Պ. տը Նոշէյը կամ Պ. տը Լաժարին, վասն զի ընտրեր ալ հոն, իմ մօտս, իմ ձեռքիս տակն էին. և քանի որ

անպատճառ մէկը սպաննել հարկ էր՝ աւելի աղէկ ընտրեցի անշահ և լիրբ թեթևսօլիկ մը մոռցնել, քան թէ բարեմոյն և արդարախոհ գիւղաքնակ ազատորդի մը, որ իրեն նախատինք կը համարի մտքէն անգամ անցունել այն ամօթալի սակին գործադրութիւնը, զոր իրօք պարոն տը Լէքթուրը ձեզ կ՚առաջարկէ։

— Լա՛ւ, պարոն, ըսաւ Էմմանուէլ ծիծաղելով, շարունակեցէք անոր ասոր յանցանքները ուղղել, նկուն իշխանուհիներու ասպետ հանդիսանալով և ձեր խորհրդաւոր խօսքերուն ցնորական վահանին ետևը պատսպարիլ։ Մինչև որ այս հինօրեայ տօն—քիշոթականութիւնը իմ փափաքներուն, իմ նկատումներուն, իմ խոստումներուն չգայ չդարնուի՝ կը թողում որ ծով ու ցամաք շրջի և մէկ բեռուէ միւսն երթայ. և ես անոր անցնելու ատենը մի միայն կը ծիծաղիմ։ Սակայն երբ այդ թեթևամտութիւնը, պարոն, ձերինին պէս ինձի դէմ յարձակի, երբ իմ ընտանիքին մէջ անծանօթ մը գտնեմ որ բոր տէր կը հրամայէ այն տեղ ուր ես միայն բարձրաձայն խօսելու իշխանութիւն ունիմ՝ անոր քովը կ՚երթամ, ինչպէս ձեր քովն եկայ, և հոն ապահով ըլլալով որ մարդ չկրնար գալ, անհրաժեշտ բացատրութիւն մ՚ընդմիջել, անոր կ՚ըսեմ. «Դուք եթէ զիս չնախատեցիք՝ դէթ սիրտս վիրաւորեցիք, պարոն, իմ տունս գալով և իմ ընտանեկան նկատումներու ու սիրոյ մէջ ինձ դիմադրելով։ Արդ՝ պէտք էր ինձի և չէ թէ ուրիշին հետ կռուիլ և պիտի կռուիք»։

— Կը սխալիք, Էմմանուէլ, պատասխանեց Բոլ. դէթ ձեզի հետ չպիտի կռուիմ։ Անկարելի բան է։

— Աղէ՛, պարոն, առասպելներու ժամանակն անցաւ, դուշեց Էմմանուէլ համբերութիւնը հատնելով. հիմակ այնպիսի ընկերութեան մը մէջ կ՚ապրինք ուր մեն մի քայլին իրականութեան մը կը զարնենք մեր ոտքը։ Այդ խորհրդաւոր ու բանաստեղծական խօսքերը վիպասաններուն և ողբերգուներուն ձգեցէք։ Այս ամրոցին մէջ ձեր ներկայութիւնը այնպիսի աղէտաբեր պարագաներով նշանակուեցաւ, որ հարկ չկայ արդէն չեղածը եղածին վրայ աւելցնել։ Լիւսինեան իր աքսորի դատավճռոյն հակառակ՝ վերադարձաւ. քոյրս առաջին անգամ մօրն հրամաններն անսասանեց. հայրս

մի միայն ձեղ տեսնելով մեռա. տհաւասիկ ձեղ ընկերացող ա-
դէտները որոնք աշխարհիս միւս ծայրէն ձեղի հետ եկան յուզար-
կաւորութեան թափորի պէս և դուք ասոնց հաշիւը պիտի տաք ինձ։
Ուստի, խօսեցէք, պարոն. իբր մարդ՝ մարդու խօսեցէք. լոյսին
մէջ և երես երեսի խօսեցէք ու չէ թէ ուրուականի պէս որ բսա-
ուերին մէջ կը սպրդի ու մութին շնորհիւ խոյս կուտայ՝ բերանէն
միւս աշխարհի մի քանի մարդարէական և հանդիսաւոր բառեր հա-
նելով, որոնք ստնտուները և մանուկները կրնան ալէկ ահարեկել։
Խօսեցէք, պարոն, խօսեցէք։ Նայեցէք, նայեցէք, ես հանդարտ
եմ։ Եթէ յայտարարութիւն մ'ունիք, ըսէք, մտիկ կ'ընեմ։

— Ձեր հարցուցած գաղտնիքը ինձ չվերաբերիր, պատասխանեց
Բոլ որուն հանդարտութիւնը Էմմանուէլի բորբոքման կը հակառա-
կէր։ Հաւատացէք ինչ որ կ'ըսեմ և ալ մի սպդէք։ Մնաք բարև։

Այս խօսքերուն վրայ Բոլ շարժում մ'ըրաւ մեկնելու համար։

— Ա՛հ, դուշեց Էմմանուէլ դէպի դուռը ցատկելով և ճամբան
գոցելով, այդպէս դուրս չպիտի ելնէք. պարոն։ Այս սենեկին մէջ
դուք և ես մինակ ենք. ես ձեղ հոս չբերի՝ այլ դուք եկաք։ Ա-
ղէկ մտիկ ըրէք ինչ պիտի ըսեմ։ Այն որ նախատեցիք, ես եմ.
այն որու հատուցում ընել կը պարտաւորիք, ես եմ. այն որու
հետ պիտի կռուիք, ես . . . ։

— Խե՞նթ էք, պարոն, պատասխանեց Բոլ. արդէն ըսի որ ան-
կարելի է։ Թող տուէք ուրեմն որ դուրս ելնեմ։

— Զդուշացէք, դուշեց Էմմանուէլ ձեռքը դէպի տուփը երկա-
րելով և անոր մէջի երկու հրացանակներն առնելով, զդուշացիք,
պարոն։ Ձեղ իբր աղատորդի վարուիլ հարկադրելու համար ա-
մեն ջան 'ի գործ դնելէ ետև՝ կրնամ աւազակի տեղ դնել։ Այս
տունը ուր կը գտնուիք ձեղ օտար է. չեմ գիտեր ոչ ինչու և ոչ
ինչպէս ներս մտաք. եթէ մեր ոսկին ու գոհարեղէնները յափշտա-
կելու չեկաք՝ ուրեմն գաւակի մը առ իւր մայրն ունեցած հնազան-
դութիւնը, և բարեկամի մը առ իւր բարեկամն տուած նուիրական
խօսքը գողնալու եկաք։ Այս երկու պարագային մէջ ալ յափշտա-
կիչ մ'էք, զոր կը ձերբակալեմ նոյն միջոցին որ ձեռք կը դնէք
դանձի մը, պատուոյ դանձի մը վրայ, որ ամենէն անգինն է։ Ահա՛

ինչպէս չեմ ըներ, առէք սա զէնքը . . . — Էմմանուէլ հրացա-
նակին մէկը Բոլին ոտքը նետեց. — և պաշտպանեցէք ինքզինքնիդ։

— Դրնաք զիս սպաննել, պարոն, պատասխանեց Բոլ նորէն վա-
ռարանին կոթնելով որպէս թէ սովորական խօսակցութիւն մը կը
շարունակէր, թէև չեմ յուսար որ Աստուած այսպիսի մեծ յան-
ցանքի մը թողութիւն տայ. սակայն չպիտի կրնաք զիս ձեղի հետ
կռուելու ստիպել։ Ձեղի ըսի և նորէն կը կրկնեմ։

— Առէք սա ատրճանակը, պարոն, ըսաւ Էմմանուէլ, առէք
կ'ըսեմ։ Եթէ կը կարծէք թէ փուճ սպառնալիք մը կ'ընեմ՝ գիտ-
նաք որ կը սխալիք։ Երեք օր է համբերութիւնս հատցուցիք. Ե-
րեք օր է սիրոս հեռ և ատելութիւն լեցուցիք, վերջապէս երեք
օր է ընտելացայ այն ամեն խորհուրդներուն որով կրնամ ձեզմէ
ազատիլ. կամ կռուինք, կամ սպաննեմ։ Մի կարծէք թէ պատ-
ժոյ երկիւղը զիս կ'արգիլէ. այս ամրոցը մեկուսի է, ոչ լեղու ու-
նի ոչ ականջ։ Ահա ծովը, և դուք դեռ գերեզման չգրուած՝ ես
Անգղնա կը հասնիմ։ Ուստի, պարոն, վերջին անգամ, վերջապէս
անգամ, կ'ըսեմ. առէք սա հրացանակը և պաշտպանեցէք ինքզինք-
նիդ։

Բոլ առանց պատասխանելու ուսերը վեր վերցուց և ոտքով ա-
տրճանակը անդին հրեց։

— Լաւ ուրեմն, ըսաւ Էմմանուէլ իւր հակառակորդին պաղա-
բիւնութենէն յետին աստիճան կատղելով, քանի որ մարդու պէս
ինքզինքդ պաշտպանել չես ուզեր, սատկէ՛ ուրեմն շան պէս։

Եւ հրացանակը վեր վերցուց նաւապետին կուրծքին բարձրու-
թեամբը։

Նոյն միջոցին սոսկալի ճիչ մը լսուեցաւ դրան առջև. Մար-
կրիթն էր որ կուգար և մէկ ակնարկով ամեն ինչ հասկցեր էր։
Մեկէն Էմմանուէլի վրայ վազեց։ Միևնոյն պահուն գնդակը մեկ-
նեցաւ, սակայն օրիորդին ըրած գործողը շեղելով՝ Բոլին գլխին
երկու երեք մատ վերէն անցաւ և գնաց անոր ետևի վառարանին
հայելին կոտրեց։

— Եղբայր իմ, դուշեց Մարկրիթ մէկ ոտիւնով մինչև Բոլին քո-
վը ցատկելով և անոր փարելով, եղբայր իմ, վիրաւորուեցա՞ր։

— Եղբայրդ, ըսաւ Էմմանուէլ ձեռքի ատրճանակը վար ձգելով որ դեռ ևս կը մխէր։ Եղբայրդ։

— Լաւ ուրեմն, Էմմանուէլ, ըսաւ Բոլ այս տեսարանին սկիզբէն 'ի վեր ցոյց տուած հանդարտութեամբը, հիմակ հասկցաք թէ ինչու համար ձեզի հետ չէի կրնար կռուիլ։

Նոյն պահուն Մարքիզուհին դուռն երևնալով շեմին վրայ կանգ առաւ ճիւաղի պէս դունաթափ. ապա անհնարին սարսափի դէմքով իւր շուրջը նայելով և տեսնելով որ վիրաւոր չկար, լռելեայն աչերը դէպ երկինք վերցուց, իբր թէ անոր հարցնելու համար որ վերջապէս իւր բարկութիւնը ի՞նչ։ Մէկ ատեն այսպէս կեցաւ մտովին շնորհակալ ըլլալով Աստուծոյ։ Երբ աչերը վար առաւ, Էմմանուէլ և Մարկրիթ իւր ուրախ ինկած էին և անձնիւրը ձեռքը կը համբուրէր արտասուալին։

— Շնորհակալ եմ, որդեակք իմ, ըսաւ մարքիզուհին պահ մը լուռ կենալէ ետև. հիմակ զիս այս երիտասարդին հետ միայնակ թողէք։

Մարկրիթ և Էմմանուէլ խորին յարգական նշանով ծռուեցան և իրենց մօրը հրամանին հնազանդեցան։

ԺԸ

Մարքիզուհին անոնց ետևէն դուռը գոցեց. սենեակին մէջ քանի մը քայլ առաւ և առանց Բոլին նայելու՝ գնաց այն թիկնաթոռին կռթնեցաւ, ուր առջի օրը մարքիզը նստեր էր դաշնագիրը ստորագրելու համար։ Հոն ոտքի վրայ կեցաւ ակնկոր։ Բոլ պահ մը փափաքեցաւ անոր առջևն երթալ ընդդիմել. բայց այս կնկան կերպարանին վրայ այնպիսի դժնէութիւն մը կար որ իւր որդին սրտին խանդը զսպեց և անշարժ կեցաւ սպասեց։ Մարքիզուհին պահ մը սառնորակ լռութիւն մը պահելէ ետքը՝ բերանը բացաւ.

— Պարոն, ըսաւ անոր, զիս տեսնել փափաքեցար, ես ալ եկայ. ինձի հետ խօսիլ ուզեցիր, ուրեմն ըսէ՛ նայիմ։

Մարքիզուհին առանց շարժում մ'ընելու՝ այս խօսքերը արտասանեց։ Իւր շրթունքն աւելի դողացին՝ քան թէ բացուեցան։ Կարծես թէ արձան մ'էր որ կը խօսէր։

— Այո՛, տիկին, պատասխանեց Բոլ արտասուալիր շեշտով մը. այո՛, այո՛, փափաքեցայ ձեզի հետ խօսիլ. արդէն շատ ատեն կայ՝ երբ առաջին անգամ այս փափաքը զդացի և այն ժամանակէն 'ի վեր սրտէս չելաւ։ Մանկական յիշատակներ ունէի որոնք մարդը կը նեղէին։ Կը յիշէի կին մը որ երբեմն մինչև իմ օրորոցը սպրդեր էր. թէև տարիներ անցաւ սակայն այս յիշատակը դեռ ևս մտքիս մէջ կենդանի մնացած է։ Իմ երիտասարդական երազներուն մէջ իբր իմ պատանեկութեան պահապան հրեշտակը կը նկատէի զայն։ Այն պտենէն 'ի վեր, տիկին, քանի՛ քանի՛ անգամ դողալով քունէս արթնցած եմ, որպէս թէ մայրական համբոյրի մը ազդեցութիւնը զգալով Ճակտիս վրայ. ապա քովս մարդ մը չտեսնելով՝ այն կինը կանչած եմ, կարծելով թէ հեռացած է և իմ ձայնին ետ կը դառնայ։ Ահա այսպէս քսան տարիէ 'ի վեր զանի կը կանչեմ, տիկին, և այս առաջին անգամն է որ ինձ կը պատասխանէ։ Միթէ իրաւ, ինչպէս սակայ սարսուռ պատճառած է ինձ, դուք զիս տեսած ատենդ դող կ'ելնէք. միթէ իրաւ, ինչպէս որ այս ժամուս կը կասկածիմ, ինձ ըսելիք մը չունիք։

— Բայց եթէ քու վերադարձէն վախնայի, ըսաւ մարքիզուհին սուղ ձայնով մը, իրաւունք չունէի։ Մինակ երեկ տեսայ քեզի, պարոն, և ահա այն ահաւոր դաղտնիքը, զոր այս ժամուս մի միայն Աստուած ու ես պիտի գիտնայինք, զաւակներս ալ իմացան։

— Միթէ յանցանքդ ինձ է, գոչեց Բոլ, եթէ Աստուած զայն անոնց յայտնել ուզեց։ Միթէ ես Մարկրիթը լալով և դողալով, օրհասական հօրը քովը տարի, որուն օգնութիւնը պիտի խնդրէր և խոստովանութիւնը լսեց։ Միթէ ես զանի Աշարին տունը տարի. և դուք չ'ի՞նք, տիկին, որ անոր ետևէն եկաք։ Իսկ Էմմանուէլին գալով՝ կ'ըսեմ որ, ձեր լսած հրացանին ձայնը և սա կոտրած հայելին կը հաստատեն որ աւելի աւէկ ունէի մեռնիլ՝ քան թէ իմ կեանքս ազատել ձեր գաղտնիքն երևան հանելով։ Ո՛չ, ո՛չ, հաստատեցէք, տիկին, ես գործին եմ և չէ թէ ձեռքը. արդիւնքն եմ

և չէ թէ կամքը։ Ո՛չ, տիկին, Աստուած իւր անհուն նախախնամութեամբը ուղղեց ամեն ինչ, որպէս զի ձեր ոտքն խնայեն, ինչպէս հիմակ տեսաք, ձեր երկու զաւակները զոր այնքան երկար ժամանակէ 'ի վեր ձեր դիրկէն հեռու պահեցիք։

— Սակայն երրորդ մ'ալ ունիմ, ըսաւ մարքիզուհին այնպիսի ձայնով մը ուր փոքր ինչ այլայլութիւն կրսկսէր թափանցել, և չեմ դիտեր թէ ինչ սպասել պէտք է անորմէ . . . ։

— Նա վերջին պարագայ մ'ունի, տիկին, թող տուէք որ կատարէ զայն և ահա այն ատեն ծնրադիր ձեր հրամանները պիտի խնդրէ։

— Ի՞նչ է այդ պարտաւորութիւնը, հարցուց մարքիզուհին։

— Այս պարագան է՝ տալ իւր եղբօրը այն աստիճանը որ իւր իրաւունքն է, իւր քրոջն այն բարեբաստութիւնը զոր կորսնցուցած է, իւր մօրը այն հանգստութիւնը զոր կը խնդրէ բայց չկրնար գտնել։

— Սակայն, վրայ բերաւ մարքիզուհին զարմանահար, քու շնորհիւդ Պ. տը Մորբրա մերժեց տալ այն դունդը զոր Պ. տը Լէքթուր որդւոյս համար կը խնդրէր։

— Վասն զի, ըսաւ Բոլ դրպանէն հրամանագիրը հանելով և զայն սեղանին վրայ դնելով, վասն զի թագաւորը զայն ինձի տուեր էր եղբօրս համար։

Մարքիզուհին աչերն անոր վրայ սևեռեց և ստուգիւ Էմմանուէլի անունը տեսաւ։

— Սակայն, շարայարեց նէ, միթէ կ'ուզէք Մարկրիթը այնպիսի անձի մը տալ որ ոչ անուն ունի, ոչ հարստութիւն . . . և որ աւելի դէշն է, տարագիր է։

— Կը սխալիք, տիկին, ես Մարկրիթը այն անձին տալ կ'ուզեմ զոր ինք կը սիրէ. ես Մարկրիթը չէ թէ տարագիր Լիւսինեանի այլ մեծ. պարոն Անաթոլ տը Լիւսինեանի տալ կ'ուզեմ, որ Նորին Վեհափառութեան կողմէն Կուատալուբայի կառավարիչ է։ Ահա այս է իւր պաշտօնը։

Մարքիզուհին կրկին ակնարկ մը նետեց յետկարին վրայ և առջի անգամին պէս տեսաւ զի Բոլին ըսածը սուտ չէր։

— Այո՛, կը խոստովանիմ, ըսաւ նա, որ՞այդ՞դէշ չէ թէ Էմմանուէլի փառասիրութեան և թէ Մարկրիթի երջանկութեան համար։

— Եւ միանգամայն ձեր հանգստութեան համար, տիկին, ձեր, վասն զի ասով Էմմանուէլ իւր դունդին կ'ընկերանայ, Մարկրիթ ամուսնոյն քովը կ'երթայ, իսկ դուք միայնակ կը մնաք. բարէ, ինչպէս որ քանիցս փափաքած էք։ — Մարքիզուհին հառաչ մը արձակեց։ — Այսպէս չէ՞, տիկին, բայց միթէ կը սխալիմ, շարունակեց Բոլ։

— Սակայն, քրմանջեց մարքիզուհին, պարոն տը Լէքթուրի ձեռքէն ինչպէս ազատիմ։

— Մարքիզը մեռաւ, տիկին։ Ամուսնոյ մը, հօր մը մահը՝ ամուսնութիւնը երկարաձգելու համար բաւական զօրաւոր պատճառ մը չէ։

Մարքիզուհին պատասխան չտուաւ, այլ սթոռին վրայ նստաւ։ դրիչ մը ու թուղթ առաւ, քանի մը տող բան գրեց, նամակը ծալելց և վրան Պ. տը Լէքթուրի հասցէն գրաւ։ Հնչակին ձայնով սպասաւոր մը կանչեց։ Քանի մը վայրկեան Բոլ և ինքը լռակաց սպասեցին. ապա ծառայ մը երևցաւ։

— Մինչև երկու ժամ, այս նամակը Պ. տը Լէքթուրին յանձնեա, ըսաւ նէ։

Սպասաւորը նամակն առաւ և դուրս ելաւ։

— Հիմակ, շարայարեց մարքիզուհին Բոլին երեսը նայելով, հիմակ, պարոն, որ անմեղներուն իրաւունքը տեղը բերիր, յանցաւորին ալ թողութիւն տուր։ Դու քու ծնունդը հաստատող թուղթեր ունիս. դու անդրանիկ ես. դէթ ըստ օրինի Էմմանուէլի և Մարկրիթի անուան և հարստութեան վրայ իրաւունք ունիս։ Այդ թուղթերուն փոխարէն ինչ կ'ուզես։

Բոլ զանոնք դրպանէն հանեց և վառարանին կրակին վերեւը բռնեց։

— Թոյլ տուէք որ մէկ անգամ միայն ես ձեզ մայր կոչեմ և դուք ալ զիս որդեակ կանչեցէք։

— Մինթէ կարելի է, գոչեց մարքիզուհին ոտք ելնելով։

— Դուք՝ աստիճանի, անունի, հարստութեան խօսքեր կ՚ընէք ինձ, շարայարեց Բոլ խորին թախծութեան դէմքով մը գլուխը ցնցելով. բարէ, ես ի՞նչ պէտք ունիմ այդ բաներէն։ Այնպիսի աստիճան մը յօրինած եմ ես ինձ, որու ինձ հասակակից շատ քիչ մարդ հասած է. այնպիսի անուն մը ստանձնած եմ, զոր ժողովուրդ մը կ՚օրհնէ իսկ ուրիշ մը կը սարսափի անկէ. եթէ ուզեմ՝ կրնամ թագաւորի մը կտակելու չափ հարստութիւն դիզել։ Ի՞նչ ընեմ ուրեմն ձեր անունը, ձեր հարստութիւնը՝ եթէ ուրիշ բան մը չունիք ինձ ընծայելու, եթէ չէք տար ինձ այն բանը որմէ միշտ և ամեն ուրեք զրկուած եմ, այն բանը զոր ես չեմ կրնար ստեղծել, զոր Աստուած ինձ շնորհեր էր և դժբաղդութիւնը ձեռքէս առաւ . . . այն բանը զոր դուք միայն կրնաք նորէն ինձ տալ . . . մայր մը։

— Ո՛ղբեակ իմ, գոչեց մարքիզուհին այս շեշտին ու արտասուքներուն չդիմանալով, օ՛ղբեակ իմ. . . օ՛ղբեակ իմ. . . օ՛ղբեակ իմ։

— Ո՛հ, գոչեց Բոլ թուղթերը կրակին մէջ ձգելով որ անմիջապէս զանոնք լափեց, օ՛հ, վերջապէս ահա սրտէդ ելաւ այն ճիշը զոր ես կըսպասէի, կը խնդրէի ու կը հայցէի. փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ։

Մարքիզուհին նորէն աթոռին վրայ ինկաւ նստուկ. Բոլ անոր առջևը ծնկան վրայ եկաւ՝ ճակատը մինչև յանջը ծռելով։ Վերջապէս մարքիզուհին անոր գլուխը վեր վերցուց։

— Ինձ նայէ, ըսաւ անոր։ Քսան տարի է ահա առաջին անգամ արտասուք կը հոսի աչքէս։ Ձեռքդ ինձի տուր։ — Զայն կուրծքին վրայ դրաւ։ — Քսան տարի է ահա առաջին անգամ ուրախութեան զղացում մը սիրտս կը բարախէ . . . Եկու գրկեմ քեզ. . . : Քսան տարի է ահա առաջին գոտանքը զոր կուտամ ու կ՚ընդունիմ. . . : Այս քսան տարուան միջոցին անշուշտ իմ ապաշխարանքս է, վասն զի ահա Աստուած ինձ կուտայ, կը շնորհէ արտասուք, ուրախութիւն, փայփայանք . . . : Շնորհակալ եմ, Աստուած իմ. . . շնորհակալ, որդեակ իմ. . . :

— Մա՛յր իմ, ըսաւ Բոլ։

— Եւ ես զինքը տեսնելու կը դողայի. երբ իրեն հանդիպէ՛ սարսուռ կըզգայի։ Չէի ճանչեր, ես . . . չէի գիտեր թէ ինչ զգացումներ կը նիրհեն իմ յատուկ սրտին մէջ։ Ո՛հ, օրհնեա՛լ ըլլաս, օրհնեա՛լ ըլլաս . . . :

Նոյն պահուն մատուռին զանգակը հնչեց։ Մարքիզուհին դող եկաւ։ Ցուղարկաւորութեան ժամը հասեր էր։ Աղնուական տ՚Օրէյ մարքիզին մարմինը խեղճ Աշարլինին հետ միասին հողը պիտի դրուէր։ Մարքիզուհին ոտք եկաւ։

— Այս ժամս պէտք է աղօթքի նուիրել, ըսաւ։ Ես կ՚երթամ,

— Ես վաղը պիտի մնկնիմ, մայր իմ, ըսաւ անոր Բոլ։ Նորէն ալ պիտի չտեսնուինք . . . :

— Ա՛հ, այո՛, այո՛, գոչեց մարքիզուհին։ Ա՛հ, քեզ նորէն տեսնել կ՚ուզեմ։

— Լա՛ ուրեմն, մայր իմ, այս իրիկուն գարաստին դուռը կուգամ։ Այն վայրը ինձի համար նուիրական է, ուստի հոն վերջին այց մը պիտի ընեմ և ձեզ կրսպասեմ։ Արդ՝ հոն տեղ, մայր իմ, մեր վերջին հրաժեշտը կուտանք իրարու։

— Կուգամ, ըսաւ մարքիզուհին։

— Ահա՛, ըսաւ Բոլ, ահա՛ մայր իմ, առէ՛ք սա յետակարը և արտօնագիրը։ Մէկը Էմմանուէլին՝ իսկ միւսը Մարկրիթին ամուսնոյն համար է։ Ձեր զաւակներուն երջանկութեան պատճառ թող դուք ըլլաք։ Հաւատացէ՛ք, մայր իմ, որ ամենէն շատ ինձ բարեբաղդութիւն տուիք։

Մարքիզուհին իւր աղօթատունը գնաց փակուեցաւ. Բոլ ամրոցէն դուրս ելաւ և դէպի ձկնորսին հիւղը յառաջացաւ, ուր ինչպէս արդէն տեսանք անգամ մը գացած էր և որու մօտը Լէքթուրի հետ ժամադիր եղած էր։ Լիւսինեան Վոլթերը հոն գտաւ։

Մենամարտութեան որոշեալ ժամուն՝ Լէքթուր ձի մը հեծած երևցաւ. կարելի եղածին չափ ուշադրութեամբ չորս դին կը քննէր՝ ժամադրութեան տեղը գտնելու համար, վասն զի առաջնորդ չունէր և այն տեղերը ինչպէս իրեն՝ նոյնպէս և իւր հետի ձիաւոր սպասիկին անծանօթ էին։ Երիտասարդները երբ զանի տեսան խրճիթին դուրս ելան։ Պարոնը զանոնք նշմարեց և ձին տղղակի

դէպ անոնց ուղղեց։ Երբ բաւական մօտեցաւ՝ ձիէն վար իջաւ և սանձը ծառային թեւին վրայ նետեց։

— Ներեցէք, պարոնայք, ըսաւ իրեն սպասող անձերուն մօտենալով, ներեցէք որ այսպէս մինակ և չքաւոր անձի մը պէս եկայ։ Սակայն պարոնին, — Բոլին առջև խոնարհեցաւ որ անոր ողջոյնը ընդունեց, — որոշած ժամը Հիշդ մարքիզին յուղարկաւորութեան հանդիսին ժամանակն էր, ուստի Էմմանուէլը ձգեցի իւր որդիական պարտաւորութիւնները կատարել և ես առանց վկայի եկայ՝ յուսալով զի իմ դիմացինս այնպիսի առատաշնորհ հակառակորդ մ'է, որ իւր վկայներէն մէկն ինձ կուտայ։

— Ձեր հրամանին կըսպասենք, մեծ. պարոն, պատասխանեց Բոլ. ահա իմ երկու վկայներս։ Ընտրեցէք և այն որու ընտրելու պատիւ ընէք՝ անմիջապէս ձերը կ'ըլլայ։

— Ինձի համար երկուքն ալ միևնոյնն են, պարոն, պատասխանեց Լէքթուր. ուստի գուք ցոյց տուէք թէ այս երկու պարոններէն որին կը ձգէք այդ ծառայութիւնը։

— Վոլթըր, ըսաւ Բոլ, մեծ. պարոնին կողմը անցէք։

Տեղապահը հնազանդեցաւ. երկու հակառակորդները կրկին անգամ զիրար ողջունեցին։

— Հիմակ, պարոն, շարայարեց Բոլ, ներեցէք որ մեր երկու վկայներուն առջև ձեզի քանի մը խօսքեր ըսեմ, որով չէ թէ ներում խնդրել՝ այլ միտքս յայտնել կ'ուզեմ։

— Խօսեցէք, պարոն, ըսաւ Լէքթուր։

— Երբ ես մեզ այս տեղ բերող խօսքերը ըսի, երկուքնէ 'ի վեր տեղի ունեցած եղելութիւնները ապագային մէջ ծածկուած էին, այս ապագայն անստոյգ էր, պարոն, և կրնար իրեն հետ մէկտեղ ամբողջ ընտանիքի մը թշուառութիւնը բերել։ Տիկին տ'Օրէյը, Էմմանուէլը և մարքիզը ձեզի կողմնակից էին. ես միայն Մարկրիթը կը պաշտպանէի։ Ձեր բաղդը կը բանէր։ Ահա ասոր համար ուղղակի ձեզի խօսեցայ, վասն զի եթէ գուք ինձի յաղթէիք այնպիսի պարագաներու պատճառաւ որոնք ձեզի յատուկ անծանօթ պիտի մնան, Մարկրիթը չպիտի կրնար ձեզի հետ ամուսնանալ։ Իսկ եթէ ես ձեզ սպաննէի՝ խնդիրը դարձեալ կը պարզուէր, և այս մասին բացատրութեան հարկ չկայ։

— Ճիտակը տակէ աւելի աղէկ տրամաբանօրէն խօսուած յառաջաբան մը չկրնար ըլլալ, պատասխանեց պարոնը ժպտելով և մտրակը կօշիկին զարնելով. եթէ կը հաճիք, անցնինք պատմութեան։

— Հիմակ, վրայ բերաւ Բոլ թեթև մը խոնարհելով 'ի նշան հաւանութեան, ամէն ինչ փոխուեցաւ. մարքիզը մեռաւ, Էմմանուէլ տեղակալութեան պաշտօն մը գտաւ. մարքիզուհին ձեր խնամակալութիւնը թէև յարգելի՝ բայց կը մերժէ, ու Մարկրիթ պ. Ընամոլ տը Լիւսինեանի հետ պիտի կարգուի. և ահա այս պատճառաւ ես զայն ձեզի վրայ չբերի։

— Ա՛հ, ա՛հ, ըրաւ Լէքթուր, ուրեմն ամրոցին մէկնելու ժամանակս ծառայի մը ինձ յանձնած գրոյն իմաստը այդ էր։ Ես անմիտի պէս կարծեցի թէ երկարաձգել կ'ուզեն։ Կ'երևի թէ ձեռքս մը ճամբայ կուտան։ Լաւ, պարոն, սա ձեր ճաւին վերջաբանը նայինք։

— Վերջաբանն ալ պատմութեան պէս պարզ է և մեկին։ Ես ձեզ չեմ ճանչեր և ճանչել ալ չէի փափաքեր. բաղդը մեզ իրարու դիմաց հանեց պէս պէս նկատումներով և մենք հակառակեցանք։ Այն տեսն, ինչպէս որ ըսի, բաղդին չվստահելով՝ ուզեցի քիչ մ'անոր օգնել։ Սակայն այսօր գործը այնպիսի կէտի մը հասած է՝ որ իմ կամ ձեր մահը լեռվին անօգուտ է և ուրիշ բան չկրնար ծառայել, բայց միայն այս տրամին լուծման վրայ քիչ մ'արիւն աւելցնելու։ Ճշմարիտը ըսէք, պարոն, միթէ կ'արժէ արիւն թափել։

— Թերևս ես ալ այդպէս խորհէի, պարոն, պատասխանեց Լէքթուր, եթէ այսքան հեռու տեղէ մ'եկած չըլլայի։ Օրիորդ Մարկրիթ տ'Օրէյի հետ ամուսնանալու պատիւէն զրկուելով՝ գէթ ձեզի հետ մենամարտելու հաճոյքն ունենալ կ'ուզեմ։ Վասն զի վերջէն չեն կրնար ըսել թէ պրբթաները եկայ և բան մը չբերի։ Ե՞րբ կ'ուզէք, պարոն, շարայարեց Լէքթուր իւր դաշոյնը քաշելով և հակառակորդը բարեւելով։

— Պատրաստ եմ, մեծ. պարոն, պատասխանեց Բոլ միևնոյն բարեվարութեամբ և ամէն մասամբ անոր հետևելով։

Երկու երիտասարդներն իրարու դէմ քայլ մ՚առին. սուրերը զարնուեցան և երրորդ յառաջատութեան՝ (passe) Լէքթուրին ղէնը ձեռքէն փախցնելով քսան քայլ անկին գնաց։

— Սուրը ձեռք չառած, ըսաւ Բոլ պարոնին, ես ձեզի մեկնութիւն մը տուի. հիմակ բարեբաղդ պիտի համարիմ ինքզինքս՝ եթէ բարեհաճիք իմ պատճառաբանութիւնն ընդունիլ։

— Եւ այս անգամ չեմ մերժեր, պարոն, պատասխանեց Լէքթուր այնպիսի անփութութեամբ՝ որպէս թէ ոչինչ աելի ունեցեր էր։ Տիք, սա դաշոյնս բեր։ — Իւր ծառային ձեռքէն նշանը առաւ և պատեանը դրաւ։ — Հիմակ, պարոնայք, շարունակեցէք անմիջապէս Բարիզ պիտի վերադառնամ. ձեր մէջէն ե՞է մէր յանձնարարութիւն մ՚ունի՝ թող խօսի։

— Թագաւորին ըսէք, պարոն, պատասխանեց Բոլ իւ[illegible] և իւր դաշոյնը պատեանը դնելով, զի բարեբաղդ [illegible] դլեայիներուն դէմ կռուելու համար ինձ տուած սուրը իմ մեկ[illegible] ընակցին արիւնէն անարատ մնայ։

Այս խօսքերուն վրայ երկու երիտասարդները զ[illegible] Լէքթուր իւր ձին հեծաւ. ապա ծուխ զրէն հար[illegible] քա[illegible] ուղղակի Վանի Ճամբան բռնեց, մինչդեռ իւր սպասա[illegible] դութեան կառքն ամրոցէն առնելու կ՚երթար։

— Հիմակ, պարոն Վոլթը, ըսաւ Բոլ, Օրլի ամրոցն ամենէն մօտակայ մեկ խորշին մէջ նաւակ մը ղրկեցէք։ Նաւ[illegible] մէջ ալ ամէն բան պատրաստ ըլլայ որ այս գիշեր մեկնինք։

Տեղապահը Բոր-Լուսի ուղիէն գնաց. իսկ երկու բարեկամները հիւղը մնան։

Այս միջոցին Էմմանուէլ և Մարկրիթ կատարեր էին այն սգալի պարտաւորութիւնը, որու հրաւիրած էր զիրենք մեռելի դան ակը։ Մարքիզը տոհմային զինանշաններով քանդակերա[illegible] շիրմ մը դրեր, իսկ Աշարը մատուռին կից անշուք գերեզմանատան մէջ թաղեր էին։ Ապա քոյր ու եղբայր իրենց մօրը քովը [illegible]ային, որ Էմմանուէլին այն յանկալի հրամանագիրը տուաւ, իսկ Մարկրիթին անակնկալ հաւանութիւնը շնորհեց։ Այն ատեն իրենց զգացած այլայլութիւններէն աելի սրտակեղ յուզումներ չվերանորոգելու համար՝ մայր ու որդիք զիրար ողջագուրեցին և իրարմէ բաժնուեցան՝ սրտանց համոզուելով թէ յաւիտեան չպիտի տեսնուին։

Օրուան միւս մասը մեկնելու պատրաստութիւններով անցուցին։ Երեկոյեան դէմ մարքիզը հին դուրս եկաւ Բոլին ժամագրութեան երթալու համար։ Բակէն անցնելու ատեն մէկ կողմը լծուած կառք մը նշմարեց, իսկ միւս կողմը նորատի Արթիւր պաշտօնակալը և երկու նաւաստի։ Այս կրկնակի պատրաստութիւնը տեսնելով սիրտը ցաւեցաւ։ Իւր Ճամբան շարունակեց և բուրաստանը մտաւ ատանց այս յուզմունքէն ընկճելու, վասն զի գոռոզութեան այն երկարժամանակեայ ընդդիմադրութիւնը իրեն խիստ մեծ ուժ մը տուեր էր բնութեան դէմ։

Սակայն երբ բաց տեղ մը հասաւ, ուսկից Աշարին տունը կ՚երևէր՝ կանգ առաւ. ծունկերը կթոտեցան և ծառի մը կռթնեցաւ ձեռքը սրտին վրայ դնելով, որպէս թէ անոր բախիւնը սանձելու համար։ Վասն զի անիկայ, այն սիրտերուն պէս որոնք ներկայ վտանգէն չեն այլայլեր բայց անցեալ վտանգի յիշատակէն կը դողան, միտը կը բերէր թէ ինչ վախ և յուզմունք կրեր էր այս քսան տարուան մէջցին մէջ, ուր ամեն օր այն տնակը կուգար որ այժմ դուռ էր և այլ ևս չպիտի բացուէր։ Սակայն անմիջապէս յաղթեց այս տկարութեան, և նորէն իւր Ճամբան շարունակելով՝ դարասային դուռը հասաւ։

Հոն դարձեալ կանգ առաւ։ Կաղնի մը կար որ ամեն ծառերէն վեր կը բարձրանար և դարասային շատ տեղերէն անոր տերևները կ՚երևէր։ Խստաշատ անգամ մարքիզուհին ժամերով այն դարասային դրան առնապիշ դիտած էր. բայց երբէք համարձակած չէր դայ անոր շուքին տակը հանդչիլ։ Սակայն նոյն տեղը Բոլը երթալ գտնելու խօսք տուած էր և Բոլ իրեն կրսպասէր։ Վերջապէս վերջի անգամ մ՚ըրաւ իրովի և թաւուտը մտաւ։

Հեռուն մարդ մը նշմարեց որ ծնրադիր կ՚աղօթէր. Բոլն էր այն։ Ցամրաքայլ մօտեցաւ և իւր կարգին ծնկան վրայ գալով ըսկսաւ անոր հետ աղօթել։ Ցետոյ՝ երբ աղօթքը լմնցաւ, երկուքն ալ ոտք ելան և մարքիզուհին առանց բան մ՚արտասանելու թեր երիտասարդին վիզէն անցուց և գլխուն անոր ուսին վրայ դրաւ։

գանի մը վայրկեան լուռ և անշարժ կենալէ ետև կատքի մը ձայնն առին։ Մարքիզուհին դող եկաւ, և նշմարը ըլաւ Բոլին որ ականջ դնէ։ Էմմանուէլ իւր զօրապետին քովը կ'երթար։ Միենոյն ժամանակին Բոլ ձայնն եկածին հակառակ կողմն երկարեց ձեռքը և մարքիզուհին մակոյկ մը ցոյց տուաւ, որ ծովին երեսը լոելեայն ու թեթևօրէն կը յառաջանար. Մարկրիթ նաւը կ'երթար։

Մարքիզուհին կատքին ձայնին ականջ դրաւ, որչափ որ կրցաւ զայն լսել և աչքով մակոյկին հետևեցաւ՝ որչափ որ կրցաւ զայն տեսնել. ապա երբ մէկն անջրպետին մէջ անհետ՝ իսկ միւսը մութին մէջ աներևոյթ եղաւ, Բոլին դարձաւ, աչերը դէպ երկինք բարձրացուց և հասկնալով որ սոլ ժամանակը եկեր էր ղն այն անձը որ իւր զօրավիգն եղած էր՝ իւր կարդին պիտի բաժնուէր իրմէ,

— Աստուած օրհնէ, ըսաւ, ինչպէս ես կ'օրհնեմ, այն բարեպաշտ որդին որ ամենէն վերջը մայրէն զատուեցաւ։

Իւր բոլոր ուժը ժողվելով՝ վերջին անգամ ընդդրկեց երիտասարդը որ իւր առջև ծնկան վրայ եկած էր. ապա անորմէ բաժնուելով՝ մինակը ամրոցին Ճամբան բռնեց։

Հետևեալ օրը Բոր–Լուսի բնակիչները 'ի զուր փնտռեցին Լորիանի դուրսի նաւահանդիստին մէջ այն կրկնայարկը, զոր նախորդ օրը հոն տեսեր էին և որ տան հինգ օր 'ի վեր կրսպասէր։ Ուրաջին անգամին պէս անհետ եղեր էր այն և անոնք չկրցեր էին հասկնալ ոչ անոր դալուն պատճառը և ոչ ալ մեկնելուն շարժառիթը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեր պատմած եղելութիւններէն 'ի վեր հինգ տարի անցեր էր։ Միացեալ–Նահանգաց անկախութիւնը հրատարակուեր էր։ Անգղիացիք իրենց ձեռքը մնացած վերջին ամուր քաղաքը, Նիւ–Եորքը, յանձներ էին։ Հնդկաց ծովին և միանգամայն Մեքսիկայի ծոցին մէջ հնչող թնդանօթի ձայներ երկու Ովկիանոսներուն վրայ սոլ որոտալէ դադրեր էր։ Ուաշինկթըն 1783 դեկտեմբեր 28ի հանդիսաւոր ժողովին մէջ ընդհանուր զօրապետի պաշտօնէն հրաժարեր ու իւր Մոնվերնոնի կալուածը քաշուեր էր և տրիշ վարձք չէր ընդունած բայց միայն իւր նահանջներուն համար թղթատարութեան ծախք չվճարելու առանձնաշնորհութիւն. այն անդորրութիւնը զոր Ամերիկա սկսեր էր վայելել, Ընթիլեան կղզիներուն դաղթականութիւններուն վրայ ալ կը տարածուէր, որոնք պատերազմին մասնակից գտնուելով՝ ստիպուեր էին Ինդիպենդենտին Սեծին Բրիտանիոյ թշնամական փորձերուն դէմ պաշտպանել։ Այս կղզիներուն մէջ Կատատալուբան տեղի վտանդի ենթակայ եղած էր իւր դինուորական և առևտրական կարևորութեանը համար. սակայն իւր նորընծայ արթուն կառավարիչին շնորհիւ թշնամին ցամաք երթալու փորձերը միշտ 'ի դերև ելեր էին և Ֆրանսան այսպիսի կարևոր տեսչականութեան մէջ բնաւ ծանր դիպուածի մը ցաւը չունեցեր էր. այնպէս որ 1783 տարւոյն ոկիզբները արդէն այս կղզին իւր հարստութիւնը կազմող պէս պէս բերքերու մշակութեամբ զբաղած էր դրեթէ բոլորովին. բայց և այնպէս իւր պատերազմական երեւոյթը լիովին կորսնցուցած չէր ու դեռ ևս կը պահէր չէ թէ առհարկի այլ իւր սովորութիւն։

Եթէ ընթերցողը յիշարի վերջին անգամ բարեհաճիլ՝ Ատլանտեան Ովկիանոսէն անցին մեզ ընկերանալու և Պաս–Թէրրի նաւա-

մատոյցը ելնելու, ամեն կողմէն բղխող աղբիւրներու մէջ տեղէն Շան–տ'Արպոյի Ճեմելեաը տանող փողոցէն կ'անցնինք, և երբ իւր երկայնութեան դրեթէ մէկ երրորդ մասը՝ երկու կողմէն դէպ պատող մուշեներու զովասուն շուքը վերջանայ, ձախ կողմի հարթաշէն ուղին կը մտնենք ու մինչև պարտէզի մը դուռը կ'երթանք, որու ամենէն բարձր տեղէն կ'երևի բոլոր քաղաքը։

Հոն՝ պահ մը ծծէ դիշերային սիւքը, որ այնքան քաղցր է մայիս ամսոյն իրիկունները, և մեզի հետ արևապարձի բարգաւաճ բնութեան վրայ ակնարկ մը սևեռէ։

Մեր ետևի կողմը կան անտառախիտ և հրաբխային լեռներ, որոնք արևմտեան մասը երկու դարվերի կը բաժնեն։ Անոնց մէջ տեղը կը բարձրանան Սուֆրիէրի երկու կրուտ սարերը՝ որոնց վերևը իրենց մուխն ու կայծը պսակաձև օղակ մը յօրինած են։ Իսկ մեր ոտքին տակը կ'ընդարձակ քաղաքը, որ հնարքալի կերպով [illegible] ծով իջնելով՝ արևուն վերջին ճառագայթներէն պաղաջուն [illegible] տեղը կուգան տեսոր պատերը թրջել։ Մինչ Պէլվիլ, Սան-Էլիզ[illegible] Պօ–Սօլէյլի, Էսբէքանսի և Սէն–Շարլի բլուրները [illegible] տրոպարեն։ Հորիզոնը կ'երևի Ովկիանոսը, այն [illegible] ջինջ հայելին, իսկ մեր աջ ու ձախ կողմերը կ'գ[illegible] դեղեցկատեսիլ և պտղալի տնկեղէնները։ Ահա հոն կը [illegible] Արաբիոյ խահուենիներու արծուներ, որոնք վարա[illegible] բեկ ոստերով, փայլուն ու մոյգ կանաչագոյն, ելկայնաձև, [illegible] մտ և մկանուոր տերևներով զարդարուած են և [illegible] անուրեր ձիւնաթոյր ծաղիկներու փունջ մ'ունի։ Բաստակե [illegible] եռանկիւնի տոզաններ (quinconce), որոնք կայծեն թէ դա[illegible] դեղ սաման մը կը սփռեն իրենց սիրած չոր ու քարուտ հողին վրայ և անոնց մէջ տեղերը վիթխարի մրջիններու պէս խափշիներ, որոնք մէն մի ճիւղին արձակած հաղարաւոր ընձիւղները երկու քի կամ երեքի վերածելու կ'աշխատին։ Դարձեալ ընդհակառակն դուրս և արտասպարեալ կողմերը և պարարտ ու բերրի վայրերը հրէայ Պէնժամէն Տաքօսթայնի ձեռքը Անթիլլեան կղզիները բերուած բարձրաբուն հնդիկ նշենին կը տեսնուի՝ շիկագոյն պատիճով ծածկուած ծակոտկէն ոստերով, և մեծ, երկայնաձև, անդրադարձ ու նիղա-

կաձև տերևներով, որոնց մէջէն դեղափթիթ ծիլերը բաց վարդերանգ ծաղիկներու կը նմանին և ասոնք ալ հակապատկեր մը կ'ընծայեն այն երկար, կորափետ և գեղնագոյն պտուղին հետ՝ որ իւր ծանրութեամբը ճիւղերը վար կը ծռէ։ Վերջապէս Թապակոի մէջ գտնուած տունկի ամբողջ դաշտերը, զոր առաջին անգամ Գրանսուա Բ.ին դեսպանը Գաղղիա բերաւ և թագաւորը զայն Գաթէրինա Մէտիչիի ընծայելուն համար Թագուհիի խոսք ըստացաւ։ Սակայն դարձեալ ամեն հասարակ դարձած բաներու պէս՝ թէ Եւրոպայի և թէ Ասիայի մէջ այս խոսքն ալ սկսաւ բանադրուիլ և արգիլուիլ այն երկու իշխանութիւններու կողմէն որոնք աշխարհի կը տիրեին։ Մոսկովի մեծ–դուքսը Միշէլ Գեասրօվիչ, Տաճկաց Սուլթան Մուրատ Դ.ը և Պարսից Շահը զայն արգիլեցին։ իսկ Ուրբան Ը. բանադրեց։ Տեղ տեղ ալ զրախտին աղամանդենին իւր շարքը գտնուած խոտեղէն (herbacé) բոյսերէն քաղաքաւոր յիսուն տարի վեր կը բարձրանայ միակատար։ Եթէ Ասիաստանի տանտիրութեան հաւատ ընծայենք՝ առաջին կինը զկեսաի տեղ գործածեց [illegible] (murubané) գրաշակներու պէս շեղակի ջիղերով գծեալ տեսակ։ Վերջապէս Անթիլլեան կղզիներուն այն երկու հսկայ[illegible] քոլեն և Արմատենին, որոնք բոլոր զօրաւոր բաներուն պէս [illegible] ամենուն վրայ կ'իշխեն և լեռներ[illegible] տուածները՝ կապոյտ կամարին, իսկ ծովեզերքը և [illegible] երը՝ լրջակատաչ Ովկիանոսին վրայ կը նկարուին։

Արդ երևան այէ այս սքանչելի վայրերը զոր ուրեմն ոռնաչափ խորութեամբ եօթանասուն հատ դեռեր կատոր կատոր կը բաժնեն, այն լեռները զոր ցորեկը արևապարձի արեգակը կը լուսաւորէ իսկ գիշերը Սոֆիէրի հրալեռը։ այն գալարները որ երբէք դադար չունեցան և որոնց նորափթիթ տերևները թաւամած տերևներուն կը յաջողեն։ Վերջապէս այն առողջարար հողը, այն մաքուր օդը ուր մարդս, իւր անձն այս յաստուկ թշնամին, Մարթինիկէն և Սէն–Լիւսէն օձեր բերել տալով մեծցնելու աշխատեցաւ անմտորէն։ սակայն չկրցան ապրիլ ու ամիլ և դառն թէ ինչ երջանկութիւն վայելեցին Անաթոլ տը Լիւսինեան և Մարկրիթ տ'Օրէյ

հինգ տարիէ 'ի վեր որ այս երկրային դրախտը կը բնակին՝ Եւրոպայի մէջ իրենց կրած աղէտներէն ետև։

Ան այլ և այլ կրիւք յուզեալ կենաց, այն օրինակաւ ենթադրեալ հակառակ՝ բնական իրաւանց կուսէն, այն տեսարաններուն ուր բոլոր երկրային վիշտերը, տպայարերութենէն բուն մինչև մահը, դեր մը խաղացած էին՝ այնպիսի գուարթ կեանք մը յաջորդեր էր, որուն մէն մի օրը հանդարտ և խաղաղ կը սուէր ու միակ ամպն էր հեռակայ բարեկամներու մասին տարտամ անհանդստութիւն մը, որ օդին մէջէն ուր ուրեմն կ'անցնի և մարդուս սիրտը վիշտով կը համակէ։ Սակայն երբեմն երբեմն այս երկու երիտասարդները թէ պարբերական թերթերու և թէ նաւատնտիստներ եկած նաւերու միջոցաւ մի քանի լուրեր առեր էին այն անձին վերայօք որ հոգւոյ զորավիգ մ'եղած էր իրենց. անոր յաղթութիւնները լսեր էին. խմացեր էին թէ ինչպէս իրենցմէ բաժնուելէն ետև տորմիլի (escadrille) մը գլուխն անցնելով՝ Ադրիայի եղերքը Անգղիացւոց ունեցած հաստատութիւնները կործաներ էր և ասով հրամանատարի (commodère) տիտղոսը ստացեր էր. թէ ինչպէս Սէրաբէ և Լա Քոնրէ դը Սէրդոդոֆ նաւերուն հետ կռուի բռնուելով՝ գրեթէ շորս ժամ պատերազմելէ ետև՝ այս երկու կրկնայարկները տիպեր էր անձնատուր ըլլալ և 'ի վերջոյ թէ ինչպէս 1781ին անկախութեան խնդրոյն համար մատուցած ծառայութիւններուն փոխարէն՝ հրապարակաւ Խորհրդարանին շնորհակալիքն ընդուներ էր և որ միանգամայն քուէարկութեամբ ոսկի մետալ մը շնորհեր էր անոր ու Ադրիկ կրկնայարկին ալ հրամանատար բնտրեր էր զինք. Ադրիկը ամենէն դեղեցիկ նաւն ըլլալով այս անունը տուեր էին և Բոլ ամենէն քաջն ըլլալով՝ անոր հրամանատարութիւնը իրեն յանձներ էին։ Սակայն երբ Մանէֆիլը Պոսթրնի մէջ կորսուեցաւ, Խորհրդարանը անոր տեղ Ադրիկը Փրանսայի թագաւորին ընծայեց և Բոլ Ճոն զայն մինչև Հավրը տանելէն ետքը՝ կամաւոր Վատրէյլի նաւն անցաւ, որ Ճամայիքա կղզին արշաւանք մը ընելու դիտաւորութիւն ունէր։ Այս վերջին լուրը մեծ ուրախութիւն պատճառեց Լիւսինեանի և Մարկրիթին, վասն զի այս նաւանարկութեամբը Բոլ իրենց կողմերը պիտի դար և ուստի վերջապէս

իրենց եղբայրն ու բարեկամը կրկին տեսնել կը յուսային. բայց, ինչպէս որ ըսինք, նոյն ատենները խաղաղութիւնը վերայ հասնելով՝ այն ժամանակէն 'ի վեր բաղդախնդիր նաւաստիին վերայօք բան մը չլսեցին։

Նոյն օրը որ ընթերցողը Պրըթանեի ամայի ծովեզրէն Կուատալուբայի արդաւանդ դեռեզրները տարինք՝ իրիկունը գեղատի ընտանիքը, ինչպէս որ ըսինք, նոյն իսկ մեր մտած պարտէզը հաւքուեր էր. իւր աչքին առջևն էր այն ընդարձակ համատեսիլ պատկերը՝ որու իւր ոտից ներքև դանուած քաղաքը առաջին նկարը կը կազմէր, իսկ կղզիներով սփռուած Ովկիանոսը հրաշալի հեռակէտը։ Մարկրիթ շուտով վարժուեր էր դաղթածներու անփոյթ կեանքի, վասն զի իւր սիրտը այժմ հանդարտ ու երջանիկ ըլլալով՝ վայրի շուշանի պէս միշտ ժպիտ, վտիտ և շնորհալի մարմինը՝ այն անուշ անդորրութեան մէջ թողեր էր, որ դաղթականներու մարմնասէր վիճակը տեսակ մը կէս քուն կը յօրինէ և ուր դէպքերը երազի կը նմանին։ Ինքը իւր աղջիկին հետ Բերուի կախուած անկողնի մը մէջ պառկեր էր, որ հալուէի մետաքսանման թելերով հիւսուած և արևադարձներու ամենէն հաղուագիւտ թռչուններուն ճաճանչափայլ փետուրներով զարդարուած էր. քանի իւր որդին, որ մէկ ձեռքը Լիւսինեանի ձեռներուն մէջ դրած՝ ակնարկը անհամաչափ տարածութեան մը մէջ մեղմօրէն կը սևեռէր, զայն օրորէր՝ Մարկրիթի սիրտը և ղղայարանքը կ'ընդունէին այն ամէն երջանկութիւնները զոր երկինքը կը խոստանայ և այն ամէն բերկրութիւնները զոր երկիրս կրնայ շնորհել։ Նոյն պահուն՝ ուր կարծես ամէն ինչ կը հետամտէր կատարեալ դարձնելու այս հմայական պատկերը զոր ինք ամէն իրիկուն կուգար դիտելու և ամէն օր աւելի սքանչելի կը գտնէր, նաև մը Թրոսա-Բոսանքի հրուանդանէն դարձաւ. Ովկիանոսի թագաւորին պէս ծովուն երեսը կը սահէր այն, առանց լճի մը մակերևոյթը խաղացող կարապէն աւելի ճիգ ցցունելու։ Առաջ Մարկրիթի տեսաւ զայն և առանց խօսք մը արտասանելու իւր ամուսնոյն նշմարը մ'ըրաւ, վասն զի այս տօթակէզ կլիմային տակը կենաց մէն մի գործը յոգնութիւն կը պատճառէ մարդուս։ Լիւսինեան ակնարկն անոր ցոյց տուած կողմը

դարձուց և անոր պէս ալ լուելեայն սկսաւ աչերով նաւին հետևիլ որ արագութեամբ և շնորհալի կերպով կը յառաջանար։ Երբ նաւը կը մօտենար և անոր նուրբ ու բարեձև կայմերը որ նախ հորիզոնին վրայ վազող ամպի մը կը նմանէին՝ առագաստներու կոյսին մէջէն կ'երևէին, սկսան արծաթագոյն և կարմրերանգ դրօշակին խորշին մէջ Ամերիկայի աստղանիշները զանազանել, որոնք իրենց կապուտակ դաշտին վրայ Միացեալ-Նահանգաց աստղանիշներուն հաւասար թուով կը համրուէին։ Այն ատեն երկուքին ալ միտքը բան մ'ինկաւ և իրենց ակնարկն իրարու հանդիպեցան՝ Բոլէն թերևս լուր մ'առնելու յոյսով փայլելով։ Անմիջապէս Լիւսինեան խափշեկի մը հրամայեց որ երթայ հեռադիտակ մը բերէ. բայց ան չեկած՝ աւելի անուշ դաղափար մը երկու երիտասարդներուն սիրտը բախեց։ Մարկրիթի և Լիւսինեանի աչքին այս կրկնայարկը վաղեմի բարեկամ մը կ'երևէր։ Սակայն անոնց համար որ սովորած չեն, այնքան դժուար է նաւաստիի մ'աչքին խօսող նշանները քիչ մը հեռուէն զանազանել՝ զի չէին կրնար դեռ ևս այս յոյսին հաւատ ընծայել, որ աւելի բնազդական նախազգացումէ մը յառաջ կուգար քան թէ ճշմարիտ իրականութենէն։ Վերջապէս խափշեկը այն փափաքելի գործին առաւ բերաւ. Լիւսինեան դիտակը աչքին դրաւ և ուրախութեան ճիչ մ'արձակելով Մարկրիթին տուաւ. նաւաստիին դանուած Կիլլեոմ Գուսթոյի քանդակը ճանչցեր էր և Էնդիկեն էր այն որ բոլոր առագաստները բացած դէպ 'ի Պաս-Թէր կը յառաջանար։

Լուսինեան Մարկրիթը իւր անկողնէն վերցուց վար առաւ. երկուքին ալ առաջին շարժումն եղաւ դէպ 'ի նաւահանգիստը վազել. սակայն նոյն միջոցին մտաբերեցին որ գրեթէ հինգ տարի առաջ Բոլ բարձր ատիճան մ'ընդունելով՝ Էնդիկեն ձգեր և աւելի մեծ նաւի մը հրամանատար կարգուեր էր. այն ատեն երկուքն ալ կանգ առին և երկուքին ալ սիրտը սկսաւ տրոփել ու ծունկերը կթոտիլ։ Այս միջոցին Հեկտոր դիտակը գետնէն առաւ և իւր ծնողներէն տեսածին պէս հետզհետէ աչերուն դնելով, «Հայր, ըսաւ, տես, յարկին վրայ պաշտօնական մը կայ, որ իմ սիրելի բարեկամս, Բոլէն պատկերին պէս ոսկեհուռ սև լոգիկ մը հագած է»։

Լուսինեան ուժգնութեամբ դիտակը տղային ձեռքէն առաւ. քանի մը մանրերրորդ դիտեց և նորէն Մարկրիթին տուաւ, որ պահ մը զայն դեռին ձգեց. ապա երկուքն ալ իրարու փարեցան. ճանչցեր էին թերահասակ նաւապետը որ իւր բարեկամներուն քովը դալու համար, ինչպէս արդէն դիտենք, իւր ամենէն սովորական զգեստը հագեր էր։ Նոյն պահուն՝ նաւը բերդին առջևէն անցաւ, երեք թնդանօթ արձակելով զայն ողջունեց և անմիջապէս դղեակէն ալ այս ողջոյնին պատասխանեցին հաստիճ թնդանօթի արձակմամբ։

Լիւսինեան և Մարկրիթ երբ հաւաստի եղան թէ Էնդիկեն մէջինը անպատճառ իրենց եղբայրն ու բարեկամն էր, անմիջապէս դէպի ծովեզերը իջան։ Գլուխ գլանշը անկողնիը ձգեր էին, իսկ նորատի Հեկտորն իրենց ետևէն կուդար։ Նաւապետն ալ իւր կողմէն զանոնք ճանչեր էր. երբ անոնք պարտէզէն մեկնեցան՝ մակոյկը ծովն իջեցնել տուեր էր և տասը առոյգ թիավարներու կրկնակի ջանքից շնորհիւ արագօրէն ցամաքին մօտեցեր էր, այնպէս որ մինչ իւր բարեկամները ծովեզերը հասան՝ ինք թումբին վրայ ցատկեց։ Այս տեսակ զգայնութիւնները անխօսիկ կ'անցնին և մի միայն արտաքուստ կը մեկնուին։ Ուստի անոնց ուրախութիւնն առ երևոյթս տրտմութեան կը նմանէր։ Եւ ամենքն ալ կուլային. մինչև անդամ մանուկն իսկ անոնց լացը տեսնելով կուլար։

Դեռատի հրամանատարը նաւին գործերուն համար մի քանի բաներ պատուիրելէն ետև՝ իւր բարեկամներուն հետ սկսաւ յամրաքայլ յառաջանալ այն ուղիէն, ուսկից այնքան շատաւ անցեր էին գինքը դիմաւորելու համար։ Գ. Վորէօյլի արշաւանքը ետ մնալով՝ ինք Փիլատէլֆիա եկեր էր և ինչպէս որ ըսինք, Անդղլոյ հետ ալ խաղաղութեան դաշինքը հաստատուած ըլլալով՝ Խորհրդարանը 'ի յիշատակ երախտագիտութեան, այն նաւը որուն առաջին նաւապետ եղած էր, իրեն նուիրեր էր։

Այս պատմութիւնը լսելով Լիւսինեան և Մարկրիթ յանչափս ուրախացան, վասն զի կարծեցին թէ իրենց եղբայրն ալ ևս իրենց քովը կենալու եկեր էր։ Սակայն դեռատի նաւաղն այնքան շատ կը սիրէր պատահարը և այնպիսի անյագ տենչ մ'ունէր յուզմանց համար՝ որ չէր կրնար նոյն երկրին բնակիչներուն մեռեալ և միօրի-

նոկ կենաց համակերպիլ։ Հետևաբար իր բարեկամներուն յայտնեց թէ ութ օր պիտի մնայ իրենց քովը և ապա աշխարհիս մէկ ուրիշ կողմը պիտի երթայ փնտռէ այնպիսի կեանք մը, որ շարունակութիւն մի ըլլայ մինչև այն ատեն վարած կենացը։

Այն ութ օրը հրազի պէս անցաւ ու թէև Լիսինեան և Մարկրիթ շատ պնդեցին, սակայն Բոլ քսանը չորս ժամ իսկ անոնց շնորհել չուզեցաւ։ Միշտ մենակն մարդն էր, այսինքն վարվուն, յամառ, ինքնակամ անձ մը, որ իր ըրած որոշումները իրը պարտաւորութիւն կը նկատէր. աւելի խիստ էր առ իր անձն քան թէ ուրիշներուն համար։

Հրաժեշտի ժամը եկաւ. Մարկրիթ և Լիսինեան մինչև նաւը նոքահասակ հրամանատարին ընկերանալ կը բաղձային, սակայն Բոլ այս ողջոյններու միջոցն աւելի երկարել չուզեց։ Երբ թումբին վերայ հասան՝ վերջին անգամ զանոնք ողջագուրեց. ապա մակոյկին մէջ նետուելու որ անմիջապէս նաւի մը սլաքին տրաղուքեամբը հեռացաւ։ Մարկրիթ և Լիսինեան աչքով անոր հետևեցան մինչև որ կրկնաբարձին աջակողմն անհետ եղաւ և թախծագին վեր եկան որպէս զի լեռնադաշտին վերայէն անոր մեկնիլը դիտեն ինչպէս որ գալը տեսան։

Երբ հոն հասան, այն մատուռական աշխոյժը որ երթի ժամուն մարդուս կուգայ, նաւին մէջ կը տիրեր։ Նաւաստիները անուորդին շուրջը հաւքուած՝ պարանը դարձնել սկսան։ Օդը ջինջ և պայծառ ըլլալով՝ անոնց ուրախալի և դեղեցկալուր ձայնը մինչև երկու երիտասարդներուն կը հասնէր։ Մինչ խարիսխը կը քաշէին, նաւը յամրաբար կը յառաջանար. շատ չանցաւ երկաթեայ երկու ճանկերը ջուրէն դուրս եկան. ապա դերաններուն առաղաստները հետզհետէ բացին՝ վերջնակայմերուն լաթերէն բռնէ մինչև ամենէն վարինները. նաւը որպէս թէ բնազդական և կենդանի զգացումով մը վարեալ՝ իր ցուցկը դէպի նաւահանգստին բերանը դարձուց և սկսաւ շարժիլ. այնպիսի դիւրութեամբ մը ջուրը ճեղքեց որ կարծես թէ ծովին երեսէն կը սահէր։ Այն ատեն իրը թէ նաւը ալ իր ազատ կամքին թողուլ կարելի ըլլալով՝ տեսան որ դեռ ապի հրամանատարը խելաց սմբարակին վերայ եկաւ և երբ բոլ-

լոր ուշադրութիւնը դէպի ցամաք դարձուց, վասն զի նաւային գործողութիւնները լմնցեր էին։ Լիսինեան անմիջապէս իր թաշկինակը հանեց և նշմարը մ'ըրաւ. Բոլ անոր պատասխանեց. յետոյ երբ ալ ևս պարզ աչքով չկրցան զիրար տեսնել, երկուքն ալ մէկ մէկ գիտակ առին և այս ճարտարարուեստ գործիին շնորհիւ ժամ մ'ևս երկարաձգելին բաժանումը. երկու կողմէն ալ նախազգացում մ'ունէին թէ յաւիտենական հրաժեշտ մը պիտի ըլլար այն։ Վերջապէս մինչ մութն ալ սկսաւ կոխել, նաւը հորիզոնին վրայ աստիճանաբար փոքրեցաւ. այն ատեն Լիսինեան կոյտ մը ճիւղեր բերել տուաւ լեռնադաշտին վրայ և հրամայեց զանոնք վառել, որպէս զի Բոլ, որուն նաւը մութին մէջ կրսկսէր անհետիլ, կարենայ մինչև Թրուա–Բուանթի հրուանդանէն դառնալը իր աչերը այն փարոսին վրայ պնդել։ Արդէն մէկ ժամ կար զի Մարկրիթ և Լիսինեան լիովին աչքէ հեռացուցեր էին կրկնայարկը, որ կրնար այն պայծառ ու փայլուն կրակին շնորհիւ դեռ ևս զիրենք դիտել, այն ինչ բոց մը հորիզոնը ճեղքեց. քանի մը մանրերրորդէն ետքը որոտումի խոր և երկարատև ձայնին պէս թնդանօթի բոմբիւնը եկաւ անոնց ականջին. ապա ամեն ինչ մութին ու լռութեան մէջ մնաց։ Լիսինեան և Մարկրիթ Բոլին վերջին մնաս բարեը ընդուներ էին։

Հիմակ թէև ոտտոդիս այն ընտանեկան տարամը զոր յանձն առինք պատմել հոս կը վերջանայ, սակայն թերևս ընթերցողներէն ոմանք պատմութեանս դիւցազնը, նորատի բաղդախնդրոյն վրայ բաւական հետաքրքրութիւն ունեցած ըլլալով՝ փափաքին իր կենաց երկրորդ մասին մէջ անոր հետևիլ. ասոնց իրենց մեղ ընծայած ուշադրութեան համար մեր շնորհակալիքը յայտնելով, կը փութանք ճշդիւ և պարզօրէն պարադրել այն ամեն եղելութիւնները զոր մանրակրկիտ հետազօտութիւններով յաջողեցանք իմանալ։

Մեր խօսեցած ժամանակը՝ այսինքն 1784ին մայիս ամսոյն մէջ, դրեթէ բոլոր Եւրոպան այն թմբրութեան մէջ ինկեր էր, զոր անհետտես մարդիկ խաղաղութեան տեղ կ'առնեն, բայց աւելի խորխմաց հանճարները փոթորիկէն առաջ տիրած տխուր և առժամանակեայ հանդարտութեան պէս կը նկատին։ Ամերիկա իր ազատու-

թեամբը յեղափոխութեան պատրաստեր էր զԳրանսա. թագաւորը և ժողովուրդք իրարու վրայ վստահութիւն չունէին ուստի և իրարմէ կը զգուշանային. անոնք իրը ցոյց կուտային, իսկ ասոնք իրաւունքը։ Այս ընդհանուր քունին մէջ Եւրոպայի մէկ մասը միայն կարծես արթուն էր և կը յուզուէր. Ռուսիան էր այն զոր Մեծն Պետրոս կայսրը բարեկիրթ ազգերու աստիճանը հասուցեր և Կատարինէ Բ. կայսրուհին սկսեր էր եւրոպական տէրութիւններու կարգը դասել։ Պետրոս Գ. երբ իր ստորին բնաւորութեանը, քաղաքական սին նպատակներուն և մանաւանդ Բրուսիացւոց սովորութիւններու մասին ունեցած պաշտաման համար Ռուսաց ատելի եղաւ, առանց ընդդիմութեան ղինքը զահընկեց ըրին և առանց կռուի խեղդեցին։ Ուստի Կատարինէն երեսուն երկու տարեկան հասակին մէջ տէր եղաւ այն կայսրութեան որ իր տարածութեամբը երկրագունտիս մէկ եօթներորդ մասը կը ծածկէ. նորա առաջին ջանքն եղաւ իր ազդեցութեամբը իրը միջնորդ հանդիսանալ այն դրացի ժողովուրդներուն մէջ զոր իր իշխանութեանը տակ առնուլ կ'ուզէր։ Ուստի Դուրլանտիացիները ստիպեց իրենց նոր դուքը, Սաքսոնիայի Շարլը, վանել և Պիրէնը ետ կանչել. դեսպաններ և զօրք զրկեց Վարշաւիա՝ իր վաղեմի տարփածուն, Բոնիաթովսքին, Սթանիսլավ–Օկիւսթ անուամբ թագադրել տալու համար. Անդրեայ դաշնակից եղաւ. Պերլինի և Վիեննայի արքունիքն իր քաղաքականութեան միացուց. սակայն այս արտաքին աշխարհավարական խորհուրդներով, իսկ՝ ներքին վարչութիւնը չմոռցաւ և իր սիրահարութեանց, որոնք այնքան ստէպ կը կրկնուէին, ընդհատ միջոցները՝ ժամանակ դտաւ Ճարտարութիւնները վարձաարելու, երկրագործութիւնը քաջալերելու, օրէնքը վերաքննելու, նաւային զօրութիւն մը կազմելու, Պլիմաժէն՝ Հիւսիսային Արշիպեղագոսը, Պիլինկսը՝ Արևելեան Ովկիանոսը իսկ Բալասը այնպիսի երկիրներ զրկելու որոնց բերքն անդամ անծանօթ էին։ Վերջապէս իր եղբօրը՝ Բրուսիոյ թագաւորին դրական հարաւէն նախանձելով, այն ձեռքով որ նոր քաղաքի մը կառուցումը, դեռահասակ Իվանին մահուան վճռագիրը կամ Լեհաստանի բաժանումը կրստորագրէր, կը դրէր նաև Հերթոսն Համբուրգոնէն՝ Սկոտիոյ երկը՝ Շաբ

արքայէ և Քլոր Ֆայրոհէ անունով վէպ մը. նոյնպէս նաև թատերգութիւններ որոնց մէջ Տէրշավինի տարամ՝ Օլէկին, դաղղիերէն թարգմանութիւնն ալ կար, այնպէս որ Վոլթէր զինքը Հիւսիսի Շամիրամը կ'անուանէր իսկ Բրուսիոյ թագաւորը իր նամակներուն մէջ Լիբուրկոսի և Սողոնի մէջ տեղը կը դնէր զանի։

Դիւրին է երևակայել թէ այսպիսի հեշտալի և ասպետական արքունիքի մը մէջ ինչ արդիւնք ունեցաւ մեր նաւաստին նման մարդու մը գալուստը։ Արդէն կատարինէ լսած էր անոր քաջութեան համբաւը, որով նա Գրանսայի և Ամերիկայի թշնամիները սարսափեցուց և Բոլ իր կրկնայարկն ալ անոր ընծայելով՝ փոխարէն երրորդ—ծովակալի աստիճանն ընդունեց։ Այն ատեն Ռուսիոյ դրօշակը հին աշխարհի կէսը շրջան մը առնելէ ետեւ Ցունասատանի ջուրերուն մէջ և Լակեդեմոնիոյ ու Պարթենոնի աւերակներուն վրայ երևցաւ. և այն որ Ամերիկայի անկախութիւնը 'ի գլուխ հաներ էր, Սպարտայի և Ամէնքի հանրապետութիւններու վերահաստատութիւնը երևակայեց։ Վերջապէս Օսմանեան հին պետութիւնը 'ի հիմանց դղրդեցաւ։ Տաճիկները յաղթուելով դաշնադրութեամբ հաշտութիւն ըրին Գայնարճրդ քաղաքին մէջ։ Կատարինէի ձեռքն անցաւ Ազաֆ, Թայղան ու Քէնպուրն քաղաքները. միանգամայն Սև ծովը նաւարկելու ազատութիւն առաւ և Խրիմն ալ Տաճկաց իշխանութենէն անկախ սեպուեցաւ. այն ատեն ինք Թորիտի տէր ըլլալով՝ փափաքեցաւ իր երկիրները Ճանչել։ Բոլ Ս. Բեգբսուրկէն կանչուելով այս Ճամբորդութեան մէջ անոր ընկերացաւ, որուն ծրագիրը Բոմէնքինը պատրաստեր էր։ Բոլոր Ճամբան որ դրեթէ հազար փարսախ տեղ էր՝ մշտաև յաղթութեան մը յիշատակներ տեսան աշխարհակալուհին և իր ուղեկիցները։ Ամէն տեղ կրակներ վառուած էին. ամէն քաղաքներու մէջ երբ հմայական պայծառ լուսավառութիւններ կար. ամայի դիւղերու մէջ մէկ օրուան համար փառաւոր պալատներ կառուցած էին որոնք երկրորդ օրը աներևոյթ կ'ըլլային. դիւղերը խմբուեր էին, որպէս թէ կախարդի մը ցուպին ներքև, այն առանձին վայրերը ուր ութ օր առաջ Թաթարը իր երամակները կ'արածէր. հորիզոնը այնպիսի քաղաքներ կ'երևէին որոնց արտա-

քին պատերը միայն մնացեր էին. ամեն կողմ մեծարանք, յարգանք կը մատուցուէր և ամեն կողմ կ'երդէին ու կը պարէին. Ճամբուն վրայ բազմութիւնը կը խռնէր և դիշերը մինչ կայսրուհին 'ի քուն էր կը վազէին նորէն իրենց դշխոյին արթնցած ատեն անցնելիք ուղիին վրայ շարուելու համար. մէկ թագաւոր ու մէկ կայսր քովերէն կ'երթային, բայց չէ թէ իւր հաւասարները այլ դրանիկները կը կոչուէին. վերջապէս Ճամբորդութեան վերջնածայրը յաղթութեան կամար մը կանգնած էին որու վրայ սա խօսքը գրուած էր. «Հոս է Բիւզանդիոնի Ճամբան»: Այս վերնագիրը եթէ Կատարինէի փառասիրութեան նշան մը չէր՝ դէթ Բոնէմքինի քաղաքականութիւնը կը յայտնէր: Այն ատեն Ռուսիան իւր բռնակալութեան մէջ հաստատուեցաւ՝ ինչպէս Ամերիկա՝ իւր անկախութեան մէջ:

Կատարինէ իւր ծովակալին՝ դրանիկ մը գոհացնելու պաշտօններ, փառասէրի մ'աչքը կշտացնելու աստիճաններ և դահաղուրկ թագաւոր մը մոխիթարելու երկիրներ տուաւ. սակայն մեր արկածասէր և բանաստեղծ նաւապետը այս ամենուն պէտք չունէր, այլ նա կ'ուզէր իւր նաւին շարժուն յարկը, ծովին կուիները ու փոթորիկները և լայնատարած ու անսահման Ովկիանոսը: Ուստի Կատարինէի շքեղ արքունիքէն մեկնեցաւ, ինչպէս որ աղղային խորհրդարանի խստմրեր ժողովէն հրաժարեր էր և Գրանսա եկաւ իւր այլուր չգտածը փնտռելու համար, այս էր աղմկալի կեանք մը, կռուելու թշնամիներ և պաշտպանելու ժողովուրդ մը: Մեր եւրոպական պատերազմներուն ու քաղաքային կուիներու ժամանակը Բոլ Բարիզ հասաւ, այսինքն այնպիսի ատեն մը որ մէկ ձեռքով օտարը կը խեղդէինք՝ իսկ միւսով իրարու միսը կ'ուտէինք: Այն թագաւորը զոր տասը տարի առաջ սիրելի, պատուեալ և զօրաւոր տեսեր էր, այժմ ստրուկ դարձած էր, իւր զօրութիւնը կորուսեր էր և ժողովուրդը զինքը կ'անարդէր: Ամեն ինչ որ բարձրացած էր՝ կը խոնարհէր. մեծ անուններն ինչպէս և բարձր գլուխները կ'իյնային: Հաւասարութեան տիրապետութեան ժամանակն էր և Կիլլեօթինը զուգակշիռն էր: Բոլ Էմմանուէլի վրայօք սեղկութիւններ հարցուց. բան մը որ արտորուեցաւ: Մայրը հարցուց. մեռաւ պատասխանեցին: Այն ատեն անհրաժեշտ հարկ մը զդաց կրկին անգամ այցելել այն տեղերը ուր տասը տարի առաջ այնքան քաղցր ու սոսկալի այլայլութիւններ կրեր էր: Պրքթանեը գնաց. իւր կառքը Վան Թողուց և ձի մ'առաւ ինչպէս որ ըրեր էր Մարկրիթը առաջին անգամ տեսած օրը. սակայն ա՛լ ևս միևնոյն նորատի ու վարվուն նաւաղը չէր որ առանց հորիզոնի փափաքներ ու յոյսեր տածէր. այլ ամեն պատիր երևոյթները մէկ դի Թողեր էր, վասն զի ամեն ինչ Ճաշակեր էր թէ մեղր և թէ օշինդր. ամեն բանի խելամուտ եղեր էր, թէ մարդերու և թէ իրերու. ամեն ինչ Ճանչեր էր, թէ փառքը և թէ մոռացօնը: Ուստի ա՛լ ընտանիք մը փնտռելու չեկաւ, այլ դերեզմանները տեսնելու:

Երբ ամրոցին առջևը հասաւ աչերը դէպ Աշարին տնակը դարձուց բայց զայն չգտնելով՝ սկսաւ անտառը փնտռել: Սակայն անտառը կարծես թէ դիւթական զօրութեամբ մը աներևոյթ եղեր էր: Իրը աղղային սեպհականութիւն՝ շքջակայն դանուած քսանը հինգ երեսուն աղարակապաններու ծախուեր էր, որոնք զայն հերկեր և ընդարձակ դաշտ մը դարձուցեր էին: Մեծ կաղնին աներևոյթ եղեր էր և արօրը տը Մօրլէ կոմսին անծանօթ դերեզմանին վրայէն անցեր էր, որուն տեղը իւր որդին իսկ չէր կրնար Ճանչել:

Այն ատեն դարաստին դունէն զարկաւ և դէպ ամրոցը յառաջացաւ որ նոյն պահուն ամեն ժամանակէն աւելի տխուր ու լռակաց էր. մինակ մէկ ծերունի բերդակալ մը կար, կենդանի փլատակ մը այս անշունչ աւերակներուն մէջ: Առաջ միտք ըրեր էին տունն ալ անտառին պէս քանդել, բայց մարքիզուհիին սրբութեան համբաւը որ խղճի մտաք երկրին մէջ պահուած էր, պահպաներ էր այն հին քարերը որոնք տասը դար նորա ընտանիքը պատսպարեցին: Բոլ սենեակները ժուռ եկաւ զոր երեք տարիէ 'ի վեր երբէք բացած չէին և իրեն համար բացին: Պատկերներու սրահէն անցաւ որ ինչպէս երբեմն տեսաւ նոյնն էր և այժմ. սակայն բարեպաշտ ձեռք մը այս հինաւուրց հաւաքածոյին վրայ մարքիզին և մարքիզուհիին պատկերները չաւելցուցեր էր: Թանկարանը մտաւ ուր ինք պահուըտեր էր. միևնոյն տեղը գտաւ գիրք մը զոր բացեր էր, զայն բացաւ և իւր կարդացած էջերը կրկին կարդաց:

Ապա դաշնագրոյն սենեակը տանող դուռը հրեց, ուր տեղի ունեցեր էին այն տրամին ամենէն բուռն տեսարանները որու ինք գլխաւոր դերակատարն եղեր էր։ Սեղանը իւր տեղն էր և կրակարանին վրայի Վենետիկի շրջանակով զարդարուած հայելին Իմմանուէլի գնդակով ճեղքուած դեռ կը կենար։ Նատակետը կրակարանին շրջանակին կութնեցաւ և մարքիզուհիին կենայ վերջին օրերուն վրայ մանրամասն տեղեկութիւններ հարցուց։

Նորա վերջին օրերը ինչպէս որ գիտենք, իւր ամէն բաներուն պէս՝ պարզ ու խստամբեր եղեր էին։ Ինչպէս որ ըսինք ամրոցին մէջ առանձին մնալով՝ իւր բոլոր կեանքը միակերպ անցեր էր երեք տարբեր տեղեր, այսինքն ննջարանին մէջ, երկանը պառկած նկուղին մէջ ու կաղնիին հովանոյն տակը ուր իւր տարփածուն թաղուած էր։ Բոլի հրաժեշտ տուած վերջին իրիկունէն ետքը՝ դեռ ութ տարի ևս նէ այս հինօրեայ դաւիթներուն ու նսեմ ուղիներուն մէջ շրջեր էր ստուերի պէս տժգոյն և յամրաքայլ։ Բայց վերջապէս իւր կուրծքին մէջ գիղուած յուզումներէն սրտի հիւանդութիւն մ՚երևան կ՚ելնէ, ինք օր ըստ օրէ կը տկարանայ և ՚ի վերջոյ իրիկուն մը երբ չկրնար քայլել, կաղնիին տակը տանել կուտայ ինքզինքը՝ այն իւր սիրելի ճեմելիէն կրկին անդամ, ինչպէս որ կ՚ըսէր ինք, Ովկիանոսին վրայ արևին մարը մտնելը տեսնելու համար և կը պատուիրէ որ կէս ժամէն դան զինքը առնեն։ Իւր մարդիկը ՚ի դարձին զայն նուաղած կը գտնեն։ Կ՚առնեն գրեակը կը տանին։ Ճամբան կը սթափի և փոխանակ իւր սենեակն երթալու՝ կը հրամայէ ընտանիքին նկուղն իջցնել զինքը։ Հոն կը զրկէ իւր ամուսնոյն գերեզմանին վրայ ծունր դնելու և իրեն առանձին ձգելու համար նշան մ՚ընելու։ Թէև անխոհեմութիւն էր, բայց կը հնազանդին վասն զի նա հրաման մը երբէք երկիցս կրկնելու սովորութիւն չունէր։ Սակայն սպասաւորները դուրս ելնելու ատեն անկիւն մը կը պահուրտին ՚ի հարկին անոր օգնելու համար։ Պահ մը ետքը կը տեսնեն որ նա կը պառկի այն քարին վրայ որու առջև կ՚աղօթէր։ Կը կարծեն թէ նորէն նուաղեցաւ, կը վազեն բայց մեռած էր։

Բոլ նկուղները ժուռ եկաւ, յամրաքայլ և գլուխը բաց հոն մնաւ, ապա երբ մօրը դամբարանին առջևը հասաւ՝ ծնկան վրայ

եկաւ։ Անոր տապանաքարը, ինչպէս որ մարքիզուհին իւր կենդանութեան ժամանակ պատուիրեր էր՝ Օրէյ քաղքին եկեղեցւոյն մէկ դաւթին մէջ փոխադրուած է այժմ և ուզողը կրնայ երթալ վրան հեռաւոր արձանագրութիւնը կարդալ։

Ասո հանգչի
Ամենաբարձր եւ ամենահզօր Տիկին
Մարկրիթ գլանշ ուչ Սապլէ,
Մարքիզուհի ո՚Օրէյ։
Ծնեալ յ2 Օգոստոս 1729,
Վախճանեալ յ2 Սեպտեմբեր 1783։

—

Աղօթեցէ՛ք վասն ներա եւ վասն որդւոցն։

Բոլ անսահման երախտագիտութեան նշանով մը աչերը երկին բարձրացուց։ Իւր մայրը, որ կենդանութեանը ժամանակ այնքան երկար ատեն զինքը մոռցեր էր, իւր գերեզմանին արձանագրութեան մէջ յիշեր էր։

Վեց ամիս ետքը Ազգային ժողովը հանդիսաւոր նիստով որոշեց՝ Ամերիկայի վաղեմի ծովային հրամանատար, Բոլ ճոնի յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուիլ, որ 1793ին յուլիսի 7ին մեռեր էր և Բէր–Լաշէզի գերեզմանատունը պիտի թաղուէր։

Այս որոշումը տրուեցաւ, կ՚ըսէ վճռագիրը, Գրոնոյի մէջ երդնի ապաստանելու հարմար։

ՎԵՐՋ